

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2008թ. ՄԱՐՏԻ 1-2-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ  
ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
ԺԱՍԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....2

I. ՀԱՆՁԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿՎՈՐՈՒՄԸ, ԽՆԴԻՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ.....2-12

1.1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿՎՈՐՈՒՄԸ.....2-4

1.2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....4-5

1.3 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ.....5-12

II. ՀՀ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ.....13-24

III.2008թ. ՄԱՐՏԻ 1-ի ԱՌՎՈՏՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ և ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ.....25-39

3.1 ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԸ .....25-31

3.2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ .....32-39

IV.2008թ. ՄԱՐՏԻ 1-ին ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԵՏԱԳԱ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ և ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ.....40-56

4.1 ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԸ .....40-51

4.2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ.....52-56

V. ՁՈՂՎԱԾՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ.....57-120

5.1. ՁՈՂՎԱԾՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ...57-102

5.2. ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԶՈՒԹՅՈՒՆԸ.....102-112

5.3.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ.....113-120

VI. «ԱՐՏԱԿԱՐԳ ԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ.....121-128

6.1. . «ԱՐՏԱԿԱՐԳ ԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ.....121-127

6.2.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ.....127-128

VII. ՀԱՆՁԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....129-138

# ՆԱԽԱԲԱՆ

Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ստորև ձեռնամուխ լինելով Ազգային ժողովին և Հայաստանի հանրությանը ներկայացվող եզրակացությանը, գիտակցում է այս փաստաթղթի ամբողջ կարևորությունը Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության զարգացման, հասարակական համաձայնության և օր առաջ ազգային միասնության մթնոլորտի հաստատման գործում, ինչպես նաև առաջնորդվում է անհանդուրժողականությունը և թշնամանքը Հայաստանի քաղաքական դաշտից արմատախիլ անելու ցանկությամբ: Մենք համոզված ենք, որ մարտի 1-2-ի իրադարձություններից հետո ստեղծված բարդ և ճգնաժամային պայմաններում այս փաստաթղթի իմաստն այդ իրադարձություններին այնպիսի գնահատական տալն է, որը կօգնի մեր ժողովրդին և նոր ձևավորվող ժողովրդավարական-քաղաքական համակարգին՝ այլևս երբեք նման դեպքեր թույլ չտալու: Այս մտահոգությամբ է շարադրված ձեր ուշադրությանը ներկայացվող փաստաթուղթը:

## **I. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿՎՈՐՈՒՄԸ, ԽՆԴԻՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

### **1.1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿՎՈՐՈՒՄԸ**

1. Հանձնաժողովը ստեղծվեց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 16.06.2008թ. թիվ Ն-086-4 որոշմամբ (այսուհետ՝ Որոշում):

2. Որոշման 5-րդ մասը սահմանում է, որ Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են երկուական պատգամավոր Ազգային ժողովի խմբակցություններից, և մեկը դրանց կազմում չընդգրկված պատգամավորներից: Ձևավորվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովը խորհրդակցական ձայնի իրավունքով իր աշխատանքներին մասնակցելու հրավեր է ուղարկում Լ.Տեր-Պետրոսյանին և այն արտախորհրդարանական քաղաքական ուժերին, որոնց ցանկը որոշում է Հանձնաժողովը: Հանձնաժողովի նիստերին մասնակցում է նրանցից յուրաքանչյուրի մեկական ներկայացուցիչ:

3. Որոշման 6-րդ մասի համաձայն պատգամավորները Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համապատասխան խմբակցության ղեկավարի (քարտուղարի) ներկայացմամբ, իսկ նույն որոշման 7-րդ մասի համաձայն խմբակցության կազմում չընդգրկված պատգամավորների թեկնածուներին Ազգային ժողովի նիստում առաջարկում են պատգամավորները: Ընտրված է համարվում այն պատգամավորը, որը բաց

քվեարկությամբ ստանում է առավել թվով ձայներ: Նույն որոշման 8-րդ մասի համաձայն Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ և տեղակալ:

4. Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար 16.06.2008թ. Ազգային ժողովի 5 խմբակցություններից առաջարկություններ են ներկայացրել 4-ը, այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցությունը (Սամվել Նիկոյան, Հերմինե Նաղդալյան), «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը (Նաիրա Զոհրաբյան, Արամ Սաֆարյան), «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցությունը (Արծվիկ Մինասյան, Արտյուշ Շահբազյան), «Օրինաց երկիր» խմբակցությունը (Հովհաննես Մարգարյան, Արտաշես Ավոյան, ում փոխարինել է Իշխան Խաչատրյանը՝ 21.08.2008 թվականից, իսկ վերջինիս՝ Արծրունի Աղաջանյանը՝ 02.02.2009 թվականից): Խմբակցություններում չընդգրկված պատգամավորներից Հանձնաժողովի կազմում Ազգային ժողովի 16.06.2008թ. որոշմամբ ընդգրկվել է Լևոն Խաչատրյանը, որը 24.06.2008թ. ներկայացրել է հրաժարականի դիմում, իսկ Ազգային ժողովի 08.09.2008թ. որոշմամբ որպես անկախ պատգամավոր Հանձնաժողովի կազմում ընդգրկվել է Սամվել Բալասանյանը:

5. 16.06.2008թ. Հանձնաժողովի առաջին նիստում Հանձնաժողովի նախագահ է ընտրվել Սամվել Նիկոյանը: Հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնի հարցը նպատակահարմար համարվեց քննարկել Հանձնաժողովի մյուս անդամների մասնակցության պայմաններում՝ առաջնահերթություն դիտարկելով այդ պաշտոնում Ժառանգություն խմբակցության կամ Լևոն Տեր-Պետրոսյանի ներկայացուցիչների ընտրության հնարավորությունը:

6. Ձևավորվելուց հետո, Հանձնաժողովի որոշմամբ նրա կազմում ընդգրկվելու համար հրավերք են ուղարկվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, 2007թ. Ազգային ժողովի ընտրություններում 3 %-ի շեմը հաղթահարած, սակայան Ազգային ժողովում խմակցություն չունեցող, ինչպես նաև 2008թ. նախագահական ընտրություններում թեկնածուներ առաջադրած կուսակցություններին՝ յուրաքանչյուրից մեկ ներկայացուցիչ ներկայացնելու առաջարկով:

7. Հրավերքն ընդունել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը, ինչպես նաև 5 կուսակցություններ, այդ թվում՝ «Ազգային ժողովրդավարական միություն» կուսակցությունը (Արտավազ Վարդանյան), «Ազգային միաբանություն» կուսակցությունը (Սարգիս Մուրադխանյան), «Ազգային համաձայնություն» կուսակցությունը (Արամ Հարությունյան), «Միավորված աշխատանքային կուսակցությունը» (Գուրգեն Արսենյան), 04.12.2008 թվականից «Նոր ժամանակներ» կուսակցությունը (Արամ Կարապետյան):

8. Որոշման համաձայն Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու իրավունք ունեին ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության ներկայացուցիչներն ու Լևոն Տեր-Պետրոսյանը (անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով), որոնք սակայան չեն իրացրել իրենց այդ

իրավունքը: Չնայած դրան, Հանձնաժողովն իր աշխատանքներին մասնակցելու առաջարկով 19.06.2008թ. գրավոր դիմել է ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, ինչպես նաև «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Բաֆֆի Հովհաննիսյանին, «Ժողովրդական» կուսակցության նախագահ Տիգրան Կարապետյանին, սակայն նրանց կողմից առաջարկը չի ընդունվել:

9. Այսպիսով, առավելագույնը 19 անդամներ ունենալու հնարավորության պարագայում Հանձնաժողովը կազմավորվել է 15 անդամներով:

## **1.2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 73-րդ, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածների, ինչպես նաև Որոշման համաձայն, Հանձնաժողովի խնդիրն է՝ ուսումնասիրել 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձություններն ու դրանց պատճառները և Ազգային ժողովին եզրակացություն ներկայացնել հետևյալ հարցերի վերաբերյալ՝

ա) տեղի ունեցած բռնությունների, ինչպես նաև ոստիկանության գործողությունների իրավաչափությունն ու համաչափությունը.

բ) գոհվածների մահվան հանգամանքների ճշտումը.

գ) նման իրադարձությունների կրկնությունը բացառող քաղաքական, իրավական և այլ լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

2. Հանձնաժողովի գործունեության ժամկետ էր սահմանվել 2008 թվականի հոկտեմբերի 25-ը, որը հետագայում՝ ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ, երկարացվեց 2 անգամ, նախ՝ 22.10.2008 թվականի որոշմամբ գործունեության ժամկետ սահմանվեց 2009 թվականի փետրվարի 25-ը, իսկ 24.02.2009 թվականի որոշմամբ՝ 2009 թվականի սեպտեմբերի 15-ը:

3. Որոշման համաձայն, Հանձնաժողովն իրավունք ունի՝

ա) հարցումներով դիմելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, այդ թվում՝ ոստիկանությանը և մյուս իրավապահ մարմիններին, որոնք հնարավորինս սեղմ, բայց ոչ ուշ, քան օրենքով սահմանված ժամկետներում պետք է տրամադրեն անհրաժեշտ տեղեկություններ.

բ) հրավիրելու պաշտոնատար անձանց՝ նրանցից Հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար.

գ) իր աշխատանքներում ներգրավելու համապատասխան մասնագետների և փորձագետների, այդ թվում՝ միջազգային:

4. Հանձնաժողովի անդամները, Հանձնաժողովի որոշմամբ, օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են այցելել ձերբակալվածների և կալանավորվածների պահելու վայրեր, հանդիպել անազատության մեջ գտնվող անձանց:

### **1.3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

1. Հանձնաժողովն իր աշխատանքները արդյունավետորեն կազմակերպելու համար ներգրավել է փորձագետներ, ընդունել է իր գործունեության կանոնակարգը, աշխատակարգը և համագործակցության առաջարկ է ներկայացրել այլ մարմինների, անձանց, ինչպես նաև հասարակության լայն շերտերին:

2. Հանձնաժողովն այս նպատակով դիմել է «Օրենքի միջոցով ժողովրդավարության հաստատման Վենետիկի հանձնաժողովի» քարտուղար Ջանի Բուքիքիոյին, ԵԱՀԿ-ին և Լևոն Տեր-Պետրոսյանին՝ առաջարկելով գործուղել նաև իրենց փորձագետներին՝ նպատակ ունենալով ձևավորել հավասարակշռված փորձագիտական խումբ նաև միջազգային փորձագետների մասնակցությամբ: Սակայն նրանց կողմից փորձագետներ չեն տրամադրվել:

3. Հիմք ընդունելով գործող օրենսդրության պահանջները, Հանձնաժողովը 2008 թվականի հունիսի 24-ին հաստատեց իր գործունեության կանոնակարգը, իսկ 2009 թվականի հուլիսի 1-ին՝ աշխատակարգը:

4. Կանոնակարգի համաձայն, Հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են, որպես կանոն, յուրաքանչյուր երեքշաբթի օրը, ժամը 12.00-ին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկված օրը և ժամին: Ուրբաթ օրերին անցկացվում են աշխատանքային քննարկումներ:

5. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում գումարել է 47 նիստ և անցկացրել 64 աշխատանքային խորհրդակցություն:

6. Կանոնակարգով և աշխատակարգով Հանձնաժողովը ապահովել է Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի՝ անկախ քվերակելու իրավունք ունենալու կամ խորհրդակցական ձայնով մասնակցելու հանգամանքից, Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու հավասար հնարավորություններ:

7. Այսպես, աշխատակարգի համաձայն, Որոշման 3-րդ մասի ա) կետով նախատեսված իրավասության (այն է, Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրներն իրականացնելիս իրավունք ունի հարցումներով դիմելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, այդ թվում՝ ոստիկանությանը և մյուս իրավապահ մարմիններին (այսուհետև՝ պատկան մարմիններ), որոնք հնարավորինս սեղմ, բայց ոչ ուշ, քան օրենքով սահմանված ժամկետներում պետք է տրամադրեն անհրաժեշտ

տեղեկություններ) արդյունավետ իրականացման նպատակով Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հերթական նիստից հետո եռօրյա ժամկետում կարող է գրավոր ներկայացնել այն հարցերը, որոնք իր կարծիքով պետք է ուղղել պատկան մարմիններին: Սակայն, գրավոր առաջարկը նշված ժամկետում չներկայացնելը չի սահմանափակում Հանձնաժողովի անդամի գրավոր կամ բանավոր առաջարկությամբ հանդես գալու իրավունքը: Որոշմամբ նախատեսված խնդիրների իրականացմանն ուղղված, այլ ժամկետում ներկայացված գրավոր առաջարկությունը քննարկվում է Հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրվող առաջիկա աշխատանքային քննարկումների ժամանակ:

8. Աշխատակարգի համաձայն, ներկայացված գրավոր առաջարկը պարտադիր քննարկման է ենթարկվում Հանձնաժողովի նախագահի կողմից, աշխատանքային քննարկման ընթացքում: Աշխատանքային քննարկումների ընթացքում կամ մինչև այդ քննարկումները Հանձնաժողովի փորձագետները և/կամ մասնագետները խմբավորում են Հանձնաժողովին ուղղված առաջարկությունները: Աշխատանքային քննարկման արդյունքներով ձևավորվում է հարցման բովանդակությունը և/կամ Հանձնաժողովի առաջիկա հերթական նիստի օրակարգը:

9. Քննարկումների ժամանակ Հանձնաժողովի նախագահը ձգտում է մերձեցնել տարբեր դիրքորոշումներ ունեցող տեսակետները՝ հնարավորինս փոխհամաձայնության (կոնսենսուսի) հասնելու նպատակով: Անհնարինության դեպքում՝ քննարկվող հարցերի (ներառյալ տվյալ հարցումով հանդես գալու, հարցման բովանդակության, լսման հնարավորության ապահովման, ընթացակարգի ու լսմանը հրավիրվող անձանց կազմի սահմանման և այլն) վերաբերյալ Հանձնաժողովի դիրքորոշումը պարզելու նպատակով առաջարկությունները ներառվում են Հանձնաժողովի նիստի օրակարգում՝ քննարկման և քվեարկության համար:

10. Աշխատակարգի համաձայն, քննարկումներում, որպես կանոն քվեարկություններ չեն կազմակերպվում, իսկ առանձին դեպքերում կազմակերպված քվեարկությունները, որոնց մասնակցելու իրավունք ունեն մաս Հանձնաժողովի խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող անդամները, ունեն բացառապես խորհրդակցական բնույթ և որևէ դիրքորոշմանը կողմ, դեմ կամ ձեռնպահ լինելը հիմք չէ Հանձնաժողովի նիստի ժամանակ քվեարկության արդյունքները հաշվառելու համար:

11. Ինչպես Հանձնաժողովի նիստերի, այնպես էլ աշխատանքային քննարկումների ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի համար սահմանվել է գեկուցման, հարցեր տալու, արձագանքելու, ելույթներ ունենալու հավասար ժամանակ: Նիստերն ու աշխատանքային քննարկումները արձանագրվում են:

12. Հանձնաժողովը որդեգրել է հրապարակայնորեն աշխատելու և կոնսենսուսով որոշումներ (քվեարկությունը որպես վերջին միջոց օգտագործելու) ընդունելու գործելաոճը: Արդյունքում որևէ որոշում չի ընդունվել այս սկզբունքի խախտմամբ, իսկ Հանձնաժողովի նիստերն ու քննարկումները եղել են դռնբաց՝ զանգվածային լրատվամիջոցների համար:

Վերջիններս լուսաբանել են նիստերի ընթացքը և Հանձնաժողովում քննարկված հարցերի ու կատարված աշխատանքների վերաբերյալ մամուլում, հեռուստատեսությամբ և այլ լրատվամիջոցներով ներկայացրել իրենց մեկնաբանությունները:

13. ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, ինչպես և ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչները, ընդունելով համապատասխան հրավերը, մշտապես ներկա են գտնվել Հանձնաժողովի աշխատանքներին և, ցանկության դեպքում, ծանոթացել ստացված փաստաթղթերին:

14. Հանձնաժողովը հանդիպումներ է ունեցել ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգի, ԵԽԽՎ մոնիտորինգի Հանձնաժողովի համագեկուցողներ Ջոն Պրեսկոտտի և Ժորժ Կոլոմբիեի, ՀՀ-ում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Սիլվիա Ջեյեի, Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմների, Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցչի քաղաքական խորհրդատու Անդրեյ Դիդենկոյի, Գերմանիայի Դաշնության Մարդու իրավունքների ներկայացուցիչ Գինտեր Նյուրի հետ և տեղեկություններ հաղորդել կատարված և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ:

15. Հանձնաժողովի հրավերով Հայաստան են ժամանել ԱՄՆ-ում 2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններն ուսումնասիրող ժամանակավոր Հանձնաժողովի փորձագետները, ովքեր հանդիպումներ են ունեցել Հանձնաժողովի անդամների հետ, ծանոթացրել իրենց աշխատանքային փորձին և ցուցաբերել մասնագիտական օժանդակություն, ինչի կապակցությամբ Հանձնաժողովը իր երախտագիտությունն է հայտնում ԱՄՆ կառավարությանը:

16. Հանձնաժողովն իր աշխատանքները իրականացնելիս և սույն եզրակացությունը կազմելիս օգտվել է մամուլի հրապարակումներից, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի, HUMAN RIGHTS WATCH-ի, ընտրությունների դիտորդական միջազգային կազմակերպությունների զեկույցներից, ԵԽԽՎ բանաձևերից և այլ փաստաթղթերից:

17. Հանձնաժողովը համապատասխան հարցադրումներով դիմել է ՀՀ ոստիկանապետ Ա. Սարգսյանին և ստացել պատասխաններ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում ոստիկանության իրականացրած գործողությունների նկարագրի, դրանց իրավական հիմքերի, ներգրավված ոստիկանական ուժերի թվաքանակի և տեղաբաշխման, ամրակցված զենքի, հատուկ միջոցների տեսակների և քանակի, դրանց օգտագործման անհրաժեշտության և այլ հանգամանքների վերաբերյալ:

18. Հանձնաժողովը դիմել է ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին, Հատուկ քննչական ծառայությանը և ստացել պատասխաններ նշված իրադարձությունների հետևանքով զոհվածների մահվան հանգամանքների, այդ առնչությամբ կատարված քննչական գործողությունների, տեղազնությունների արդյունքում հայտնաբերված և առգրավված զենք զինամթերքի և այլ իրեղեն ապացույցների, դեպքերի կապակցությամբ

հարուցված քրեական գործի ընթացքի, կալանավորված անձանց քանակի և ձեռք բերված մյուս ապացույցների գնահատման արդյունքների վերաբերյալ:

19. Հանձնաժողովը պահանջել և ՀՀ առողջապահության նախարարությունից ստացել է ամփոփ տվյալներ իրադարձությունների հետևանքով զոհված և մարմնական վնասվածքներ ստացած անձանց վերաբերյալ, այդ թվում՝ դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունները:

20. Հանձնաժողովը ՀՀ ԱՆ փորձագիտական կենտրոնից պահանջել և ստացել է դատաձգաբանական, պայթյունատեխնիկական, հետքաբանական փորձաքննության ենթարկված զենքերի, զինամթերքի, հագուստների վերաբերյալ եզրակացությունները, իսկ Ռ-Գ Ն-Գ նախարարության փորձաքննագիտական կենտրոնից՝ նաև «Չերյոմուխա-7» հատուկ միջոցների վերաբերյալ կատարված փորձաքննությունների եզրակացությունները:

21. Նշված իրադարձությունների վերաբերյալ ամբողջական և բազմակողմանի պատկերացում կազմելու համար Հանձնաժողովը դիմել է նաև Լևոն Տեր-Պետրոսյանին, ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության, Իտալիայի Հանրապետության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպաններին՝ խնդրելով տրամադրել տեսագրություններ, ձայնագրություններ և այդ իրադարձություններին առնչվող ցանկացած այլ փաստեր կամ նյութեր: Մակայն նրանք Հանձնաժողովի գրություններին կամ չեն պատասխանել, կամ էլ պատասխանել են, որ օգտակար որևէ նյութ չունեն իրենց տրամադրության տակ:

22. Հանձնաժողովի անդամները 16 այց են կատարել ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրեր, այդ թվում՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ (3 այց) և հանդիպել անազատության մեջ գտնվող Արմեն Սարգսյանին, Գևորգ Մանուկյանին և Ադասի Սկրտչյանին, «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ (11 այց) և հանդիպել անազատության մեջ գտնվող Տիգրան Մելքոնյանին, Լյովա Խաչատրյանին, Սասուն Միքայելյանին, Հակոբ Հակոբյանին, Մյասնիկ Մալխասյանին, Ալեքսանդր Արզումանյանին, Արմեն Սիրունյանին, Վահագն Մելքոնյանին, Ֆելիքս Գևորգյանին, Հովիկ Բաբայանին, «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ (2 այց) և հանդիպել անազատության մեջ գտնվող Մուշեղ Սաղաթելյանին, Շանթ Հարությունյանին, Մուրեն Սիրունյանին և Հուսիկ Բաղդասարյանին: Հիվանդանոցային պայմաններում բուժում ստանալու առաջարկությամբ Հանձնաժողովը մի քանի կալանավորված անձանց վերաբերյալ դիմել է ՀՀ գլխավոր դատախազին:

23. Հանդիպումների ընթացքում Հանձնաժողովի անդամները փորձել են պարզել իրադարձությունների պատճառահետևանքային կապը, նշված կալանավորների վերաբերմունքը իրենց մեղսագրվող արարքների, հետաքննական և նախաքննական գործընթացում իրավապահ մարմինների կողմից դատաիրավական նորմերի պահպանման վերաբերյալ, կալանքի տակ գտնվելու ժամանակը, կալանավայրում պահելու պայմանները, առողջական վիճակը, լսել նրանց բողոքները:

24. Այցերի արդյունքում ստացված տեղեկատվությունը հստակեցնելու նպատակով, Հանձնաժողովն իր նիստերում հրապարակային ներկայացրել է նրանց տեսակետները՝ առանց մեկնաբանությունների:

25. Հանձնաժողով են հրավիրվել նաև նախաքննական մարմնի ներկայացուցիչները, որոնք տվել են բարձրացված հարցերի պատասխանները: Այդ կերպ Հանձնաժողովը փորձել է հրապարակային դարձնել նախաքննական գործընթացները և կալանքի տակ գտնվող անձանց իրավիճակին առնչվող բոլոր հանգամանքները:

26. Հանձնաժողովի անդամները ծանոթացել են ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վարությամբ գտնվող մի շարք քրեական գործերի նյութերին (օրինակ՝ Ա. Նազանյանի քրեական գործի նյութերին (ՀՀ քրեական օրենսգրքի 225 հոդվածի 2-րդ մաս), մասնակցել մի շարք դատական նիստերի (օրինակ՝ Երևանի Կենտրոն և Նորք - Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում ամբաստանյալ Ա. Շահինյանի, Ս. Այվազյանի, Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանում՝ «7»-ի գործով դատավարություններին և այլն):

27. 2008թ նոյեբերի 3-ին Հանձնաժողովի անդամները այցելել են ՀՀ ՈԶ թիվ 10/33 գործմաս և հանդիպել զոհված զինծառայող Տիգրան Աբգարյանի հետ դեպքի վայրում ծառայություն կատարած զինծառայողներին՝ պարզելու համար նրա մահվան հանգամանքները, ինչպես նաև իրադարձությունների օրը նրանց և ցուցարարների գործողությունների մանրամասները:

28. Հանձնաժողովի նիստերին հրավիրվել են ՀՀ նախկին ոստիկանապետ, գեներալ գնդապետ Հայկ Հարությունյանը, ՀՀ ոստիկանապետի տեղակալներ՝ գեներալ լեյտենանտ Հովհաննես Հունանյանը, գեներալ մայոր Արմեն Երիցյանը, գեներալ մայոր Սաշիկ Աֆյանը, ոստիկանության գործերի նախկին հրամանատար գեներալ մայոր Գրիգոր Գրիգորյանը, քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ գնդապետ Հովհաննես Թամամյանը, ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի տնօրեն Շոթա Վարդանյանը, նույն կենտրոնի բժշկաքրեագիտական բաժանմունքի վարիչ Վիգեն Ադամյանը, ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության պետ Ստեփան Մանուկյանը, այդ վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ Արթուր Հովհաննիսյանը, փորձագետ Գագիկ Հարությունյանը, «Ա-1 +» հեռուստաընկերության տնօրեն Մեսրոպ Մովսիսյանը և օպերատոր Հովսեփ Հովսեփյանը, լրագրողներ Գագիկ Շամշյանը և Գոհար Վեզիրյանը, ականատեսներ՝ Ռոման Գրիգորյանը, Տիգրան Կարախանյանը, Հայկ Հովակիմյանը: Նրանք ներկայացրել են 2008 թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձություններին և դրանց առանձին հանգամանքներին վերաբերող մանրամասներ և պատասխանել Հանձնաժողովի անդամներին հետաքրքրող հարցերին:

29. Հանձնաժողովի չորս նիստերին հրավիրվել է Հատուկ քննչական ծառայության խնդրո առարկա գործով քննչական խմբի ղեկավար Վահագն Հարությունյանը, ով Հանձնաժողովին տվել է պարզաբանումներ իրենց վարույթում գտնվող քրեական գործով կատարվող նախաքննության ընթացքի, կալանավորված անձանց նկատմամբ որպես խափանման միջոց կալանքը ընտրելու անհրաժեշտության և հիմնավորվածության, բավարար ապացույցների առկայության և հետաքրքրող այլ հարցերի վերաբերյալ:

30. Հանձնաժողովը հրավիրել և լսել է գոհված Տիգրան Աբգարյանի, Գոռ Զլոյանի, Դավիթ Պետրոսյանի, Տիգրան Խաչատրյանի ծնողներին, հարազատներին և ընկերներին, ովքեր ներկայացրել են նրանց գոհվելու հանգամանքների մասին իրենց հայտնի մանրամասները, ինչպես նաև իրադարձությունների ընթացքում մարմնական վնասվածքներ ստացած Վազգեն Հարությունյանին, Խաչիկ Դավթյանին, Սուրեն Հովհաննիսյանին, որոնք տվել են պարզաբանումներ իրենց վիրավորվելու հանգամանքների վերաբերյալ և պատասխանել Հանձնաժողովի անդամների հարցերին:

31. Հանձնաժողովը ՀՀ Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ին ստեղծած փաստահավաք խմբից(այսուհետ՝ նաև Խումբ) և դրա լուծարումից հետո Խմբի նախկին անդամներից ստացել է մարտի 1-2-ի իրադարձությունների կապակցությամբ նրանց կատարած ուսումնասիրությունների վերաբերյալ 2266 թերթից բաղկացած փաթեթը և այլ նյութեր ու ենթարկել մանրակրկիտ վերլուծության:

32. Հանձնաժողովի անդամները ընդգրկվելով ՀՀ Ազգային ժողովի նախագահի հրամանով ձևավորված աշխատանքային խմբում, ակտիվ մասնակցություն են ունեցել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-րդ, 225-րդ, 300-րդ և 301-րդ հոդվածներում փոփոխություններ կատարելուն: Օրենսգիրքը լրացվել է նաև մի շարք նոր հոդվածներով:

33. Հանձնաժողովը ակտիվ մասնակցություն է ունեցել «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի, ինչպես նաև ՀՀ «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկմանը, կատարել առաջարկներ, որոնք մեծամասամբ վերաբերել են ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման (կիրառման) դեպքում անմիջապես վերադասության կարգով զեկուցելուն և դրանց հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին ոստիկանության մարմնի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից անմիջապես բժշկական և դատախազության մարմիններին տեղյակ պահելուն:

34. Արձագանքելով ՀՀ Նախագահի 2008թ. մայիսի 28-ի հայտարարությանը, Հանձնաժողովը դիմել է ՀՀ Նախագահին համաներում կիրառելու անհրաժեշտության և նպատակահարմարության խնդրանքով, նկատի ունենալով, որ համաներման կիրառումը համահունչ է նաև ԵԽԽՎ բանաձևերով ներկայացված առաջարկություններին: ՀՀ

Նախագահը օգտվելով Սահմանադրությամբ ընձեռված իր լիազորություններից, համաներում հայտարարելու առաջարկությամբ դիմեց ՀՀ Ազգային ժողովին: Ազգային ժողովը 2009թ. հունիսի 19-ի որոշմամբ հայտարարեց համաներում, որն, ըստ ներկայացված հիմնավորման, տարածվելու է շուրջ 2000 անձանց՝ այդ թվում, 2008թ. մարտի 1-2-ի դեպքերով դատապարտված անձանց վրա:

35. Հանձնաժողովն իր տեսակետն է հայտնել համաներում իրականացնելու առաջարկին և եղել է դրա ջատագովը: Հաշվի առնելով ՀՀ Ազգային ժողովի կողմից համաներում հայտարարելու մասին 2009թ. հունիսի 19-ին ընդունված որոշման տրամաբանությունը, ինչպես նաև Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի 1677 բանաձևում տեղ գտած նկատառումներն ու մտահոգությունները, մասնավորապես այն, որ Վեհաժողովը ՀՀ իշխանություններին կոչ է անում թույլատրել 2008թ. մարտի 1-2-ի իրադարձությունների կապակցությամբ հետախուզման մեջ գտնվող անձանց սահմանված ժամկետում իշխանություններին ներկայանալու դեպքում մնալ ազատության մեջ՝ մինչև իրենց գործերի դատական քննության ավարտը, Հանձնաժողովը դիմել է ՀՀ գլխավոր դատախազին 2008թ. մարտի 1-2-ի իրադարձությունների կապակցությամբ մեղադրվող և հետախուզման մեջ գտնվող անձանց խափանման միջոց կալանքը փոխարինել այլ խափանման միջոցով, եթե նրանք մինչև 2009թ. հուլիսի 31-ը ներկայանան վարույթն իրականացնող մարմիններին՝ հաշվի առնելով համաներման հնարավոր կիրառությունը: Առաջարկը ընդունվել է՝ բացառությամբ մեկ դեպքի:

36. Հանձնաժողովը, ՀՀ գլխավոր դատախազին է ուղարկել Խմբի զեկույցը Համլետ Թադևոսյանի մահվան հանգամանքների ուսումնասիրության արդյունքների մասին, ինչպես նաև, Խմբի նախկին անդամներ Անդրանիկ Քոչարյանի և Սեդա Սաֆարյանի կողմից 2009 թվականի հունիսի 5-ի և հուլիսի 28-ի թվագրմամբ Հատուկ միջոցների կիրառման հետ կապված փաստերի և ՀՀ ՌԶ 10/33 զորամասի զինձառայող Տիգրան Աբգարյանի մահվան հանգամանքների ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ՝ Հատուկ քննչական ծառայության միջոցով հետագա ընթացքը լուծելու և պարզաբանումներ տալու ակնկալիքով:

37. Խմբի նախկին անդամներ Անդրանիկ Քոչարյանի և Սեդա Սաֆարյանի կողմից Հանձնաժողովին ներկայացրած անհատական զեկույցի՝ մասնավորապես, Տիգրան Աբգարյանի «բաճկոնի օձիքի և մորթենման օձիքի վրա երեքական շոշափող և միջանցիկ, անկանոն տեսքի վնասվածքների» վերաբերյալ պարզաբանումներ տալու նպատակով, Հանձնաժողովի 07.09.2009թ նիստին հրավիրվել են փորձագետներ Արամ Համբարձումյանը և Կարեն Աբրահամյանը:

38. «Մարտիմեկյան իրադարձություններին օրենքով չնախատեսված զինված միավորումների ստեղծման և ներգրավման վերաբերյալ» Խմբի նախկին անդամներ Անդրանիկ Քոչարյանի և Սեդա Սաֆարյանի կողմից 25.08.09թ. թվագրմամբ Հանձնաժողովին ներկայացրած անհատական զեկույցի կապակցությամբ, ՀՀ

պաշտպանության նախարարության թիկունքի իրային պահեստում ստուգումներ կատարելու նպատակով, 07.08.09թ. Հանձնաժողովի նիստում ստեղծվել է աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝ խմբի ղեկավար՝ Գուրգեն Արսենյան, Խմբի անդամներ՝ Արտյուշա Շահբազյան և Արամ Հարությունյան:

Որպես նյութի սկզբնաղբյուր, աշխատանքային խմբում, իր ներկայացուցիչը ունենալու և խմբի աշխատանքներին մասնակցելու հրավեր է ուղարկվել Լևոն Տեր-Պետրոսյանին, ինչպես նաև համանման առաջարկություն է արվել զեկույց ներկայացնողներին, որոնք սակայն համագործակցության հրավերը մերժել են:

Խմբի աշխատանքներին մասնակցելուց հրաժարվել է նաև Հանձնաժողովի անդամ Արամ Կարապետյանը:

Այնուամենայնիվ սեղծված աշխատանքային խմբի անդամները ստուգումների արդյունքում, արձանագրել են, որ *2008թ. փետրվարի 20-ից մինչև մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊՆ թիկունքի ծառայության առաքող թիվ 98360 գորամասում (իրային բազա) եղած նյութական արժեքների շարժը որևէ կապ չունի 2008թ. մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձություններին ՀՀ ՊՆ թիկունքի ծառայության մասնակցության հետ:*

## II. ՀՀ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

### ԵՎ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

ՀՀ նախագահական ընտրություններին առնչվող զարգացումները վերլուծելիս պետք է նկատի ունենալ, որ նախընտրական և հետընտրական իրավիճակի ձևավորմանը նպաստել էին մեր երկրում առկա օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք դեռևս չէին ստացել համապատասխան լուծումներ՝ հասարակության որոշակի հատվածի մոտ առաջացնելով արդարացի դժգոհություն:

1. Անդրադառնալով 2008թ. ՀՀ նախագահական ընտրությունների նախընտրական և հետընտրական զարգացումներին՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը 2008 թ. ապրիլի 25-ի իր արտահերթ հրապարակային զեկույցում (այսուհետ՝ Չեկույց) արձանագրել է. *«սկնհայտ սոցիալական և տնտեսական բևեռացումը, հանրային և, հատկապես, իրավապահ մարմինների նկատմամբ գոյություն ունեցող հասարակական անվստահությունը, իշխանության գերկենտրոնացումը և հասարակության մի զգալի մասի նրանից օտարված լինելը, իշխանության երեք թևերի միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմի ոչ արդյունավետ գործողությունը, մարդու և քաղաքացու իրավունքների անբավարար երաշխավորված լինելը, արտոնյալ խավի փակ համակարգի ձևավորումը հասարակության մի զգալի մասին դրդեցին կտրուկ և շրջադարձային փոփոխություններ փնտրել այս խնդիրներին լուծումներ տալու համար:»*

Նախագահական ընտրությունները կարող էին դառնալ դրանց դրսևորման պետականորեն արտոնված հնարավորությունը, ինչը սակայն ճիշտ չգնահատվեց քաղաքական ուժերի կողմից՝ չկարողանալով դրսևորել լիարժեք քաղաքական հասունություն՝ քաղաքական գործընթացը քաղաքական մշակույթի ձևավորմանը ծառայեցնելու համար: Ավելին՝ որոշ քաղաքական ուժեր, օգտագործելով իրավիճակը, ավելի խորացրեցին հասարակության բևեռացումը, ձեռավորեցին անհանդուրժողականության մթնոլորտ և ծայրահեղական գործունեության պահանջարկին համապատասխանող առաջարկներ:

Նախընտրական քարոզչությունն ընթացավ լարվածության մթնոլորտում. երկրի սոցիալ-տնտեսական, արտաքին և ներքաղաքական հիմնախնդիրների, պետական կառավարման համակարգի առավել արդյունավետ գործունեության մեխանիզմների շուրջ ծրագրային բանավեճերը մղվեցին հետին պլան՝ ճանապարհի հարթելով սև քարոզչության, հայիոյախառն պիտակավորումների համար, որի նախադրյալները դրվեցին շատ ավելի վաղ, քան նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է. *«Նախընտրական քարոզչությունը մեկնարկեց ընտրական գործընթացի այդ փուլի՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված սկզբնաժամկետից շատ ավելի վաղ: Օգտվելով*

օրենսդրության անկատարությունից, բացերից՝ զանգվածային լրատվության միջոցները, քաղաքական կուսակցությունները դեռևս 2007թ. նոյեմբեր ամսից, ըստ էության, քարոզչություն էին իրականացնում նախագահական ընտրություններում մասնակցելու մտադրություն հայտնաժ քաղաքական գործիչների օգտին կամ նրանց դեմ»:

Ըստ HUMAN RIGHTS WATCH-ի (Էջ 17) «Լևոն Տեր-Պետրոսյանը առաջին անգամ հանրային ելույթ ունեցավ 2007թ. սեպտեմբերի 21-ին՝ խստորեն քննադատելով Քոչարյանի վարչակազմը, այն անվանելով «հանցագործ վարչակարգ», և արտահայտվելով պետությունում լայն տարածում գտած կոռուպցիայի դեմ: Հոկտեմբերի 26-ին մեկ այլ ելույթի ժամանակ նա հաստատեց նախագահական ընտրություններում Սարգսյանի դեմ պայքարելու իր մտադրության մասին»:

Այսպես, 2007թ. հոկտեմբերի 26-ին Ազատության հրապարակում, Լևոն Տեր-Պետրոսյանը իր ելույթում իշխանություններին որակում է որպես՝ «Վերից վար կոռուպցիայով, հանցագործ մի վարչակազմ, որի հարաբերությունները կարգավորվում են ոչ թե օրենքներով, ոչ թե ժողովրդի կամքով, ոչ թե քաղաքական երկխոսությամբ, այլ քրեական աշխարհի կանոններով, այսինքն՝ լիովին մաֆիոզ, մինչև վերջին երանգը ստրուկտուրիզացված մի ռեժիմ, որը մեզ այսօր արդեն գլորել է 3-րդ աշխարհի նմանատիպ ռեժիմների շարքը: Դասական պետականազիտության տերմինոլոգիայում այդպիսի իշխանությունը կոչվում է «կլեպտոկրատիա», բառացի՝ «գողապետություն»: Սակայն ես կնախընտրեի ավագակապետություն»:

Այնուհետև շարունակում է. «Իմ համոզմամբ, Հայաստանի գլխավոր խնդիրն այսօր ոչ թե ապագա նախագահի անձն է, այլ ներկա վարչախմբի վերարտադրության վիճեցումը, քանզի արատավոր, նվաստացուցիչ, սեփական քաղաքացիների հանդեպ օտարավարի վարվող, հայ ժողովրդին պատիվ չբերող իշխանություն է: Ուստի այս պահից ինձ հայտարարում եմ Հայաստանի Հանրապետության Նախագահի թեկնածու»:

2007թ. նոյեմբերի 1-ին Ազատության հրապարակում, իր ելույթում Լևոն Տեր-Պետրոսյանը իշխանությունը որակում է «անառականոց», իսկ իշխանություններին «ավագակախումբ, բանդա» :

Նախընտրական քարոզչության ընթացքում հասարակությունը բաժանվեց երկու հակադիր բևեռների: Ընդդիմությունը իրենց կողմնակիցներին համարելով «համաժողովրդական շարժում», ընդդիմության թեկնածուին՝ «ժողովրդի թեկնածու» կամ «ժողովրդի ներկայացուցիչ», իսկ իշխանություններին՝ «ավագակապետության», «մոնոլիթաթաթարական խանության» ներկայացուցիչներ՝ փորձելով այս մտայնությունը արմատավորել նաև ժողովրդի մեջ՝ քաղաքական տարբեր կողմնորոշումների ունեցող քաղաքացիների միջև մտցնելով թշնամություն միմյանց հանդեպ՝ Լևոն Տեր-Պետրոսյանի քաղաքական հայացքները չպաշտպանող ընտրողներին դիտարկելով որպես «մոնոլիթաթաթարական խանության» կողմնակիցներ: Քարոզչության նման կոշտ

մարտավարությունը որդեգրել էր ընդդիմության հիմնականում մի թևը՝ Լևոն Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ:

Թերևս, չափազանց պարզունակ կլինի ենթադրել, որ անհանդուրժողականության խորացման համար պատասխանատու են միայն իշխանությունները կամ միայն ընդդիմությունը: Երկուսն էլ ունեցան իրենց բաժին ներդրումը՝ ՉԼՄ-ների ակտիվ դերակատարությամբ:

Բարձրաձայնելով և բևեռացնելով տևական ժամանակ գոյություն ունեցող օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով չլուծվող սոցիալական, տնտեսական, քաղաքական խնդիրները, իշխանության որոշ օղակներում դրսևորվող ամենաթողության, պաշտոնատար անձանց և ղեկավարների գործունեության մասնավոր կողմերը, դրանք ներկայացնելով և մեկնաբանելով ոչ թե պատճառահետևանքային կապի մեջ, այլ միայն ընդդիմադիր տեսանկյունից՝ շատ հաճախ նաև արհեստականորեն խտացված գույներով Լևոն Տեր-Պետրոսյանը կարողացավ ոտքի հանել ոչ միայն հասարակության մշտապես ակտիվ շերտերին, այլև սովորաբար, անտարբեր, չեզոք ու իներտ հատվածին: Իսկ նախընտրական քարոզարշավը գերադասեց անցկացնել զանգվածային հրապարակային հանրահավաքների և երթերի միջոցով:

Հանրահավաքների պարբերականությանը զուգահեռ ավելանում էր նաև մասնակիցների թիվը և այս հարցում նրան անգնահատելի ծառայություն մատուցեցին հատկապես Էլեկտրոնային լրատվամիջոցները:

Չանգվածային լրատվամիջոցներով քարոզարշավի լիարժեք, անկողմնակալ և հավասարաչափ լուսաբանումը կարող էր պայմաններ ստեղծել ընտրությունները փոխադարձ հանդուրժողականության մթնոլորտում անցկացնելու համար, ինչպես նախատեսված է ՀՀ ընտրական օրենսգրքով: Էլեկտրոնային լրատվամիջոցներով փոխանցվող տեղեկատվության միակողմանիությունը, երբեմն պարզապես բացակայությունը, և դրան զուգահեռ տպագիր, ինտերնետային առանձին լրատվամիջոցների օգնությամբ իրականացվող սև քարոզչությունը ձևավորեց օբյեկտիվ տեղեկատվության պակաս: Շատերը գերադասեցին ներկա գտնվել զանգվածային միջոցառումներին՝ անկողմնակալ և առանց գունազարդման տեղեկատվություն ստանալու համար:

Լևոն Տեր-Պետրոսյանը առաջադրման առաջին իսկ օրից հայտարարեց, որ հանդես է գալիս *«որպես կոռուպցիայի և ազգակցական, արյունակցական ու խնամիական հարաբերությունների վրա հիմնված իշխանության դեմ պայքարող մարտիկ»*: Նա ներկայացվում էր որպես համախմբման և *«ատելի իշխանությունների»* դեմ *«մինչև վերջ»* պայքարի ելած *«մարտիկ»*, *«իմաստուն քաղաքական գործիչ»*, որը միայն հաղթանակներ է կերտել և Հայաստանը աշխարհին ներկայացրել *«որպես հավասար և արժանապատիվ գործընկեր»*: Արդյունքում, ընտրական գործընթացը հանրության գիտակցության մեջ ներարկվեց որպես *«ազգային ազատագրական պայքար»*:

Այդպիսի մեխանիզմների կիրառումը հնարավորություն տվեց ոչ միայն հետզհետե ավելացնել հանրահավաքների մասնակիցների թիվը, այլև ուժեղացնել նրանց ակտիվությունն ու դարձնել իրենց կողմից առավել կառավարելի:

Մարդու իրավունքների պաշտպանի գնահատմամբ. *«Իշխանական քարոզիչներն ուշադրությունից բաց թողեցին այն հանգամանքը, որ ընդդիմության քննադատության թիրախը ոչ թե տնտեսական զարգացման հիմնախնդիրներն են, այլ քաղաքացիների մի ստվար խմբի սոցիալական վիճակը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների անմխիթար վիճակը, պետական կառավարման ոլորտում առկա բազմաթիվ թերությունները և նմանատիպ այլ երևույթները»:*

Աստիճանաբար Ազատության հրապարակում սկսեցին հավաքվել հասարակության ամենատարբեր խավերի ներկայացուցիչները սոցիալական և իրավական տարբեր կարգավիճակով, կրթությամբ, անհատական առանձնահատկություններով հակադիր բևեռներում գտնվող մարդիկ: *«Նրանց միավորում էր այն արժեքների բացակայության կամ պակասի վերաբերյալ մտահոգությունը, որ որոշ հոգեբաններ և իրավաբաններ հետազայում բնորոշեցին որպես զուտ «նեյրոլինգվիստիկ» դրսևորումներ՝ «հայրենիք, ընտանիք, արդարություն, ժողովրդավարություն, իրավահավասարություն, մարդու իրավունքներ և ազատություններ»:* ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի «Արտահերթ հրապարակային գեկույց

Ինչպես սովորաբար ընտրարշավների ժամանակ՝ տեղի ունեցավ իշխանության անձնավորում՝ շարժմանը տալով առարկայական ուղղվածություն, օգտագործելով և խորացնելով հասարակական գիտակցության ու ընկալման մեջ իշխող հուզական կարծրատիպերը *«դարաբաղցիներ-հայաստանցիներ», «դարաբաղյան կլան», «դարաբաղյան խունտա»:* Ջուզահեռ Լևոն Տեր-Պետրոսյանի նախաձեռնած շարժումը հասարակության մի մասի կողմից գնահատվեց որպես *«քաղաքական աղանդ»:* *«Ջգուշացեք Լևոնի վկաներից», «Վտանգավոր է քաղաքակրթության համար», «Լևոն, հեռացիր», «Հեռացեք մարդասպաններ»* կարգախոսներով բողոքի ցույցեր, նստացույցեր կազմակերպվեցին Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի եւ տան մոտ :

Քարոզարշավի սկզբից ընտրազանգվածի մեջ սերմանվեցին կասկածներ ընտրությունների օրինականության վերաբերյալ՝ *«մեր հաղթանակը այլընտրանք չունի», «հաղթանակը անկասելի է», «մենք հաղթած ենք»* արտահայտությունների օգտագործմամբ: Փաստորեն, ի սկզբանե, ընդդիմության կողմից հետազգործողությունները կանխորոշված էին՝ պատրաստ էին ընդունել բացառապես իրենց հաղթանակն ամրագրող արդյունքները, իսկ չհաղթելու դեպքում՝ գնահատականը մեկն էր՝ *«կեղծվել են»*, ուրեմն պետք է պայքարել: Հրավիրվեց հանրահավաք՝ և տրվեց գործողությունների հետազգա ծրագիրը՝ *«մեզնից ոչ ոք տուն չի գնա, մինչև մենք տեր չկանգնենք մեր հաղթանակին և մեր կամքին»:*

Պաշտոնական ընտրարշավին նախորդող շրջանում և ընտրարշավի ամբողջ ընթացքում ընդդիմադիր թեկնածուն՝ Լևոն Տեր-Պետրոսյանը և նրա թիմը քարոզչությունը

հիմնականում իրականացրել են գործող իշխանությունների բացասական կերպարի կերտման շուրջ, իր կողմնակիցների մեջ սերմանելով իրենց ասածների բացարձակ ճշմարտելիությունը և իրենց հաղթանակի անխուսափելիությունը:

2008 թվականի հունվարի 22-ին իր ելույթում Լ. Տեր-Պետրոսյանը նշել է. *«Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպիսի կամք, ինչպիսի վճռականություն, անձնագոհության ինչպիսի պատրաստակամություն կդրսևորի ձեզանից յուրաքանչյուրը: Անձամբ ես և իմ տասնյակ հազարավոր կողմնակիցները պատրաստ ենք մատուցել մեր անմնացորդ ծառայությունը ազգային-ազատագրական պայքարի նվիրական գործին:*

*Պատրաստ ենք հանուն Հայաստանի լուսավոր ապագայի լարել մեր ողջ ուժերը, ներդնել մեր բոլոր ջանքերը, ենթարկվել ցանկացած զրկանքի ու գոհողության»:*

Կերտելով իշխանությունների՝ *«գողի, ավազակի, անբարոյականի, կեղեքիչի, բթամիտի»* կերպար մի կողմից, իսկ մյուս կողմից՝ ժողովրդի *«ազատատենչ, իմաստուն, վճռական, ազնիվ, բռնապետության դեմ ոտքի ելնելու վճռականությամբ»* և այլն հակադիր կերպար՝ մարդկանց մեջ ձևավորվում էր ոչ միայն անհանդուրժողականություն, այլև *«հանցագործին»* պատժելու խոստումներով *«...նրա ողջ ավազակախումբը, որը նրա հետ կամ պետք է հայտնվի ճաղերի հետևում, կամ էլ ինչ-որ կերպ ճողոպրի մեր երկրից:»*

Մյուս կողմից Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարում էր. *«Հարստության մեծ մասը օլիգարխների ձեռքին է, դա էլ են խլելու նրանցից...:»*

Այսպիսով, սեփականության պաշտպանությունը կամ վերաբաշխումը ևս դարձավ նախընտրական քարոզչության կարևոր ուղղություններից մեկը, ինչը բնականաբար բերեց սեփականության իրավունքը ամեն գնով պաշտպանելու կամ ծայրահեղ հակադիր վարքագիծ դրսևորելու ձգտմանը:

Իշխանություններին սատարող քաղաքական ու հասարակական ուժերի, պետական կառավարման համակարգում աշխատող ծառայողների, խոշոր ու միջին գործարարների մեծագույն հատվածի մոտ ձեւավորեցին իրենց ապագայի հանդեպ վախի եւ անորոշության հավաքական զգացում :

Իշխանությունների դեմ հակաքարոզչության պատկերն ամբողջացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հարկային ու իրավապահ մարմինների, դատախարակական համակարգի, պետական կառավարման այլ ինստիտուտների նկատմամբ օբյեկտիվորեն գոյություն ունեցող անվստահության խորացումը, ապա նաև՝ անհանդուրժողականության ձևավորմանն ուղղված դիրքորոշումների տարածումը:

Հարկ է նշել, որ նախընտրական լարվածության մեծացմանը նպաստել է նաև ընդդիմադիր մյուս թեկնածուների քարոզչությունը: Իրենց քարոզչության հիմնական շեշտը դնելով միայն գործող իշխանությունների քննադատության վրա, կրկնելով ու ընդգծելով երկրի սոցիալական, տնտեսական չլուծված խնդիրները, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա հիմնախնդիրները: Ծրագրային բանավեճի բացակայությունը, իշխանությունների տարբեր ստորաբաժանումների ոչ աղեկվատ

գործունեությունը նպաստեց հասարակության հակաիշխանական տրամադրությունների բևեռացմանը:

2. Նախագահական ընտրությունների մեկնարկից առաջ և նախընտրական քարոզչության ժամանակ սկիզբ առած հասարակության բևեռացումն ու պառակտումը գազաթնակետին հասավ քվեարկության օրը, որն անցավ ծայրահեղ լարված և ժողովրդավարական ընտրություններին անհարիր միջադեպերի պայմաններում: Ընդդիմությունը՝ բոլոր հասու միջոցներով վարկաբեկում և քննադատում էր իշխանություններին, իսկ իշխանությունը՝ ընդդիմությանը: Այսպիսի ընտրապայքարի պայմաններում քվեարկության փուլը չէր կարող անցնել հանդարտ և առանց փոխադարձ մեղադրանքների:

Ընդդիմությունը հիմնականում բողոքում էր ընտրական հանձնաժողովների անդամների և ոստիկանության աշխատակիցների անգործությունից (ավելի շատ՝ օրենքի շրջանակներում պաշտոնական պարտականությունները չկատարելուց կամ իրավունքները գերազանցելուց), իսկ իշխանամետ ուժերը՝ հիմնականում Լ. Տեր-Պետրոսյանի վստահված անձանց գործողություններից:

Լարված մթնոլորտ էր ոչ միայն քվեարկության ընթացքում, այլև արդյունքների ամփոփման և ձայների վերահաշվարկման ժամանակ:

Հայաստանի նախագահական ընտրություններին դիտորդական առաքելություն էին իրականացնում միջազգային և տեղական տասնյակ կազմակերպություններ: Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ տեղ գտած խնդիրներին անդրադարձել է, մասնավորապես՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելությունը: Նրանց միջանկյալ զեկույցում դիտարկված ընտրատեղամասերի մոտ 16 տոկոսում քվեարկության արդյունքների ամփոփումը գնահատվել է որպես «վատ» կամ «շատ վատ»:

Դիտորդները արձանագրել են, որ որոշ դեպքերում, ընտրական հանձնաժողովը չի իրականացրել այլ թեկնածուների կողմից պահանջված վերահաշվարկը:

Նախագահական ընտրություններին զուգահեռ, հասարակության մեջ ձևավորված լարված մթնոլորտի շիկացմանն են նպաստել նաև ընտրությունների վերաբերյալ միջազգային դիտորդական առաքելությունների իրարամերժ դիրքորոշումները: Այսպես, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջազգային երկարաժամկետ դիտորդական առաքելության 2008 թ. փետրվարի 20-ին հրապարակած նախնական եզրակացությամբ՝ *«Փետրվարի 19-ի նախագահական ընտրությունները Հայաստանում անցկացվեցին մեծապես երկրի միջազգային պարտավորություններին համապատասխան՝ չնայած հետագա բարելավումը անհրաժեշտ է՝ կապված դեռևս առկա մարտահրավերների հետ»*: Մոտ 400 միջազգային դիտորդների դիտարկումների ընդհանուր տպավորությունը փոխանցելով՝ ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդների հատուկ համակարգող Անն-Մարի Լիզինը նշել է, *«որ նախորդ ընտրությունների համեմատ կար առաջընթաց»*՝ *«Նախորդ նախագահական ընտրությունների համեմատությամբ նշանակալի առաջընթաց է նկատվել՝ կապված*

*ընտրական գործընթացի նախապատրաստման և իրականացման հետ»,-* ներկայացրել է Եվրոպական խորհրդարանի առաքելության ղեկավար Մարի Անն Իսլեր Բեգինը:

ԵԱՀԿ-ի, ԵԽԽՎ-ի և Եվրոպական խորհրդարանի համատեղ միջազգային դիտորդական առաքելությունը սկզբնական շրջանում հավանություն տվեց ընտրություններին՝ փետրվարի 20-ին հրապարակելով նախնական զեկույց, որում նշվում էր, որ *«ընտրությունները հիմնականում համապատասխանում են երկրի ստանձնած միջազգային պարտականություններին:»* Նմանատիպ հայտարարություններ արեցին նաև Եվրոպական Միության գերագույն հանձնակատար Խավիեր Սոլանան, Եվրոպայի արտաքին կապերի հանձնակատար Բենիտա Ֆերերա-Վալդները, Եվրոպական Միության նախագահությունը և Եվրոպայի խորհրդի հատուկ ներկայացուցիչը:

Միևնույն ժամանակ՝ ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի երկարաժամկետ դիտորդական առաքելության ղեկավար Գերտ Արենսը 2008թ.-ի փետրվարի 29-ին «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում ասել է. *«Նախորդ ընտրություններին տված մեր գնահատականում մենք ասել ենք, որ այդ ընտրությունները մեծամասամբ համապատասխանել են եվրոպական չափանիշներին, այստեղ ասում ենք՝ ընտրությունները հիմնականում անցկացվել են երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան: Երբ անցած տարի՝ խորհրդարանական ընտրությունների դեպքում օգտագործում էինք «մեծամասամբ» բառը, ի նկատի ունեինք՝ 80-90 տոկոսով համապատասխանել են ընդունված չափանիշներին, իսկ այս անգամ օգտագործված «հիմնականում» բառը կարող է նշանակել՝ 51 տոկոս են համապատասխանել, 70 տոկոս, բայց ոչ ավելին»:*

Առնվազն տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ նման հեղինակավոր կազմակերպությունները կարող են միմյանց միանգամայն հակասող հայտարարություններ անել, ավելին՝ ներկայացնել այդ հակասություններն իրենց զեկույցներում:

Հավանաբար, այդ հակասականությունը կարող էր պայմանավորված լինել ընդդիմության նեկայացուցիչների բավականին կոշտ և սուր գնահատականներով՝ ուղղված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելությանը: Մասնավորապես, փետրվարի 23-ին տեղի ունեցած հանրահավաքի ընթացքում Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարել է, որ «այդ կեցվածքն իրեն հիմք է տալիս եզրակացնելու, որ Արևմուտքին թերևս չի հետաքրքրում Հայաստանի ժողովրդավարությունը, ժողովրդավարական իշխանության, ինտելեկտուալ իշխանության առկայությունը, որովհետև նա չի ցանկանում, որ Հայաստանի իշխանությունն իր հետ խոսի հավասարը հավասարի պես, այլ ցանկանում է, որ լինի թույլ և կամակատար իշխանություն:»

3. Հետընտրական զարգացումները սկիզբ առան ընդդիմության՝ ընտրությունների հաջորդ օրից սկսած ու 10 օր տևած՝ օրենքով սահմանված կարգի խախտմամբ կազմակերպված հանրահավաքներից:

Քաղաքական տարբեր բևեռներում գտնվող ուժերը տրամագծորեն հակադիր մեկնաբանություններ էին տալիս ընտրություններին, դրանց ընթացքին ու արդյունքներին:

Այդ պայմաններում ավելի ազդեցիկ էին դառնում զանազան ասեկոսեների տեսքով շրջանառվող տեղեկությունները, որոնք նպաստում էին հասարակության մեջ ընդհանուր լարվածության մեծացմանը: Լարումը սրվում էր նաև տարբեր մասնագետների ու քաղաքական գործիչների՝ հանրահավաքի կազմակերպիչների ու մասնակիցների հասցեին հնչող մեղադրանքներով, նրանց գործողությունների միակողմանի մեկնաբանություններով:

Առաջացած անվստահության մթնոլորտում արմատական գործելաոճ որդեգրած հասարակության մի մասի համար ոչ արդյունավետ էր հնչում տարբեր հասարակական կազմակերպությունների, արվեստի, գիտության գործիչների՝ բողոքը դադարեցնելու և հանդուրժողական լինելու վերաբերյալ հայտարարություններն ու կոչերը, այդ թվում անարձագանք մնաց նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու թեմակալ առաջնորդների և եպիսկոպոսների ժողովի Փետրվարի 29-ի ուղերձը ուղղված ժողովրդին, որով հորդորվում էր պահպանել ողջամտության ու խոհեմության ոգին, լինել զգոն, օրինապահ, անարձագանք թողնել ատելություն և թշնամանք հրահրող ամեն ձայն, յուրաքանչյուր քայլ կատարել մեր երկրի հեղինակության, մեր ներկայի և ապագայի հանդեպ լուրջ մտահոգությամբ:

Ընդդիմադիր գործիչները, իրենց հերթին, հմտորեն օգտագործեցին ստեղծված իրավիճակը:

Նախընտրական և հետընտրական ժամանակահատվածների քարոզչության համադրումը ակնհայտ է դարձնում, որ նախընտրական քարոզչությունն ու քվեարկության օրը հնչեցվող հայտարարություններն ու գործողությունները միտված էին հետընտրական զարգացումներին: Փետրվարի 20-29-ին Ազատության հրապարակում հնչող քարոզչության մեջ հստակ առանձնանում էին իշխանությունների կողմից ժողովրդի վրա բռնության, ընտրակեղծիքների, «*ժողովրդի թեկնածուի*» տարած հաղթանակին տեր կանգնելու, գործող իշխանության նկատմամբ անհանդուրժողականության պնդումները:

Չանգվածային հուզական տրամադրությունը ավելի սրելու համար Լևոն-Տեր Պետրոսյանը և նրա կողմնակիցները օգտագործում էին զանգվածին «*պատժելու*» իրավունքով օժտելու ներշնչման միջոցները. «*Եթե այդ ժամկետները կսպառվեն, և մեր պահանջները չեն կատարվի, մենք իրար հետ կանենք այն, ինչ պետք է անենք*», «*որևէ մեկը չի կարող մեզ կանգնեցնել*», «*ժողովուրդն ինքը պետք է գտնի կամք պատժելու այդ հանցագործներին:*»

Հակադիր մղումների գերակշռության պայմաններում աճում էր հասարակության լարվածությունը: Հետընտրական շրջանը շատ քաղաքագետներ որակում են «*իշխանության և ընդդիմության միջև նյարդերի պայքար*»: Այս իրավիճակում ՉԼՄ-ները հիմնականում շարունակում էին բևեռացված մեկնաբանությունները: Հասարակության

հոգեբանական տագնապը ավելի էր սրվում իշխանության կողմից ընդդիմադիր գործիչների կամ նրանց համախոհների կալանավորման մասին տեղեկատվությամբ:

Արմատական ընդդիմության վերնախավը շարունակում էր հետընտրական քարոզչության ընթացքում փորձարկված անհանդուրժողականությունը խորացնող տեխնոլոգիաների կիրառումը, այդ թվում՝ մտացածին տեղեկությունների տարածումը: Օրինակ՝ Լ.Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբին ի սկզբանե հայտնի է եղել, որ Լևոն Տեր-Պետրոսյանը նախագահական ընտրությունների արդյունքում չի հաղթել, սակայն հրապարակավ պնդել են հակառակը՝ հանրահավաքներին ընտրազանգվածի մասնակցությունն ապահովելու համար: Մասնավորապես, ըստ Լևոն-Տեր Պետրոսյանի նախընտրական շտաբի քարոզչական խմբի ղեկավար Տիգրան Հակոբյանի՝ «*Լևոն-Տեր Պետրոսյանի 60-ից ավելի տոկոս ձայներով հաղթելու մասին Ալիկ Արզումանյանի հայտարարությունը նորմալ քարոզչական էլեմենտ է, որն օգտագործվում է ցանկացած երկրում ընտրությունների ժամանակ: Ի վերջո, պետք է նաև ընդունել, որ հանրահավաքային ելույթներն ունեն իրենց տրամաբանությունը՝ զանգվածներ գրավելու խնդիր:» Թերեւս նույն նպատակն էր հետապնդել նաև ընտրախախտումների վերաբերյալ երբեմն չափազանցված տեղեկատվության տարածումը: Օրինակ՝ ըստ Շիրակի մարզում տեղակայված տարբեր ընտրատեղամասերում Լևոն Տեր-Պետրոսյանի վստահված անձանց, ինչպես նաև նրա մորեղբոր որդու՝ Մարտին Ղարիբյանի՝ քվեարկության օրը և արդյունքների ամփոփման ժամանակ որևէ ընտրախախտում՝ բաց քվեարկության, քվեաթերթիկների լցուման, ընտրակաշառք բաժանելու դեպքեր իրենց ընտրատեղամասերում չեն արձանագրել: Ըստ քրեական գործերի նյութերի «Դիմում-բողոքներ ներկայացրել են «դրսից լսած խոսակցությունների հիման վրա»՝ ՀՀ Նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի թիվ 33 ընտրատարածքի շտաբի պետ Կարեն Իզիթյանի դրդմամբ՝ թիվ 33 ընտրատարածքում համատարած ընտրակաշառք բաժանելու մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելու նպատակով:*

Այսօրինակ կեղծ ահազանգերի առատությունը կեղծն ու իրականը խառնեց իրար և հիմք տվեց իրավապահ մարմիններին հայտարարելու, որ թեկնածուների վստահված անձանց կողմից ներկայացվում են ընտրախախտումների վերաբերյալ կեղծ, իրականությանը չհամապատասխանող բողոքներ՝ այդպիսով փորձելով արդարացնել նաև իրականում գրանցված խախտումներին օպերատիվ չարձագանքելու հանգամանքը:

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից հիմնված ընտրական դիտորդական առաքելության կատարած մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում արվել է եզրակացություն, որ՝ «*Թեև 2008 թվականի նախագահական ընտրությունները հիմնականում համապատասխանել են ԵԱՀԿ պարտավորություններին և միջազգային չափանիշներին, նախընտրական շրջանում և քվեարկության ժամերին՝ որոշ պարտավորությունների նկատմամբ ի հայտ եկան լուրջ մարտահրավերներ՝ հատկապես ընտրությունների օրվանից հետո:*

*Սա ժողովրդավարական ընտրությունների համար էական չափանիշների նկատմամբ դրսևորեց անբավարար հարգանք և արժեզրկեց ամբողջ ընտրական գործընթացը»:*

ԵԽԽՎ 1609 բանաձևը գնահատելով 2008 թվականի նախագահական ընտրությունները, արձանագրեց, որ չնայած դրանք *«անցկացվեցին հիմնականում Եվրոպայի Խորհրդի չափանիշներին համահունչ»*, ընտրությունները դիտարկող ժամանակավոր հանձնաժողովը արձանագրեց մի շարք խախտումներ և թերություններ, որոնցից ամենակարևորն էին՝ բոլոր թեկնածուների համար նախընտրական քարոզարշավի իրականացման ոչ հավասար պայմանները, ընտրական վարչարարության ոչ բավարար թափանցիկությունը և բողոքների ու գանգատների քննության գործընթացում բողոքաբերների համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի չապահովումը:

ԵԽԽՎ-ն 1609 բանաձևում ավստասանքով է նշում, որ նկատված խախտումները և թերությունները չնպաստեցին ընտրական գործընթացի նկատմամբ հանրության՝ առանց այդ էլ խախտված վստահության մակարդակի բարձրացմանը, միաժամանակ հասարակության մի հատվածի շրջանում հարցեր առաջացնելով ընտրությունների արդյունքի վստահելիության կապակցությամբ: ԵԽԽՎ գնահատականի համաձայն՝ *«հենց հանրային վստահության պակասը հիմք դարձավ նախնական արդյունքների հրապարակմանը հաջորդած, թեև առանց նախապես պաշտոնական տեղեկացման, խաղաղ ցույցերի համար, որոնք տասը օրվա ընթացքում հանդուրժվում էին իշխանությունների կողմից»:*

Հետընտրական զարգացումների շրջանում արդեն Հայաստանի իշխանությունները ընտրություններում նկատված և միջազգային դիտորդների արձանագրած խախտումները, թերություններն ու բացթողումները շտկելու նպատակով ընդունել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ/ԸՄԴԱ առաքելության վերջնական գեկույցի առաջարկությունների ճնշող մեծամասնությունը, բազմիցս հայտարարել ԵԽԽՎ 1609, 1620, 1643 և 1677 բանաձևերի կատարումը ապահովելու և ԵԽ-ի հետ համագործակցելու պատրաստակամության մասին: Միջոցներ են ձեռնարկվել ՀՀ նախագահական ընտրությունների քարոզարշավի ընթացքում, քվեարկության օրը տեղի ունեցած ընտրախախտումները, քվեարկության արդյունքները կեղծելու դեպքերը բացահայտելու ուղղությամբ: Դատարան է ուղարկվել 18 քրեական գործ՝ 26 անձի վերաբերյալ:

Միջազգային դիտորդական առաքելությունը, որում ներգրավված են եղել ԵԽԽՎ, Եվրոպական խորհրդարանի և ԵԱՀԿ ԽՎ-ի դիտորդները, իր վերջնական գեկույցում հանգամանալից ուսումնասիրել է այն բոլոր սխալները, թերությունները, վրիպումները եւ բացթողումները, որոնք ի հայտ են եկել ընտրական գործընթացի բոլոր բաղադրիչներում: Վերջնական գեկույցում արդեն իսկ ուսումնասիրված է նախընտրական քարոզչության փուլից սկսած այն մթնոլորտը, որի պայմաններում քաղաքական գործընթացի

մասնակիցների, նախընտրական շտաբների և թեկնածուներին աջակցող քաղաքացիական ակտիվիստների գործողությունների արդյունքում վերջնականապես շիկացավ հասարակական մթնոլորտը, խորացավ անհանդուրժողականությունն ու անվատահոությունը հասարակական տարբեր խավերի և խմբերի միջև, վախի, ատելության և թշնամանքի ազդակների տակ հասարակությունը վերջնականապես երկփեղկվեց և բևեռացավ: Այս պայմաններում Նախագահի թեկնածու, ՀՀ առաջին Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին աջակցող արմատական ընդդիմադիր գործիչները և արմատականացած դժգոհ ընտրագանգվածը քաղաքական ուղղորդմամբ հիմնավորապես մերժեցին ճանաչել նախագահական ընտրությունների արդյունքները:

Ընտրություններում հաղթած թեկնածու Սերժ Սարգսյանը արդեն փետրվարի 26-ին Նախագահի մյուս թեկնածուներին համագործակցության կոչ արեց: Փետրվարի 29-ին Սերժ Սարգսյանը քաղաքական համագործակցության համաձայնագիր ստորագրեց նախագահական ընտրություններում երրորդ տեղը գրաված Արթուր Բաղդասարյանի հետ:

Ընտրված Նախագահ Սերժ Սարգսյանի շուրջ մի քանի թեկնածուների և նրանց կողմնակիցների համախմբումն ու համագործակցությունը Լևոն Տեր-Պետրոսյանի թիմում ընդունվեց զայրույթով և առավել սրեց արմատական տրամադրությունները: Սերժ Սարգսյանի՝ բոլոր քաղաքական ուժերին ուղղված համագործակցության կոչը Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից մերժվեց:

Հետընտրական լարվածության այս պայմաններում Լևոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցների գործողությունները գործող Նախագահ Ռոբերտ Քոչարյանը փետրվարի 23-ին որակեց *«իշխանությունը զավթելու ոչ լեգիտիմ փորձ»* և հայտարարեց, որ պատասխանը կլինի *«վճռական և կտրուկ»*:

Փետրվարի 27-ին Ժողովրդական կուսակցության նախագահ Տիգրան Կարապետյանը դիմեց Սահմանադրական դատարան՝ ընտրությունների արդյունքները անվավեր համարելու դիմումով: Նույն պահանջով փետրվարի 29-ին Սահմանադրական դատարան դիմեց նաև Լևոն Տեր-Պետրոսյանը: Նրա ներկայացուցիչները պնդում էին, որ նախընտրական քարոզարշավի ընթացքում, ընտրությունների օրը և արդյունքների վերահաշվարկի ժամանակ եղած խախտումները այն չափերի էին, որ անհրաժեշտ էր չեղյալ համարել ընտրությունների ընդհանուր արդյունքները:

Մարտի 8-ին Սահմանադրական դատարանը հաստատեց ԿԸՀ 2008թ. փետրվարի 24-ի թիվ 24-Ա որոշումը, համաձայն որի փետրվարի 19-ին ՀՀ Նախագահ է ընտրվել Սերժ Սարգսյանը: Չնայած դատարանի որոշումը հատուկ անդրադարձ չէր անում ընտրական գործընթացի վրա, քարոզարշավի խախտումների ազդեցության մասին Լևոն Տեր-Պետրոսյանի պնդումներին, այնուամենայնիվ ՍԳ-ն քննադատում էր ՀՌԱԽ-ին և ԿԸՀ-ին՝ քարոզարշավը վերահսկելու իրենց իրավական պարտավորության չկատարման համար՝ գտնելով, սակայն, որ նրանց անգործությունը չի ազդել ընտրությունների արդյունքների վրա: Թեպետ ՍԳ-ն հաստատել է գլխավոր դատախազին ուղարկված ՏԸՀ

արձանագրությունների անճշտությունները, այդուհանդերձ համարել է, որ դրանք բավարար չեն ընտրությունների արդյունքների վրա ազդելու համար: Արդյունքում, ՍԴ-ն առաջարկել է վերանայել ՀՀ ընտրական օրենսգրքի այն դրույթները, որոնք վերաբերում են ընտրական դիմումների և բողոքների ընդունմանը:

Այսպիսի պայմաններում անցան 2008 թվականի նախագահական ընտրությունները Հայաստանում, որոնք միջազգային դիտորդական կազմակերպությունների կողմից արժանացան Հայաստանում երբևէ անցկացված ընտրությունների շարքում ամենադրական գնահատականի, իսկ արմատական ընդդիմության և նրանց համակրող ընտրազանգվածի մոտ առաջացրին անվստահություն ու խիստ դժգոհություն: Արմատական ընդդիմության բողոքի զանգվածային գործողությունները շարունակվեցին մինչև 2008 թվականի մարտի 1-ը:

Ամփոփելով 2008թ. ՀՀ նախագահական ընտրությունների նախընտրական և հետընտրական զարգացումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

1) նախագահական ընտրությունների քարոզարշավի ժամանակ քաղաքական տարբեր ուժերի ընտրապայքարում անտեսվեցին նախորդ տասնամյակներում պետության ձեռքբերումները և հաջողությունները, շեշտադրվեցին և բևեռացվեցին դեռևս չլուծված խնդիրները՝ ընտրողների ուշադրությունը կենտրոնացվեց երկրում առկա բացասական երևույթների ու իրողությունների վրա, դրանք վերացնելու իշխանության կամ անկարողության, կամ ցանկության բացակայության վրա,

2) ընտրապայքարի առաջին իսկ օրից որդեգրվեց թշնամանքի ու ատելության քարոզչության քաղաքականությունը՝ այդ հիմքի վրա կառուցվեցին նախընտրական և հետընտրական պայքարը,

3) հասարակության մեջ իշխանության նկատմամբ անվստահության խորացմանը և արմատական ընդդիմության նկատմամբ հետաքրքրության մեծացմանը նպաստեց նախընտրական քարոզչության անհավասար և անհամաչափ, հաճախ միտումնավոր ու միակողմանի լուսաբանումը զանգվածային լրատվամիջոցներով,

4) ընտրությունների օրը և ընտրություններին հաջորդած տաս օրերի ընթացքում ընդդիմության կազմակերպած չարտոնված հանրահավաքները ապակայունացնում էին իրավիճակը երկրում, ակնհայտորեն գերլարված իրավիճակին պետք էր լիցքաթափում, որը կարող էր և պետք է լիներ խաղաղ ճանապարհով՝ իշխանության ու ընդդիմության միջև հանդուրժողականության ու փոխհամաձայնության միջոցներ գտնելով, բայց իշխանության և ընդդիմության փոխադարձ անհանդուրժողականությունը և փոխզիջման որոնման անհնարիությունը հանգեցրին մարտի 1-2-ին ծավալված դեպքերին:

**III. 2008թ. ՄԱՐՏԻ 1-Ի ԱՌԱՎՈՏՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ  
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ**

**3.1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԸ**

2008թ. մարտի 1-ի առավոտյան Ազատության հրապարակում ՀՀ ոստիկանության գործողությունների օրինաչափության և համաչափության գնահատման նպատակով կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվեց հետևյալը.

2008թ. փետրվարի 28-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Գորիկ Հակոբյանը ՀՀ ոստիկանապետ Հայկ Հարությունյանին հասցեագրած գրությամբ հայտնել է. *«Ըստ ՀՀ ԱԱԾ-ում ստացվող օպերատիվ տվյալների՝ Երևան քաղաքում տեղի ունեցող հանրահավաքի մասնակիցներին բաժանվելու է հրազեն, պայթուցիկ նյութեր, մետաղյա ձողեր ու մահակներ, որոնք նրանց կողմից կարող են օգտագործվել հրահրվող հնարավոր սադրիչ և հակահրավակյան գործողությունների ընթացքում»*: ՀՀ ոստիկանապետն իր տեղակալներ Արմեն Երիցյանին և Սաշիկ Աֆյանին հանձնարարել է գրության մեջ նշված տեղեկություններն ուսումնասիրել օպերատիվ ճանապարհներով և դրանց հիմնավորման դեպքում ձեռնարկել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Այնուհետև՝ 2008թ. փետրվարի 29-ին, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետ Ներսես Նազարյանը, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի (ԿՀԴՊ) գլխավոր վարչության պետ Աշոտ Գիզիրյանը և քրեական հետախուզության գլխավոր վարչության (ԶՀԳՎ) պետ Հայկ Միլիտոնյանը զեկուցագրեր են ներկայացրել ՀՀ ոստիկանապետ Հայկ Հարությունյանին այն մասին, որ *«նշված ստորաբաժանումների օպերատիվ աշխատակիցների հետ կապի մեջ գտնվող գործակալական ցանցից վերջին մի քանի օրերի ընթացքում ստացվել են տեղեկություններ, որ Ազատության հրապարակում ընթացող չարտոնված հանրահավաքի մասնակիցները պատրաստվում են ապակայունացնել իրավիճակը, ցույցերի մասնակիցների մոտ նկատվել են հրազեն, պայթուցիկ նյութեր, երկաթյա ձողեր, երկաթյա հարմարեցված սարքեր /«ոզնիներ»/, հրահեղուկ շշեր, փայտյա մահակներ և այլ իրեր, որոնք հնարավոր է, որ օգտագործվեն ոստիկանության աշխատակիցների և ընդդիմությանը չհարող քաղաքական գործիչների նկատմամբ»*

Նշված տեղեկատվության հիման վրա 2008թ. փետրվարի 29-ին ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի տեղակալ Հովիկ Թամամյանը ԶՀ գլխավոր վարչության պետ Հայկ Միլիտոնյանին ներկայացրել է միջնորդություն՝

«տեղանքի հետազոտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու վերաբերյալ՝ նպատակ ունենալով «ստանալ տեղեկություն պայթուցիկ նյութերի, զենքի, երկաթյա ձողերի, դյուրավառ հեղուկներով լցված շշերի և մարմնական վնասվածքներ պատճառելու համար հարմարեցված այլ առարկաների առկայության վերաբերյալ: Միջոցառման սկիզբը՝ մարտի 1-ին, ժամը 7.00-ին, տևողությունը՝ 45 րոպե. ոստիկանության ծառայողներին դիմադրություն ցույց տալու պարագայում՝ ըստ անհրաժեշտության:»

Քրեական հետախուզության գլխավոր վարչության պետը նույն օրը կայացրել է որոշում՝ 2008թ. մարտի 1-ին, ժամը 7.00-ին, Ազատության հրապարակում «տեղանքի հետազոտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելը թույլատրելու մասին:

Միջոցառման իրականացման նպատակով նույն օրը ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Սաշիկ Աֆյանի մոտ անցկացվել է օպերատիվ խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել և հաստատվել է Ազատության հրապարակում 2008թ. մարտի 1-ին իրականացվելիք միջոցառման պլանը և այդ ընթացքում օգտագործվող հիմնական և օժանդակ ուժերի հաշվարկը:

Նշված որոշումը կայացվել է հիմք ընդունելով «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ և 19-րդ հոդվածների, «Օպերատիվ - հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 24-րդ և 36-38-րդ հոդվածների պահանջները:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ ոստիկանության տեղեկատվության մեջ առկա է հակասություն հետևյալ առումով: Այսպես. ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Գորիկ Հակոբյանը ՀՀ ոստիկանապետ Հայկ Հարությունյանին 28.02.2008թ. հասցեագրած գրությամբ հայտնել է, որ միջոցառման մասնակիցներին բաժանվելու են հրազեն, պայթուցիկ նյութեր: ՀՀ ոստիկանության 2008թ. մարտի 1-ի հաղորդագրության մեջ ասվում է. *«փետրվարի 29-ին օպերատիվ տեղեկություններ ստացվեցին, որ միջոցառման մասնակիցներին պետք է բաժանվեն մեծ քանակությամբ հրազեն, նռնակներ, պայթուցիկ նյութեր, մետաղյա ձողեր և մահակներ: Նույնպիսի օպերատիվ տվյալներ են ստացվել նաև ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում»:* Սակայն, ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Հայկ Միլիտոնյանի կողմից *«տեղանքի հետազոտում միջոցառում իրականացնելու մասին»* 29.02.2008թ. ընդունված որոշման մեջ նշված է, որ ցուցարարների մոտ առկա են զենք և զինամթերք: Հետևաբար, մնում է ենթադրել, որ Հայկ Միլիտոնյանի կայացրած որոշման մեջ նշվող ցուցարարների մոտ զենք և զինամթերքի առկայության մասին տեղեկությունները ոստիկանությունը ստացել է 2008թ. փետրվարի 29-ի երեկոյան և, անմիջապես, կայացվել է որոշում՝ հաջորդ օրը՝ մարտի 1-ին, *«տեղանքի հետազոտում»* միջոցառում իրականացնելու մասին:

Միաժամանակ Հանձնաժողովը գտնում է, որ նման միջոցառման անցկացման համար բերված իրավական հիմքերը բավարար են, այսինքն, «տեղանքի հետազոտում» օպերատիվ հետախուզական միջոցառումը իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններում:

Ազատության հրապարակում տեղանքի հետազոտում իրականացնելը հանձնարարվել է 133 ոստիկաններից բաղկացած խմբին, որում ընդգրկված են եղել ոստիկանության օպերատիվ ծառայությունների աշխատակիցներ: Միևնույն ժամանակ, համաձայն միջոցառման ընթացքում օգտագործվող ոստիկանական ուժերի հաշվարկի, իրավիճակի սրման դեպքում ազգաբնակչության անվտանգությունը ապահովելու և հասարակական կարգը պահպանելու նպատակով՝ Ազատության հրապարակի հարակից տարածքներում տեղակայվել են ոստիկանության օժանդակ ուժերը՝ ոստիկանության 602 ծառայողներ: Ոստիկանության զորքերի հասարակական կարգի պահպանության գնդի ուժերն իրականացվող միջոցառմանը ներգրավված չեն եղել, նրանք տեղակայված են եղել Մաշտոց-Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում՝ Ֆրանսիայի հրապարակում, և գտնվել են ռեզերվում: Ոստիկանության զորքերի հասարակական կարգի պահպանության գնդի ուժերը միայն ժամը 11.30-ից են օգտագործվել Ազատության հրապարակի շրջափակման գործողություններում:

Տեղանքի հետազոտում իրականացնելու նպատակով Ազատության հրապարակ ժամանած ոստիկանության ծառայողները եղել են անզեն և առանց անհատական պաշտպանության միջոցների: Ոստիկանության օժանդակ ուժերը նույնպես եղել են անզեն, իսկ հատուկ պաշտպանիչ միջոցներ՝ վահան, մահակ և սաղավարտ, ունեցել են միայն պարեկապահակային ծառայության գնդի ծառայողները:

Հանձնաժողովը գտնում է, որ օպերատիվ հետախուզական միջոցառմանը անմիջական մասնակից ոստիկանության ծառայողների կողմից միջոցառմանը անզեն մասնակցությունը ընդունելի է, հաշվի առնելով, որ իրենք պետք է անմիջապես իրականացնեին տեղանքի հետազոտումը, ինչը զենքը ձեռքին լինելու պայմաններում գործնականում դժվար է, ավելին՝ ոստիկանության օժանդակ ուժերի առկայությունը ըստ էության կարող էր բավարար անվտանգություն ապահովել:

Սակայն, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և տվյալ միջոցառման բնույթը, Հանձնաժողովը անընդունելի է համարում միջոցառման մասնակից ոստիկանության ծառայողների անհատական պաշտպանության միջոցների (սաղավարտ՝ կասկա) բացակայությունը: Հանձնաժողովը առաջարկում է քննարկման առարկա դարձնել և սահմանել հստակ կանոններ՝ ոստիկանության ծառայողի անհատական անվտանգությունը ապահովելու տեսանկյունից:

2008թ. մարտի 1-ի առավոտյան Ազատության հրապարակում ՀՀ ոստիկանության գործողությունների ղեկավար է հանդիսացել ՀՀ ոստիկանության պետի տեղակալ,

նստիկանության գեներալ-մայոր Սաշիկ Աֆյանը, իսկ օպերատիվ-հետախուզական գործողությունները ղեկավարել է նստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի տեղակալ, նստիկանության գնդապետ Հովիկ Թամամյանը:

Ըստ նստիկանության, «օպերատիվ ծառայության 133 աշխատակիցները տեղանքի հետազոտում կատարելու նպատակով՝ 2008թ. մարտի 1-ին ժամը 07.00-ին անգեն և առանց անհատական պաշտպանության միջոցների մեկնել են Ազատության հրապարակ, որտեղ բարձրախոսով մի քանի անգամ դիմել են հավաքվածներին՝ թույլ տալու իրականացնել նշված միջոցառումը: Սակայն այնտեղ գտնվող 800-900 զանգվածային հրապարակային միջոցառման մասնակիցները (այսուհետ՝ միջոցառման մասնակիցներ) արգելափակել և չեն թույլատրել նստիկաններին մոտենալ տեղանքի հետազոտման վայրին, այնուհետև՝ ցուցաբերել ակտիվ դիմադրություն: Միջոցառման մասնակիցների առաջին շարքում կանգնած հարբած և առավել ագրեսիվ տրամադրված անձինք հայիոյել են՝ սպառնալով հաշվեհարդար տեսնել նստիկանների հետ: Նրանց այդ վերաբերմունքից ոգևորված միջոցառման մյուս մասնակիցները հարձակվել են նստիկանների վրա, նետել քարեր, նրանց հարվածել փայտե մահակներով և մետաղյա ձողերով: Ստեղծված իրավիճակից և իրավախախտումների բնույթից ելնելով՝ միջոցառման ղեկավարի կողմից տեղում օպերատիվ որոշում է կայացվել անհապաղ սկսել խմբակային անհնազանդությունը կանխելուն ուղղված միջոցառումներ՝ ներգրավելով իրավիճակի սրման դեպքում ազգաբնակչության անվտանգությունն ապահովելու և հասարակական կարգը պահպանելու նպատակով Ազատության հրապարակին հարակից տարածքներում տեղակայված նստիկանության օժանդակ ուժերը:»

Նախևառաջ, հաշվի առնելով հասարակությունում քննարկման առարկա դարձած լինելու հանգամանքը, Հանձնաժողովը քննարկել է և միջոցառումը սկսելու ժամի հետ կապված տարածայնությունները, չնայած նրան, որ այդ հարցը իրավական որևէ հետևանք չի առաջացնում: Ոստիկանության պնդմամբ և ներկայացված նյութերով նշվում է, որ միջոցառումը անցկացվել է ժամը 07.00-ին: Հանձնաժողովը արձանագրում է, որ իրականում «տեղանքի հետազոտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը նախատեսվել է անցկացնել 07.00-ին: Սակայն Հանձնաժողովը չի կարող համաձայնվել, այն հանգամանքի հետ, որ միջոցառումը սկսվել է այդ ժամին, քանի որ «Հ-1» հեռուստաալիքի տեսանյութից երևում է, որ ժամը 6.55 րոպեին միջոցառումն ընթացքի մեջ էր: Դատաբժշկական փորձաքննություններ նշանակելու մասին ՀՀ Հատուկ քննչական ծառայության քննիչների կայացրած որոշումներում և ՀՀ դատախազության մարտի 1-ի հաղորդագրությունում նշվում է, որ միջոցառումը սկսվել է ժամը 6:00-ի սահմաններում: Այդ մասին են վկայում նաև դատաբժշկական փորձաքննության ուղարկված նստիկանության 6 աշխատակիցներ և 4 քաղաքացիներ, որոնք փորձագետներին հայտնել են, որ մարմնական վնասվածքները ստացել են մարտի 1-ին, ժամը 6.00-ի սահմաններում:

Հիշյալ փաստերի համադրումից Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Ազատության հրապարակում միջոցառումը սկսվել է ոչ թե ժամը 7.00-ին, ինչպես հայտարարում է ոստիկանությունը, այլ, ամենայն հավանականությամբ՝ 6.40-ի սահմաններում:

Ինչպես վկայում են Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված փաստերը, ոստիկանների կողմից Ազատության հրապարակին մոտենալու ժամանակ, հրապարակային միջոցառման կազմակերպիչները արդեն տեղյակ են եղել ոստիկանության ծառայողների մոտենալու մասին, հետևաբար ունեցել են բավարար ժամանակ, հանրահավաքի մասնակիցներին կազմակերպելու և հորդորելու այն ուղղությամբ, որպեսզի բացառվի բախումը ոստիկանության հետ: Ընդ որում, Հանձնաժողովի տրամադրության տակ եղած տեսանյութերից ակնհայտ է, որ հրապարակային միջոցառման մասնակիցների կողմից դրսևորվել է ագրեսիվ վարքագիծ: Ասվածը հիմնավորվում է նաև «Ազատություն» ռադիոկայանի կայքում գետեղված Լևոն Տեր-Պետրոսյանի 2008թ. մարտի 1-ի հարցազրույցով, որում նա նշում է, որ *«քարձրախոսով ցուցարարներին հորդորել է կոնտակտի մեջ չմտնել ոստիկանների հետ,»* բայց, փաստորեն, ոչ բոլորն են կատարել նրա խնդրանքը: Նույն հարցազրույցում նա նաև ներկայացնում է դեպքերի հետևյալ նկարագրությունը. *«Սկզբից միանգամից չսկսեցին, շարք կազմեցին, կանգնեցին ժողովրդի առջև...: Եղավ դիմադրություն ժողովրդից նաև, այդպես չէր, որ հանձնվեցին, երկու կողմից էլ գուցե կան, չգիտեմ, վիրավորներ...»*

Նման պայմաններում Հանձնաժողովն արձանագրում է, որ հրապարակային միջոցառման կազմակերպիչների կողմից պետք է ձեռնարկվեին անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ոստիկանության հետ բախումները կանխելու համար: Այս տեսանկյունից Հանձնաժողովը գտնում է, որ հրապարակային ցանկացած միջոցառման կազմակերպիչի օրենքով սահմանված պարտականությունն է, միջոցառման ընթացքում ապահովել մասնակիցների կողմից օրենսդրության պահպանումը, առավելա, եթե խոսքը վերաբերում է այնպիսի իրավիճակի, երբ հասարակության մեջ իրավիճակը այնչափ լարված է:

Հանձնաժողովի կարծիքով, «տեղանքի հետազոտում» միջոցառումը դեռ չսկսած՝ ձախողվել է, քանի որ նախապես տեղի է ունեցել օպերատիվ տեղեկատվության արտահոսք, ինչը հիմնավորված է նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներով և օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Օպերատիվ տեղեկատվության արտահոսքի արդյունքում միջոցառման մասնակիցները հասցրել են նախապատրաստվել ու դիմադրություն ցույց տալ միջոցառմանը մասնակցող ոստիկաններին:

Ոստիկանության հետագա գործողությունները Հանձնաժողովը դիտարկում է որպես Ազատության հրապարակի զանգվածային հրապարակային միջոցառման դադարեցմանը, ապա՝ հարկադիր դադարեցմանն ուղղված միջոցառում: Այդ մասին են վկայում նաև ոստիկանության տրամադրած տեսանյութը, որտեղ հստակ լսվում է միջոցառման մասնակիցներին ուղղված ոստիկանության «Ազատեք հրապարակը» կոչը, ինչը

բարձրախոսով բազմիցս կրկնվել է, ինչպես նաև ՀՀ դատախազության մարտի 1-ի տարածած հաղորդագրությունը. «2008թ. մարտի-1-ի առավոտյան ժամը 6.00-ի սահմաններում օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հրապարակային միջոցառումները ոստիկանության աշխատակիցների կողմից, «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ հարկադիր դադարեցնելու նպատակով ձեռնարկված գործողությունների ընթացքում...» և այլն:

Միաժամանակ, Հանձնաժողովի տրամադրության տակ եղած տեսանյութերը վկայում են, որ Ազատության հրապարակի զանգվածային միջոցառման կազմակերպիչներին և մասնակիցներին ոստիկանությունը բազմիցս, մի քանի օր շարունակ, բարձրախոսով դիմել և տեղեկացրել է, որ միջոցառման մասնակիցների գործողություններն անօրինական են, այդ իսկ պատճառով պահանջել է դադարեցնել զանգվածային միջոցառումը և ազատել հրապարակը: Ընդ որում, զանգվածային միջոցառման անցկացման անօրինականության մասին օրեր շարունակ նախազգուշացնելուց և զանգվածային միջոցառումները դադարեցնել պահանջելուց զատ ոստիկանությունը որևէ այլ գործողություն չի ձեռնարկել զանգվածային միջոցառումը հարկադրաբար դադարեցնելու համար՝ դրանով իսկ զանգվածային միջոցառման կազմակերպիչներին և մասնակիցներին հնարավորություն ընձեռելով այդ ընթացքում ինքնակամ դադարեցնել այն: Սակայն, ոստիկանության հնչեցրած կոչերը մնացել են անպատասխան և անտեսվել զանգվածային միջոցառման կազմակերպիչների և մասնակիցների կողմից:

Նշված հանգամանքների պայմաններում Հանձնաժողովը արձանագրում է, որ ոստիկանությունն իր գործողություններով զանգվածային միջոցառման կազմակերպիչներին և մասնակիցներին համապատասխան ողջամիտ ժամկետ և հնարավորություն է ընձեռել զանգվածային միջոցառումն ինքնակամ դադարեցնելու համար:

Ազատության հրապարակի հարակից տարածքներում տեղակայված ոստիկանության օժանդակ ուժերը հրապարակ են մտել երեք ուղղություններով այնպես՝ որպեսզի հնարավորություն տրվի միջոցառման մասնակիցներին Տերյան և Թումանյան փողոցների ուղղությամբ հեռանալու: Միջոցառմանը մասնակցող ոստիկանության ծառայողները զինված չեն եղել, իսկ հատուկ պաշտպանիչ միջոցներ (վահան, մահակ և սաղավարտ) ունեցել են միայն պարեկապահակային ծառայության գնդի ծառայողները: Ոստիկանության գործողությունների իրավական հիմք են հանդիսացել «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ, 29-31-րդ հոդվածների պահանջները:

Ազատության հրապարակում տեղի ունեցած իրադարձություններից հետո կատարված դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել և առգրավվել են (ըստ քրեական գործի նյութերի).

6,3մմ տրամաչափի չեխական արտադրության ատրճանակ՝ պահունակում 4 փամփուշտներով, «ՏՏ» տեսակի ատրճանակ 7,62մմ տրամաչափի՝ պահունակում 5 փամփուշտներով, «Աստրա» տեսակի 9մմ տրամաչափի ատրճանակ՝ պահունակում 5 փամփուշտներով, 2 հատ «Զարյա» տեսակի նռնակ՝ պայթուցիչներով, 7 հատ «Ֆ-1» տեսակի նռնակ՝ պայթուցիչներով, 2 հատ «Ռ-Գ-Դ-5» տեսակի նռնակ՝ պայթուցիչներով, 2 հատ «ԱՏԵ» տեսակի նռնակ՝ պայթուցիչներով, 2 հատ «Ռ-Գ-42» տեսակի նռնակ՝ պայթուցիչներով, 2 հատ պահունակ՝ լիցքավորված 45 և 30 հատ 5,45մմ տրամաչափի փամփուշտներով, 1 հատ 5,45մմ տրամաչափի փամփուշտ, 200 գ. տրոտիլային շաշկա, 1 հատ «ՄՈՒՎ» տեսակի հարվածային մեխանիզմ, 25 հատ 7,62մմ տրամաչափի հրացանային փամփուշտ, 27 հատ 7,62մմ տրամաչափի ինքնաձիգի փամփուշտ, 75 հատ մետաղական ձող, 5 հատ փայտե և 2 հատ ռետինե մահակ, 30 հատ «ոզնի» կոչվող մետաղական կոնստրուկցիա, 3 շիշ դյուրավառ հեղուկ («մոլոտովի կոկտեյլ»), 3 պլաստմասե տարա՝ դյուրավառ հեղուկով, 18 հատ հակազագ, 2 հատ դանակ, «Բոռոդիֆլուրոմեթան 13,6 կգ.» գրառմամբ մետաղյա տարա, 10 հատ «Ցիկլադոլ» տեսակի դեղահաբ, 48 հատ «Տրիֆտազին» տեսակի դեղահաբ, 2 հատ դատարկ ներարկիչ և 4 հատ մկրատ:

Հայտնաբերված իրեղեն ապացույցները ուղարկվել են համապատասխան փորձաքննությունների: Փորձաքննությունների եզրակացություններով՝ 3 ատրճանակները հանդիսանում են հրազեն, 172 փամփուշտներն ու 12 նռնակները՝ ռազմամթերք, 38 «ոզնի» կոչվող մետաղական կոնստրուկցիաները՝ մետաղական սառը զենք, 48 դեղահաբերը՝ հոգեմետ նյութեր: Մետաղական ձողերը և փայտե մահակները սառը զենք չեն ճանաչվել: Հայտնաբերված հրազենի և ռազմամթերքի վրա նույնացման համար պիտանի մատնահետքեր չեն հայտնաբերվել, ձեռնարկված քննչական գործողությունների արդյունքում դրանց պատկանելիությունը չի պարզվել:

ՀՀ Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ի կարգադրությամբ ստեղծված Փորձագետների փաստահավաք խմբից և շահագրգիռ այլ կողմերից, 2008թ. մարտի 1-ի առավոտյան Ազատության հրապարակում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ, նյութեր չեն ստացվել:

### 3.2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով, համադրելով և վերլուծելով ձեռք բերված տեղեկատվությունը 2008թ. մարտի 1-ի առավոտյան Ազատության հրապարակում տեղի ունեցած հրադարձությունների վերաբերյալ՝ Հանձնաժողովը կատարել է հետևյալ եզրահանգումները.

1. Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ ոստիկանության կողմից «տեղանքի հետազոտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու մասին ընդունված որոշումը բխում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և 36-38-րդ հոդվածների պահանջներից:

Այսպես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսվում է, որ օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում ոստիկանությունը կարող է իրականացնել շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտում: Նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն անցկացվում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի որոշման հիման վրա:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու համար օպերատիվ ստորաբաժանման աշխատակիցը պատճառաբանված միջնորդություն է ներկայացնում ստորաբաժանման ղեկավարին, որի մեջ նշում է.

- ա/ օպերատիվ-հետախուզական միջոցառման տեսակը,
  - բ/ միջոցառումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները,
  - գ/ այն տեղակատվությունը, նյութերը կամ փաստերը, որոնք նախատեսվում են ստանալ,
  - դ/ միջոցառման անցկացման տեղը, սկիզբը և ավարտը:
- Նույն հոդվածի 7-րդ կետում ասվում է.

«Միջնորդությունը քննարկում է օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած աշխատակցի մասնակցությամբ: Հարցի քննարկումից հետո օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելը թույլատրելու կամ միջնորդությունը մերժելու մասին»:

2. Հանձնաժողովի կարծիքով, Երևանի Ազատության հրապարակում գտնվող զենքի և զինամթերքի մասին ՀՀ ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության

ստացած տեղեկությունները մանրամասն օպերատիվ մշակման չեն ենթարկվել, որի դեպքում հնարավոր կլիներ ավելի հստակ պատկերացում կազմել այնտեղ գտնվող զենքի և զինամթերքի տեսակների ու քանակի, դրանց պատկանելության մասին, ինչպես նաև պարզել, թե այդ զենք-զինամթերքը որտեղի՞ց, ու՞մ կողմից և ինչ նպատակով են բերվում Ազատության հրապարակ:

Միգուցե, նշված հանգամանքների պարզաբանումը հնարավորություն կընձեռեր ժամանակին կանխարգելել դրանց կուտակումը Ազատության հրապարակում և բացահայտել դրանք բերող անձանց: Սակայն դա չի արվել, և միջոցառման ընթացքում հայտնաբերված ու առգրավված զենք-զինամթերքի պատկանելությունը չի պարզվել: Հանձնաժողովը համարում է, որ նախաքննական մարմնի կողմից այս հանգամանքը ենթակա է լրացուցիչ պարզաբանման:

Ազատության հրապարակում հայտնաբերվել է նետոդական զենք հանդիսացող «ոզնի» կոչվող մետաղական կոնստրուկցիաներ, որը պատրաստվել և տեղափոխվել է Ազատության հրապարակ զանգվածային միջոցառման մասնակիցների կողմից, ինչը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով :

Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու անհրաժեշտության և նպատակահարմարության տեսանկյունից Հանձնաժողովը կարծում է, որ, իհարկե, առավել նպատակահարմար կլիներ զենքի կուտակումները կանխել մինչև դրանք նպատակակետին հասցնելը: Հանձնաժողովը գտնում է, որ ստեղծված իրավիճակում, և գուցե ժամանակի սղության պայմաններում, նման միջոցառման անցկացման անհրաժեշտությունը առկա էր, քանի որ նման միջոցառման հասպաղումը ևս կարող էր բերել առավել անցանկալի հետևանքների:

3. Հանձնաժողովի կարծիքով, «տեղանքի հետազոտում» միջոցառումը դեռ չսկսած՝ ձախողվել է, քանի որ նախապես տեղի է ունեցել օպերատիվ տեղեկատվության արտահոսք, ինչը հիմնավորված է նախաքննությանը ձեռք բերված ապացույցներով և օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Օպերատիվ տեղեկատվության արտահոսքի արդյունքում զանգվածային միջոցառման մասնակիցները հասցրել են նախապատրաստվել ու դիմադրություն ցույց տալ օպերատիվ միջոցառմանը մասնակցող ոստիկաններին: Այնինչ կազմակերպիչները արդեն տեղյակ լինելով ոստիկանության մոտենալու մասին պարտավոր էին հրապարակային միջոցառման մասնակիցներին կազմակերպել և հորդորել այն ուղղությամբ, որպեսզի բացառվի բախումը ոստիկանության հետ: Սակայն կազմակերպիչները, Հանձնաժողովի կարծիքով, ունեին բավարար ժամանակ ձեռնարկելու առավել արդյունավետ միջոցներ կանխելու ագրեսիվ դրսևորումները ոստիկանության ծառայողների նկատմամբ:

Այս իմաստով Հանձնաժողովը գտնում է, որ հրապարակային միջոցառման ցանկացած կազմակերպիչ պարտավոր է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները ապահովելու միջոցառման մասնակիցների կողմից հասարակական կարգը չխախտելու և

օրենքով նախատեսված այլ պարտվորությունների կատարումը, ինչը հրապարակային միջոցառան կազմակերպիչների կողմից արդյունավետ չի իրականացվել:

5. Ոստիկանության հետագա գործողությունները Հանձնաժողովը դիտարկում է որպես Ազատության հրապարակի զանգվածային հրապարակային միջոցառման դադարեցմանը, ապա՝ հարկադիր դադարեցմանն ուղղված միջոցառում: Այդ մասին են վկայում նաև ոստիկանության տրամադրած տեսանյութը, որտեղ հստակ լսվում է միջոցառման մասնակիցներին ուղղված ոստիկանության «Ազատեք հրապարակը» կոչը, ինչը բարձրախոսով բազմիցս կրկնվել է, ինչպես նաև ՀՀ դատախազության մարտի 1-ի տարածած հաղորդագրությունը. «2008թ. մարտի-1-ի առավոտյան ժամը 6.00-ի սահմաններում օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հրապարակային միջոցառումները ոստիկանության աշխատակիցների կողմից, «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ հարկադիր դադարեցնելու նպատակով ձեռնարկված գործողությունների ընթացքում...» և այլն:

6. Չնայած, զանգվածային միջոցառման մասնակիցների կողմից դրսևորվել է ագրեսիվ վարքագիծ, այնուամենայնիվ, Հանձնաժողովը գտնում է, որ ոստիկանությունը պետք է օգտագործեր բոլոր հնարավոր միջոցները կանխելու հնարավոր բախումները: Ոստիկանությունը պետք է միջոցներ ձեռնարկեր զանգվածային հրապարակային միջոցառման մասնակիցների հետ երկխոսություն հաստատելու և համագործակցության մեջ մտնելու ուղղությամբ:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ ոստիկանությունը պետք է զերծ մնար ցանկացած այնպիսի գործողություններից, որոնք կարող էին առաջացնել բռնության սպառնալիք և առաջնորդվեր հրապարակային միջոցառման մասնակիցների հետ առավելապես համագործակցության գործելաճ հաստատելու սկզբունքով:

Այդ իմաստով Հանձնաժողովը գտնում է, որ ոստիկանության բոլոր այն ստորաբաժանումները, որոնք ներգրավված են հասարակական կարգի պաշտպանության գործընթացում, հատկապես զանգվածային միջոցառումներին, պետք է իրենց կազմում ունենան այնպիսի ծառայողներ, որոնք անցել են հատուկ դասընթացներ՝ զանգվածային միջոցառման մասնակիցների հետ համագործակցության և երկխոսության եզրեր հաստատելու ուղղությամբ:

Նման երկխոսության պայմաններում հնարավոր կլինի ստեղծել այնպիսի համագործակցություն զանգվածային միջոցառման մասնակիցների և ոստիկանության միջև, ինչը կապահովի մարդկանց զանգվածի՝ ոստիկանության և կազմակերպիչների համաձայնեցված կառավարումը:

Նման միջոցները կարող են բացառել կամ առնվազն նվազեցնել ոստիկանության կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք կիրառելու հնարավորությունը: Ուժի

կիրառումը ուստիկանության վերջին, ծայրահեղ այն միջոցն է, որը կարող է գործածվել բոլոր հնարավորությունները սպառելուց հետո:

7. Ոստիկանության տրամադրած տեսանյութը վկայում է, որ Ազատության հրապարակի զանգվածային միջոցառման կազմակերպիչներին և մասնակիցներին ոստիկանությունը բազմիցս, մի քանի օր շարունակ, բարձրախոսով դիմել և տեղեկացրել է, որ միջոցառման մասնակիցների գործողություններն անօրինական են, այդ իսկ պատճառով պահանջել է դադարեցնել զանգվածային միջոցառումը և ազատել հրապարակը: Ընդ որում, զանգվածային միջոցառման անցկացման անօրինականության մասին օրեր շարունակ նախազգուշացնելուց և միջոցառումը դադարեցնել պահանջելուց զատ ոստիկանությունը որևէ այլ գործողություն չի ձեռնարկել այն հարկադրաբար դադարեցնելու համար՝ դրանով իսկ զանգվածային միջոցառման կազմակերպիչներին և մասնակիցներին հնարավորություն ընձեռելով այդ ընթացքում ինքնակամ դադարեցնելու այն: Սակայն, ոստիկանության հնչեցրած կոչերը մնացել են անպատասխան և անտեսվել զանգվածային միջոցառման կազմակերպիչների և մասնակիցների կողմից: Այդ իսկ պատճառով էլ Հանձնաժողովը արձանագրում է, որ ոստիկանությունն իր գործողություններով զանգվածային միջոցառման կազմակերպիչներին և մասնակիցներին համապատասխան ողջամիտ ժամկետ և հնարավորություն ընձեռել է զանգվածային միջոցառումն ինքնակամ դադարեցնելու համար:

Ալեքսանդր Արզումանյանի և Սուրեն Սիրունյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումից ակնհայտ է դառնում, որ զանգվածային միջոցառման կազմակերպիչները միտումնավոր տարածել են սուտ տեղեկություններ՝ հրապարակային միջոցառման օրենքի տառին համապատասխանելու մասին:

Այսպես՝

- Ալեքսանդր Արզումանյանի և Ազատության հրապարակում՝ զանգվածային միջոցառման վայրում գտնվող Սուրեն Սիրունյանի միջև 21.02.2008թ. ժամը 14:26-ին կայացած հեռախոսազրույցով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սուրեն Սիրունյան – Ստեղ բան են սարքում սրանք, բերել են, ավտո են կանգնացրել ու հայտարարություն անում, որ էսօրվա ձեր հանրահավաքն անօրինական ա, խնդրում եմ ցրվեք, բան:

Ալեքսանդր Արզումանյան - Հա:

Սուրեն Սիրունյան - Բայց մենք թուղթ չունե՞նք:

Ալեքսանդր Արզումանյան - Չէ, չէ: Դուք էլ ասեք սուտ են ասում, իրանց մերը, ունենք:»

8. Միաժամանակ, Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ ոստիկանության գործողությունները կազմակերպելիս և իրականացնելիս դրսևորվել են մասնագիտական և կազմակերպչական ոչ բավարար մոտեցումներ: Հանձնաժողովը գտնում է, որ հաշվի առնելով «տեղանքի հետազոտում» միջոցառման վերաբերյալ տեղեկատվության

արտահոսքը, ապագայում պետք է ձեռնարկվեն բոլոր հնարավոր միջոցները բացառելու նախապատրաստվող օպերատիվ-հետախուզական միջոցառման գաղտնիությունը ապահովելու ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի ոչ միայն բարձրացնել միջոցառման արդյունավետությունը, այլև բացառելու հնարավոր պրովոկացիոն դրսևորումները:

9. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ազատության հրապարակում իրականացված օպերատիվ միջոցառման վերաբերյալ ոստիկանության կողմից Հանձնաժողովին տրամադրած տեսագրությունը ամբողջական չէ. չի նշված ժամը, և այն սկսվում է միջոցառման մասնակիցների ու ոստիկանների միջև արդեն իսկ ընթացող բախման կադրերով: Անտրամաբանական համարելով ոստիկանության պատճառաբանությունը, թե իրենք այդ պահից են կատարել տեսանկարահանումը, Հանձնաժողովը գտնում է, որ ապացուցողական անհրաժեշտ բազա ապահովելու տեսանկյունից, առավել նպատակահարմար է նկարահանել օպերատիվ միջոցառումների ամբողջական ընթացքը, հատկապես երբ խոսքը վերաբերում է նման հասարակական հնչեղություն ենթադրող միջոցառմանը:

10. Միաժամանակ, ըստ ականատեսների վկայության, ոստիկանությունը խլել, ապա փչացրել է լրագրողների տեսանյութերը (ԱԼՄ, «Երկիր-Մեդիա, Ա1+»): Այս պայմաններում Հանձնաժողովը հնարավորություն չունեցավ ըստ տեսանյութերի վերարտադրել Ազատության հրապարակում տեղի ունեցած դեպքերի իրական և ամբողջական ընթացքը, այն է՝ ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում է սկսվել ոստիկանության և միջոցառման մասնակիցների միջև բախումը:

11. Հանձնաժողովը անընդունելի է համարում ոստիկանության ծառայողների այս և ցանկացած այլ գործողություն, որը ուղղված է կամ անգամ անուղղակի խոչընդոտում կամ կարող է խոչընդոտել խոսքի ազգատությանը մեր երկրում: Հանձնաժողովը գտնում է, որ ոստիկանության աշխատակիցները պետք է անցնեն համապատասխան դասընթացներ լրագրողների հետ աշխատանքի կազմակերպման առումով, այն հաշվով, որպեսզի ոչ միայն չսահմանափակեն, այլև՝ ապահովեն և ցուցաբերեն անհրաժեշտ օժանդակություն լրագրողների կողմից իրենց մասնագիտական գործունեությունը արդյունավետ իրականացնելու առումով:

12. Ավելին՝ ՁԼՄ-ների կողմից տեսանկարահանված նյութերը կարող էին ոչ միայն ապահովել առավոտյան իրադարձությունների ամբողջական պատկերը, այլև կարևոր ապացուցողական նշանակություն ունենալ: Ոստիկանության նման գործելաոճը պետք է քննության առարկա դառնա պատկան մարմինների կողմից:

13. Հանձնաժողովը անընդունելի է համարում ոստիկանության կողմից Ազատության հրապարակում հայտնաբերված զենք, զինամթերքի որպես ապացույց արձանագրման գործընթացը: Ոստիկանությունը պետք է ձեռնարկեր անհրաժեշտ բոլոր միջոցները

հայտնաբերված զենք, զինամթերքի և ցանկացած այլ ապացույցի ձեռք բերումը իրականացնել օրենքի պահանջներին խիստ համապատասխան : Ազատության հրապարակում հայտնաբերված զենք, զինամթերքը որպես ապացույց արձանագրելու ընթացակարգը, ինչը երևում է տեսանյութերից, Հանձնաժողովի կարծիքով իրականացվել է քրեադատավարական նորմերի կոպիտ խախտմամբ, ինչը ոչ միայն արժեզրկել է դրանց ապացուցողական նշանակությունը, այլև հասարակության կողմից ընկալվել է ոչ արժանահավատ :

Միաժամանակ Հանձնաժողովը պարտադիր է համարում, որ ոստիկանությունը ապացույցների ձեռք բերման և պահպանման նկատմամբ դրսևորի մասնագիտական պատշաճ վերաբերմունք :

14. Որոշ դեպքերում ոստիկանության աշխատակիցները ցուցաբերել են անհարկի միջամտություն՝ Ազատության հրապարակն արդեն իսկ լքած միջոցառման մասնակիցների նկատմամբ, առանձին դեպքերում, իրականացնելով բռնություն: Հանձնաժողովը դատապարտում է ոստիկանության այդ ծառայողների նման գործելաճը և գտնում է, որ անհրաժեշտ է ոստիկանության ծառայողների համար անցկացնել պարբերական դասընթացներ, ֆիզիկական ուժի կիրառման դեպքերի և պայմանների առումով այն հաշվով, որպեսզի ուժը ոստիկանի կողմից կիրառվի որպես վերջին միջոց՝ հնարավոր այլ միջոցները անարդյունք կիրառելուց հետո:

Այս իմաստով Հանձնաժողովը ողջունում է այն, որ ոստիկանության ծառայողների ոչ համաչափ գործողությունները քննության առարկա են դարձել ՀՀ հատուկ քննչական ծառայությունում. Հանձնաժողովի տրամադրած նյութերի հիման վրա հարուցվել է երեք քրեական գործ: Հանձնաժողովը ոստիկանության աշխատակիցների այդ գործողությունները գնահատում է ոչ իրավաչափ և

և գտնում է, որ ոստիկանության ծառայողների կողմից կատարված ցանկացած նման դեպք պետք է բացահայտվի և քննության առարկա դառնա:

15. Հանձնաժողովի տրամադրության տակ եղած նյութերից երևում է, որ միջոցառմանը մասնակցել են նաև քաղաքացիական հագուստով ոստիկաններ: Հանձնաժողովը անընդունելի է համարում այդ հանգամանքը և գտնում է, որ ոստիկանության ծառայողները զանգվածային միջոցառումների ընթացքում ծառայություն իրականացնելիս պարտադիր կերպով պետք է կրեն ոստիկանության ծառայողական համազգեստ՝ զանգվածային միջոցառման մասնակիցների կողմից որպես ոստիկան ճանաչվելու համար:

16. Հանձնաժողովը արձանագրում է նաև, որ ոստիկանության աշխատակիցների զգոնությունը ապահովելու համար կարևոր նշանակություն ունի նաև յուրաքանչյուր ոստիկանի հասարակության և յուրաքանչյուր անձի կողմից անհատականացման հնարավորության ապահովումը: Հանձնաժողովը գտնում է, որ պետք է մշակվեն ոստիկանի համազգեստի և սպառազինության այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն կընձեռեն

անձին նույնականացնել ոստիկանին: Նման միջոցներից է, օրինակ, անհատականացման համարների առկայությունը ոստիկանի համազգեստի վրա:

17. Հանձնաժողովն արձանագրում է, որ 2008թ. մարտի 1-ի առավոտյան Երևանի Ազատության հրապարակում տեղի ունեցած իրադարձությունները նաև պայմանավորված էին զանգվածային հրապարակային միջոցառման կազմակերպիչների և մասնակիցների գործողություններով: Երևանի քաղաքապետարանը մեր հարցմանը պատասխանել է, որ Լևոն Տեր-Պետրոսյանը և նրա համախոհները իրենց իրազեկել են 2008թ. փետրվարի 20-ին, ժամը 17.00-ից 22.00-ը, Ազատության հրապարակում անցկացվող հանրահավաքի մասին: Այսինքն՝ այն եղել է արտոնված միայն փետրվարի 20-ին՝ մինչև ժ. 22.00-ը: Դրան հաջորդող օրերին, այն է՝ փետրվարի 21-ից մինչև մարտի 1-ը Ազատության հրապարակում կամ որևէ այլ վայրում զանգվածային հրապարակային միջոցառում անցկացնելու մասին քաղաքապետարանում որևէ իրազեկում չի ստացվել: Հետևաբար՝ այդ օրերին կայացած հանրահավաքները եղել են անօրինական:

18. 2008 թվականի փետրվարի 21-ից մինչև մարտի 1-ը ներառյալ՝ շուրջ 240 ժամ տևած զանգվածային միջոցառումները Հանձնաժողովը դիտարկում է որպես մեկ զանգվածային միջոցառում, որն իրականացվել է ցույցերի, երթերի և նստացույցերի տեսքով, որի ընթացքում պարբերաբար խախտվել է հասարակական կարգը, տրանսպորտի երթևեկությունը, կազմալուծվել է պետական հիմնարկների աշխատանքը: Ազատության հրապարակում անցկացվող զանգվածային հրապարակային միջոցառման անօրինական լինելու մասին կազմակերպիչներին և մասնակիցներին բարձրախոսով օրեր շարունակ բազմիցս նախազգուշացրել են ոստիկանության աշխատակիցները՝ պահանջելով դադարեցնել այն, ինչը պարզորոշ երևում է ՀՀ ոստիկանության տրամադրած տեսանյութից: Սակայն կազմակերպիչները ոչ միայն քայլեր չեն ձեռնարկել չարտոնված հրապարակային միջոցառումը դադարեցնելու համար, այլ ընդհակառակը, իրենց գործողություններով՝ կոչերով, հրապարակային հայտարարություններով կազմակերպել են զանգվածային միջոցառման շարունակականությունը և դրա մասնակիցների Ազատության հրապարակում գիշերելը:

Հանձնաժողովը գտնում է, որ հրապարակային միջոցառումների կազմակերպիչները պետք է հարգանք դրսևորեն երկրում գործող իրավակարգի նկատմամբ, իրենց իրավունքների խախտումները կամ ենթադրյալ խախտումները պաշտպանեն իրավական հնարավոր միջոցներով: Օրինականություն և օրենքի գերակայություն պահանջող ցանկացած քաղաքական ուժ, պետք է իր նման պահանջը դրսևորի օրինականության պահպանման պայմաններում, հակառակ դեպքում իրենց նման պահանջը դառնում է անտրամաբանական և անիմաստ :

19. 2008թ. մարտի 1-ի առավոտյան Ազատության հրապարակում ոստիկանության հնչեցրած «Ազատեք հրապարակը» կոչերին ի պատասխան՝ միջոցառման մասնակիցների մի մասը սկսել է ոստիկանության աշխատակիցներին դիմադրել, և, ինչպես երևում է

տեսանյութերից, միջոցառման մասնակիցների մի խումբ փայտե մահակներով, ձողերով հարվածներ են հասցնել ոստիկանության աշխատակիցներին, նրանց վրա նետել քարեր, փայտեր և պատահած այլ առարկաներ: Հանձնաժողովը անընդունելի է համարում ոստիկանության ծառայողին դիմադրելու, և առավելա, նրա նկատմամբ բռնություն գործադրելու ցանկացած դրսևորում: Անգամ ոստիկանի գործողությունների ենթադրյալ ապօրինի լինելը չի կարող արդարացնել նման վարքագիծը, ուստի, Հանձնաժողովը գտնում է, որ ցանկացած նման դեպքում մեղավոր անձինք պետք է բացահայտվեն և պատասխանատվության ենթարկվեն :

20. Հանձնաժողովն անթույլատրելի է համարում մարտի 1-ին և դրան նախորդող օրերին տեղի ունեցած զանգվածային հրապարակային միջոցառումներին և, ընդհանրապես, նմանատիպ քաղաքական միջոցառումներին անչափահասների ներգրավումը դրանց կազմակերպիչների կողմից՝ մասնավորապես, հրապարակում գիշերելը, որը փաստվում է տեսանյութերով, Լևոն Տեր-Պետրոսյանի մամլո ասուլիսներով և ականատեսների վկայությամբ: Բոլորիս են հայտնի իրադարձությունների օրերին տարածվող այն ստահող լուրերը, թե իբր Ազատության հրապարակում իրականացված միջոցառման ընթացքում երեխա է սպանվել: Բարեբախտաբար, այդ լուրերը շատ արագ հերքվեցին:

21. Ի սկզբանե երեխայի սպանության լուրը նպատակ է հետապնդել, որպեսզի զանգվածային միջոցառման հնարավոր դադարեցումից հետո հնարավոր լինի ազդել հասարակության զգացմունքների վրա և կրքեր բորբոքել, ինչն էլ ըստ էության տեղի ունեցավ: Հանձնաժողովը անընդունելի է համարում զանգվածային միջոցառման մասնակիցների վրա ներագդելու նպատակով կազմակերպիչների կողմից ստահող և մտացածին տեղեկությունների տարածումը, Նման գործելաոճը դատապարտելի է:

22. Ելնելով վերը նշված փաստարկներից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ 2008թ. մարտի 1-ի առավոտյան, Երևանի Ազատության հրապարակում ՀՀ ոստիկանության կողմից իրականացված գործողությունները, ընդհանուր առմամբ, եղել են իրավաչափ և համաչափ և բխել են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 19, 29, 30, 31-րդ հոդվածների, ինչպես նաև «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» 28.04.2004թ. ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերի, 14-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի պահանջներից:

Ինչպես վկայեցին հետագա գործողությունները զանգվածային միջոցառման մասնակիցների մոտ առկա են եղել ոստիկանության գործողությունների համաչափության վերաբերյալ կասկածներ, ինչը պայմանավորված էր վերը նշված օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով :

**IV. 2008թ. ՄԱՐՏԻ 1-2-ին ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ  
ՀԵՏԱԳԱ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ**

**4.1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԵՐԸ**

2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած հետագա իրադարձությունների վերաբերյալ Հանձնաժողովը կատարել է հետևյալ դիտարկումները:

Մարտի 1-ին ժամը 10-ի սահմաններում միջոցառման մասնակիցների մի մասը սկսել են հավաքվել Ֆրանսիայի դեսպանատան հարակից հրապարակում՝ շարունակելու Ազատության հրապարակում ոստիկանության կողմից դադարեցված 10 օր տևած ապօրինի զանգվածային միջոցառումը:

Ազատության հրապարակում իրականացված միջոցառումից հետո ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի ուժերը բաժանվել են խմբերի, որոնց հրահանգավորվել է Երևան քաղաքում ապահովել պատշաճ կարգ ու կանոն և չթույլատրել միջոցառման մասնակիցների նոր կուտակումներ Կենտրոն համայնքի տարածքում:

*Ըստ ոստիկանության՝ «Ժամը 11.00-ին նշված խմբերից մեկի կողմից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ Ֆրանսիայի դեսպանատան մոտ կուտակվել են մոտ 300 ցուցարարներ, որոնք դրսևորում են ագրեսիվ վարքագիծ: Անմիջապես Ֆրանսիայի դեսպանատան մոտ են ուղարկվել ՊՊԾ 50 ծառայողներ: Ճանապարհային ոստիկանության ուժերով փակվել են Գրիգոր Լուսավորչի, Արշակունյաց, Խորենացու, Վ. Սարգսյան, Իտալական և Արգիշտի փողոցները»:*

Ընդամենը մեկ ժամվա ընթացքում՝ զանգվածային միջոցառման ղեկավարների կազմակերպչական գործողությունների արդյունքում միջոցառման մասնակիցների թիվը բազմապատկվել է՝ հասնելով մոտ 2000-ի, որը օրվա ընթացքում շարունակել է ինտենսիվորեն աճել: Այդ մասին է վկայում Նիկոլ Փաշինյանի և Ալեքսանդր Արզումանյանի հեռախոսային խոսակցության գաղտնալսումը:

Ասպես՝ «ժամը 11:38-ին՝

*Նիկոլ Փաշինյան – ՈԻՄ հետ կապվում եք, ասե՞ք թող Ֆրանսիայի դեսպանատան մոտ հավաքվեն, էլի, հիմա ընդեղ լիքը ժողովուրդ ա հավաքվում :»:*

Ըստ Հանձնաժողովի տրամադրության տակ եղած N1 տեսանյութի «Ժամը 11.30-ի սահմաններում Գրիգոր Լուսավորչի փողոցի վրա՝ Կրկեսի կողմից՝ Սունդուկյան թատրոնի դիմաց, ցուցարարների կողմից մեկ տրոլեյբուս գծից հանվել, կանգնեցվել է ուղղահայաց՝

փակելով փողոցի երթևեկելի մասը, ստեղծելով բարիկադ, իսկ մոտակա կառուցվող շենքի տարածքից բերվել են զգալի քանակությամբ քարի կտորներ և մետաղյա ձողեր: Հետագայում՝ ցուցարարների կողմից ժամը 13.07-ին նշված բարիկադում է տեղակայվել ադրատար ավտոմեքենան, որը մինչ այդ, ցուցարարների պարտադրմամբ, Ազատության հրապարակից հավաքված աղբը բեռնաթափել էր քաղաքապետարանին հարակից հրապարակում: Ժամը 14.18-ին զանգվածային միջոցառման մասնակիցների կողմից գծից հանվել է երկրորդ տրոլեյբուսը և դրանով պատնեշվել հրապարակի մուտքը»:

Ըստ HUMAN RIGHTS WATCH-ի՝ *«Բախշյանը և այլ կանայք շարք էին կազմել ոստիկանների և ցուցարարների միջև՝ փորձելով հանգստացնել զայրացած ամբոխին»:* Նույն աղբյուրին տված հարցազրույցում ընդդիմադիր պատգամավոր Անահիտ Բախշյանը նշել է. *«Ոստիկանները ինձ թույլ տվեցին իրենց բարձրախոտով դիմել ցուցարարներին՝ նրանց հանգստության կոչ անելու: Ոմանք քարեր էին նետում ոստիկանների վրա: Մեզ հաջողվեց փոքր-ինչ հանգստացնել ամբոխին...»:*

Մկաված խմբակային գործողությունների արդյունքում լիովին կազմալուծվել էին հասարակական կարգը, տրանսպորտի և տարածքին հարակից կազմակերպությունների՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Ռուսաստանի դեսպանատների, Երևանի քաղաքապետարանի, «Վիվասել» հաստատության, «Գլաձոր» համալսարանի և այլնի աշխատանքները:

Այս պայմաններում ըստ ոստիկանության՝ *«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետի դրույթների համաձայն որոշվել է խստիվանել անվերահսկելի ամբոխի հակաօրինական գործողությունները: Սակայն վերջիններս հարձակվել են ոստիկանների վրա, նրանց ուղղությամբ նետել քարեր, տարբեր առարկաներ: Փոքրածավալ ոստիկանական ուժերով չի հաջողվել շտկել իրադրությունը, այդ պատճառով ժամը 12.00-ին՝ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, Ս. Աֆյանի գլխավորությամբ իրադրության վայրում գտնվող ոստիկանության և ոստիկանության զորքերի ուժերով փակվել են Գր. Լուսավորչի փողոցի տարբեր հատվածները և ավելորդ առճակատումից խուսափելու նպատակով որոշվել է զնալ բանակցային ճանապարհով»:*

Ֆրանսիայի դեսպանատան հարակից տարածքում ՀՀ ոստիկանության պետի տեղակալներ Սաշիկ Աֆյանը, Հովիկ Հունանյանը և ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի գլխավոր վարչության պետ Աշոտ Գիզիրյանը սկսել են բանակցել ընդդիմադիր պատգամավորներ Վարդան Խաչատրյանի, Ջարուհի Փոստանջյանի, Անահիտ Բախշյանի, Արմեն Մարտիրոսյանի, ինչպես նաև ընդդիմադիր այլ ակտիվիստներ՝ Երջանիկ Աբգարյանի և Մամվել Գևորգյանի հետ: Բանակցություններին մասնակցել է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը: Միջոցառման մասնակիցներին առաջարկվել է զանգվածային միջոցառումներ անցկացնելու համար Արշակունյաց պողոտայով տեղափոխվել դեպի կայարանամերձ հրապարակ, ինչին նրանք չեն համաձայնել՝ կենտրոնից հեռու լինելու պատճառաբանությամբ: Այնուհետև առաջարկվել է զանգվածային միջոցառման համար

ընտրել Հանրապետական մարզադաշտի հարակից տարածքը, ինչը միջոցառման մասնակիցների բանակցողների կողմից նույնպես մերժվել է: Ըստ Անահիտ Բախշյանի խոսքերի՝ HUMAN RIGHTS WATCH (Էջ 34) *«մենք մտավախություն ունեինք, որ այնտեղ չափազանց հեշտ կլիմայի մարդկանց ծուղակի մեջ գցել և ծեծի ենթարկել»:*

Ժամը 13.45-ին միջոցառման մասնակիցների կողմից բանակցողներին են միացել ընդդիմադիր առաջնորդներից՝ Լևոն Ջուրաբյանը և Դավիթ Շահնազարյանը: Վերջինիս կողմից առաջարկվել է զանգվածային միջոցառման համար տրամադրել Մատենադարանին հարակից տարածքը, ինչին, ըստ ոստիկանության. *«լարվածությունը թուլացնելու համար ոստիկանությունը տվել է իր համաձայնությունը՝ միաժամանակ տալով երթի և զանգվածային միջոցառման ընթացքում անվտանգության երաշխիքներ»:* Ասվածը հիմնավորվում է նաև ըստ HUMAN RIGHTS WATCH-ի ( Էջ 34) , *«ոստիկանները Շահնազարյանին թույլ են տվել ոստիկանության խոսափողով դիմել ժողովածներին՝ հայտարարելու, որ ոստիկանությունը շուտով հետ կքաշվի և թույլ կտա, որպեսզի ամբոխը տեղափոխվի Մատենադարան»:* Այդ նպատակով, համաձայն ձեռք բերված պայմանավորվածության, միջոցառման մասնակիցներին բաժանող ոստիկանության ուժերի շրթան ժամը 14-ի սահմաններում հանվել է և մյուս ուժերի հետ մեկտեղ վերատեղակայվել Գր. Լուսավորչի փողոցի երկու կողմերով դեպի Մաշտոցի պողոտա՝ ապահովելու համար միջոցառման մասնակիցների երթի ուղեկցումը դեպի Մատենադարան:

Ըստ Լևոն Ջուրաբյանի խոսքերի՝ HUMAN RIGHTS WATCH (Էջ 34) *«ոստիկաններն իրոք շահագործված էին բանակցելու նոր վայր տրամադրելու շուրջ և իրավիճակի լարվածությունը թուլացնելու, և նույնիսկ իրեն մեքենա են տրամադրել, որպեսզի մեկնի Լևոն Տեր-Պետրոսյանի նստավայր՝ վերջինիս հետ հանրահավաքի հնարավոր նոր տեղը քննարկելու նպատակով»:*

Բանակցությունների արդյունքում միջոցառման մասնակիցներին բաժանող ոստիկանության ուժերի շրթան հանելուց անմիջապես հետո Լևոն Ջուրաբյանն ամբոխին կոչ է արել չենթարկվել Մատենադարան տեղափոխվելու Դավիթ Շահնազարյանի հրահանգին, մնալ տեղում՝ մինչև Լևոն Տեր-Պետրոսյանի համապատասխան որոշման կայացումը, ինչին միջոցառման մասնակիցներն արձագանքել են հավանության աղաղակներով: Փաստորեն, ժամը 14.20-ին բանակցություններն ավարտվել են անարդյունք: Դրանից հետո ցուցարարներին կոչով դիմել է Նիկոլ Փաշինյանը և հաղորդել Լևոն Տեր-Պետրոսյանի հորդորը, առ այն, որ «սա ամենահարմար և ամենաապահով վայրն է, մանավանդ, որ մուտքերը հնարավոր է հեշտությամբ փակել, հավաքենք ինչքան հնարավոր է շատ մարդ և ստեղծենք պաշտպանական դիրքեր»:*«Հայկական ժամանակ» 26.03..08, N44 :*

Այնուհետև, Նիկոլ Փաշինյանը կոչ է արել միջոցառման մասնակիցներին *«գինվել երկաթե ձողերով, փայտե մահակներով, քարերով և ինչով պատահի, ինչպես նաև ցանկացած եղանակով նոր մարդիկ ներգրավել միջոցառմանը»:* Այնուհետև,

ցուցարարների մի մասը շարժվել է քաղաքապետարանի հարակից տարածք՝ ջարդելով քաղաքապետարանի և հարակից շենքերի ապակիները:

Ըստ N1 տեսանյութի՝ 15.28-ին զանգվածային անկարգության մասնակիցները հետապնդում և քարերով հարվածում են ոստիկանության ՈՒԱԶ մակնիշի ավտոմեքենային, որը փորձում է հեռանալ Մյասնիկյան հրապարակից, սակայն հասնելով Ֆրանսիայի դեսպանատան դիմացի մայթին ստիպված կանգ է առնում, իսկ նրա միջից իջնում և փախչում են ոստիկանության աշխատակիցներ: Անկարգության մասնակիցները ջարդում ապա հրկիզում են մեքենան:

Անկարգության մասնակիցները հետապնդում են ոստիկանության Գուգարքի բաժնի պետ Գրիշա Այվազյանին և ծեծի ենթարկում նրան:

Ըստ ոստիկանության. *«Անկարգության մասնակիցները խլել են Գրիշա Այվազյանի հաշվեցուցակային գեները»*, որի վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ: *«Այնուհետև հարձակման է ենթարկվել և ջարդվել հրդեհի վայր ժամանած հրշեջ մեքենան: Այդ ընթացքում բազմության մի ստվար զանգված, զինվելով մոտակա շինհրապարակից ձեռք բերված մետաղյա ձողերով, քարերով, փայտերով, վնասել է Մոսկվայի տունը, «Վիվասելի» մասնաշենքը և հարակից այլ օբյեկտներ»:*

Ասվածը հիմնավորվել է նաև HUMAN RIGHTS WATCH-ին Գևորգ Գ-ի տված հարցազրույցով *«Մենք մտանք շինհրապարակ և հավաքեցինք երկաթյա և փայտե ձողեր...»*, իսկ ըստ Վիգեն Վ-ի. *«Մարդիկ ինքնաշեն գեներ էին գտնում շինհրապարակից: Գրեթե բոլորի մոտ այնպիսի տպավորություն էր, որ ցուցարարներին առավոտյան բռնությամբ էին ցրել, և ասեկոսեներ կային, որ մի քանի մահվան դեպքեր են եղել: Մարդիկ շատ զայրացած էին: Նրանք ուզում էին առաջնորդին տեսնել, բայց մենք ռադիոյով լսեցինք, որ Լևոն Տեր-Պետրոսյանը տնային կալանքի է»* (նուն տեղում. էջ 37):

Ըստ ոստիկանության՝ *«Ժամը 15.00-ին տրվել է նոր հրահանգ՝ ուժեղացնել ծառայությունը ՀՀ Նախագահի նստավայրի, ՀՀ կառավարության և հանրային հեռուստատեսության շենքերի հարակից տարածքներում, ինչին ներգրավվել են ՀՀ ոստիկանության ՊՊՎ ԿՕՊ գնդի 200 ծառայող և ՈԶ 300 զինծառայող, իսկ մնացած ուժերը տեղափոխվել են Ազատության հրապարակ: Բացի այդ, ՊՊՎ 150 զինծառայողներից բաղկացած ռեզերվը փակել է Շահումյան հրապարակը՝ թույլ չտալով ամբոխին շարժվելու դեպի Հանրապետության հրապարակ»:*

Ըստ N1 տեսանյութի. *«Ժամը 15.41-ին զանգվածային անկարգության մի խումբ մասնակիցներ հրելով դուրս են բերում «Վիվասելի» մասնաշենքի մոտ կայանած ոստիկանության ՈՒԱԶ մակնիշի ավտոմեքենան, որից թալանում են ոստիկանության վահաններն ու մահակները, իսկ 17.20-ից-17.40-ի ընթացքում մի խումբ երիտասարդներ «Գլաձոր» համալսարանին հարակից անավարտ շինարարությունից, ինչպես նաև մայթերի ցանկապատից պոկում են երկաթե խողովակների կտորներ և ձեռքներին բռնած միանում միջոցառման մասնակիցներին»:*

Մտահոգված լինելով իրադարձությունների անկանխատեսելի զարգացումներից՝ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն հայոց կաթողիկոսը մարտի 1-ին փորձել է հանդիպել Լևոն Տեր-Պետրոսյանին և նրան հորդորել միջամտել ու կանխել դեպքերի վտանգավոր զարգացումները, սակայն Լևոն Տեր-Պետրոսյանը հրաժարվել է հանդիպումից:

Ըստ տվյալների, ժամը 18.00-ի դրությամբ ամբոխի ագրեսիվ հատվածը փակել էր «Մետրոպոլ» հյուրանոցի կողմից դեպի Մաշտոցի պողոտա և Երևանի քաղաքապետարան տանող ճանապարհատվածները՝ կաթվածահար անելով երթևեկությունը, իսկ այդ հատվածներին պատահաբար մոտեցող մեքենաները զավթվում էին, թալանվում և օգտագործվում բարիկադներ կառուցելու համար: Աստիճանաբար նկատվել է ամբոխի ագրեսիվ հատվածի տեղաշարժ դեպի Մաշտոցի պողոտա և Հանրապետության հրապարակ:

Ժամը 18.00-ից Շահումյան հրապարակում և հարակից տարածքներում գտնվող ոստիկանության ուժերի ղեկավարումը հանձնարարվել է ոստիկանության պետի տեղակալ Սաշիկ Աֆյանին:

Մաշտոցի պողոտա-Գր. Լուսավորչի փողոցի խաչմերուկում եղած ոստիկանական ուժերի ղեկավարումը հանձնարարվել է Արմեն Երիցյանին, իսկ ոստիկանության զորքերինը՝ Գրիքոր Գրիգորյանին:

Ժամը 18.00-ի սահմաններում Սաշիկ Աֆյանն իրադրության զարգացման մասին հերթական անգամ զեկուցել է ՀՀ ոստիկանության պետ Հայկ Հարությունյանին: Վերջինս, կարևորելով դեպի Հանրապետության հրապարակ տանող ուղղությունը՝ Կառավարություն, Կենտրոնական բանկ և այլն, հրամայել է Սաշիկ Աֆյանին Ազատության հրապարակում գտնվող ոստիկանական ուժերի մի մասի հետ տեղափոխվել Շահումյան հրապարակի տարածք, թույլ չտալ ամբոխի շարժը դեպի Հանրապետության հրապարակ, իսկ Արմեն Երիցյանին, Գրիգոր Գրիգորյանին՝ Ազատության հրապարակում գտնվող մնացած ուժերով տեղափոխվել Մաշտոցի պողոտա և Գր. Լուսավորչի փողոցի խաչմերուկ՝ չթույլատրելով ամբոխի շարժը դեպի Պարոնյան փողոց, Ազգային ժողով և ՀՀ Նախագահի նստավայր:

Ըստ N1 տեսանյութի, Մյասնիկյան հրապարակում, ժամը 18.22-ին Նիկոլ Փաշինյանը հայտարարում է. «Լևոն Տեր-Պետրոսյանը տնային կալանքի տակ է և նա հորդորում է չհեռանալ այս հրապարակից»:

Մինչդեռ, ըստ ՀՀ պետական պահպանության ծառայության 01.03.2008թ. տարածած հաղորդագրության՝ *«ՀՀ պետական պահպանության ծառայությունը, ղեկավարվելով «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով և ելնելով ՀՀ պաշտոնաթող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի անվտանգության ապահովման նկատառումներից, ինչպես նաև հաշվի առնելով, որ ՀՀ պաշտոնաթող նախագահի ելքը պահպանվող օբյեկտից կարող է*

բերել իրադարձությունների անկանխատեսելի զարգացման ու վտանգել նրա անվտանգությունը, զգուշացրել է Լևոն Տեր-Պետրոսյանին, որ անհրաժեշտ է զերծ մնալ տունը լքելու փորձերից, նշելով, որ հակառակ դեպքում ծառայությունը հրաժարվում է պատասխանատվություն կրել Լ. Տեր-Պետրոսյանի անվտանգության համար, քանի որ չի կարող ուղեկցել նրան՝ ապօրինի միջոցառմանը մասնակցելու համար»:

Ըստ ոստիկանության և նախաքննությամբ ձեռք բերված տվյալների՝ «Ժամը 19.45-ի սահմաններում զանգվածային անկարգությունների մասնակիցները հասարակական կարգի պահպանություն իրականացնող ոստիկանության ծառայողների վրա պարբերաբար կրկնվող զինված հարձակումներով փորձել են Գր. Լուսավորիչ, ապա Պարոնյան փողոցներով առաջ շարժվել դեպի Պռոշյան փողոց, ուր Ձորափի 77«ա» հասցեում են գտնվում ՀՀ Նախագահի անձնակազմի կառավարման առանձնատները, և Պռոշյան փողոցով դեպի Մարշալ Բաղրամյան փողոց, ուր գտնվում է ՀՀ Նախագահի նստավայրը և ՀՀ Ազգային ժողովը»:

Չանգվածային անկարգության մասնակիցների տեղաշարժը այդ ուղղությամբ կասեցնելու նպատակով՝ ոստիկանության զորքերի անձնակազմը, շղթա կազմելով, առաջ է շարժվել՝ զինված լինելով վահաններով, ռետինե մահակներով և սաղավարտներով: Նշված շղթայի հետևում տեղակայված են եղել հատուկ միջոցներով սպառազինված ոստիկանության զորքերի ենթասպաները: Ոստիկանության զորքերի շղթան ենթարկվել է քարկոծության՝ նախապես կոտրատված բազալտե եզրաքարերով և բետոնե սալիկներով, ամբոխի ագրեսիվ հատվածը նետել է վնասվածք պատճառելու համար հարմարեցված տարբեր առարկաներ, դյուրավառ նյութով լի ապակե շշեր: Ինչը հիմնավորվում է նաև HUMAN RIGHTS WATCH-ի 38-րդ էջի հետևյալ մեջբերումով. «ցուցարարներն սկսել են քարեր և նույնիսկ բենզինով լցված ինքնաշեն շիշ-պայթուցիկներ նետել»:

Ըստ ոստիկանության՝ «Ժամը 20.15-ին ամբոխի միջից տարբեր հրազեններից կատարվել են առաջին կրակոցները և գրեթե միաժամանակ նետվել առաջին նռնակները, որոնց հետևանքով՝ ՈԶ շրջանում եղան առաջին վիրավորները, այդ թվում մեկը՝ մահացու: Անձնակազմի շրջանում վիրավորների քանակի ավելացումը կանխելու համար ՈԶ հրամանատարի կողմից որոշվել է անձնակազմը հետ քաշել, հարձակումները կանխելու նպատակով կիրառել հատուկ միջոցներ, իսկ հոգեբանական ազդեցություն գործելու նպատակով՝ կրակ բացել անզնդակ փամփուշտներով»:

Այս առումով ըստ Գևորգ Գ-ի. «երբ ոստիկանները արցունքաբեր գազ բաց թողեցին, այդ պահին մենք սկսեցինք պայքարել: Թաքնվելով մեքենաների և ավտոբուսների հետևում՝ մենք ի պատասխան, քարեր էինք նետում: Ոմանք նաև բենզինով պատրաստված «Մոլոտովի կոկտեյլներ» էին նետում» HUMAN RIGHTS WATCH-ի (էջ 43):

Ոստիկանության զորքերի առջև դրված խնդիրը լուծելու նպատակով ՈԶ հրամանատարը որոշել է մետաղյա արգելափակոց \փշալար\ փռող մեքենան անսպասելի առաջ ուղարկել և փորձել արգելափակոց տեղադրել: Սակայն ամբոխի հարձակումը

ստիպել է մեքենայի վարորդին և անձնակազմին լքել մեքենան: Նույնատիպ գործողություն 5 րոպե անց կատարվել է նաև Մաշտոցի պողոտայի և Գր. Լուսավորչի փողոցի խաչմերուկում, որը նույնպես մատնվել է անհաջողության՝ ամբոխը հարձակվել է, փշալարը մնացել է կիսաբաց: Ազրեսիվ ամբոխի մի մասին հաջողվել է բռնազավթել ոստիկանության տրանսպորտային միջոցներից մի քանիսը, այդ թվում՝ արգելափակոց փողոց երկու ՈՒԱԶ ավտոմեքենաները, ավտոբուսը և այլ մեքենաներ, որոնցից մի մասը նրանք այրել են տեղում, իսկ մնացածը օգտագործվել է ոստիկանության շարքերի վրա գրոհելիս և այրվել հետագայում՝ Լեո-Պարոնյան փողոցների խաչմերուկի մոտ: Այդ պահին հարձակվող ամբոխը զգալի ճնշում գործադրելով ոստիկանության շարքերի վրա՝ հետզհետե կրակել է, նռնակներ և այլ առարկաներ է նետել նրանց ուղղությամբ: Ելնելով իրադրությունից՝ ամբոխին սաստելու և հարձակումները կանխելու նպատակով որոշում է կայացվել հատուկ միջոցների և անզնդակ փամփուշտներով կրակող ինքնաձիգերի կիրառումից բացի, թույլատրել ինքնաձիգերով զինված ոստիկանության զորքերի սպաներին և ենթասպաներին կրակ բացել օդ՝ օգտագործելով հարձակվողների վրա հոգեբանական ազդեցություն ունեցող լուսածիր՝ տրասիր՝ փամփուշտներ:

Ըստ Գևորգ Գ-ի վկայության՝ (HUMAN RIGHTS WATCH էջ 43) *«ոստիկանները փորձեցին փողոցը փակել փշալարերով, բայց այդ խոչընդոտը չկանխեց մարդկանց առաջխաղացումը: Այն պարզապես հետ քրդեցին: Փշալարերով բռնված մի բռնատար մեքենա հրկիզվեց»*, իսկ ըստ ականատես Գևորգեն Գ-ի՝ *«առաջին բախումների արդյունքում հրկիզված հինգ ոստիկանական մեքենա և մեկ շուռ եկած քաղաքացիական մեքենա է տեսել»* HUMAN RIGHTS WATCH էջ (43-44):

Ոստիկանության շարքերի վրա ամբոխի ճնշումը թուլացնելու համար ժամը 22.00-ի սահմաններում գործողության մեջ են դրվել թվով 3 ջրանետ մեքենաներ: Դրանք ժամանակավորապես հետ են մղել և կասեցրել ամբոխի առաջխաղացումը, սակայն ջուրը վերջանալուց հետո ստիպված են եղել նահանջել: Ամբոխը կրկին շարժվել է Գր. Լուսավորչի փողոցով դեպի Պարոնյան փողոց՝ ընթացքում հարձակվելով ջրանետ մեքենաների վրա, ոստիկանության ծառայողների և ոստիկանության զորքերի զինծառայողների վրա նետելով մետաղյա ձողեր, քարեր և «մոլոտովի կոկտեյլ» կոչվող դյուրավառ հեղուկով լցված շշեր: Ոստիկանությունը ստեղծված իրավիճակում հաշվի առնելով ամբոխի հետ բախումների ժամանակ անձնակազմի կորուստների հնարավորությունը, որոշել է կազմել զորային շղթա և նահանջել դեպի Լեոյի փողոց: Նրանց գործողությունները սաստելու և հարձակումները դադարեցնելու նպատակով տվյալ հատվածում գտնվող ինքնաձիգերով զինված ոստիկանության զորքերի 7 ծառայողների կողմից կրակ է բացվել օդ, իսկ ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայությունների, Երևան քաղաքի, Լոռու, Արագածոտնի, Գեղարքունիքի մարզային վարչությունների մոտ 200 ծառայողների ուժերով «Նաիրի» բժշկական կենտրոնի մոտից շղթա է կազմվել և փակվել Պարոնյան փողոցը: Ըստ Հանձնաժողովում հետազոտված

նստիկանության կողմից տրված փաստերի, Լեոյի փողոց մտնելուց հետո «Սվին» խանութի մոտ ամբոխի կողմից նետված մարտական նռնակի պայթյունից վիրավորվել է ՌԶ սպան, իսկ ինքնաձիգի կրակոցից մահացու վիրավորվել ՌԶ զինվորը: ՌԶ դիպուկահարը, տեսնելով Լեո-Պարոնյան փողոցների խաչմերուկի շենքի անկյունում դիրքավորված, հրազենով զինված և Լեոյի փողոցում տեղակայված նստիկանության ուժերի ուղղությամբ կրակող անձին, կրակ է բացել վերջինիս ուղղությամբ և նախնական տվյալներով՝ վիրավորել նրան ոտքի հատվածում:

Հանձնաժողովը հատկապես կարևորում է այն հանգամանքը, որ մահվան բոլոր դեպքերը տեղի են ունեցել Մաշտոց-Լեո-Պարոնյան փողոցների հատվածում, այսինքն, այնտեղ, որտեղ եղել են զանգվածային անկարգության հատկապես ագրեսիվ մասը:

Ըստ ՌԶ հրամանատար Գրիգոր Գրիգորյանի՝ *«Չանգվածային անկարգության մասնակիցների գործողությունները կրում էին կազմակերպված բնույթ, նրանք տարբեր տեղերից շրջանցում էին ՌԶ ուժերը, դուրս գալիս նրանց թիկունք կամ փակում էին հրշեջ մեքենաների ճանապարհները, որոնք պետք է ջուր մատակարարեին ջրանետ մեքենաներին»:*

Մարտի 1-ին ժամը 23-ին հրապարակվել է ՀՀ Նախագահ Ռոբերտ Բոչարյանի հրամանագիրը՝ սահմանադրական կարգին սպառնացող վտանգները կանխելու և բնակչության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով, Երևան քաղաքում արտակարգ դրություն հայտարարելու մասին: Չնայած դրան, զանգվածային անկարգությունները դեռևս շարունակվել են՝ զուգորդվելով տարածքում գտնվող խանութների ջարդով և թալանով:

Ըստ նստիկանության. *«Միջոցառումն իրականացնելիս նստիկանության զորքերը ունեցել են 16 միավոր ԱԿ-74 տեսակի ինքնաձիգ՝ 1920 հատ 5,45մմ տրամաչափի լուսածիր փամփուշտներով, 8 միավոր ԱԿ-74 տեսակի ինքնաձիգ՝ 480 հատ 5,45մմ տրամաչափի անզնդակ փամփուշտներով, 10 հատ «Կոռնետ» տեսակի ատրճանակ՝ 130 ռետինե փամփուշտներով, 4 հատ «ԿՇ-23» հրացան, որոնք նախատեսված են «Չերյոմուխա-7», «Միրեն-7» և «Վոլնա Ռ» տեսակի փամփուշտներ կրակելու համար, 7 հատ «ՄՊՇ» տեսակի ատրճանակ, որոնք նախատեսված են «Չերյոմուխա-4» տեսակի փամփուշտներ կրակելու համար, 15 հատ «Չերյոմուխա-1», 15 հատ «Չերյոմուխա-5», 80 հատ «Միրեն-6» և 16 հատ «Դրեյֆ» տեսակի արցունքաբեր նռնակներ, 7 հատ «Չարյա» և 5 հատ «Կասետ» տեսակի լուսածայնային նռնակներ, 154 հատ «Չերյոմուխա», 89 հատ «Չերյոմուխա-7» և 5 հատ «Միրեն-7» տեսակի արցունքաբեր փամփուշտներ, 180 հատ «Վոլնա Ռ» տեսակի ռետինե փամփուշտներ: Նշված հատուկ միջոցներից և անզնդակ փամփուշտներից օգտագործվել են 79 հատ «Չերյոմուխա-4», 56 հատ «Չերյոմուխա-7», 129 հատ «Վոլնա Ռ», 29 հատ «Միրեն-6», 4 հատ «Դրեյֆ», 4 հատ «Չարյա», 2 հատ «Կասետ», 280 հատ 5,45 մմ տրամաչափի անզնդակ փամփուշտներ և 62 հատ «Կոռնետ» ռետինե փամփուշտներ: Մարտական 5,45 մմ տրամաչափի 1920 փամփուշտներից օգտագործվել է*

1405-ը, իսկ մնացած 515-ը՝ վերադարձվել զինանոց: Բացի այդ, ոստիկանության գործերի դիպուկահարը զինված է եղել 1 միավոր «ՄՎՌ» տեսակի դիպուկահար հրացանով՝ 7,62մմ տրամաչափի 20 հատ փամփուշտներով, որոնցից օգտագործվել է 1-ը, իսկ 19-ը՝ վերադարձվել զինանոց»:

Ըստ ՀՀ հատուկ քննչական ծառայության. «Նկարագրված դեպքերի կապակցությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված քրեական գործով.

Մեղադրանք է առաջադրվել 152 անձի, որոնցից՝

-122-ի նկատմամբ սկզբնական փուլում խափանման միջոց է կիրառվել կալանավորում.

-30-ի նկատմամբ չհեռանալու մասին ստորագրություն.

33 անձի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է, որից՝

-8-ը դատարանների կողմից.

-25-ը նախաքննության մարմնի կողմից՝ հսկող դատախազների ցուցումներով.

29-ը անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործի մասը կարճվել. որից՝

-8-ը հսկող դատախազների կողմից.

-21-ը նախաքննության մարմնի կողմից.

Դատարան է ուղարկվել 93 քրեական գործ 116 անձի վերաբերյալ, որից՝

-87-ը կալանքով.

-29-ը այլ /ստորագրություն չհեռանալու մասին, գրավ/:

Դատարաններում քննվող գործերով 112 անձի վերաբերյալ կայացվել են դատավճիռներ, որոնցից՝

-38-ի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քր. օր-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան.

-5-ի նկատմամբ որպես պատիժ նշանակվել է տուգանք.

-62 անձ դատապարտվել է ազատազրկման.

-5 անձ արդարացվել է, որից 2-ով մեղադրանքից հրաժարվել է դատախազը.

-1 անձի վերաբերյալ քրեական գործը ՀՀ քր. դատ. օր-ի 183-րդ հոդվածի կարգով կարճվել է.

-1 անձի վերաբերյալ քրեական գործը կարճվել է՝ վտանգավոր արարք կատարելու պահին անմեղսունակության վիճակում գտնվելու պատճառով:

Դատապարտված անձանցից՝

-11-ը արդարացվել են առաջադրված մեղադրանքների առանձին մասերով.

-3-ի մեղադրանքները վերադրվել են ավելի մեղմ հոդվածներով.

-1-ի նկատմամբ ՀՀ քր. օր-ի 64 հոդվածի կիրառմամբ նշանակվել է օրենքով նախատեսված պատժից ավելի մեղմ պատիժ.

-28-ին՝ ՀՀ Նախագահի հրամանագրով շնորհվել է ներում,

- համաներում հայտարարելու մասին ՀՀ ԱԺ որոշման ընդունման պահին ազատագրկման վայրերում պատիժ կրող 29 դատապարտյալներից 19-ը՝ համաներում հայտարարելու մասին որոշմամբ ազատվել են պատիժը կրելուց:

Քրեական գործով՝

-1 մեղադրյալ գտնվում է հետախուզման մեջ.

-2-ի նկատմամբ կիրառված է չհեռանալու մասին ստորագրություն.

-1 մեղադրյալ գտնվում է կալանքի տակ:

### Երևանի Ազատության հրապարակում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում՝

-Մարմնական վնասվածք է ստացել՝

ոստիկանության 34 աշխատակից,

22 քաղաքացիական անձ:

-Դեպքի վայրի զննությամբ Ազատության հրապարակում հայտնաբերվել է՝

6,35մմ. տրամաչափի չեխական արտադրության «Z» մոդելի «B 274141» համարի ատրճանակ՝ պահունակում 4 փամփուշտ,

7,62մմ. տրամաչափի «TT» տեսակի ատրճանակ՝ պահունակում 5 փամփուշտ,

9մմ. տրամաչափի «Astra A-75L» մոդելի «23589-95A» համարի ատրճանակ՝ պահունակում 5 փամփուշտ,

2 հատ «Заря 2» տեսակի լուսաձայնային նռնակ,

2 հատ «Ռ-Գ-Գ-5» տեսակի ձեռքի նռնակ,

7 հատ «Ֆ-1» տեսակի ձեռքի նռնակ,

2 հատ ինքնաշեն «ԱՏԵ-92» տեսակի ձեռքի նռնակ,

2 հատ «Ռ-Գ-42» տեսակի ձեռքի նռնակ,

200 գրամանոց տրոտիլային պայթադուս,

1 հատ «ՄՌԻՎ-2» տեսակի հարվածային մեխանիզմ,

գործարանային արտադրության 1 հատ 5,45մմ. տրամաչափի ինքնաձիգի (ԱԿ-74, ԱԿՍ, ԱԿՍՈՒ) և 1 հատ 5,45մմ. տրամաչափի գնդացրի (ՌՊԿ-74) պահուցակ,  
76 հատ 5,45մմ. տրամաչափի մարտական փամփուշտ,  
25 հատ 7,62մմ. տրամաչափի հրացանային մարտական փամփուշտ, 30 հատ  
5,45մմ. տրամաչափի և 27 հատ 7,62մմ. տրամաչափի ինքնաձիգի մարտական փամփուշտ,  
1 հատ 5,45մմ. տրամաչափի փամփուշտ,  
5 հատ թեք տաշվածքով փայտյա ձող,  
2 ռետինե մահակ,  
72 հատ տարբեր երկարության և տրամագծի մետաղական ձող, ամրան և խողովակ,  
38 հատ «ոզնի» կոչվող մետաղական կոնստրուկցիա,  
դյուրավառ հեղուկով լցված 3 շիշ «Մոլոտովի կոկտեյլ»,  
3 պլաստմասե տարա՝ դյուրավառ հեղուկով,  
քլորիդֆտորմեթան պարունակող բաց կանաչ գույնի մետաղյա բալոն,  
18 հակազագ և մեկ կոնտեյներ,  
պլաստմասե և փայտե բռնակներով 2 դանակ,  
48 հատ դեղահար, որոնք պարունակում են «տրիֆլուպերազին» տեսակի  
հոգեներգործուն բաղադրատարրեր,  
10 հատ դեղահար, որոնք պարունակում են «տրիհեքսիֆենիդիլ» տեսակի  
հոգեներգործուն բաղադրատարրեր,  
4 բժշկական բռնիչ-մկրատ և 2 դատարկ ներարկիչ:

Երևանի քաղաքապետարանի շրջակայքում և կենտրոնական  
փողոցներում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ընթացքում՝

-Մահացել է՝

8 քաղաքացիական անձ,

ոստիկանության մեկ սպա և ոստիկանության մեկ զինծառայող:

-Մարմնական վնասվածք է ստացել՝

35 քաղաքացիական անձ,

ոստիկանության 186 աշխատակից և զինծառայող:

-Այրվել և վնասվել է 92 տրանսպորտային միջոց (նյութական վնաս՝ 70.854.525 ՀՀ  
դրամ), որից՝

27-ը՝ հասարակական տրանսպորտային միջոց (նյութական վնաս՝ 5.736.825 ՀՀ  
դրամ),

46-ը՝ ՀՀ ոստիկանությանը պատկանող (նյութական վնաս՝ 39.362.600 ՀՀ դրամ),  
19-ը՝ քաղաքացիների, այդ թվում նաև ոստիկանության աշխատակիցների  
անձնական օգտագործման (նյութական վնաս՝ 25.755.100 ՀՀ դրամ):

-Երևան քաղաքին և Երևանի «Կենտրոն» թաղային համայնքին պատճառվել է  
ընդհանուր առմամբ 69.288.760 ՀՀ դրամի նյութական վնաս:

-Վնասվել և թալանվել են թվով 12 օբյեկտներ, որի հետևանքով քաղաքացիներին և  
իրավաբանական անձանց պատճառվել է ընդհանուր առմամբ 339.954.866 ՀՀ դրամի  
նյութական վնաս:

-Դեպքի վայրի զննությամբ Երևանի քաղաքապետարանին հարակից տարածքում և  
կենտրոնական փողոցներում հայտնաբերվել է՝

շուրջ 1600 հատ տարբեր տրամաչափի պարկուճ,  
50-ից ավել տարբեր տրամաչափի փամփուշտ,  
1000-ից ավել մետաղական ձող և մահակ,  
61 շիշ դյուրավառ հեղուկ «Մոլոտովի կոկտեյլ»,  
2 հատ 20 լիտրանոց տարա՝ դյուրավառ հեղուկով:

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական  
բժշկության փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի տվյալների՝ 2008թ.  
մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում զոհվել  
են 10 անձինք: Նրանցից 1-ը հանդիսացել է ոստիկանության սպա, իսկ մյուսը՝  
ոստիկանության զինձառայող: Նրանցից Համլետ Թադևոսյանի մահը վրա է հասել  
նռնակի պայթյունից, իսկ Տիգրան Աբգարյանինը՝ հրազենային գնդակից: Մյուս 8  
մահացածները եղել են քաղաքացիական անձինք, որոնցից 4-ը՝ Դավիթ Պետրոսյանը,  
Չաքար Հովհաննիսյանը, Հովհաննես Հովհաննիսյանը և Գրիգոր Գևորգյանը զոհվել են  
հրազենային գնդակներից, 3-ը՝ Գոռ Քրոյանը, Տիգրան Խաչատրյանը և Արմեն  
Ֆարմանյանը՝ «Չերյոմուխա-7» փամփուշտների գազային նռնակներից, իսկ 1-ը՝ Սամվել  
Հարությունյանը՝ բութ առարկայով հասցված գանգուղեղային վնասվածքներից:

## 4.2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ

2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած հետագա իրադարձությունների վերաբերյալ՝ Հանձնաժողովը կատարել է հետևյալ եզրահանգումները.

1. Չնայած սույն զեկույցում նշված առանձին դեպքերի, Հանձնաժողովը եզրակացնում է, որ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած հետագա իրադարձությունների, այնուհետև՝ զանգվածային անկարգությունների խափանմանն ուղղված ոստիկանության գործողություններն ընդհանուր առմամբ եղել են իրավաչափ և բխել «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 10-12-րդ, 16-րդ, 19-րդ, 21-րդ, 25-րդ, 30-32-րդ հոդվածների, ինչպես նաև «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 14-րդ հոդվածների պահանջներից:

2. Հանձնաժողովի տրամադրության տակ եղած տեսանյութերում կան կադրեր, որտեղ պարզ երևում է, որ ոստիկանության առանձին աշխատակիցներ որոշ դրվագներում անհարկի ուժ, բռնություն են գործադրում քաղաքացիների նկատմամբ: Հանձնաժողովը դատապարտում է ոստիկանության ծառայողների կողմից ոչ իրավաչափ ուժի կիրառման ցանկացած դեպք և գտնում է, որ ոստիկանի կողմից բռնություն կիրառելու ցանկացած դեպք պետք է պատշաճ քննության առարկա հանդիսանա:

3. Հանձնաժողովի կարծիքով ոստիկանության իրականացրած գործողությունները եղել են ոչ այնքան օպերատիվ և կազմակերպված, իսկ ոստիկանության առանձին ծառայողների գործողությունները՝ մասնագիտական ցածր պատրաստվածությամբ, հակառակ պարագայում գուցե հնարավոր կլիներ նվազեցնել ծանր հետևանքների առաջացումը:

4. Հանձնաժողովի ուսումնասիրություններից պարզվել է, որ «Չերյոմուխա-7» հատուկ միջոցը օգտագործվել է ՀՀ ոստիկանության զորքերի, իսկ ավելի կոնկրետ՝ թիվ 10/33 զորամասի և հատուկ նշանակության ջոկատի ենթասպաների կողմից, որոնք էլ, դրանք կիրառելիս ոչ միշտ են պահպանել նախատեսված անվտանգության կանոնները, ըստ որոնց՝ «Չերյոմուխա-7» հատուկ միջոցը արգելվում է օգտագործել մարդկանց կուտակումների ուղղությամբ, ինչը հաստատվում է Ռուսաստանի ՆԳՆ տեխնիկական փորձաքննության եզրակացությամբ: (Արդյունքում, «Չերյոմուխա-7» հատուկ միջոցի փամփուշտներից մարմնական վնասվածքներ են ստացել 6 քաղաքացիական անձ, որոնցից 3-ը մահացել են: Այն հանգամանքը, որ արցունքաբեր գազ արտանետող այդ փամփուշտները կիրառվել են նախատեսված անվտանգության կանոնների խախտմամբ, վկայում է նաև այն փաստը, որ դրանց օգտագործման ընթացքում արտանետված գազից թունավորվել և տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել նաև ոստիկանության զորքերի 11 զինծառայող: Արդյունքում «Չերյոմուխա-7» հատուկ

միջոցների կիրառումը միգուցե պարտադրված է եղել իրավիճակով, այնուամենայնիվ, եղել է ոչ իրավաչափ:

5. Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ «Չերյոմուխա-7» հատուկ միջոցի փամփուշտները՝ արդյունավետության առումով նախատեսված են փակ տարածությունում կիրառելու համար: (Հանձնաժողովի հարցմանը ՀՀ ոստիկանությունը պատասխանել է, որ հատուկ միջոց հանդիսացող «Չերյոմուխա-7» տեսակի գազային փամփուշտները, որոնք կիրառվել են միջոցառման մասնակիցների նկատմամբ, վերջին անգամ ստացվել են 1990թ., այսինքն՝ 18 տարվա վաղեմություն ունեն, այն դեպքում, երբ դրանց պահպանման ժամկետը սահմանված է 5 տարի: Հավանաբար, ժամկետանց լինելու պատճառով էլ դրանց մի մասը չի պահպանել նախատեսված հատկությունները:

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունում կատարված դատաձգաբանական փորձաքննության թիվ 1466 եզրակացության մեջ նշված է, որ փորձաքննության ներկայացված «Չերյոմուխա-7» փամփուշտների փորձարարական կրակոցների արդյունքում պարզվել է, որ կրակված փամփուշտների 40%-ի մոտ գազային նռնակներից գազի նկատելի արտահոսք տեղի չի ունեցել, միաժամանակ, նկատելի է եղել նաև գազային նռնակների թռիչքի ցածր արագություն:)

6. Հանձնաժողովը եզրակացնում է, որ զանգվածային անկարգությունները և նման բարդ իրավիճակները կանխելուն ոստիկանությունը պատշաճ պատրաստված չի եղել թե՛ տեխնիկական, թե՛ կազմակերպչական և թե՛ բարոյահոգեբանական առումով: Այս մասին են վկայում բազմաթիվ փաստեր, այդ թվում՝ երկու անգամ փշալար փռելու անհաջող փորձերը, ջրանետ մեղքենանների անարդյունավետ օգտագործումը, ինչպես նաև ընդհանրապես՝ զանգվածային անկարգությունները կանխելուն ուղղված մյուս գործողությունները:

7. Հանձնաժողովը գտնում է, որ ոստիկանությունն անպատրաստ է եղել և չի կարողացել նախորոք կանխատեսել իրադարձությունների նման զարգացումները, ինչը իրենց հնարավորություն կընձեռեր վերահսկել և կառավարել իրադարձությունների ամբողջ ընթացքը, այնինչ նրանք կարողացել են դժվարությամբ դիմակայել զանգվածային անկարգության մասնակիցների գործողություններին:

8. Միաժամանակ, Հանձնաժողովն ընդունում է այն փաստը, որ մարտիմեկյան իրադարձություններն աննախադեպ էին իրենց բնույթով և ծավալով, և իրականում հանկարծակիի էին բերել ոչ միայն ոստիկանությանը, այլև՝ մեր ամբողջ հասարակությանը, և բնականաբար, ոստիկանությունը օբյեկտիվորեն կարող էր անպատրաստ լինել նման զարգացումներին:

9. Այս իմաստով Հանձնաժողովը կարևոր է համարում, որ հասարակական կարգի և հասարակական անվտանգության ապահովմանը ներգրավված ոստիկանության գործերի ուժերը աստիճանաբար համալրվեն պրոֆեսիոնալ ծառայողներով:

10. Հասարակական կարգի և հասարակական անվտանգության ապահովմանը ներգրավված ոստիկանության և ոստիկանության զորքերի ծառայողները պետք է պարբերաբար անցնեն մասնագիտական վերապատրաստում:

Հանձնաժողովը ողջունում է ՀՀ ոստիկանության և Ֆրանսիայի ներքին գործերի նախարարության ժանդարմերիայի, ինչպես նաև ԵԱՀԿ երևանյան գրասենյակի միջև համագործակցությունը, որոնք նպատակաուղղված են զանգվածային անկարգությունների ժամանակ հասարակական կարգի ապահովմանը :

11. Հանձնաժողովը փաստում է, որ ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների գործողությունները չեն եղել փոխհամաձայնեցված և կազմակերպված, իսկ որոշ աշխատակիցներ՝ մատնվել են խուճապի: (Գրիգոր Գրիգորյանի բնորոշմամբ՝ *«ոստիկանության զորքերում բարոյա-հոգեբանական վիճակը այնքան էլ փայլուն չէր :»*)

12. Հանձնաժողովը պարտադիր է համարում ոստիկանության նյութատեխնիկական վերազինումը տեխնիկական և հատուկ միջոցներով, որոնք գործադրելիս կլինեն առավել արդյունավետ ու անվտանգ:

13. Հանձնաժողովը կարևոր է համարում նաև հասարակական կարգի և անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների իրականացման իրավական բազայի ստեղծումը, մասնավորապես՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման առումով:

14. Հանձնաժողովը գտնում է, որ հասարակական կարգի ապահովմանը, անվտանգության պաշտպանությանը և արտակարգ դրությանը ներգրավված բոլոր ուժային կառույցների ծառայողները պարտավոր են կրել համապատասխան ծառայողական համազգեստ՝ իրենց տարբերանշաններով, ինչը որոշ դեպքերում չի պահպանվել: (N 2 տեսանյութում երևում է, թե ինչպես քաղաքացիական հագուստով մի երիտասարդ ոստիկանների ներկայությամբ զինվում է ինքնաձիգով: Չնայած պարզվել է, որ այդ անձը հանդիսանում է ՊՆ զինծառայող վարորդ, որը շտապ կանչի պատճառով ծառայության է ներկայացել քաղաքացիական հագուստով :)

Հետագա իրադարձությունների ընթացքում զանգվածային միջոցառման կազմակերպիչների և մասնակիցների գործողությունների վերաբերյալ Հանձնաժողովը կատարել է հետևյալ եզրահանգումները:

15. Հանձնաժողովը գերծ մնալով քրեաիրավական որակումներ տալուց, փաստում է, որ զանգվածային միջոցառման կազմակերպիչների և մասնակիցների կողմից պարբերաբար թույլ են տրվել «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի կոպիտ խախտումներ: («Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետը հրապարակային միջոցառման կազմակերպիչների պարտականությունների թվում նախատեսում է, որ կազմակերպիչը պարտավոր է. «ձեռնարկել միջոցներ՝

հրապարակային միջոցառման մասնակիցների կողմից օրինականության և հասարակական կարգի պահանջների պահպանման ուղղությամբ»: Նույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետը հրապարակային միջոցառման արդեն մասնակիցների պարտականությունների թվում նախատեսում է. «հրապարակային միջոցառումների մասնակիցներին արգելվում է հրապարակային միջոցառումների ընթացքում կրել, օգտագործել, գործադրել, կիրառել զենք, զինամթերք կամ պայթուցիկ, թունավոր, դյուրավառ կամ այնպիսի այլ առարկաներ կամ նյութեր, որոնք կարող են վնաս հասցնել անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին»: Իսկ 7-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է, որ հրապարակային միջոցառումների մասնակիցները պարտավոր են. «պահպանել հասարակական կարգը, կատարել ոստիկանության ներկայացուցչի օրինական պահանջները և չխոչընդոտել նրանց օրինական գործողություններին, հրապարակային միջոցառումը դադարեցվելու դեպքում անհապաղ հեռանալ հրապարակային միջոցառման անցկացման վայրից, չվնասել հրապարակային միջոցառման անցկացման վայրի գույքը, ծառերը, թփերը, կանաչապատ տարածքները»:)

16. Հանձնաժողովը փաստում է, որ զանգվածային միջոցառման կազմակերպիչները և մասնակիցները իրենց գործողություններով, փաստորեն, լիովին կազմալուծել են այդ տարածքում տրանսպորտի երթևեկությունը և նախապատրաստվել ոստիկանության հնարավոր գործողություններին ակտիվորեն դիմագրավելու համար: (Ժամը 11.30-ի սահմաններում Գ. Լուսավորչի փողոցի վրա՝ Սունդուկյան թատրոնի դիմաց, միջոցառման մասնակիցների կողմից 2 տրոլեյբուս գծից հանվել, կանգնեցվել են ուղղահայաց՝ փակելով փողոցի երթևեկելի մասը, ստեղծվել է բարիկադ, մոտակա կառուցվող շենքի շինհրապարակից բերվել է զգալի քանակությամբ քար և մետաղյա ձող: Միջոցառման մասնակիցները նաև զավթել են աղբատար մեքենան և տեղակայել բարիկադի մեջ:)

17. Հանձնաժողովն անընդունելի է համարում կազմակերպիչների այնպիսի վարքագիծը և գործողությունները, որոնք առավել շիկացրել և բորբոքել են մասնակիցների կրքերը և հրահրել անհնազանդության (Նիկոլ Փաշինյանը կոչ է արել միջոցառման մասնակիցներին զինվել երկաթե ձողերով, փայտե մահակներով, քարերով և ինչով պատահի՝ *«ինքնապաշտպանություն կազմակերպելու համար»*: Տեսանյութերից մեկում դիմելով ցուցարարներին՝ Նիկոլ Փաշինյանը հայտարարում է. *«...տղե՛րք, չեք պատկերացնի, թե հոգիս ոնց էր փառավորվել, երբ իմացա, որ ոստիկանների ձեռքից վահաններ ու մահակներ եք խլել»*: Եթե մինչ այդ Վարդան Խաչատրյանը, Զարուհի Փոստանջյանը, Անահիտ Բախշյանը, Արմեն Մարտիրոսյանը փորձել են ցուցարարներին զգոնության և զսպվածության կոչեր անել, նրանց ետ պահել ոստիկանության հետ հնարավոր բախումներից ու բռնարարքներից, ապա Նիկոլ Փաշինյանի նման կոչը ոգեշնչել է զանգվածային միջոցառման մասնակիցներին բախումների գնալու ոստիկանության հետ:)

18. Հանձնաժողովը խիստ անընդունելի է համարում զանգվածային միջոցառման կազմակերպիչներից Լևոն Զուրաբյանի վարքագիծը, որով վերջինս փաստորեն ձախողեց ոստիկանության և միջոցառման կազմակերպիչներից Դավիթ Շահնազարյանի միջև ձեռք բերված պայմանավորվածությունը՝ միջոցառումը այլ տեղ շարունակելու վերաբերյալ: Հանձնաժողովը գտնում է, որ այդ պայմանավորվածության իրագործման դեպքում գուցե հնարավոր կլիներ խուսափել իրադարձությունների նման զարգացումներից:

19. Անդրադառնալով Լևոն Տեր-Պետրոսյանի «տնային կալանքին» և որ ՀՀ պետական պահպանության ծառայությունը չի երաշխավորել նրա անվտանգությունը, Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքապետարանի շրջակայքում, այդ պահերին արդեն, ընդհանրապես անհնարին էր երաշխավորել որևէ մեկի անվտանգությունը, ինչն ակնհայտ դարձավ հետագա իրադարձություններից, այդուհանդերձ, ստեղծված իրավիճակում Լևոն Տեր-Պետրոսյանը, ով 10 օր շարունակ գլխավորել էր օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող զանգվածային միջոցառումը, բարոյական առումով պարտավոր էր չենթարկվել պահպանության ծառայության հորդորներին և թեկուզ առանց պահպանության ներկայանալ ցուցարարներին և օգտագործելով նրանց վրա ունեցած իր մեծ ազդեցությունը կանխել իրադարձությունների հետագա զարգացումը: Նման պահվածքը հանգեցրեց ծանր հետևանքների: Զանգվածային միջոցառման մասնակիցների վրա Լևոն Տեր-Պետրոսյանի ունեցած մեծ ազդեցության փաստը հիմնավորվում է նաև նրանով, որ ՀՀ Նախագահի արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագրի հրապարակումից հետո, ըստ HUMAN RIGHTS WATCH-ի Էջ 47, *«Հիմնական ցույցի մասնակիցները ցրվել են առավոտյան 2.00-ից 3.00-ի միջակայքում այն բանից հետո, երբ Լևոն Տեր-Պետրոսյանը հեռախոսով նրանց է դիմել՝ հորդորելով հեռանալ տարածքից որպեսզի չլինեն նոր զոհեր»*: Հանձնաժողովը գտնում է՝ եթե Լևոն Տեր-Պետրոսյանն ընդուներ և ականջալուր լիներ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին կամ իր կողմնակիցների միջոցով ավելի շուտ դիմել միջոցառման մասնակիցներին, ապա նա կարող էր կանխել դեպքերի նման զարգացումները:

Այսինքն, ստեղծված ոչ ստանդարտ իրավիճակում Լևոն Տեր-Պետրոսյանը պետք է հավատարիմ մնար նախընտրական շրջանում իր ընտրազանգվածին ներշնչած բարոյական այն արժեքներին, որոնք իր կողմից ձևակերպվել էին չարենցյան հայտնի խոսքերով. «...Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի, ....»:

**V. ԶՈՂՎԱԾՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ**

**5.1. ՄԱՀՎԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ**

2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով զոհվածների մահվան հանգամանքներն ուսումնասիրելու նպատակով Հանձնաժողովն իր նիստերին հրավիրել է ՀՀ նախկին ոստիկանապետ Հայկ Հարությունյանին, ՀՀ ոստիկանապետի տեղակալներ Հովհաննես Հունանյանին, Արմեն Երիցյանին, Սաշիկ Աֆյանին, ոստիկանության զորքերի նախկին հրամանատար Գրիգոր Գրիգորյանին, քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Հովհաննես Թամամյանին, ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական խմբի ղեկավար Վահագն Հարությունյանին, ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի տնօրեն Շոթա Վարդանյանին, նույն կենտրոնի բժշկաքրեագիտական բաժանմունքի վարիչ Վիգեն Ադամյանին, ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության պետ Ստեփան Մանուկյանին, նույն վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ Արթուր Հովհաննիսյանին, Ա1+ հեռուստաընկերության տնօրեն Մեսրոպ Մովսիսյանին և օպերատոր Հովսեփ Հովսեփյանին, լրագրողներ Գագիկ Շամշյանին և Գոհար Վեգիրայնին, ականատեսներ Ռոման Գրիգորյանին, Տիգրան Կարախանյանին, Հայկ Հովակիմյանին: Իրադարձությունների ընթացքում մահացած Տիգրան Աբգարյանի, Գոռ Բլոյանի, Դավիթ Պետրոսյանի, Տիգրան Խաչատրյանի ծնողներին ու հարազատներին, որոնք Հանձնաժողովին ներկայացրել են նրանց մահվան հանգամանքներին վերաբերող իրենց հայտնի մանրամասներ և պատասխանել Հանձնաժողովի անդամներին հետաքրքրող հարցերին: 2008թ. նոյեմբերի 3-ին Հանձնաժողովի անդամները այցելել են ոստիկանական զորքերի թիվ 1033 զորամաս և հանդիպել զոհված զինծառայող Տիգրան Աբգարյանի հետ ղեպքի վայրում ծառայություն կատարած զինծառայողներին՝ պարզելու նրա մահվան հանգամանքները: Հանձնաժողովը ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնից պահանջել և ստացել է դիակների դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունները, իսկ ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունից՝ նրանց դիակներից հանված և առգրավված հրազենային զնդակների, «Չերյոմուխա» հատուկ միջոցի փամփուշտների և զանազան բեկորների, ինչպես նաև հագուստների փորձաքննությունների եզրակացությունները: Հանձնաժողովը ՀՀ գլխավոր դատախազությունից ստացել է նաև

Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության փորձաքրեագիտական կենտրոնում «Չերյոմուխա-7» հատուկ միջոցների փամփուշտների անհատականացման նպատակով կատարված փորձաքննությունների եզրակացությունները, ինչպես նաև ԵԽԽՎ Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգի կողմից երաշխավորված, համապատասխան գիտելիքներ և փորձ ունեցող, ՀԶԾ-ի հետ համագործակցող, Իռլանդացի փորձագետ Քոլին Բարրոուզի պատասխանը:

ՀՀ ոստիկանությունը տրամադրել է իրադարձությունների կապակցությամբ ոստիկանության աշխատակիցների ստացած և օգտագործած զենք զինամթերքի վերաբերյալ տեղեկատվություն: Հատուկ քննչական ծառայությունը Հանձնաժողովին տրամադրել է զոհվածների դիակների լուսանկարները, դեպքի վայրերի սխեմաները, այդ վայրերից հայտնաբերված և առգրավված զնդակների, պարկուճների, «Չերյոմուխա-7» հատուկ միջոց հանդիսացող գազային փամփուշտների և այլ իրեղեն սպացույցների վերաբերյալ արձանագրությունները, ինչպես նաև դրանք պարկուճադարանում առկա դրոշմների հետ կատարված համեմատության արդյունքները: Հանձնաժողովի պահանջով տրամադրվել են նաև ոստիկանության այն զինծառայողների նկատմամբ անցկացված ծառայողական քննության արդյունքները, որոնք կիրառել են «Չերյոմուխա» հատուկ միջոցներ: Նախաքննական մարմինը Հանձնաժողովին է տրամադրել նաև քրեական գործի բոլոր այն նյութերը, որոնք վերաբերվել են մահվան հանգամանքներին, ինչը, ի կատարումն ԵԽԽՎ թիվ 1677 բանաձևի, Հանձնաժողովի պահանջով տրամադրել է նաև ՀՀ գլխավոր դատախազը:

Հանձնաժողովի հետ պայմանավորվածության և ԵԽԽՎ թիվ 1677 բանաձևի պահանջների կատարման նպատակով ՀՀ գլխավոր դատախազը պարբերաբար հաղորդում է ներկայացրել քրեական գործի նյութերի վերաբերյալ:

Հանձնաժողովը Փաստահավաք խմբից ստացել է մեկ պաշտոնեական զեկույց՝ Համլետ Թադևոսյանի մահվան հանգամանքների վերաբերյալ և նախկին Փաստահավաք խմբի նախկին անդամներ Անդրանիկ Քոչարյանի և Սեդա Սաֆարյանի անձնական զեկույցները՝ Տիգրան Աբգարյանի մահվան հանգամանքների և հատուկ միջոցների կիրառման վերաբերյալ: Հանձնաժողովը հավատարիմ մնալով անկողմնակալության և հրապարակայնության սկզբունքներին Եզրակացությունում ներառել է ինչպես Փաստահավաք խմբի, Խմբի նախկին անդամների զեկույցները, այնպես էլ Հատուկ քննչական ծառայության առարկությունները, սրանով իսկ հնարավորություն ստեղծելով՝ շահագրգիռ անձանց համար ինքնուրույն եզրակացություններ և հետևություն անելու համար:

Հանձնաժողովը ուսումնասիրել և վերլուծել է նաև փաստահավաք խմբից ստացված իրադարձությունների վերաբերյալ ձեռք բերված փաստաթղթերը:

Հանձնաժողովի տրամադրության տակ եղած ծավալուն և բազմաբնույթ փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է հետևյալը: 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով զոհվել են 10 քաղաքացիներ,

որոնցից 2-ը ոստիկանության գործերի զինժառայողներ են, իսկ 8-ը՝ քաղաքացիական անձինք: Նրանցից մեկը զոհվել է պայթուցիչ սարքի պայթյունից առաջացած բեկորներից, 5-ը՝ հրազենային գնդակներից, 3-ը՝ «Չերյոմուխա-7» գազային նռնակների փամփուշտներից, մեկը՝ բուք առարկայով գլխին ստացած մարմնական վնասվածքներից:

Այսպես.

1. Համլետ Ադասու Թադևոսյան ծնվ. 15.05.1976թ, Կոտայքի մարզ, քաղաք Եղվարդ, Շիրակի 86 տուն, ծառայել է ՀՀ ՈՁ թիվ 1032 զորամասում որպես մոտոհրաձգային գումարտակի առաջին վաշտի հրամանատար, ոստիկանության կապիտան՝ հետմահու՝ մայրը՝:

Համլետ Թադևոսյանը ՀՀ ՈՁ թիվ 1032 զորամասի կազմում 2008թ. մարտի 1-ին ծառայություն կատարելիս ժամը 21.15-ի սահմաններում Գ. Լուսավորիչ փողոցի թիվ 17 շենքի դիմաց պայթուցիչ սարքի պայթյունից զույգ ստորին և վերին վերջույթների, կոնքի, որովայնի և աճուկի շրջանում ստացել է բազմաթիվ բեկորային վնասվածքներ և տեղափոխվել Երևանի 3-րդ կլինիկական հիվանդանոց, որտեղ էլ ժամը 03.00-ին մահացել է: Ըստ դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ Հ. Թադևոսյանի մահը վրա է հասել տրավմատիկ-հեմոռագիկ շոկից, որն էլ պայմանավորված է եղել բազմաթիվ պայթյունային, բեկորային վնասվածքներով:

Հ. Թադևոսյանի զույգ սրունքներից հայտնաբերված 3 մետաղական բեկորները և կիսաճտքավոր աջ կոշիկի վրայից հայտնաբերված 1 մետաղական բեկորի ծագումը պարզելու նպատակով նշանակվել է դատաձգաբանական փորձաքննություն: Ըստ փորձաքննության եզրակացության. «1) նշված մետաղական բեկորները բեկորացվել են պայթյունի հետևանքով, դրանցից մեկը, հավանաբար, գործարանային արտադրության, «ՈւՋՈ-ԳՄ» տեսակի պայթուցիչի միացման ականոցի վերին հատվածի բեկոր է, իսկ մյուսների ծագումը որոշել հնարավոր չէ՝ դրանց փոքր չափսերի և դրանց վրա անհատականացման հատկանիշների բացակայության պատճառով: 2) «ՈւՋՈ-ԳՄ» տեսակի պայթուցիչները նախատեսված են գործարանային արտադրության «Ֆ-1», «Ռ-Գ-Դ-5» և «Ռ-Գ-42» տեսակի նռնակները պայթեցնելու համար և հանդիսանում են ռազմամթերք»:

Ըստ նախաքննական մարմնի և ոստիկանության վարկածի՝ Հ. Թադևոսյանը զոհվել է զանգվածային անկարգությունների մասնակիցների կողմից նետված նռնակի պայթյունից: Սակայն, ըստ նախաքննական մարմնի ուղարկած տեղեկանքի, նախաքննությամբ դեռևս չի պարզվել, թե կոնկրետ ում գործողությունների հետևանքով է մահացել Համլետ Թադևոսյանը:

ՀՀ Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ի կարգադրությամբ ստեղծված փորձագետների փաստահավաք խումբը Հանձնաժողովին է ներկայացրել փաստաթուղթ, համաձայն որի՝ «ՀՀ Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ի կարգադրությամբ ստեղծված փորձագետների փաստահավաք խումբն (այսուհետ՝ Խումբ) ուսումնասիրել է 2008թ.

մարտի 1-ին Երևանի քաղաքապետարանի շրջակայքում և կենտրոնական փողոցներում հրահրված ու կազմակերպված բռնություններով, հրկիզումներով, գույքի ոչնչացմամբ ու վնասումներով, հրազենի, պայթուցիկ նյութերի գործադրմամբ, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով ուղեկցված և սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների փաստի առթիվ հարուցված քրեական գործի նյութերը, ինչպես նաև պարզաբանումներ է ստացել Համլետ Թադևոսյանի մահվան հանգամանքների վերաբերյալ քննչական գործողություններ իրականացրած քննիչներ Ա. Թադևոսյանից, Հ. Տերտերյանից, Կ. Հովսեփյանից, Հ. Մանգոյանից, Վ. Խանգաղյանից, Հ. Խեղոյանից, փորձագետներ՝ Վ. Ադամյանից, Ա. Հովսեփյանից, ՀՀ ոստիկանության Երևանի Կենտրոնի քննչական բաժնի պետ՝ Ա. Պապայանից, ընթերակալներ՝ Անժելա Վերդյանից և Վարուժան Կոստանյանից, Երևանի թիվ 3 ՀԿՀ-ից, ավագ բուժբույր Պարաքսյա Էլոյանից և բուժբույր Կանդուխտ Գրիգորյանից, ինչպես նաև ոստիկանության գործերի սպա Համլետ Թադևոսյանի վիրահատությունն իրականացրած բուժ. անձնակազմից: Խմբի կողմից ուսումնասիրվել են Համլետ Թադևոսյանի մահվան հանգամանքների վերաբերյալ առկա բոլոր նյութերը, ինչի կապակցությամբ Հատուկ քննչական ծառայությունը (այսուհետ՝ ՀԶԾ) հավաստիացրել է, որ այդ առնչությամբ իրենց տրամադրության տակ այլ նյութեր չկան:»

Թիվ 26602688 քրեական գործի նյութերի ուսումնասիրության և անցկացված հարցազրույցների արդյունքում Խումբը հանգել է այն եզրակացության, որ Համլետ Թադևոսյանի մահվան հանգամանքների առնչությամբ գործում եղած նյութերի միջև կան սկնհայտ հակասություններ և նախաքննության ընթացքում թույլ են տրվել մի շարք խախտումներ, որոնց առնչությամբ Խումբն արտահայտել է իր մտահոգությունները և դրանց մասին 2009թ. ապրիլի 22-ին գրավոր տեղեկացրել է Հանձնաժողովին:

Ստորև ներկայացվում է Փաստահավաք խմբի զեկույցը և ՀԶԾ-ի առարկությունները (շեղատառերով) ոստիկանության գործերի սպա Համլետ Թադևոսյանի դիակի զննության վերաբերյալ.

1. ՀՀ քր. դատ. օր-ի 191-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, քննիչը քննչական գործողությունների կատարումը կարող է հանձնարարել այլ քննիչի՝ քննչական գործողությունն այլ վայրում կատարելու անհրաժեշտության դեպքում: Ուստի, ըստ Խմբի, սկնհայտ է, որ տվյալ դեպքում այս դրույթը կիրառելի չէ, քանի որ քննչական խմբի ղեկավարի կողմից հանձնարարություն է տրվել կատարել քննչական գործողություններ հենց քննչական խմբի գործունեության և հանձնարարություն տալու վայրում՝ Երևան քաղաքում: Փաստահավաք խմբի կողմից արձանագրվել է, որ քննչական խմբի ղեկավար Վ. Հարությունյանի կողմից խախտվել է քննչական հանձնարարությունը գրավոր տալու ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ և 193-րդ հոդվածներով սահմանված կարգը: Այդ պայմաններում քննիչները պարտավոր էին հրաժարվել անօրինական ցուցումը կատարելուց:»

1.1. Այդ կապակցությամբ ՀԲԾ-ն պարզաբանել է, որ «*քննչական խմբի ղեկավարը, անգամ ցանկության դեպքում, չէր կարող ղեկավարվել ՀՀ քր. դատ. օր-ի 193-րդ հոդվածով, քանի որ այն սահմանում է քննչական բաժնի պետի լիազորությունները, իսկ քննչական խմբի ղեկավարը և քննչական բաժնի պետը պաշտոնատար անձինք են և ունեն տարբեր լիազորություններ:*

*Նկատի ունենալով քրեական գործով կազմված քննչական խմբի անդամների ծանրաբեռնվածությունը և այն, որ տարբեր անձանց մահվան վերաբերյալ հիվանդանոցներից և ՀՀ ԱՆ ԴԲԳԳ կենտրոնից ստացվել են բազմաթիվ հաղորդումներ, ուստի դիակների արտաքին զննում, հազուստների առգրավում, ինչպես նաև դրանցից բխող անհրաժեշտ այլ քննչական գործողություններ կատարելու նպատակով, 2008թ. մարտի 2-ին ՀՀ քր. դատ. օր-ի 191-րդ հոդվածի կարգով, քննչական գրավոր հանձնարարություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչություն: Քննչական հանձնարարության պահանջները կատարելու նպատակով անմիջապես ՀԲԾ են ներկայացել թիվ 62202608 քրեական գործով կազմված քննչական խմբի կազմում չընդգրկված ՀՀ ոստիկանության քննիչներ՝ Հ. Շահումյանը, Վ. Խանգադյանը և Հ. Խեղոյանը, ովքեր, կատարվելիք գործողությունների վերաբերյալ ստանալով առավել ստույգ տեղեկություններ, մեկնել են դիահերձարան և կատարել համապատասխան քննչական գործողություններ, որոնց արդյունքների վերաբերյալ կազմված փաստաթղթերը ներկայացրել են ՀԲԾ ՀԿԳ քննիչ, թիվ 62202608 քրեական գործով քննչական խմբի անդամ Ա. Գրիգորյանին, որոնց ընդունման-հանձնման վերաբերյալ կազմվել է համապատասխան փաստաթուղթ, ինչը հաստատել է քննիչ Հ. Խեղոյանը»:*

2. Ըստ Խմբի՝ «ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննչական վարչության քննիչ Հ. Մանգոյանը իր կողմից դիակի զննում կատարելը և ապա քրեական գործ չհարուցելը բացատրել է այն հանգամանքով, որ հանդիսացել է քրեական գործով քննչական խմբի անդամ: Մինչդեռ, ՀԲԾ պետ Ա. Միրզոյանի 2008թ. մարտի 2-ի որոշմամբ թիվ 62202608 քրեական գործով ստեղծված քննչական խմբի կազմում, որպես խմբի անդամներ, ընդգրկված են եղել քննիչներ՝ Հովիկ Գևորգյանը, Լյուդվիգ Ավետիսյանը, Գոռ Շահինյանը, Արտակ Քալաշյանը, Արման Բայաթյանը, Ա. Պողոսյանը և Ն. Մանգասարյանը: Այդ կապակցությամբ քննիչ Հ. Մանգոյանը հայտարարել է, որ իր ազգանունը սխալմամբ գրված է «Ն. Մանգասարյան»:

Լրացուցիչ պարզաբանում ստանալու նպատակով և Խմբի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ոստիկանությունը տրամադրել է ոստիկանության քննիչների ցուցակը, որտեղ Ն. Մանգասարյան անունով քննիչ չի եղել»:

2.1 Այդ կապակցությամբ ՀԲԾ-ն պարզաբանել է, որ՝ «ՀՀ ոստիկանության ՔԳՎ քննիչ Հ. Մանգոյանը ներգրավված է եղել թիվ 62202608 քրեական գործով կազմված քննչական խմբում և կատարել է քննչական գործողություններ, սակայն քննչական խումբ կազմելու մասին որոշման մեջ թույլ է տրվել տեխնիկական վրիպակ, մասնավորապես՝

*«Հ.Ն. Մանգոյան» անվան փոխարեն տպագրվել է «Ն. Մանգասարյան» անունը, ինչը հաստատվել է լրացուցիչ պարզաբանման համար Խմբին տրամադրված ոստիկանության համակարգում աշխատող քննիչների ցուցակով»:*

3. Փաստահավաք խումբ՝ «Խումբն ուսումնասիրելով քննիչների կողմից դիակների զննման վերաբերյալ կազմված արձանագրությունները և դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունները, արձանագրել է, որ քննիչներ Հ. Մանգոյանի, Հ. Շահումյանի, Վ. Խանգադյանի և Հ. Խեղոյանի կողմից թույլ են տրվել օրենքի հետևյալ խախտումները՝

ա) արձանագրություններից ոչ մեկը որևէ նշում չի պարունակում զննումը սկսելու և ավարտելու ժամերի վերաբերյալ.

բ) ինչպես քննիչները վկայեցին, դիակների զննումները և դատաբժշկական փորձաքննությունները կատարվել են միաժամանակ, որտեղ միևնույն անձը հանդես է եկել որպես մասնագետ և փորձագետ, ինչը ՀՀ քր. դատ օր-ի 97-րդ հոդվածի պահանջների խախտում է.

գ) ըստ փորձագիտական եզրակացության՝ քննիչ Հ. Մանգոյանը մարտի 2-ին ժ. 14.<sup>30</sup>-ից հետո մինչև 17.<sup>30</sup>-ը տարբեր ընթերակաների հետ, տարբեր մասնագետների (փորձագետների) ընդգրկմամբ, միաժամանակ կատարել է Ջ. Հովհաննիսյանի և Գ. Գևորգյանի դիակների զննումը.

դ) նույն անձինք որպես ընթերականեր մասնակցել են քննիչների կողմից միաժամանակ իրականացվող տարբեր դիակների զննմանը՝ իրենց ստորագրությամբ հաստատելով դրանց կատարման օրինականությունը: Այսպես, քննիչ Հ. Մանգոյանի կողմից Գ. Գևորգյանի դիակի զննման արձանագրության մեջ նշված ընթերականեր Վարուժան Կոստանյանը և Սահակ Կարապետյանն ընդգրկված են եղել այդ ժամանակահատվածում քննիչ Հ. Շահումյանի կողմից կատարվող՝ Գոռ Բլոյանի դիակի զննմանը, իսկ Վարուժան Կոստանյանը՝ նաև քննիչ Հ. Խեղոյանի կողմից Ա. Ֆարմանյանի դիակի զննմանը: Ընթերականեր Անժելա և Լուսինե Ալեքսանյանները Հ. Մանգոյանի կողմից Ջ. Հովհաննիսյանի դիակի զննման ընթացքում ընդգրկված լինելով որպես ընթերականեր, այդ նույն ժամանակ մասնակցել են նաև քննիչ Հ. Շահումյանի մոտ Հ. Հովհաննիսյանի դիակի զննմանը, դարձյալ որպես ընթերականեր, իսկ Անժելա Ալեքսանյանը՝ նաև քննիչ Հ. Խեղոյանի կողմից Ա. Ֆարմանյանի դիակի զննմանը: Բացի այդ, մարտի 2-ին ժ. 17.<sup>30</sup>-ից մինչև 19.<sup>30</sup>-ը ընթերականեր Վարուժան Կոստանյանի և Սահակ Կարապետյանի ներկայությամբ քննիչ Հ. Մանգոյանը զննել է Համլետ Թադևոսյանի դիակը, այն դեպքում, երբ Վարուժան Կոստանյանը ժ. 17.<sup>30</sup>-ից մինչև 19.<sup>20</sup>-ը, որպես ընթերակա, նաև ընդգրկված է եղել քննիչ Վ. Խանգադյանի կողմից Տ. Խաչատրյանի դիակի զննմանը: Հ. Մանգոյանի կողմից Ջ. Հովհաննիսյանի դիակի զննման արձանագրությունը որպես ընթերականեր ստորագրել են Անժելա Վերոյանը և Լուսինե Ալեքսանյանը, մինչդեռ՝ քննիչը նույնիսկ չի պարզել ՀՀ ԱՆ ԴԲԳԳԿ աշխատակից

հանդիսացող Անժելայի տվյալները, որի ազգանունը ոչ թե Ալեքսանյան է, այլ Վերոյան: Ավելին, ինչպես Փաստահավաք խմբին տեղեկացրել է Անժելա Վերոյան-«Ալեքսանյանը», Լուսինե Ալեքսանյանն իր բարեկամուհին է, ով դիտարկված մտնելուց հետո անմիջապես դուրս է եկել այնտեղից: Ավելին, ինչպես տեղեկացրել է Անժելա Վերոյանը, դիակի զննման արձանագրության վրայի ստորագրությունը Լուսինե Ալեքսանյանի ստորագրությունը չէ: Ա. Վերոյանը չբացառեց, որ Լուսինեի փոխարեն ինքն է ստորագրել արձանագրությունը: Նմանապես մեկ այլ ընթերակա՝ Վարուժան Կոստանյանը հանդիսանում է ՀՀ ԱՆ ԳԲԳԳԿ պահակը, նրա մասնակցությունը զննմանը կրել է էպիզոդիկ բնույթ:

Խմբի կողմից արձանագրվել է, որ քննիչներ Հ. Մանգոյանի, Հ. Շահումյանի, Վ. Խանգաղյանի և Հ. Խեղոյանի կողմից խախտվել են ՀՀ քր. դատ. օրի. 81-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 4-րդ կետի պահանջները, համաձայն որոնց. ընթերական քրեական գործով չշահագրգռված անձ է, ով մասնակցում է քննչական գործողության կատարմանը և իր ստորագրությամբ հաստատում է քննչական գործողության կատարման փաստը, բովանդակությունը, ընթացքը և արդյունքները: Քննչական գործողության կատարման ընթացքում ընթերական իրավունք չունի լքել համապատասխան քննչական գործողության կատարման վայրը՝ առանց այն կատարող անձի թույլտվության: Քննիչը պարտավոր էր ընթերականերին բացատրել իրենց իրավունքներն ու պարտականությունները և թույլ չտար, որ վերջիններս որպես ընթերակա ընդգրկվելուց հետո խախտեին իրենց պարտականությունների կատարումը, այդ թվում՝ արձանագրությունների տակ միմյանց փոխարեն ստորագրելով: Քննիչը, որպես քննչական գործողության համար պատասխանատու պաշտոնատար անձ, պետք է գիտակցեր, որ նույն ընթերական չի կարող հաստատել տարբեր քննիչների կողմից միաժամանակ իրականացվող տարբեր քննչական գործողությունների բովանդակությունը, ընթացքը և արդյունքները՝ առանց հետևելու դրանց ողջ ընթացքին և որ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցը չէր կարող դրվել քրեական գործով մեղադրանքի հիմքում (ՀՀ քր. դատ. օր-ի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ):

Քննիչները պարտավոր էին դատաբժշկական փորձաքննության արդյունքում դիակներից հայտնաբերված բեկորները և հրազենային զնդակները, ՀՀ քր. դատ. օր-ի 31 գլխի համաձայն, դատաբժշկական փորձագետից առգրավել որոշմամբ, ինչին պետք է անպայման նախորդեր քրեական գործ հարուցելու մասին որոշումը: Չհետևելով օրենքի պահանջներին՝ քննիչները դրանք մտցրել են դիակի զննման արձանագրության մեջ՝ որպես զննման արդյունքում հայտնաբերված ապացույցներ»:

3.1 Այդ կապակցությամբ ՀԲԾ-ն պարզաբանել է, որ՝ *«այն պնդումը, թե դատաբժշկական կենտրոնի փորձագետները փորձաքննությունն իրականացրել են ՀՀ քր. դատ. օր-ի 97-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, չի համապատասխանում իրականությանը, քանի որ առկա չեն փորձաքննություններն իրականացրած փորձագետների մասնակցությունը բացառող որևէ հիմք: Ինչ վերաբերում է նույն*

փորձագետի մասնակցությանը փորձաքննությանը զուգահեռ իրականացվող դիակի զննմանն, ապա դա նույնպես կատարվել է օրենքով սահմանված կարգով: ՀՀ քր. դատ. օր-ի 85-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով սահմանված է, որ փորձագետն իրավունք ունի մասնակցել քննչական և այլ դատավարական գործողություններին, որքանով դրանք վերաբերում են փորձաքննության առարկային և անհրաժեշտ են եզրակացություն տալու համար: Տվյալ դեպքում դիակների զննումը կատարվել է դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումները կայացնելուց հետո և ՀՀ ԱՆ ԴԲԳԳԿ աշխատակիցներն արդեն իսկ ներգրավված են եղել որպես փորձագետներ:

Դիակների զննմանը որպես ընթերականեր ներգրավվել են քրեական գործով չշահագրգռված անձինք: Փաստահավաք խմբին կամ նախաքննական մարմնին հայտնի չէ որևէ հանգամանք, որը կարող է կասկածի տակ դնել տվյալ քրեական գործի ելքով որպես ընթերակա հրավիրված անձանց անշահախնդիր լինելը: Օրենքով չկա նաև միևնույն անձին տարբեր քննչական գործողություններ կատարելիս որպես ընթերակա ներգրավվելու սահմանափակում:

Այն, թե իբր քննիչները պարտավոր էին դատաբժշկական փորձաքննության արդյունքում դիակներից հայտնաբերված բեկորները և զննակները ՀՀ քր. դատ. օր-ի 31-րդ գլխի համաձայն փորձագետից առգրավել որոշմամբ, ինչին պետք է անպայման նախորդեր քրեական գործ հարուցելու մասին որոշումը, չի բխում օրենքի պահանջներից, քանի որ դրանք կատարվել են հարուցված թիվ 62202608 քրեական գործի շրջանակներում կայացված որոշումների հիման վրա և նույն քրեական գործով տարբեր քննչական կամ դատավարական գործողություններ կատարելիս կրկին քրեական գործ հարուցել չի պահանջվում (ՀՀ քր. դատ. օր-ի 217, 218-ի 3-րդ մաս):»:

4. Փաստահավաք խումբ՝ «Զննիչ Հ. Մանգոյանի կողմից դիակի զննման արդյունքում առգրավվել են 3 հատ մետաղյա բեկորներ և նշվել, որ դրանք հայտնաբերվել են զույգ սրունքներից՝ չկոնկրետացնելով սրունքների այն վնասվածքները, որոնցից դրանք հայտնաբերվել են: Բացի այդ, քննիչ Հ. Մանգոյանը բեկորների չափերի վերաբերյալ արձանագրությունում նշել է «շուրջ 0,8x0,2սմ և 0,4x0,3սմ» թվերը: Ինչպես հետագայում պարզվել է, քննիչ Հ. Մանգոյանի կողմից առանց առգրավման որոշման վերցված մետաղյա բեկորներից մեկի չափերը չեն համապատասխանել պայթյունատեխնիկական փորձաքննության ժամանակ փորձագետի կողմից ֆիքսված բեկորի 11x4,8x2,3 մմ չափերի հետ: Այդ նույն բեկորը փորձագետի կողմից ենթադրաբար ճանաչվել է ՈւՁՌԳՄ տեսակի պայթուցիչի ականոցի վերին հատվածի բեկոր:

Զննիչ Հ. Մանգոյանի կողմից չի կատարվել նաև այնպիսի քննչական գործողություն, ինչպիսին վիրահատության ժամանակ չմշակված բեկորային վնասվածքների վրայից տամպոնների միջոցով պայթյունի արգասիքներ վերցնելն է (ՀՀ քր. դատ. օր-ի 253-256 հոդվածներով սահմանված կարգով)՝ համալիր դատաքիմիական և դատապայթյունատեխնիկական փորձաքննությամբ դրանց բաղադրությունը պարզելու

համար. հատկապես Հ. Թադևոսյանի ձեռքերի վրա որոշակի հետքեր են երևում՝ դիակի գունավոր լուսանկարներից»:

4.1 Արձանագրված հակասությունը, թե իբր քննիչ Հ. Մանգոյանի կողմից դիակի զննմամբ վերցված բեկորներից մեկի չափերը չեն համընկնում պայթյունատեխնիկական փորձաքննության ընթացքում փորձագետի կողմից ֆիքսված չափերին, ՀՔԾ-ն պարզաբանել է, որ՝ «քննիչը չունի և պարտավոր չէ ունենալ գիտության, տեխնիկայի համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառների հատուկ գիտելիքներ, ուստի բեկորների չափերն արձանագրել է սանտիմետրերով, այլ ոչ թե միլիմետրերի ճշտությամբ և տվել է դրանց ընդհանուր նկարագիրը: ՀՀ քր. դատ. օր-ի 243-րդ հոդվածի համաձայն փորձաքննություն կատարվում է, երբ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառներում հատուկ գիտելիքներ, և այս դեպքում քննիչի հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից: Քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները, այն է՝ Հ. Թադևոսյանի դիակից հանված բեկորների պատկանելությունը, ծագման աղբյուրը և մի շարք հարցեր պարզելու նպատակով նշանակված փորձաքննությամբ, փորձագետը հետազոտել է ներկայացված բեկորները և իր պարտականությունների շրջանակում տվել բեկորի չափերը՝ միլիմետրերի ճշտությամբ:

ՀՔԾ-ն անընդունելի է համարել, որ Խմբի անդամները լուսանկարներով կարողանում են տարբերակել դիակային բծերի հետքերը՝ պայթյունի կամ կրակոցի արգասիքների թողած հետքերից: Այն, որ քննիչը չի վերցրել պայթյունի արգասիքներ հետևանք է այն իրավիճակի, որ կլինիկա ընդունվելուց հետո, հիվանդն անմիջապես տեղափոխվել է վիրահատարան, որտեղ կատարվել է վերքերի առաջնային վիրաբուժական մշակում, հեմոստազ, դրվել են կարեր, ուստի վիրահատական միջամտությունից և վերքերի մշակումից հետո պայթյունի կամ կրակոցի արգասիքներ վերցվել չէին կարող»:

5. Փաստահավաք խումբ՝ «Խումբը Երևանի թիվ 3 ՀԿՀ-ից, մասնավորապես՝ ավագ բուժբույր Պ. Էլոյանից պարզել է, որ Համլետ Թադևոսյանի հագուստները վերցրել է ոստիկանության Երևանի Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Ա. Թադևոսյանը և ևս 2 քննիչ, մինչդեռ «հագուստների ներկայացման» արձանագրության մեջ նշված է միայն Ա. Թադևոսյանի անունը և ստորագրությունը, սակայն վերջինս չի հանդիսացել թիվ 62202608 քրեական գործով ստեղծված քննչական խմբի անդամ:

Ոստիկանության Երևանի Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Ա. Թադևոսյանը հիվանդանոցի ավագ բուժբույր Պ. Էլոյանի կողմից ներկայացրած Հ. Թադևոսյանի հագուստներով մեկ պոլիէթիլային պարկի վերաբերյալ կազմել է «հագուստները ներկայացնելու մասին» արձանագրություն: Հարկ է նշել, որ քրեական դատավարության

օրենսդրությունը չի նախատեսում «հագուստներ ներկայացնելը» որպես քննչական գործողություն: Արձանագրության մեջ քննիչ Ա. Թադևոսյանը բաց է թողել նաև այն կազմելու օրը և վայրը:

«Հագուստները ներկայացնելու մասին» արձանագրության մեջ քննիչ Ա. Թադևոսյանը հղում է կատարել ՀՀ քր. դատ. օր-ի 217-րդ և 218-րդ հոդվածների վրա, սակայն մանրամասն չի նկարագրել հագուստների վրա առկա վնասվածքների տեղակայումը, քանակը և չափերը: Քննիչ Ա. Թադևոսյանը, չհանդիսանալով ՀՔԾ քննչական խմբի անդամ, պարտավոր էր նախ փաստի առթիվ հարուցել քրեական գործ, որից հետո որոշում կայացներ հագուստները առգրավելու մասին և արձանագրությամբ դրանք առգրավել: Փոխարենը՝ քննիչ Ա. Թադևոսյանը կազմել է ՀՀ քր. դատ. օր-ով չնախատեսված արձանագրություն՝ Հ. Թադևոսյանի «հագուստները ներկայացնելու մասին»: Այս առնչությամբ Խումբ հրավիրված Երևանի Կենտրոնի քննչական բաժնի պետ Ա. Պապայանն ընդունեց, որ քննիչ Հ. Թադևոսյանի կողմից, փաստորեն, իրականացվել է «հագուստների զննում» քննչական գործողություն, իսկ քրեական գործ չհարուցելու փաստը համարեց թերացում:

Արձանագրության մեջ քննիչ Ա. Թադևոսյանը նշել է, որ բուժբույր Պ. Էլոյանը պոլիէթիլենային տոպրակով իրեն ներկայացրել է Հ. Թադևոսյանի հագուստները: Քննիչ Ա. Թադևոսյանը «ներկայացված հագուստների» մեջ նշել է նաև Հ. Թադևոսյանի հագին եղած կրծքավանդակի և թիկունքի պաշտպանական վահանակը (գրահաբաճկոն), մատնանշելով, որ այն սև գույնի է և վրան առկա են վնասվածքներ: Արձանագրության մեջ չկա որևէ նշում հագուստները փաթեթավորելու և կնքելու վերաբերյալ:

Քննիչ Ա. Թադևոսյանը փաստահավաք խմբում ընդունել է, որ չի հանդիսացել քննչական խմբի անդամ և հիվանդանոցում քննչական գործողություն կատարել է ոստիկանության Երևանի Կենտրոնի քննչական բաժնի պետ Ա. Պապայանի բանավոր ցուցումով:

Քննիչ Ա. Թադևոսյանը հայտարարել է նաև, որ երեք անձի մահվան փաստերով «հագուստների ներկայացման» արձանագրություններն ինքը հանձնել է բաժնի պետ Ա. Պապայանին, իսկ հագուստները փաթեթավորված և կնքված վիճակում դրել է իրեղեն ապացույցների սենյակում:

Կենտրոնի քննչական բաժնի պետ Ա. Պապայանը Խմբին ներկայացրել է գրություն, ինչը հաստատում է, որ մահացածներ Հ. Թադևոսյանի, Գ. Քլոյանի և Զ. Հովհաննիսյանի հագուստները (3 փաթեթով) և դրանք թիվ 3 կլինիկական հիվանդանոցից ներկայացնելու մասին արձանագրությունները 2008թ. մարտի 2-ին նա ուղարկել է ՀՔԾ: Ա. Պապայանը հայտնել է նաև, որ 2009թ. փետրվարի 2-ին ՀՔԾ-ից ստացվել է գրություն այն մասին, որ Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Ա. Թադևոսյանի կողմից թիվ 3 կլինիկական հիվանդանոցից Հ. Թադևոսյանի դիակից հանված հագուստների հետ վերցված սև գույնի կրծքավանդակի և թիկունքի պաշտպանական վահանակն իրենց չի ներկայացվել և ինքը

նույն օրը իրեղեն ապացույցների սենյակից հայտնաբերել է կնքված փաթեթ «Հ. Թադևոսյանի պաշտպանական վահանակ» գրառմամբ, որը փաթեթավորված է եղել պոլիէթիլենային պարկի մեջ:

Քննչական բաժնի պետ Ա. Պապայանը փաստահավաք խմբին ներկայացրել է 2008թ. մարտի 2-ին իր ստորագրությամբ կազմված գրությունը, որով 3 պոլիէթիլենային տոպրակները, արձանագրությունների հետ միասին, ուղարկել է ՀՔԾ: Խումբն արձանագրելով գրության վրա ելքի համարի բացակայությունը, 2009թ. մարտի 27-ին այցելել է Կենտրոնի քննչական բաժնին՝ փաստաթղթի ելքի մատյանում գրանցված լինելը պարզելու համար: Խումբը նախ պարզել է, որ Ա. Պապայանին փոխարինել է Ս. Եղիազարյանը, ով էլ հրաժարվել է ներկայացնել ելքի մատյանը և իրեղեն ապացույցների գրանցման մատյանը: Միևնույն ժամանակ, Ս. Եղիազարյանն անձամբ ստուգել և հաստատել է, որ 2008թ. մարտի 2-4-ն ընկած ժամանակահատվածում այդ իրեղեն ապացույցները և արձանագրությունները ՀՔԾ ուղարկելու վերաբերյալ որևէ գրություն չկա:

Ա. Թադևոսյանի կողմից 2008թ. մարտի 2-ին Հ. Թադևոսյանի հագուստները զննելուց հետո՝ 2008թ. մարտի 3-ին դրանք զննվել են նաև ՀՀ ՊՆ քննչական վարչության Երևանի կայագործի քննիչ Կարապետ Հովսեփյանի կողմից: Խումբն արձանագրել է, որ բացի Հ. Թադևոսյանի հագուստների կրկնակի զննում կատարելուց, ուրիշ ոչ մի դեպքով տուժածների հագուստների կրկնակի զննում չի կատարվել:

Քննիչ Կ. Հովսեփյանը թիվ 62202608 քրեական գործով ստեղծված քննչական խմբի մեջ ներգրավվել է մարտի 6-ին՝ ՀՔԾ քննչական խումբը համալրելու մասին ՀՔԾ պետ Ա. Միրզոյանի որոշմամբ: Հետևաբար, նա իրավունք չուներ մարտի 3-ին կատարել Հ. Թադևոսյանի հագուստների զննումը: Բացի այդ, քննիչ Կ. Հովսեփյանի արձանագրության մեջ նշված չէ, թե ում հագուստներն է զննման ենթարկվել և արդյոք դրանք փաթեթավորված և կնքված են եղել: Չննման արդյունքում կազմված արձանագրության մեջ նշված չէ Հ. Թադևոսյանի հագին եղած գրահաբաճկոնը, որն ավագ բուժբույր Պ. Էլոյանի ներկայացմամբ «վերցրել է» Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Ա. Թադևոսյանը և գրահաբաճկոնի մասին նշված է եղել վերջինիս կազմած արձանագրության մեջ:

Հ. Թադևոսյանի մահվան հանգամանքների պարզաբանման հարցում կարևոր նշանակություն ունեցող գրահաբաճկոնի բացակայության խնդիրը պարզաբանելու նպատակով Խումբը հրավիրել է քննիչ Կ. Հովսեփյանին: Հ. Թադևոսյանի գրահաբաճկոնի բացակայության վերաբերյալ քննիչ Կ. Հովսեփյանը հայտնել է, որ ՀՔԾ շենք է եկել այն ժամանակ, երբ քննչական խմբի անդամ Հ. Տերտերյանն արդեն իսկ սկսած է եղել հագուստների զննումը և նրա առաջարկով ինքը կազմել է միայն արձանագրությունը և հագուստների մեջ գրահաբաճկոն չի եղել: Ընդ որում, խախտելով ՀՀ քր. դատ. օր-ի 218-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, քննիչ Կ. Հովսեփյանն արձանագրության մեջ չի մտցրել զննման մասնակից քննիչ Հ. Տերտերյանի տվյալները և վերջինս չի ստորագրել արձանագրությունը: Քննիչ Կ. Հովսեփյանի կողմից կատարած զննման արդյունքում Հ.

Թադևոսյանի ձախ կոշիկի վրա հայտնաբերվել են դուրս ցցված 2 բեկորներ, որի մասին չի նշվել ոստիկանության Երևանի Կենտրոնի քննիչ Ա. Թադևոսյանի կողմից նույն կոշիկների զննման ժամանակ, չնայած, որ վերջինս փաստել էր կոշիկների վրա վնասվածքների և արնանման հետքերի առկայությունը:

Ուսումնասիրելով քննիչներ Կ. Հովսեփյանի և Հ. Տերտերյանի կողմից կատարված հազուստների զննման արձանագրությունը, Խումբը պարզել է, որ այն, ինչպես և քննիչ Ա. Թադևոսյանի դեպքում, կատարվել է թերի, մասնավորապես՝ նշված չեն հազուստների վրա առկա վնասվածքների քանակն իրենց տեղակայմամբ և չափերով: Այս առումով կրկնակի զննմամբ, փաստորեն, չեն վերացվել քննիչ Ա. Թադևոսյանի կողմից թույլ տրված թերացումները և անհասկանալի է կրկնակի զննում կատարելու անհրաժեշտությունը:«

5.1 ՀՔԾ-ն պարզաբանել է, որ՝ «Հ. Թադևոսյանի հազուստների զննման և հետագա փորձաքննությունների ընթացքում տեղի են ունեցել բացթողումներ, մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Ա. Թադևոսյանի կողմից Հ. Թադևոսյանի հազուստները հիվանդանոցից վերցնելուց և քննչական բաժնի տեղափոխելուց հետո, մյուս հազուստների հետ զրահաբաճկոնը չի ուղարկվել ՀՔԾ և մինչև 2009թ. փետրվարի 3-ը մնացել է նույն բաժնի իրեղեն ապացույցների սենյակում, իսկ քննչական խումբն էլ ժամանակին ի հայտ չի բերել այդ բացթողումը, որի արդյունքում զրահաբաճկոնը հետազոտվել է ամիսներ անց, չնայած դրան՝ զրահաբաճկոնի հետազոտումը և փորձաքննությունը կատարվել են օրենքի պահանջների պահպանմամբ և ապացույցները ձեռք են բերվել օրենքով սահմանված կարգով: Այդ կապակցությամբ ՀՀ ոստիկանության ՔԳՎ-ում նշանակվել է ծառայողական քննություն:

Ինչ վերաբերում է ՀՀ ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Ա. Թադևոսյանի քննչական խմբում ընդգրկված չլինելուն, ապա 2008թ. մարտի 2-ին ստացված հաղորդագրության համաձայն Ա.Թադևոսյանը հիվանդանոց է ներկայացել քննչական բաժնի պետի հանձնարարությամբ՝ ՀՀ քր. դատ. օր-ի 180-րդ հոդվածի կարգով: Հիվանդանոցում ներկայացված հազուստները վերցնելիս Ա. Թադևոսյանը պարտավոր չէր հարուցել քրեական գործ, քանի որ ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ քննիչը լիազորված է հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր: Բացի այդ, ՀՀ քր. դատ. օր-ի 180-րդ հոդվածի համաձայն քրեական գործ հարուցելու առիթի օրենսկանությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում տասնօրյա ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ և այլ նյութեր, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն: Հ. Թադևոսյանի հազուստները Կենտրոնի քննչական բաժնի ներկայացնելուց հետո, հաշվի առնելով, որ 2008թ. մարտի 1-2-ին Երևան քաղաքում սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների դեպքի առթիվ արդեն իսկ հարուցված է քրեական գործ, Ա. Թադևոսյանի կողմից նախապատրաստված նյութերը և հիվանդանոցից վերցված հազուստները քննչական բաժնի պետի գրությամբ ուղարկվել

են ՀԲԾ՝ հարուցված քրեական գործի շրջանակներում ընթացքը լուծելու համար: Ինչ վերաբերում է գրահարաճկոնին, ապա այդ կապակցությամբ Ա. Թադևոսյանը պարզաբանել է, որ գրահարաճկոնը մեծածավալ լինելու պատճառով փաթեթավորել է առանձին և հաշվի չի առնվել այն, որ ՀԲԾ ներկայացված Հ. Թադևոսյանի հազուստների փաթեթում առկա չի եղել գրահարաճկոնը, ինչը ևս վկայում է, որ այն փաթեթավորված է եղել հազուստներից առանձին»:

6. Փաստահավաք խումբ՝ «Խումբն ուսումնասիրելով քրեական գործում առկա Հ. Թադևոսյանի դիակի դատաբժշկական փորձաքննության 2008թ. ապրիլի 3-ի թիվ 248 եզրակացությունը, պարզել է, որ փորձաքննությունը Վ. Ադամյանի կողմից կատարվել է թերի և փաստորեն չի պատասխանել քննիչի կողմից առաջադրված հարցերին:

ա) Փորձագետ Վ. Ադամյանի կողմից չեն ուսումնասիրվել Հ. Թադևոսյանի դիակի վրա առկա բոլոր մարմնական վնասվածքները, ինչը հնարավորություն կտար հայտնաբերելու դրանցում առկա բոլոր բեկորները: Իր այդպիսի մոտեցումը փորձագետ Վ. Ադամյանը հիմնավորել է դիակը «չփչացնելու» մտավախությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ ձեռք բերված տվյալները բավարար էին քննիչի հարցերին պատասխանելու համար: Փորձագետ Վ. Ադամյանը չի կատարել դիակի մարմնական վնասվածքների ռենտգենոգրաֆիա, ինչպես նաև չի պահանջել հիվանդանոցից Հ. Թադևոսյանի վնասվածքների ռենտգեն նկարը, որի օգնությամբ կպարզեր բեկորների առկայությունը դիակի վնասվածքներում և կբացառեր դիակը «փչացնելը»:

բ) Դիակի ներքին հետազոտությամբ փորձագետը հայտնաբերել է սրունքների փափուկ հյուսվածքներից անկանոն ձևի մետաղական բեկորներ, որոնց քանակի մասին նշված չէ եզրակացության մեջ: Փորձագետը միայն նշել է, որ դրանք առգրավվել են քննիչի կողմից: Հարկ է նշել, որ չնայած փորձագետի կողմից եզրակացությանը կից հավելված նկարում պատկերված են 3 բեկորներ, սակայն նկարում առկա մասշտաբային քանոնի չափերի հետ համեմատելով փաստվել է, որ դրանք չեն համընկնում եզրակացության մեջ նշված 0,6x0,3 սմ-ից մինչև 0,8x0,4 սմ չափերի հետ, որից ելնելով էլ արձանագրում ենք, որ ոչ բոլոր բեկորներն են պատկերված նկարում:

գ) Եզրակացության հետևության 11-րդ կետում փորձագետը նշել է, որ Հ. Թադևոսյանի մահը վրա է հասել տրավմատիկ-հեմոռագիկ շոկից, որն էլ պայմանավորված է եղել ձախից վերին և ստորին կոպի, որովայնի, շեքի, փոշտի, ամորձիների, առնանդամի, գույգ բազուկների, ձախ նախաբազկի, գույգ ազդրերի, սրունքների, աջ ոտնաթաթի առաջին մատի եղունգային ֆալանգի բազմաթիվ պայթյունային բեկորային վիրավորումներով: Սակայն, փորձագետ Վ. Ադամյանը փորձաքննությամբ չի պարզել, թե նշված մարմնական վնասվածքները պայթյունի գործոններից որ մեկի՝ բեկորների, հարվածային ալիքի, թե ջերմային ազդեցության հետևանք են: Բացի այդ, չի նշել, թե այդ վնասվածքներից որոնք են հանդիսացել տրավմատիկ-հեմոռագիկ շոկի պատճառ և հանգեցրել Թադևոսյանի մահվանը:

Փորձագետի կողմից արտաքին զննմամբ հայտնաբերվել է, որ ձախ ամորձին ջնջխված է, փոշտուն կախված է սերմնալարից, որ աջ ամորձին պատռված է, առնանդամը կարվել է կետգուտե կարերով, իսկ որովայնի խոռոչի ռեվիզիայի արդյունքում հայտնաբերվել է հետորովայնամզային տարածության մեծ հեմատոմա: Սակայն, եզրակացության մեջ փորձագետը չի նշել, թե որովայնի, շեքի, փոշտի, ամորձիների, առնանդամի վնասվածքները կարող էին արդյոք լինել միայն բեկորային ներգործության հետևանք, հատկապես հետորովայնամզային հատվածում մեծ հեմատոմայի առկայությունը, որից էլ պարզ կդառնար պայթյունի օջախը: Ուսումնասիրելով վերին և ստորին վերջույթների վրա առկա բազմաթիվ բեկորային վերքեր՝ փորձագետը չի նշել, թե դրանց մեջ կան արդյոք այնպիսի վնասվածքներ, որոնք կյանքի համար անհամատեղելի են եղել:

Փորձագետը նշել է, որ որովայնի առաջնային պատին և ձախ ազդրին առկա են բեկորային վիրավորումներ՝ չնշելով դրանց քանակը: Այս վիրավորումների արդյունքում առաջացել են ազդրային զարկերակի և երակների վնասումներ: Փորձագետը չի կոնկրետացրել, թե բեկորային վերքերից որ մեկում է հայտնաբերել ազդրային զարկերակի և երակների վնասումներ:

Փորձագետը հետևության 7-րդ կետում նշել է, որ Հ. Թադևոսյանի դիակը փորձաքննության է ենթարկվել բոլորովին մերկ, այն դեպքում, երբ քննիչն իր որոշմամբ հարց է առաջադրել՝ պարզել դիակի վրա հայտնաբերված վնասվածքներն իրենց տեղակայմամբ, բնույթով և քանակով համապատասխանում են արդյոք հագուստների վրա առկա վնասվածքներին: Չնայած դատաձգաբանական փորձաքննությունն նշանակելու որոշման մեջ քննիչը նշել է, որ փորձագետին տրամադրում է Հ. Թադևոսյանի դիակը և հագուստները, սակայն կից գրության մեջ հագուստները չի նշել և չի ուղարկել, որի վերաբերյալ փորձագետը կից գրության վրա նշել է, որ հագուստները չկան: Իր հերթին, փորձագետն էլ չի դիմել քննիչին հագուստներն իրեն տրամադրելու միջնորդությամբ:

Դատաբժշկական փորձագետ Վ. Ադամյանի կողմից չի պարզվել վնասվածքների շրջանում պայթյունի արգասիք հանդիսացող այրվածքների և մրի առկայությունը:

Վերոգրյալի հետ կապված Խումբը հրավիրել է 12 տարվա աշխատանքային փորձ ունեցող դատաբժշկական փորձագետ Վ. Ադամյանին, որը քննիչ Հ. Մանգոյանի կողմից կազմված Հ. Թադևոսյանի դիակի զննման արձանագրության մեջ հանդես է եկել որպես մասնագետ: Ի պատասխան վերը բարձրացված հարցերի՝ Վ. Ադամյանը հայտարարել է, որ թերացել է: Խմբում առաջադրված այն հարցին, թե ելնելով դիակի վրա առկա մարմնական վնասվածքների դասավորվածությունից ո՞րն է հանդիսանում պայթյունի օջախը, Վ. Ադամյանը խուսափել է պատասխանել, սակայն նշել է, որ հետորովայնամզային հատվածում մեծ հեմատոմայի առաջացումը պայթյունի հարվածային ալիքի, այլ ոչ թե բեկորների ներգործության արդյունք է, քանի որ բեկորները հեմատոմա չեն առաջացնում: Փաստահավաք խմբի կարծիքով, այն հանգամանքը, որ

հետորովայնամզային մեծ հեմատոման առաջացել է պայթյունի հարվածային ալիքից, վկայում է, որ պայթյունը տեղի է ունեցել Հ. Թադևոսյանի սեռական օրգանների հատվածում, ինչը փորձագետը չի նշել իր եզրակացության մեջ:

Խմբի կողմից ուսումնասիրվել են նաև Հ. Թադևոսյանի մահվան հանգամանքները պարզելու նպատակով նշանակված դատահետաքննական և պայթյունատեխնիկական փորձաքննությունների 2008թ. ապրիլի 25-ի թիվ 735 և 2008թ. ապրիլի 15-ի թիվ 494 եզրակացությունները: Նշված փորձաքննությունները կատարել է ՀՀ ոստիկանության փորձաքննագիտական վարչության բաժնի պետի տեղակալ Ա. Հովհաննիսյանը:

Եզրակացությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ փորձագետ Ա. Հովհաննիսյանը (թիվ 735 եզրակացություն) հետազոտելով Հ. Թադևոսյանի սրունքներից հանված 3 մետաղական բեկորները, ենթադրել է, որ դրանցից մեկը 11x4,8x2,3 միլիմետր չափերով հավանաբար գործարանային արտադրության ՈՒՉՈՒՄ տեսակի պայթուցիչի միացման ականոցի վերին հատվածի բեկոր է: Նկարագրելով նշված բեկորը՝ փորձագետ Ա. Հովհաննիսյանը նշել է, որ նրա վրա առկա են պատռվածքային եզրեր, մետաղի կառուցվածքային փոփոխություններ՝ ճաքեր, միկրոճեղքվածքներ և ջերմային ազդեցության հետքեր, ինչը վկայում է ուժեղ պոկող ֆիզիկական, ջերմային ազդեցության պայթյունի մասին, որ նշված բեկորը, ինչպես նաև մյուս 2 բեկորները դեֆորմացված են և ծռմռված: Իր հետևությունը փորձագետ Ա. Հովհաննիսյանը հիմնավորել է բացառապես նշված բեկորի վրա հայտնաբերված գործարանային արտադրության ինչ-որ զուգահեռ գծերի առկայությամբ: Այն հարցին թե ի՞նչ կառուցվածք և չափեր ունի ականոցը և հատկապես նրա վերին հատվածը, փորձագետը չի կարողացել պատասխանել:

Երբ փորձագետ Ա. Հովհաննիսյանին բացատրվել է, որ իր կողմից նշված 2,3 մմ բեկորի հաստությունը չի համընկնում ականոցի վերին հատվածի հաստության չափերի հետ, վերջինս չի կարողացել հստակ պատասխանել: Նա չի պատասխանել նաև այն հարցին, թե 4,8 մմ լայնության դեպքում ականոցի վերին հատվածի բեկորի վրա ներսից և դրսից պետք է արդյոք առկա լիներ պարույր, որի մասին նա եզրակացության մեջ ոչինչ չի նշել: Ինչպե՞ս է պատահել, որ նման դեֆորմացված, ծռված, կառուցվածքային փոփոխությունների և ջերմային ազդեցության ենթարկված բեկորի վրա չի հայտնաբերվել պարույրը, մինչդեռ հայտնաբերվել են ինչ-որ զուգահեռ գծեր, որից էլ նա ենթադրել է, որ դա ՈՒՉՈՒՄ տեսակի պայթուցիչի միացման ականոցի վերին հատվածի բեկոր է:

Խմբում փորձագետը հայտարարել է, որ նշված պարույրը լինում է միայն ականոցի արտաքինից: Մինչդեռ հայտնի է, որ պարույրը առկա է նաև ականոցի ներսից:

2008թ. մարտի 17-ին ՀԶԾ ՀԿԳ քննիչ Ա. Եփրեմյանի որոշմամբ նշանակված է եղել միայն հագուստների դատահետաքննական հետազոտություն, փորձագետ Ա. Հովհաննիսյանը, քիմիկոս-փորձագետ Լ. Սաֆարյանի հետ միասին, կատարել են դատապայթյունատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննություն, ինչի մասին նշված է թիվ 494 եզրակացության մեջ: Գրանով իսկ փորձագետը դուրս է եկել իր

լիազորությունների շրջանակներից: Այն հարցին, թե ինչու՞ է նա բեկորի պայթյունատեխնիկական փորձաքննություն անցկացրել, երբ քննիչը նման որոշում չի կայացրել և ինչու՞ այդպիսի փորձաքննություն անցկացնելու անհրաժեշտության դեպքում նա դուրս է եկել իր լիազորությունների սահմաններից և չի դիմել քննիչին՝ նշված բեկորի պայթյունատեխնիկական փորձաքննություն նշանակելու միջնորդությամբ, փորձագետ Ա. Հովհաննիսյանը չի կարողացել պատասխանել:

Փորձաքննության ժամանակ Ա. Հովհաննիսյանը Հ. Թադևոսյանի աջ կոշիկի վրայից հայտնաբերել է մեկ հատ մետաղական բեկոր: Մինչդեռ քննիչ Կ. Հովսեփյանը Հ. Թադևոսյանի հագուստների զննության արդյունքում արձանագրել է մետաղական 2 բեկոր՝ ձախ կոշիկի վրա, իսկ քննիչ Ա. Թադևոսյանը զննման ժամանակ որևէ բեկոր կոշիկների վրա չի հայտնաբերել: Կ. Հովսեփյանը և Հ. Տերտերյանը Խմբում պնդել են, որ մետաղական 2 բեկորներն իրենք տեսել են ձախ կոշիկի վրա, իսկ աջ կոշիկի վրա բեկոր չի եղել: Իր հերթին փորձագետ Ա. Հովհաննիսյանը պնդել է, որ ձախ կոշիկի վրա բեկորներ չեն եղել և ինքը տեսել է մեկ բեկոր՝ աջ կոշիկի վրա:

Փորձագետ Ա. Հովհաննիսյանը թիվ 494 եզրակացության մեջ հետևություն է արել, որ Հ.Թադևոսյանի աջ կոշիկի վրայի բեկորը հավանաբար գործարանային արտադրության ՈՒՁՌ-ԳՄ պայթուցիչի միացման ականոցի բեկոր է: Բացի դրանից, նա իր եզրահանգումը որևէ փաստարկով չի հիմնավորել, չի նշել թե գործարանային արտադրության ՈՒՁՌ-ԳՄ պայթուցիչի միացման ականոցի և իդենտիֆիկացված բեկորի որ հատկանիշների համադրման և համընկնման արդյունքում է կատարել իր եզրահանգումը: Հատկանշական է, որ թիվ 735 եզրակացության մեջ փորձագետը նշել է, որ մյուս 2 բեկորները հնարավոր չի եղել իդենտիֆիկացնել՝ դրանց փոքր չափերի և անհատական հատկանիշների բացակայության պատճառով: Մինչդեռ իդենտիֆիկացված բեկորի չափերի 12,5x2,8x2,4մմ և մյուս 2 բեկորների չափերի 8,3x3,3մմ և 6,7x5,7x2,3մմ առավելագույն տարբերությունը կազմում է 2-4 մմ, իսկ որպես իդենտիֆիկացված բեկորի անհատական հատկանիշներ փորձագետն արձանագրել է, որ այն կիսալուսնաձև է, ունի 12,5x2,8x2.4մմ չափսեր, ենթարկված է դեֆորմացիայի, կառուցվածքային փոփոխությունների՝ միկրոճեղքվածքների և ջերմային ազդեցության հետքերի տեսքով: Փորձագետի կողմից արձանագրված՝ իդենտիֆիկացված բեկորի բոլոր անհատական հատկանիշները կարող են վկայել, որ բեկորը պայթյունի արդյունք է, սակայն չեն կարող հիմք հանդիսանալ բեկորը՝ որպես գործարանային արտադրության ՈՒՁՌ-ԳՄ պայթուցիչի միացման ականոցի մաս իդենտիֆիկացնելու համար: Փաստահավաք խմբում իրեն ուղղված հարցին, թե ինչ հատկանիշների համադրման արդյունքում է նա նման ենթադրության հանգել և ինչու լրացուցիչ ուսումնասիրություններ չի կատարել իր եզրահանգումը հիմնավորելու համար, փորձագետ Ա. Հովհաննիսյանը հայտարարեց, որ թերացել է: Այն հարցին, թե ինչու նա և քիմիկոս-փորձագետ Լ. Սաֆարյանը չեն պարզել

բեկորների մետաղային բաղադրությունը, Ա. Հովհաննիսյանը պատասխանել է, որ իրենք մնան հնարավորություն չեն ունեցել, սակայն այդ մասին չեն նշել եզրակացության մեջ:

Փորձագետ Ա. Հովհաննիսյանն առանց որևէ հստակ հիմնավորման արձանագրել է, որ պայթյունը տեղի է ունեցել Հ. Թադևոսյանի ոտքերի մոտ: Փորձագետի այդ եզրահանգումը վստահություն չի ներշնչում, մանավանդ, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ պայթյունի օջախի մասին եզրահանգումը փորձագետը կատարել է տեղյակ չլինելով և հաշվի չառնելով, որ Հ. Թադևոսյանի վրա եղել է զրահաբաճկոն:

Փորձագետ Ա. Հովհաննիսյանը եզրակացրել է, որ փորձաքննության ենթարկված բեկորներն ամուր պատյան ունեցող պայթուցիկ սարքի բեկորներ են: Փորձագետ Ա. Հովհաննիսյանը նշել է, որ պայթել են «Ֆ1», «Ռ-Գ-42», «Ռ-Գ-Գ-5» նռնակներից որևիցե մեկը: «Ֆ1» նռնակի պատյանը չուզումից է, իսկ մյուս երկուսինը՝ մետաղյա կաղապարով ներդրված ցանցով: Ուստի, հաշվի առնելով այդ հանգամանքը՝ փորձագետը կարող էր արձանագրել, որ պայթել է «Ֆ1» նռնակ կամ բացառելով «Ֆ1» նռնակի պայթյունի հնարավորությունը՝ արձանագրել, որ պայթել է մյուս 2 նռնակներից որևէ մեկ տեսակը:

Նկարագրելով հագուստների վրա առկա վնասվածքները, փորձագետ Ա. Հովհաննիսյանը չի ուսումնասիրել վնասվածքների տեղակայումը, որի պարագայում նրա համար պարզ կդառնար, որ Հ. Թադևոսյանի զիվորական բաճկոնի թևերին և բաճկոնի ստորին հատվածում առկա 57 վնասվածքների պայմաններում՝ բաճկոնի կրծքավանդակի և որովայնի հատվածներում վնասվածքների բացակայությունը վկայում է, որ նրա հագին եղել է զրահաբաճկոն: Փաստահավաք խմբի առջև փորձագետ Ա. Հովհաննիսյանն ընդունեց, որ վնասվածքների մնաց տեղակայման դեպքում Հ. Թադևոսյանի հագին եղել է զրահաբաճկոն: Այս բացթողումը նա մեկնաբանեց որպես թերացում:

Այն հարցին, թե ինչու նրա կողմից հագուստների ուսումնասիրման ժամանակ չեն ուսումնասիրվել պայթյունի արգասիքները և այդ մասին նշված չէ եզրակացության մեջ, փորձագետ Ա. Հովհաննիսյանը պատասխան չտվեց, մինչդեռ փորձագետի կողմից եզրակացության մեջ նշված գրականությունում առկա են հղումներ «պայթյունի արգասիք» հասկացությանը:

Այն հարցին, թե ինչու նա չի միջնորդել քննիչին իրեն տրամադրել դեպքի վայրի զննման արձանագրությունը, հագուստների առգրավման արձանագրությունը, նռնակի պայթյունի հետևանքով վնասվածքներ ստացած զինվորների քանակի և նրանց մոտ վնասվածքների տեղակայման մասին տվյալներ, փորձագետ Ա. Հովհաննիսյանը պատասխանել է, որ նպատակահարմար չի գտել:

Ելնելով վերոգրյալից, Փաստահավաք խումբը գտել է, որ.

- Հ. Թադևոսյանի մահվան հանգամանքների առնչությամբ 62202608 քրեական գործի նյութերում առկա են ակնհայտ հակասություններ, նախաքննության ընթացքում քննչական խմբի կողմից թույլ են տրվել օրենքի խախտումներ, որոնց արդյունքում, մասնավորապես՝ նախաքննության ընթացքում, անհետացել է Հ. Թադևոսյանի

գրահաբաճկոնը, առկա են իրարամերժ տվյալներ Հ. Թադևոսյանի կոշիկների վրա բեկորների առկայության կամ բացակայության մասին,

- փորձագետների կողմից տրված եզրակացությունները ոչ միշտ են հիմնավորված, լիարժեքորեն չեն պատասխանել քննիչների կողմից առաջադրված բոլոր հարցերին, ինչը սահմանափակել է քննություն իրականացնող մարմնի հնարավորությունները՝ քննարկելու սպա Հ. Թադևոսյանի մահվան բոլոր հնարավոր վարկածները,

- նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազությունը չի բացահայտել սույն փաստաթղթում արձանագրված թերացումները \խախտումները\ և միջոցներ չի ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ:

Փաստահավաք խումբը գտել է, որ անհրաժեշտ է.

- Հ. Թադևոսյանի մահվան հանգամանքների պարզաբանման համար լրացուցիչ համալիր դատաբժշկական և դատապայթյունատեխնիկական փորձաքննություն իրականացնել միջազգային փորձագետների մասնակցությամբ,

- քննարկել նախաքննության ընթացքում իրավախախտումներ և թերացումներ կատարած անձանց օրենքով սահմանված կարգապահական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը»:

6.1 Վերոգրյալի կապակցությամբ ՀԲԾ-ն պարզաբանել է, որ՝ «Հ. Թադևոսյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ ուսումնասիրվել են բոլոր մարմնական վնասվածքները, որոնք եղել են միանման և միաբնույթ/բեկորային/: Բեկորներ հայտնաբերելու նպատակով չեն հետազոտվել բոլոր վերքային խողովակները, քանի որ դիակի վրա առկա են եղել բազմաթիվ բեկորային վնասվածքներ և նման քանակության կտրվածքներ կատարելու դեպքում դիակին կպատճառվեին այնպիսի վնասվածքներ, որ լիովին կխախտվեր մարմնի ամբողջականությունը: Բացի այդ, ձեռք բերված տվյալները բավարար էին փորձաքննությամբ առաջադրված հարցերին պատասխանելու համար:

ՀՀ ԱՆ ԴԲԳԳ կենտրոնը դիակի ռենտգեն նկարահանում կատարելու համար համապատասխան սարքավորում չունի, իսկ կենդանության օրոք հիվանդանոցում Հ. Թադևոսյանի ռենտգեն նկարահանում չի կատարվել, ինչի մասին Խումբը կարող էր համոզվել իր տրամադրության տակ գտնվող՝ Հ. Թադևոսյանի հիվանդության պատմագրի ուսումնասիրությամբ, ուստի գոյություն չունեցող ռենտգեն նկարներ փորձագետի կողմից պահանջվել չէին կարող:

Եզրակացությանը կից լուսանկարների հավելվածում պատկերված են Հ. Թադևոսյանի դիակի սրունքների փափուկ հյուսվածքներից հեռացված բոլոր 3 բեկորները, որի մասին արձանագրված է նաև դիահերձմանը զուգահեռ կատարված դիակի զննման արձանագրությունում: Բեկորները չափվել են քանոնով և լուսանկարահանվել, իսկ հայտնաբերված բեկորների մանրամասն ուսումնասիրությունը քրեագիտության բնագավառի փորձագետի իրավասության խնդիր է:

Խմբի անդամներն ուշադիր չեն ծանոթացել եզրակացությանը, քանի որ փորձագետի թիվ 248 եզրակացության հետևությունների թիվ 1, 2, 3, 4, 6 և 8-րդ կետերում հստակ արձանագրված է, որ Հ. Թադևոսյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերվել են՝ ձախից վերին և ստորին կոպի, որովայնի, շեքի, փոշտի, ամորձիների, առնանդամի, գույգ բազուկների, ձախ նախաբազկի, գույգ ազդրերի, սրունքների, աջ ոտնաթաթի 1-ին մատի եղունգային ֆալանգի բազմաթիվ պայթյունային, բեկորային վիրավորումներ՝ փափուկ հյուսվածքների և անոթների վնասում, աջ ոտնաթաթի 1-ին մատի եղունգային ֆալանգի կոտրվածք, հետորովայնամզային հեմատոմա, արտաքին առատ արյունահոսություն: Վերը նշված բոլոր վնասվածքներն առաջացել են կենդանության օրոք պայթյունի հետևանքով առաջացած բեկորների ազդեցությամբ՝ այլ ոչ թե ջերմային կամ հարվածային ալիքի ազդեցությամբ և նրա մահվան հետ գտնվում են անմիջական պատճառական կապի մեջ:

Առկա բոլոր վնասվածքների խմբավորումը, միասին վերցված, առաջացրել են տրավմատիկ-հեմոռագիկ շոկ (ցավ, արնահոսություն), որով էլ պայմանավորված է եղել Հ. Թադևոսյանի մահը: Եզրակացության մեջ չի նշվել կյանքի համար անհամատեղելի վնասվածքների մասին, քանի որ այդպիսիք չեն եղել:

Հ. Թադևոսյանի վնասվածքների շրջանում պայթյունի արգասիք հանդիսացող այրվածքների և մրի առկայությունը դատաբժշկական փորձաքննությամբ չի պարզվել, քանի որ այդպիսիք չեն եղել: Մինչ մահը վրա հասնելը կատարվել է ինտենսիվ վիրահատական միջամտություն և վնասվածքները եղել են մշակված:

Խեղաթյուրված են ներկայացված փորձագետ Վ. Ադամյանի Խմբին տված բացատրությունները: Մասնավորապես՝ փաստաթղթում նշված է. «այն հարցին, թե ելնելով դիակի վրա առկա մարմնական վնասվածքների դասավորությունից, ո՞րն է հանդիսացել պայթյունի օջախը, փորձագետը խուսափել է պատասխանել, սակայն նշել է, որ հետորովայնամզային հատվածում մեծ հեմատոմայի առաջացումը պայթյունի հարվածային ալիքի, այլ ոչ թե բեկորների ներգործության արդյունք է»: Իրականում, Խմբում բացատրություններ տալիս փորձագետը պատասխանել է, որ միայն դատաբժշկական փորձաքննության արդյունքներով հնարավոր չէ պատասխանել այդ հարցին, իսկ ինչ վերաբերում է հետորովայնամզային հեմատոմային, ապա Խմբին պարզաբանել է, որ այն կարող է լինել ոչ միայն հարվածային ալիքի, այլև բեկորային վնասվածքներ ստանալու հետևանքով վայր ընկնելու արդյունք:

Խումբը, միանշանակ հայտարարելով, թե նշված հեմատոման առաջացել է պայթյունի հարվածային ալիքից, չունենալով դատաբժշկական, դատաձգաբանական, դատաքրեագիտական, դատապայթյունատեխնիկական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, արել է եզրահանգում, որ պայթյունը տեղի է ունեցել Հ. Թադևոսյանի սեռական օրգանների հատվածում: Փաստորեն, Խումբն անտեսելով և խեղաթյուրելով նախաքննության տվյալները, համապատասխան փորձաքննությունների

եզրակացությունները, ինչպես նաև այդ կապակցությամբ փորձագետների տված պարզաբանումները, Հ. Թադևոսյանի վնասվածքներ ստանալու վերաբերյալ արել է ակնհայտ կանխակալ և անհիմն եզրակացություն:

Փորձաքննության արդյունքում փորձագետը ենթադրություններ չի անում, այլ կատարում է հետևություններ, այդ թվում՝ նաև հավանական հետևություններ՝ ելնելով հետազոտման բնույթից:

Խումբն արձանագրել է, որ փորձագետը չի կարողացել պարզաբանել, թե ինչ կառուցվածք և ինչ չափեր ունի նոնակի պայթուցիչի ականոցը, չի կարողացել պատասխանել խմբի անդամների առաջադրած մի շարք հարցերի և այն, որ փորձաքննության ներկայացված բեկորը ՈՒՁՈ-ԳՄ տեսակի պայթուցիչի միացման ականոցի վերին հատվածի բեկոր է, ըստ փորձագետի, հիմնավորվում է միայն բեկորի վրա հայտնաբերված գործարանային արտադրության ինչ-որ գուգահեռ գծերի առկայությամբ:

Ամբողջովին խեղաթյուրվել են Խմբին տված փորձագետի պարզաբանումները և մեկնաբանությունները:

Այսպես.

Միացման ականոցը ՈՒՁՈ-ԳՄ տեսակի պայթուցիչի այն մասն է, որով պայթուցիչը պարուրվում է նոնակի մեջ: Ականոցը զլանաձև է, ունի 14-14,5մմ երկարություն: Գլանական մասում այն ունի 15մմ տրամագծով արտաքին պարույր, որն սկսվում է ականոցի վերին եզրից 4,5-5մմ ներքև և ավարտվում է ականոցի ներքևի եզրում: Այսինքն, ականոցի վերին հատվածը՝ 4,5-5մմ սահմաններում պարույր չունի, հետևաբար՝ փորձագետի թիվ 735 եզրակացությունում հետազոտված 11x4,8x2,3մմ գաբարիտային չափսեր ունեցող բեկորի վրա, որն, ըստ եզրակացության, հավանաբար գործարանային արտադրության ՈՒՁՈ-ԳՄ տեսակի պայթուցիչի միացման ականոցի վերին հատվածի բեկոր է, 4,8մմ չափսի տարածության վրա չէր կարող լինել պարույր, հետևաբար՝ փորձագետի եզրակացությունում պարույրի մասին նշումներ չէին կարող լինել:

Ինչ վերաբերում է բեկորի 2,3մմ չափսին, ապա դա ականոցի վերին մասի ճակատային մակերեսի հատված է, որի վրա էլ արտահայտված են գործարանային արտադրության /հաստոցային մշակման/ գուգահեռ գծեր: Ականոցի վերին մասի լայնությունը 3մմ է, այն ներսի կողմից ունի մետաղի թեք մշակվածություն, որի հաշվին ճակատային մասի մակերեսի լայնությունը կազմում է 2,3մմ:

Խմբին բացատրվել էր, որ եզրակացության մեջ նշված 11x4,8x2,3մմ չափսերը բեկորի գաբարիտային՝ մաքսիմալ չափսեր են, բեկորը ականոցի, ոչ թե երկայնական, ինչպես պատկերացնում էին նրանք, այլ լայնական բեկոր է, և որ պայթյունի հետևանքով բեկորացված կտորը կրել է որոշակի կառուցվածքային, ձևային, չափային փոփոխություններ և չի կարելի համեմատության հիմքում դնել իրենալական չափային համապատասխանությունը:

Ինչ վերաբերում է ականոցի ներսի կողմից պարույր լինել-չլինելուն, ապա ՌԻՉՌԳՄ տեսակի պայթուցիչների միացման ականոցները ներսի կողմից պարույր չունեն: Դրանց ներսի մակերեսը հարթ է, վերին մասում /ներսից/ ունեն մեկ գնդաձև ցցվածք, որը մտնում է պայթուցիչի իրանի վրա կատարված կտրվածքի մեջ և թույլ չի տալիս ականոցին պտտվել պայթուցիչի իրանի շուրջ, ներքևից ականոցը ամրանում է պայթուցիչի իրանի մեջ պարուրվող դետոնատորով:

Խումբը չի նշել այնպիսի կարևոր փաստի մասին, որ փորձագետը 11x4,8x2,3մմ գաբարիտային չափսեր ունեցող բեկորն անմիջականորեն համեմատել է ՌԻՉՌԳՄ պայթուցիչի միացման ականոցի հետ՝ հաշվի առնելով դրա ձևը, կառուցվածքը և մագնիսի կողմից ձգվելու հատկությունը: Արդյունքում համընկնող հատկանիշները բավարարել են հավանական հետևություն կատարելու համար:

Խմբի այն հարցին, թե ի՞նչ կառուցվածք և չափսեր ունի ականոցը և հատկապես նրա վերին հատվածը, փորձագետը հստակ նկարագրել է ականոցի կառուցվածքը, նույնիսկ նկարել ականոցի արտաքին և կտրվածքային տեսքը: Չափսերի մասին միլիմետրային ճշտությամբ տվյալներ չեն տրվել Խմբին, քանի որ փորձագետը պարտավոր չէ անգիր հիշել բոլոր դետալների չափային տվյալները միլիմետրային ճշտությամբ:

Միսալ է ներկայացվել նաև այն, որ փորձագետը չի կարողացել պատասխանել այն հարցին, թե ինչու՞ է դուրս եկել իր լիազորությունների սահմաններից և հազուստների դատահետքաբանական փորձաքննության փոխարեն քիմիկոս-փորձագետ Լ. Սաֆարյանի հետ կատարել դատապայթյունատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննություն: Իրականում Խմբին պարզաբանվել է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 246-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված է. «Եթե փորձաքննության կատարումը հանձնարարված է փորձագիտական հիմնարկին՝ առանց համալիր փորձաքննություն կատարելու պահանջի, ապա անհրաժեշտության դեպքում, այդ հիմնարկի ղեկավարը կարող է կազմակերպել համալիր փորձաքննություն»: Հիմնվելով այս դրույթի վրա ՀՀ ոստիկանության փորձաքննագիտական վարչության ղեկավարության կողմից կազմակերպվել է համալիր դատապայթյունատեխնիկական և դատաքիմիական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է փորձագետներ Ա. Հովհաննիսյանին և Լ. Սաֆարյանին: Պայթյունի ազդեցության ենթարկված հազուստները հանդիսացել են դատապայթյունատեխնիկական հետազոտության օբյեկտներ և հետքաբանությունը ներառվում է դատապայթյունատեխնիկայի մեջ, բացի այդ, ՀՀ քր. դատ. օր-ի 85-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ փորձագետը պարտավոր է եզրակացություն տալ ոչ միայն առաջադրված հարցերով, այլ նաև իր իրավասության շրջանակների մեջ մտնող և փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով:

Խեղաթյուրված են քննիչ Կ. Հովսեփյանի և Հ. Տերտերյանի տված բացատրությունները՝ կապված Հ. Թադևոսյանի կոշիկի վրա գնմամբ և

փորձաքննությամբ հայտնաբերված բեկորների տեղակայման անհամապատասխանության հետ: Մասնավորապես, Խմբին քննիչ Կ. Հովսեփյանը պարզաբանել է, որ հազուստների զննումը կատարել է Հ. Տերտերյանի մասնակցությամբ, արձանագրությունը կազմել է վերջինիս թելադրանքով, և հստակ չի կարող ասել՝ բեկորները գտնվել են աջ, թե ձախ կոշիկի վրա: Իր հերթին, Հ. Տերտերյանը բացատրել է հազուստների զննումը քննիչ Կ. Հովսեփյանի հետ կատարելու հանգամանքը և հաստատապես չի պնդել, որ բեկորները հայտնաբերվել են ձախ կոշիկի վրա՝ չբացատրելով, որ զննման ընթացքում կարող է շփոթած լինել աջ և ձախ կոշիկները:

Խումբն արձանագրել է, որ փորձագետ Ա. Հովհաննիսյանը թիվ 494 եզրակացությունում չի հիմնավորել այն եզրահանգումը, որ Հ. Թադևոսյանի կոշիկի վրայի բեկորը հավանաբար գործարանայի արտադրության ՈՒԶՌ-ԳՄ տեսակի պայթուցիչի միացման ականոցի բեկոր է: Փոխարենը, խումբը հանգել է եզրակացության, որ առկա հատկանիշները չեն կարող հիմք հանդիսանալ բեկորը որպես ՈՒԶՌ-ԳՄ տեսակի պայթուցիչի միացման ականոցի մաս իդենտիֆիկացնելու համար:

Խումբն արձանագրել է նաև. «այն հարցին, թե ի՞նչ հատկանիշների համադրման արդյունքում է փորձագետը նման եզրահանգման եկել, և ինչու լրացուցիչ ուսումնասիրություններ չի կատարել՝ եզրահանգումը հիմնավորելու համար, փորձագետ Ա. Հովհաննիսյանը հայտարարել է, որ թերացել է»: Հիշատակվածը նույնպես չի համապատասխանում իրականությանը:

Այսպես.

Թիվ 494 եզրակացությամբ հետազոտված 12,5x2,8x2,4մմ չափեր ունեցող կիսալուսնաձև բեկորի վերաբերյալ արվել է հավանական հետևություն, որ այն հավանաբար գործարանային արտադրության ՈՒԶՌ-ԳՄ տեսակի պայթուցիչի միացման ականոցի բեկոր է: Խմբում փորձագետին ուղղված հարցին, թե ի՞նչ հատկանիշների համադրման արդյունքում է նման հետևության հանգել և ինչու՞ լրացուցիչ ուսումնասիրություններ չի արել եզրահանգումը հիմնավորելու համար փորձագետը հայտարարել է, որ կատարել է բոլոր հնարավոր ուսումնասիրությունները՝ բեկորը անմիջականորեն համեմատվել է ՈՒԶՌ-ԳՄ տեսակի պայթուցիչի միացման ականոցի հետ՝ հաշվի առնելով դրա ձևը, չափերը, կառուցվածքը և մագնիսի կողմից ձգվելու հատկությունը, ինչի մասին նշված է եզրակացությունում: Փորձագետի կողմից որևէ հայտարարություն չի արվել: Ինչ վերաբերում է թիվ 735 եզրակացությունում հետազոտված 8,3x3,3x1,3մմ և 6,7x5,7x2,3մմ չափերի բեկորներին, ապա դրանք իրենց վրա չունեն անհատականացման բավարար հատկանիշներ, անկախ նրանից, որ դրանք ընդամենը մի քանի միլիմետրով են տարբերվում հետազոտված 11x4,8x2,3մմ և 494 եզրակացությամբ հետազոտված 12,5x2,8x2,4մմ չափերի բեկորներից, որոնց վրա պահպանվել են այնպիսի հատկանիշներ, որոնք հնարավորություն են տալիս հանգելու հավանական հետևության: Հարցին, թե ինչու՞ փորձագետները չեն պարզել բեկորի մետաղի բաղադրությունը,

փորձագետը պատասխանել է, որ իրենք նման հետազոտություն կատարելու համար համապատասխան սարքավորում չունեն, նույնիսկ այդպիսիք լինելու դեպքում բեկորը հնարավոր չէ համեմատել գործարանային արտադրության մեկ այլ ՈՒՉՈՒԳՄ տեսակի պայթուցիչի միացման ականոցի հետ, քանի որ չկան այնպիսի տեղեկություններ, թե պայթուցիչները և դրանց մասերը որտե՞ղ և ի՞նչ բաղադրությամբ են արտադրվել, չի՞ փոփոխվել արդյոք դրանց բաղադրությունը, չկան արդյոք նման բաղադրությամբ այլ դետալներ:

Խեղաթյուրվել են նաև Համլետ Թադևոսյանի հազուստների վրա հայտնաբերված վնասվածքների հետազոտության կապակցությամբ փաստահավաք խմբին փորձագետի տված պարզաբանումները: Արձանագրվել է, թե իբր որոշ «բացթողումները» փորձագետը մեկնաբանել է որպես թերացում:

Փորձագետի թիվ 494 եզրակացությունում արվել է հետևություն, որ Հ. Թադևոսյանի հազուստների վրայի վնասվածքները բեկորային բնույթի են՝ առաջացած բեկորացման ենթակա ամուր պատյան ունեցող պայթուցիչ սարքի պայթյունից, որը պայթել է Հ. Թադևոսյանի ոտքերի մոտ: Հետազոտման մասում պայթյունի տեղի վերաբերյալ տրված է հստակ հիմնավորում, որ Հ. Թադևոսյանի հազուստների վրայի վնասվածքները առավել խիստ տեղակայում ունեն ներքևի հատվածում, իսկ դեպի վեր աստիճանաբար նոսրանում են, ունեն ներքևից վեր ուղղվածություն, կիսաճտքավոր կոշիկների առաջաներեսային հատվածներում կան բազմաթիվ բեկորային վնասվածքներ, որոնց թվում բավականին շատ են խիստ տեղակայում ունեցող մանր ծակոտիների տեսքով վնասվածքները:

Ինչ վերաբերում է գրահաբաճկոնի բացակայությանը, սպա փաստահավաք խմբում փորձագետը հայտարարել է, որ գրահաբաճկոնի բացակայությունը չէր կարող ազդել հետևության վրա, քանի որ գրահաբաճկոնին հարող հատվածներում առկա վնասվածքները այլ բան չեն ասում: Հ. Թադևոսյանի հազուստների վրայի վնասվածքների տեղակայումը նկարագրված է եզրակացության հետազոտական մասում: Փաստահավաք խմբում փորձագետը հայտարարել է, որ գրահաբաճկոնային հատվածում հազուստների վրա վնասվածքների բացակայությունը կարող է պայմանավորված լինել, ինչպես փաստահավաք խմբի կողմից նշված գրահաբաճկոնի առկայությամբ, այնպես էլ որևէ արգելապատնեշի առկայությամբ, որը գտնվել է պայթյունի օջախից մինչև նշված հատվածը: Ոչ մի բացթողնման կամ թերացման մասին փորձագետի կողմից հայտարարություն չի արվել:

Ոչ եզրակացություններում և ոչ էլ Խմբում փորձագետի կողմից չի նշվել, որ պայթել է «Ֆ-1», «Ռ-Գ-42», «Ռ-Գ-Դ-5» նռնակներից որևիցե մեկը, այլ նշվել է, որ ՈՒՉՈՒԳՄ տեսակի պայթուցիչները նախատեսված են գործարանային արտադրության «Ֆ-1», «Ռ-Գ-42», «Ռ-Գ-Դ-5» տեսակի նռնակները պայթեցնելու համար, սակայն կարող են օգտագործվել նաև ինքնաշեն պայթուցիչ սարքեր պայթեցնելու համար: Փաստահավաք խմբում փորձագետը տվել է պարզաբանում, որ «Ֆ-1» տեսակի նռնակներն ունեն չուզուներ պատյան և այդ

նոնակի պայթյունից առաջացած բեկորներն իրենց կառուցվածքով տարբերվում են փորձաքննությանը ներկայացված բեկորներից:

Այն հարցին՝ թե ինչու փորձագետի կողմից հազուստների հետազոտման ժամանակ չեն ուսումնասիրվել պայթյունի արգասիքները և այդ մասին նշված չէ եզրակացության մեջ, փորձագետն իբր պատասխան չի տվել: ՀԲԾ-ն պարզաբանել է, որ փորձագետը փաստահավաք խմբին հայտնել է, որ պայթյունի այնպիսի արգասիքներ, ինչպիսիք են՝ այրվածքը, մուրը և հարվածային ալիքից առաջացող զգալի չափերի պատռվածքային վնասվածքները, հազուստների վրա չեն հայտնաբերվել, և հետևաբար՝ եզրակացության մեջ գոյություն չունեցող հետքերի վերաբերյալ նշումներ լինել չէին կարող, իսկ ինչ վերաբերում է պայթյունի այնպիսի արգասիքների, ինչպիսիք են պայթուցիկ նյութի հետքերը, ապա փորձագետի թիվ 494 եզրակացությունում մանրամասն նկարագրվել է պայթուցիկ նյութի հետքեր հայտնաբերելու համար կատարած քիմիական հետազոտությունը, իսկ «հետևություններ» մասում՝ հետազոտության արդյունքները:

Անհնար է տրամաբանական մեկնաբանություն տալ Խմբի այն հայտարարությանը, թե փորձագետը հազուստների հետազոտման ընթացքում չի ուսումնասիրել պայթյունի արգասիքները, և այդ մասին նշված չէ եզրակացության մեջ, այն դեպքում, երբ նույն Խմբի կողմից ներկայացված փաստաթղթի մեկ այլ կետում Խումբը մեղադրել է փորձագետին իր իրավասության սահմաններից դուրս գալու և համալիր դատապայթյունատեխնիկական և քիմիական համալիր փորձաքննություն կատարելու համար»:

Վերոգրյալներից ելնելով նախքննական մարմինը գտել է, որ՝ «ՀՀ Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ի կարգադրությամբ ստեղծված փորձագետների փաստահավաք խմբի կողմից «ՀՀ ոստիկանության զորքերի թիվ 1032 զորամասի սպա Հ. Թադևոսյանի մահվան հանգամանքների հետ կապված» վերնագրված փաստաթուղթը չի արտացոլում օբյեկտիվ ճշմարտությունը»:

### **Հանձնաժողովի եզրահանգումները**

Հանձնաժողովը համադրելով փաստահավաք խմբի և նախաքննական մարմնի կողմից ներկայացրած փաստարկները հանգել է հետևյալ եզրակացության.

Չնայած հատուկ քննչական ծառայությունն իր առարկություններով հիմնականում հերքել է Խմբի կողմից ներկայացված փաստարկները, այնուամենայնիվ, 2008 թվականի մարտի 17-ին, Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Ա. Եփրեմյանի որոշմամբ փորձագետին ներկայացվել են Համլետ Թադևոսյանի զինվորական բաճկոնը, բրդյա սվիտորը, վերնաշապիկը, անդրավարտիքը, ներքնաշորերը, նասկիները, կիսաճտքավոր կոշիկները, պաշտպանիչ ծնկակալները և արմնկակալը, որոնք ամբողջությամբ համապատասխանում են փորձագետի եզրակացության մեջ նշված հազուստներին (հայերեն դարձվածքով): Մինչդեռ, Կենտրոնի քննչական բաժնի քննիչ Ա. Թադևոսյանի կողմից առանց ամիս, ամսաթվի թվագրման «հազուստները ներկայացնելու»

մասին կազմած արձանագրությամբ, ինչը, որպես քննչական գործողություն, քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում, 3-րդ կլինիկական հիվանդանոցի ավագ բուժբույրը ընթերակաների ներկայությամբ պոլիէթիլենային տոպրակով ներկայացրել է նաև կրծքավանդակի և թիկունքի պաշտպանական վահանակը (գրահաբաճկոն), որը տեղ չի գտել 2008 թվականի մարտի 3-ին Հատուկ քննչական ծառայության քննչական խմբի անդամ Կ. Հովսեփյանի կողմից Համլետ Թադևոսյանի հագուստների զննման և առգրավման արձանագրությունում: Ի դեպ, «հագուստները ներկայացնելու» մասին արձանագրության մեջ քննիչ Ա. Թադևոսյանը հղում է կատարել ՀՀ քր. դատ. օր-ի 217-րդ և 218-րդ հոդվածներին: Մինչդեռ, նշված հոդվածները բացառապես վերաբերում են զննմանը և ոչ թե ինչ-որ բան ներկայացնելուն:

Հետագայում՝ 2009թ. մարտի 23-ին գրահաբաճկոնը ենթարկվել է դատապայթյունատեխնիկական, դատաքիմիական, դատակենսաբանական և դատազենետիկական համալիր փորձաքննության: Համաձայն փորձագիտական եզրակացության՝ գրահաբաճկոնի վրա հայտնաբերվել են բեկորային բնույթի մակերեսային և թափանցող վնասվածքներ, գրահաբաճկոնի և Համլետ Թադևոսյանի հագուստների վրա առկա արյունը պատկանում են Համլետ Թադևոսյանին:

Հանձնաժողովը համամիտ է Խմբի այն դիտարկմանը, որ կրծքավանդակի և թիկունքի պաշտպանական վահանակը (գրահաբաճկոն) նախաքննական մարմնի կողմից, ժամանակին փորձաքննության չներկայացնելը իրոք հանդիսանում է քրեադատավարական նորմերի խախտում: Այնուամենայնիվ, Խմբի կողմից մատնանշած բացթողումները, Հանձնաժողովի կարծիքով, չէին կարող խոչընդոտ հանդիսանալ մահվան հանգամանքների ամբողջությամբ բացահայտմանը, քանի որ դրանք բացառապես քրեադատավարական բնույթի բացթողումներ են, որոնք իրենց ամբողջության մեջ անգամ, ըստ էության, չեն կարող հիմք հանդիսանալ նախաքննության կողմից առաջ քաշված վարկածը հերքելու կամ մահվան հանգամանքների այլ վարկած առաջ քաշելու համար:

Այնուհանդերձ, Հանձնաժողովը համարում է, որ նման բացթողումները անթույլատրելի են և այսուհետ անհրաժեշտ է, որ նախաքննական մարմինը հանցագործության դեպքի առնչությամբ քննությունը անցկացնի պատշաճ և դատավարական նորմերին համապատասխան:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ, չնայած նախաքննական մարմնի կողմից կատարվել են որոշակի աշխատանքներ, այդուհանդերձ դրանք բավարար արդյունք չեն տվել Համլետ Թադևոսյանի մահվան դեպքի բացահայտման ուղղությամբ:

2. Տիգրան Էդիկի Աբգարյան, ծնվ. 17.03.1983 թ., Արարատի մարզ, գյուղ Տափերական, ծառայել է ՀՀ ՈՁ թիվ 10/33 զորամասում որպես ժամկետային զինծառայող \շարքային\:

2008թ. մարտի 1-ին ժամը 23.00-ի սահմաններում ՀՀ ՈԶ թիվ 1033 գործառնասի կազմում Լեո փողոցի «Սվին» խանութի մոտ ծառայություն իրականացնելիս Տիգրան Աբգարյանը հրազենի կրակոցից ստացել է պարանոցի միջանցիկ հրազենային գնդակային վիրավորում և տեղափոխվել Էրեբունի ԲԿ, այնուհետև Ա. Լ. Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտ, որտեղ էլ 11.04.2008 թ. ժ. 18.20-ին մահացել է: Ըստ դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ Տ. Աբգարյանի մահը վրա է հասել ողնուղեղի կարևորագույն կենսական ֆունկցիաների խանգարումից՝ պարանոցի հրազենային գնդակային միջանցիկ վիրավորում ստանալու հետևանքով:

Քանի որ Տ. Աբգարյանի հրազենային վնասվածքի պատճառ հանդիսացած գնդակը չի հայտնաբերվել, այդ իսկ պատճառով նշանակվել է նրա համազգեստի դատահետքաբանական, դատաձգաբանական և պայթյունատեխնիկական համալիր փորձաքննություն: Փորձաքննության եզրակացությամբ. «զինվորական ձեռնային բաճկոնի վրա առկա վնասվածքները հրազենային են, գնդակային, առաջացել են պղինձ պարունակող գնդակով, առջևից-ետ ուղղությամբ կատարված առնվազն մեկ կրակոցի հետևանքով: Ջինվորական ձեռնային բաճկոնի վրա նկարագրված հրազենային վնասվածքները հանդիսանում են ելքի վնասվածք»: Ըստ ոստիկանության և նախաքննական մարմնի վարկածի Տ. Աբգարյանը զոհվել է զանգվածային անկարգության մասնակցի կողմից գործադրված հրազենի կրակոցից: Սակայն, քանի որ նախաքննությամբ դեռևս չի պարզվել թե Տիգրան Աբգարյանը ում հրազենի կրակոցից է զոհվել Հանձնաժողովը չի կարող ոստիկանության և նախաքննության կողմից առաջ քաշված վարկածը հերքել կամ առաջ քաշել այլ վարկած:

Հանձնաժողովն անդրադարձել է Փաստահավաք խմբի նախկին անդամներ Սեդա Սաֆարյանի և Անդրանիկ Քոչարյանի Հանձնաժողովին հասցեագրած «ՀՀ ՈԶ 1033 գործառնասի 2-րդ գումարտակի զինծառայող Տիգրան Աբգարյանի մահվան հանգամանքները» վերնագրված փաստաթղթին (այսուհետ՝ փաստաթուղթ) և դրա վերաբերյալ ՀԶԾ-ից պահանջել համապատասխան պարզաբանումներ:

Ստորև ներկայացվում է Սեդա Սաֆարյանի և Անդրանիկ Քոչարյանի (այսուհետ՝ զեկուցողներ) զեկույցը և ՀԶԾ-ի առարկությունները (շեղատառերով).

1. «Զեկուցողները պարզեցին, որ քննիչն անմիջապես չի գնացել հիվանդանոց՝ Տիգրան Աբգարյանի հագուստներն առգրավելու: Ավելին, կրակոցի արգասիքների առկայությունը պարզելու նպատակով քննիչը բժիկների օգնությամբ տամպոններով չի վերցրել Տիգրան Աբգարյանի վնասվածքի, քթանցքների, ականջների և դեմքի շրջաններից քսուքներ:

Հաշվի առնելով, որ հրազենային վնասվածքը Տիգրան Աբգարյանը ստացել է առջևից, քննիչի կողմից գննման ժամանակ չի նշվել, թե վնասվածքի հատվածին համապատասխանող՝ բաճկոնի առջևի հատվածում առկա՞ են, արդյոք, արնանման կամ կամ այրվածքի հետքեր: Քննիչը չի մատնանշել նաև գննման արձանագրության մեջ օձիքի

վրայի՝ իր կողմից նշված արձանման հետքերի տեղակայումը, դրանց չափերը, ինչպես նաև օձիքի վրայի մյուս երկու փոքր կլորավուն անցքերի չափերը:

Ձննման արձանագրությունը ուսումնասիրելիս ծագում են հետևյալ հարցերը.

ինչու՞ է քննիչը առգրավումը կատարել միայն մարտի 8-ին, այլ ոչ թե դեպքի օրը, ինչպե՞ս պատահեց, որ Տիգրան Աբգարյանի ձմեռային բաճկոնը հայտնվեց գորամասում, ու՞ր են մնացած հագուստները, որոնք դեպքի օրը եղել են նրա հագին՝ զրահաբաճկոնը, զինվորական կիտելը և մայկան, ինչու՞ դրանք չեն առգրավվել և զննվել, ինչու՞ այս առնչությամբ որևէ քննություն չի իրականացվել»:

*1.1. «Փաստորեն զեկուցողները ստանձնել են օրենքով իրենց չվերապահված՝ նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող մարմնի կամ դատարանի լիազորություններ:*

*Այսպես՝ 2008թ. մարտի 1-ին և 2-ին տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում մարմնական վնասվածքներ ստացած ՀՀ ՈԶ բազմաթիվ զինծառայողներ տեղափոխվել են տարբեր հիվանդանոցներ: Դեպքին հաջորդող օրերին ՀՀ ՈԶ համապատասխան գործասերի հրամանատարներները և նրանց ցուցումներով նաև ստորաբաժանումների ղեկավարներն այցելել են բոլոր բուժհիմնարկներ, որտեղից գործասեր են տեղափոխել վնասվածքներ ստացած զինծառայողների հատուկ միջոցները և հագուստները: Նույն կերպ ՀՀ ՈԶ թիվ 1032 գործաս է բերվել Տիգրան Աբգարյանի հագուստներից միայն ձմեռային զինվորական բաճկոնը, որն էլ քննիչի կողմից առգրավվել և ներկայացվել է փորձաքննության»:*

2. Փաստաթղթում արձանագրված է, որ ծանոթանալով Տիգրան Աբգարյանի ձմեռային բաճկոնի դատահետքաբանական փորձաքննություն նշանակելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Եփրեմյանի 2008թ. մարտի 17-ի որոշմանը՝ «զեկուցողների» մոտ առաջացել են հետևյալ հարցադրումները՝

«ա. եթե վնասվածքը հրազենային է, ապա ինչու՞ է քննիչը նշանակել Տիգրան Աբգարյանի բաճկոնի դատահետքաբանական փորձաքննություն, այլ ոչ թե դատաձգաբանական:

բ. ինչու՞ քննիչը բաճկոնի վրայի կրակոցի արգասիքների առկայությունը պարզելու ուղղությամբ փորձագետի առջև խնդիր չի առաջադրել, ինչը հնարավորություն կտար որոշելու կրակոցի հեռավորությունը:

գ. ինչու՞ է փորձաքննությունը նշանակվել միայն մարտի 17-ին»:

*2.1. «Հիշյալ հարցերի պատասխաններն ստանալու համար «զեկուցողները» հնարավորություն են ունեցել դիմել նախաքննությունն իրականացնող մարմնին և պաշտոնապես ստանալ դրանց պատասխանները, սակայն չեն օգտվել իրենց ընձեռված այդ հնարավորությունից և չունենալով բազմաթիվ հարցերի պատասխաններ՝ շտապել են կազմել քննարկվող փաստաթուղթը:*

Նախ՝ քննիչը չէր կարող ենթադրել, որ բաճկոնի վրա պետք է լինեին միայն հրազենային վնասվածքներ, այդ պատճառով որոշում է կայացրել դատահետքաբանական փորձաքննություն նշանակելու մասին, որը ենթադրում է ներկայացվող օբյեկտի քրեագիտական բազմակողմանի հետազոտություն: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 246-րդ հոդվածի 4-րդ կետով հստակ նախատեսված է, որ փորձագիտական հիմնարկի ղեկավարը կարող է կազմակերպել համալիր փորձաքննություն, նույնիսկ այն դեպքում՝ երբ այդ մասին ուղղակի պահանջ չի դրվում քննիչի որոշմամբ: Տվյալ դեպքում, քննիչի կողմից նշանակվել է դատահետքաբանական փորձաքննություն, իսկ փորձաքննությունն իրականացնող փորձագիտական հիմնարկի ղեկավարի որոշմամբ կազմակերպվել է դատահետքաբանական, դատաձգաբանական և պայթյունատեխնիկական համալիր փորձաքննություն:

Չմեռային զինվորական բաճկոնի վրա վնասվածքների առաջացման մեխանիզմն ու բնույթը պարզաբանելու վերաբերյալ հարցն իր մեջ ներառում է վնասվածքի առաջացման հետ կապված բոլոր հարցերի, այդ թվում նաև՝ կրակոցի հեռավորության պարզաբանումը, այսինքն՝ նշված հարցին պատասխանելիս փորձագետը պետք է անդրադառնա նաև կրակոցի հեռավորության պարզաբանմանը:

Ինչ վերաբերում է նրան, որ ձմեռային զինվորական բաճկոնի փորձաքննությունը նշանակվել է 2008թ. մարտի 17-ին, ապա արտառոց որևէ բան չկա, ինչպես հիշյալ, այնպես էլ մյուս փորձաքննությունները կարող են նշանակվել քրեական գործի նախաքննության ցանկացած փուլում»:

3. Փաստաթղթում «զեկուցողները», որպես դատահետքաբանական, դատաձգաբանական և պայթյունատեխնիկական համալիր փորձաքննության բացթողումներ և թերություններ, արձանագրել են՝ «Փորձագետի կողմից չի նշվել երեքական շոշափող միջանցիկ վնասվածքների և հիմնական վնասվածքի՝ միմյանց նկատմամբ դիրքը, հեռավորությունը և չափերը: Նկարագրելով առանձին երեքական շոշափող և միջանցիկ վնասվածքները՝ առանց որևէ հիմնավորման /արհեստականորեն/ դրանք ներկայացվել են իբրև հիմնական վնասվածքի շարունակություն՝ չհստակեցնելով վնասվածքերի քանակը: Ըստ փորձագիտական եզրակացության՝ առկա է բաճկոնի օձիքի մեկ 19X9 մմ չափերի վնասվածք և առանձին՝ երեքական շոշափող և միջանցիկ վնասվածքներ, այլ կերպ ասած՝ յոթ վնասվածք: Մինչդեռ այս մասին փորձագետը հստակ ոչինչ չի նշել, հատկապես հաշվի առնելով, որ քննիչը բաճկոնը զննելիս նկարագրել էր այդ վնասվածքների հեռավորությունը հիմնական վնասվածքից»:

3.1. «Դատահետքաբանական, դատաձգաբանական և պայթյունատեխնիկական համալիր փորձաքննության եզրակացությունում հստակ արձանագրված է 19x9մմ չափով վնասվածքի տեղակայումը: Այնուհետև նշված է. «նկարագրված վնասվածքը շարունակվում է բաճկոնի օձիքի և մորթենման օձիքի վրա երեքական շոշափող և միջանցիկ, անկանոն տեսքի վնասվածքների ձևով», հետևաբար, նկարագրված մյուս

երեքական շոշոփող և միջանցիկ անկանոն վնասվածքներն առաջինի շարունակությունն են, գտնվում են մեկ ուղղության վրա և իրենց մորֆոլոգիական (ձև, չափեր, վնասված թելիկների ուղղվածություն) ու քիմիական հատկանիշներով երկրորդային են, այսինք՝ հանդիսանում են առաջնային վնասվածքի՝ 19x9մմ չափով վնասվածքի շարունակությունը, որոնք առաջացել են հագուստի օձիքի տվյալ հատվածի ձևվածքի, այն է՝ օձիքի բնական ծալվածության պատճառով, տեղակայված են օձիքի հետին մակերեսին և վնասում են միայն արտաքին շերտը: Համակցության մեջ այդ բոլոր վնասվածքները միասին գնահատվել են որպես մեկ ընդհանուր ելքի վնասվածք, ունեն միաժամանակյա և ընդհանուր առաջացման մեխանիզմ»:

4. Փաստաթղթի հեղինակները նշել են նաև՝ «Փորձագետը, նկարագրելով վնասվածքները որպես ելքի անցքեր, փորձել է դրանց շուրջ հայտնաբերել վառողային մրի հետքեր, վառողի կիսաայրված մասնիկներ, քսայուղերի և կրակոցի արգասիքների մետաղական հետքեր: Նման հետազոտությունը կատարվում է ընդհուպ կրակոցի փաստը հաստատելու նպատակով»:

4.1. «Ձգաբանական հետազոտությունների ընթացքում վնասվածքների հատվածներում կրակոցի լրացուցիչ գործոնների հայտնաբերման նպատակով կատարվող հետազոտությունները պարտադիր են՝ անկախ առաջացման մեխանիզմից, որը կատարվում է հետազոտության ամբողջականությունն ապահովելու համար: Նշվածը նախատեսված է կիրառվող մեթոդաբանությամբ, որը պարտադիր է ցանկացած հրազենային վնասվածքի հետազոտության պրոցեսում»:

5. Որպես թերություն՝ «զեկուցողները» արձանագրել են նաև. «Փորձագետը կիրառել է դիֆուզ-կոնտակտային մեթոդը և դրա արդյունքում ձմեռային բաճկոնի օձիքի վնասվածքների ներքին մակերևույթի վրա հայտնաբերել պղնձի մետաղացման թույլ ինտենսիվության հետքեր: Արտաքին մակերևույթին փորձագետը պղնձի մետաղական հետքեր չի հայտնաբերել: Չեկուցողները հատկապես հարկ են համարում անդրադառնալ այն հանգամանքին, որ փորձագետը, փաստելով պղնձի առկայությունը, այդ առնչությամբ խուսափել է որևէ մեկնաբանություն /հետևություն/ անելուց: Հայտնի է, որ «ընդհուպ կրակոցի» ժամանակ վառողի կիսաայրված մասնիկները, վառողային մրի հետքերը, քսայուղերը և կրակոցի արգասիք պղնձի և անտիմոնի մետաղացման հետքերը առկա են վերքային խողովակում և «ելքի» անցքի մոտ»:

5.1. «Թույլ ինտենսիվությամբ պղնձի մետաղացման հետքի հայտնաբերումը բաճկոնի օձիքի ներքին մակերևույթին և պղնձի մետաղացման հետքի բացակայությունը բաճկոնի օձիքի արտաքին մակերևույթին վկայում է այն մասին, որ նշված հրազենային վնասվածքն առաջացել է պղինձ պարունակող զնդակից և հանդիսանում է ելքի վնասվածք: Պղնձի մետաղացման հետքերի նման տոպոգրաֆիան վնասվածքի առաջացման մեխանիզմի մասին եզրահանգման հիմնավորումներից մեկն է»:

6. Փաստաթղթի հաջորդ հատվածում «զեկուցողները» նշել են՝ «Հարկ է ավելացնել, որ փորձաքննությունը կասեցվել է 2008թ. մարտի 19-ին, քանի որ փորձագետը միջնորդություն է ներկայացրել քննիչին՝ իրեն տրամադրել Տիգրան Աբգարյանի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը: Փաստորեն, ունենալով Տիգրան Աբգարյանի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը և տեղյակ լինելով, հրազենային «մուտքի» անցքը առջևից է, փորձագետը որևէ փորձ չի արել՝ պարզելու բաճկոնի առջևի մասի՝ հրազենային «մուտքի» վնասվածքին հարող հատվածում վառողային մրի հետքերի, վառողի կիսաայրված մասնիկների, քսայուղերի հետքերի, ինչպես նաև կրակոցի արգասիքները կազմող պղնձի և անտիմոնի մետաղացման հետքերի առկայությունը, որի միջոցով կպարզվեր ու կհստակեցվեր կրակոցի հեռավորությունը»:

6.1. *«Պարզաբանում ենք՝ ՀՀ քր. դատ. օր-ի 85-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ փորձագետն իրավունք ունի քրեական վարույթն իրականացնող մարմնից՝ պահանջել անհրաժեշտ օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր՝ եզրակացություն տալու և համեմատական հետազոտման համար: Ինչ վերաբերում է փորձաքննության ժամկետը կասեցնելուն, այսպես կարգավորվում է «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 2006թ. մարտի 15-ի թիվ 29-Ն հրամանով գործողության մեջ դրված կարգի 29-րդ կետով:*

*Կրակոցի արգասիքներ հայտնաբերելու ուղղությամբ փորձագետի կողմից կատարվել են համապատասխան հետազոտություններ նկարագրված վնասվածքներում և դրանց հարող մակերեսներում, որն իր մեջ ներառում է բաճկոնի օձիքն ամբողջությամբ՝ որպես մեկ ընդհանուր օբյեկտ: Այսինքն, հազուստի օձիքն ամբողջությամբ հետազոտելիս հետազոտվել է նաև Տիգրան Աբգարյանի մարմնի վրա հայտնաբերված հրազենային վնասվածքի մուտքի անցքին հարող հազուստի համապատասխան հատվածը, քանի որ համաձայն դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ հրազենային մուտքի անցքը գտնվում է Տիգրան Աբգարյանի պարանոցի առջևի աջ հատվածում: Բաճկոնի օձիքի հետազոտությամբ՝ մոտ կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության հետքեր չեն հայտնաբերվել, ինչն էլ հստակ արձանագրված է եզրակացությունում»:*

7. Անդրադառնալով դատահետաքննական, դատաձգաբանական և պայթյունատեխնիկական համալիր փորձաքննության եզրակացությանը, «զեկուցողները» նշել են՝ «Փորձագիտական եզրակացության մեջ բացակայում է կրակոցի վերաբերյալ որևէ նշում: Մինչդեռ դատաձգաբանական փորձաքննության հիմնական նպատակներից մեկը հենց կրակոցի հեռավորության որոշումն է: Ունենալով մեկ 19x9 մմ չափերի վնասվածք և դրանից բացի նաև երեքական շոշափող ու միջանցիկ վնասվածքներ՝ փորձագետը եզրակացության հետևության մեջ չի նշել դրանց քանակը, չափերը ու դասավորվածությունը բաճկոնի օձիքի վրա: Լրոզելով առկա տվյալները՝ սահմանափակվել է նշելով՝ նկարագրված վնասվածքները հրազենային են /այսինքն՝ նկատի է ունեցել մեկից ավելի հրազենային վնասվածքների առկայություն/, և կատարվել է

առնվազն մեկ կրակոց /ընդունել է մեկից ավելի կրակոցների առկայության փաստը/: Այսքանով հանդերձ, դատաձգաբանական փորձագետները նշել են, որ «բաճկոնի վրա նկարագրված հրազենային վնասվածքները հանդիսանում են «ելքի» վնասվածք»:

Տրամաբանական հարց է ծագում՝ ինչպե՞ս է հնարավոր մի քանի հրազենային վնասվածքները դիտել որպես մեկ ելքի վնասվածք»:

*7.1. «Հիշյալ եզրակացությունում հստակ նշված է, որ հագուստի հետազոտությամբ մոտ կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության հետքեր չեն հայտնաբերվել:*

*Հագուստի վրա նկարագրված վնասվածքները համակցության մեջ հանդիսանում են մեկ ընդհանուր ելքի վնասվածք, ինչն էլ հստակ արձանագրված է եզրակացությունում»:*

8. «Ձեկուցողները», անդրադառնալով Տիգրան Աբգարյանի դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությանը, գտել են, որ՝ «փորձագետը թերացել է իր առջև դրված խնդիրը լուծելիս և հետևության մեջ չի անդրադարձել մնացած վնասվածքներին, չի նշել դրանց առաջացման մեխանիզմը և վաղեմությունը»:

*8.1. «Տիգրան Աբգարյանի մարմնի վրա արձանագրվել են՝ հրազենային վնասվածքի մուտքի և ելքի մեկական անցքեր, կրծքավանդակի հետին մակերեսի ստորթիակային շրջանի և գույգ կրունկային շրջանների վերքեր՝ պառկելախոցեր, որոնք առաջացել են երկարատև պառկելու արդյունքում՝ այդ հատվածներում սնուցման խանգարմամբ, և բուժական միջամտությունների արդյունքում առաջացած վերքերի ապաքինված սպիներ, որոնց մասին ուղղակի արձանագրված է Տիգրան Աբգարյանի անվամբ լրացված հիվանդության պատմագրերում: Ավելորդ ենք համարում բացատրել վերքերի ու վնասվածքների տարբերությունը»:*

9. «Ձեկուցողները» մեծ զարմանքով նշել են՝ «Անհասկանալի է, թե ինչու դատաբժշկական փորձագետը դատահյուսվածքաբանական հետազոտման նպատակով մաշկալաթ չի վերցրել Տիգրան Աբգարյանի հրազենային վնասվածքի «մուտքի» անցքի շրջակայքից և չի հանձնարարել կատարել համապատասխան փորձաքննություն, որը հնարավորություն կտար պարզելու կրակոցի արգասիքների առկայությունը և դրանով իսկ որոշել կրակոցի հեռավորությունը: Այն դեպքում, երբ նույն փորձագետը դատահյուսվածքաբանական բաժանմունքի արխիվի համար վերցրել է դիակի տարբեր ներքին օրգաններից կտորներ (գլխուղեղ-2, սիրտ-2, լյարդ-1, թոք-5, երիկամ-2, փայծաղ-1, ենթաստամոքսային գեղձ-1, մակերիկամ-2): Փոխարենը դատաբժշկական փորձագետը լուրջ հղում կատարելով հիվանդության պատմագրի տվյալներին, որոշել է, որ կրակոցը կատարվել է տվյալ տեսակի զենքի համար կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից, չնշելով սակայն, թե բժշկական ինչ տվյալների հիման վրա է հանգել նման եզրակացության»:

*9.1. «Մարտ ամսին կատարված փորձաքննության ժամանակ հրազենային վնասվածքի մուտքի անցքից մաշկալաթ չվերցնելու և այն փորձաքննության չենթարկելու կապակցությամբ «զեկուցողների» զարմանքը կարող էր փարատվել դատաբժշկական*

փորձաքննության եզրակացությունը մի փոքր ուշադիր կարդալու արդյունքում, որտեղ հստակ նշված է. «Փորձաքննվողը գտնվում է դեղորայքային սեղացիայի տակ և տրախտեստոմիկ խողովակով միացված է ԹԱՇ-ի, պարանոցը ֆիքսված է և գտնվում է բինտային վիրակապի մեջ»: Կենդանի անձից առհասարակ մաշկալաթ չի վերցվում:

Ինչ վերաբերում է դիակի դատաբժշկական փորձաքննության ժամանակ մուտքի անցքից մաշկալաթ չվերցնելու հանգամանքին, ապա դա բացատրվում է այն հանգամանքով, որ դիակի դատաբժշկական փորձաքննությունն անցկացվել է դեպքից շուրջ 40 օր անց (Տիգրան Աբգարյանը մահացել է 2008թ. ապրիլի 11-ին): Հիշյալ 40 օրերի ընթացքում Տիգրան Աբգարյանի հրազենային վերքը հիվանդանոցում պարբերաբար վիրաբուժական մշակման է ենթարկվել տարբեր անտիսեպտիկ նյութերով (սպիրտ, յոդ և այլն), որի հետևանքով մաշկն, անկասկած, մաքրվել է, ինչպես նաև վերնամաշկը՝ էպիդերմալ շերտը, փոխարինվել է նորով:

Հրազենային մուտքի անցքի շուրջ օտար նստվածքներ՝ լրացուցիչ գործոններ լինելու դեպքում, դրանց առկայության մասին բժիշկների կողմից պարտադիր կարգով պետք է նշումներ կատարվեր հիվանդության պատմագրում: Դա բուժող, հետազոտող բժիշկների պարտականությունն է, ուստի լրացուցիչ գործոնների բացակայության մասին բուժող բժիշկների նշումները հիմք են ընդունվել փորձաքննության կատարման ժամանակ»:

10. «Ձեկուցողներն» իրենց անհասկանալի մնացած հարցերն ուղղել են ոչ թե փորձագետին կամ համապատասխան մարմիններին, այլ շարադրել են փաստաթղթում՝ «Անհասկանալի է, թե սովորական հիվանդանոցային պայմաններում բուժող բժիշկները կարո՞ղ էին արդյոք կատարել դատաբժշկական փորձագետի իրավասության մեջ մտնող գործառույթներ և կատարվե՞լ են արդյոք դրանք: Միաժամանակ, դատաբժշկական փորձագետը նշել է, որ կրակոցի լրացուցիչ արգասիքների առկայության հարցը ավելի ստույգ հնարավոր կլինի պարզաբանել հագուստների հետքաբանական փորձաքննությամբ: Ձեկուցողների մոտ ծագում է հետևյալ հարցը՝ եթե դատաբժշկական փորձագետը համոզված չէ իր կատարած հետևության մեջ, առաջարկում է քննիչին նշանակել համալիր դատաբժշկական և դատահետքաբանական փորձաքննություն՝ կրակոցի հեռավորության հարցը լուծելու նպատակով, ապա ինչու՞ է «հեռավորության» վերաբերյալ եզրահանգում արել հետևության մեջ և այն էլ՝ հիվանդության պատմագրի տվյալների հիման վրա: Ավելին, առանց մաշկալաթի և վերքային խողովակի դատահյուսվածքաբանական հետազոտության, ինչպե՞ս պետք է կատարվեր համալիր փորձաքննությունը»:

10.1. «Ձեկուցողներն անտեսել են այն հանգամանքը, որ հիվանդանոցներում աշխատող բժիշկները և դատաբժշկական փորձագետները ուսումը ստանում են միևնույն կրթական օջախում, միևնույն կրթական ծրագրով, այդ թվում՝ ուսանում են «դատական բժշկություն» առարկան, տիրապետում նշված առարկային: Բոլոր բժիշկներին հայտնի է, որ հիվանդության պատմագիրն իրավաբանական փաստաթուղթ է և հիվանդի մարմնի վրա

վնասվածքների, օտար նստվածքների՝ կրակոցի լրացուցիչ գործոնների առկայությունների հայտնաբերումը և արձանագրումը յուրաքանչյուր բժշկի մասնագիտական պարտականությունն է:

Փորձագետը, հիմք ընդունելով հիվանդության պատմագրի տվյալները, կատարել է եզրահանգում, որ կրակոցը կատարվել է տվյալ տեսակի զենքի համար կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից: Հարցի ստույգ պարզաբանման համար դատաբժշկական փորձագետը հղում է կատարել հագուստների հետքաբանական փորձաքննության վրա՝ նկատի ունենալով, որ հագուստները, լրացուցիչ գործոնների համար լինելով առաջին պատնեշ, կարող էին իրենց վրա վերցնել բոլոր լրացուցիչ գործոնները»:

11. Չհասկանալու մեծ ունակությամբ օժտված «զեկուցողները» փաստաթղթի հաջորդ պարբերությունում նշել են՝ «Անհասկանալի է, թե ինչու դատաբժշկական փորձագետը չի անդրադարձել «մուտքի» անցքի չափերին և չի նշել, թե դիակի արտաքին զննությամբ պարզված՝ 5 սմ երկարությամբ հրազենային «մուտքի» անցքը ինչ հեռավորության վրա կատարված կրակոցից կարող է առաջանալ: Շեկուցողները փաստում են, որ դատաբժշկական փորձագետի կողմից դիակի արտաքին զննության արդյունքում ընդհանրապես չի նկարագրվել «մուտքի» անցքի շրջակայքում մաշկը, չի նշվել՝ առկա են, արդյոք, կրակոցը բնութագրող լրացուցիչ գործոններ: Հայտնի փաստ է, որ ելնելով «մուտքի» անցքի չափերից՝ կարելի է որոշել կրակոցի հեռավորությունը: Այդ հարցի վերաբերյալ հստակ նշված է մասնագիտական գրականության տարբեր աղբյուրներում»:

11.1. «Նախ, Տիգրան Արզարյանի անվամբ «թիվ 1 կլինիկական հիվանդանոց» ՓԲ ընկերությունում լրացված թիվ 403/36 հիվանդության պատմությունում հերթապահ բժշկի կողմից 2008թ. մարտի 1-ին կատարված զննման արդյունքում արձանագրվել են վնասվածքի չափերը՝ պարանոցի առջևի մակերեսին, կոկորդի աջ կեսի վերին մասում կլոր, հարթ եզրերով 2x2 սմ չափսերի անցք: Վերքի խիստ փոքր և կլորավուն լինելը միանշանակ վկայում է կատարված մեկ կրակոցի՝ ոչ ընդհուպ լինելու մասին: Այնուհետև նշվում են ձեռնարկված բժշկական միջամտությունների մասին՝ 2008թ. մարտի 2-ին կատարվել է պարանոցի վերքի առաջնային վիրաբուժական մշակում, զննում և կարում, ելքի վերքի տամպոնադա:

Դատաբժշկական փորձագետի եզրակացությունում փորձագետը նկարագրել է, որ վնասվածքը ենթարկվել է վիրահատության, այնուհետև պարբերաբար մշակվել ու ենթարկվել բժշկական միջամտությունների: Բնականաբար վիրահատման և պարբերաբար մշակման ենթարկված վնասվածքը չէր կարող պահպանել նախկին չափերը, և դիակի դատաբժշկական փորձաքննության ընթացքում փորձագետն արձանագրել է վնասվածքի այդ պահին փաստացի կազմող չափերը՝ 5 սմ:

*Բացի վերը նկարագրվածը, «գեկուցողները» փաստաթղթում ակնհայտ խեղաթյուրել են Տիգրան Աբգարյանի մահվան հանգամանքները պարզելու նպատակով Փորձագետների փաստահավաք խմբին ՀՀ ՈՁ զինծառայողների կողմից տրված բացատրությունները:*

*Փաստաթղթում նշված անձանց՝ Փորձագետների փաստահավաք խմբին տրված բացատրություններն ամբողջությամբ տեսաձայնագրված են: Դրանց ընթացքում անդամներ Սեդա Սաֆարյանը և Անդրանիկ Քոչարյանը, գոռգոռայով և վիրավորելով բացատրություններ տվող անձանց, ամեն կերպ ջանում են շփոթության մեջ զցել նրանց ու ստանալ իրենց համար ընդունելի պատասխաններ կամ արհեստականորեն ի հայտ բերել հակասություններ: Նման պայմաններում «կորզված» բացատրություններն ակնհայտ խեղաթյուրված վիճակում ներկայացված են հենց այդ երկու անդամների կազմած հիշյալ փաստաթղթում:*

*Հատկանշական է, որ փաստաթղթում բազմաթիվ են «հարց է ծագում» և «անհասկանալի է» արտահայտությունները: Հենց հասկանալու և իրադարձությունների ընթացքում անձանց մահվան հանգամանքների բացահայտումն ապահովելու նպատակով ԱԺ ժամանակավոր հանձնաժողովին փաստեր փոխանցելու համար էլ ստեղծված էր Փորձագետների փաստահավաք խումբը: Այնինչ, իրենց չհասկացածի վերաբերյալ նախաքննական մարմնից և համապատասխան փորձագետներից անհրաժեշտ տեղեկություններ ու բացատրություններ ստանալու փոխարեն Խմբի որոշ անդամներ, առանց հասկանալու, կազմել են փաստաթուղթ, որում բացի խեղաթյուրված տվյալներից զետեղել են բազմաթիվ հարցադրումներ: Տրամաբանորեն, սկզբից պետք է ստանալ անհրաժեշտ հարցերի պատասխանները, նոր միայն գալ եզրահանգման կամ կազմել ուսումնասիրության արդյունքների ամփոփման վերաբերյալ փաստաթուղթ:*

*Ավելին, գրեթե բոլոր հարցերի կապակցությամբ Փաստահավաք խմբի տրամադրության տակ եղել են անհրաժեշտ բոլոր տվյալները (փորձագետների եզրակացություններ, հիվանդությունների պատմագրեր, ցուցմունքներ և այլն), որոնք փաստահավաք խմբի հիշյալ երկու անդամների կողմից միտումնավոր անտեսվել են, դիտավորությամբ կեղծվել և խեղաթյուրվել:*

*Ինչևէ, անտրամաբանական հիշյալ փաստաթղթում տեղ գտած խեղաթյուրված տվյալների հիման վրա էլ «գեկուցողներ» Սեդա Սաֆարյանը և Անդրանիկ Քոչարյանը եկել են անհեթեթ, հիմնագուրկ և շինծու եզրահանգումների»՝*

1. «Հեռու տարածությունից արձակված կրակոցի արդյուքում բաճկոնի օձիքի վրա առկա ելքերի անցքերի մոտ մետաղացման հետքեր չէին կարող հայտնաբերվել: Մինչդեռ, դատաձգաբանական փորձաքննությամբ Տիգրան Աբգարյանի բաճկոնի օձիքի վրա առկա 19x9 մմ վնասվածքի, երեքական շոշափող և միջանցիկ վնասվածքների մոտ հայտնաբերվել են պղնձի մետաղացման թույլ հետքեր»:

*«Փաստաթղթի վերլուծական մասում հեղինակները դատաձգաբանական, դատաբժշկական, դատահետքաբանական մասնագետներին հարիր ոճով կատարել են*

վերլուծություններ, հետազոտություններ, արել «անհերքելի» եզրահանգումներ: Տվյալ դեպքում լուրջ զարմանք է առաջացնում, թե ինչպես կարող էին նման կարգի մասնագիտական գիտելիքներ ունեցող անձինք չիմանալ, որ հրազենային ելքի վնասվածքների հատվածում մետաղացման հետքերի հայտնաբերումը վնասվածքն առաջացնող կրակոցի հեռավորության պարզաբանման հետ պատճառական կապ չունեն: Հենու տարածությունից կատարված կրակոցի դեպքում ելքի վնասվածքի շրջանում պղնձի մետաղացման հետքեր կարող են հայտնաբերվել և չհայտնաբերվել, այսինքն՝ դրա առկայությունը միանշանակ բացառել և կապել կրակոցի հեռավորության հետ չի կարելի: Կրակոցի հեռավորության հարցը պարզաբանվում է մուտքի վնասվածքի հատվածում մոտ կրակոցի լրացուցիչ գործոնների (վառողային մուր, անտիմոնի, պղնձի կամ այլ մետաղների հոմոգեն կամ անհամասեռ հետքերի վառ արտահայտվածություն, վառողի կիսաալրված մասնիկներ, թերմիկ ազդեցություն) ազդեցության հետքերի առկայությամբ կամ դրանց բացակայությամբ»:

2. «Դատաձգաբանական փորձագետները եզրակացության հետևության մեջ նշելով մի քանի հրազենային վնասվածքների մասին, փորձել են լրոզել և դրանք ներկայացնել որպես մեկ ելքային վնասվածք: Միևնույն ժամանակ եզրակացության հետևության մեջ փորձագետների կողմից նշվել է, որ տեղի է ունեցել առնվազն մեկ կրակոց, որով, փաստորեն, ընդունվել է մեկից ավելի կրակոցների առկայությունը»:

3. «Դատաձգաբանական փորձագետների կողմից հետևության մեջ չի հստակեցված հրազենային վնասվածքների քանակը, դրանց դասավորվածությունը միմյանց նկատմամբ և չափերը, չնայած հետազոտական մասում ուսումնասիրվել են տարբեր հրազենային վնասվածքներ»:

*«Դատահետքաբանական, դատաձգաբանական և պայթյունատեխնիկական համալիր փորձաքննության եզրակացությունը գրված է հստակ, փորձ չի արված ինչ-որ հարց «լրոզել», հետևություններում չկա որևէ նշում մի քանի հրազենային վնասվածքների մասին, այլ արձանագրված է, որ հագուստի վրա նկարագրված վնասվածքները համակցության մեջ հանդիսանում են մեկ ընդհանուր ելքի վնասվածք: Տիգրան Աբգարյանի բաճկոնի փորձաքննությամբ մոտ, մասնավորապես՝ ընդհուպ կրակոցի հետքեր չեն հայտնաբերվել»:*

4. «Դատաձգաբանակն փորձագետների կողմից չի ուսումնասիրվել Տիգրան Աբգարյանի ձմեռային բաճկոնի առջևի՝ դիակի վրա առկա «մուտքի» անցքին համապատասխանող հատվածը, որը հնարավորություն կտար լրացուցիչ որոշելու կրակոցի հեռավորությունը: Որպես դրա հետևանք, զեկուցողները արձանագրում են, որ եզրակացության հետևության մեջ ոչինչ չի նշված կրակոցի հեռավորության մասին»:

*«Կրակոցի արգասիքներ հայտնաբերելու ուղղությամբ փորձագետի կողմից կատարվել են համապատասխան հետազոտություններ նկարագրված վնասվածքներում և դրանց հարող մակերեսներում, որն իր մեջ ներառում է բաճկոնի օձիքն ամբողջությամբ՝*

որպես մեկ ընդհանուր օբյեկտ: Այսինքն, հազուատի օձիքն ամբողջությամբ հետազոտելիս հետազոտվել է նաև Տիգրան Աբգարյանի մարմնի վրա հայտնաբերված հրազենային վնասվածքի մուտքի անցքին հարող հազուատի համապատասխան հատվածը, քանի որ համաձայն դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ հրազենային մուտքի անցքը գտնվում է Տիգրան Աբգարյանի պարանոցի առջևի աջ հատվածում: Բաճկոնի օձիքի հետազոտությամբ՝ մոտ կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության հետքեր չեն հայտնաբերվել, ինչն էլ հստակ արձանագրված է եզրակացությունում»:

5. «Տիգրան Աբգարյանի դիակի վրա առկա «մուտքի» անցքի չափերը (5 սմ երկարությամբ) մի քանի անգամ գերազանցում են գնդակի չափերը, ինչը բնորոշ է ընդհուպ կրակոցին»:

«Սույն հարցի պատասխանն ստանալու համար փաստաթղթի հեղինակներին բավական կլինեին ծանոթանալ Տիգրան Աբգարյանի անվամբ «թիվ 1 կլինիկական հիվանդանոց» ՓԲ ընկերությունում լրացված թիվ 403/36 հիվանդության պատմագրին, որտեղ առաջին բուժզննում իրականացրած բժշկի կողմից 2008թ. մարտի 1-ին կատարված զննման արդյունքում արձանագրվել են վնասվածքի չափերը՝ պարանոցի առջևի մակերեսին, կոկորդի աջ կեսի վերին մասում կլոր, հարթ եզրերով 2x2սմ չափսերի անցք: Վերքի խիստ փոքր և կլորավուն լինելը միանշանակ վկայում է կատարված մեկ կրակոցի՝ ոչ ընդհուպ լինելու մասին: Այնուհետև նշվում են ձեռնարկված բժշկական միջամտությունների մասին՝ 2008թ. մարտի 2-ին կատարվել է պարանոցի վերքի առաջնային վիրաբուժական մշակում, զննում և կարում, ելքի վերքի տամպոնադա:

Դատաբժշկական փորձագետի եզրակացությունում փորձագետը նկարագրել է, որ վնասվածքը ենթարկվել է վիրահատության, այնուհետև պարբերաբար մշակվել ու ենթարկվել բժշկական միջամտությունների: Բնականաբար, վիրահատման և պարբերաբար մշակման ենթարկված վնասվածքը չէր կարող պահպանել նախկին չափերը, և դիակի դատաբժշկական փորձաքննության ընթացքում փորձագետն արձանագրել է վնասվածքի այդ պահին փաստացի կազմող չափերը՝ 5 սմ:

Այսինքն՝ փաստաթղթի հեղինակների համար առավել քան ակնհայտ է Տիգրան Աբգարյանի ստացած հրազենային վնասվածքի մուտքի անցքի չափերի փոփոխման պատճառները, որը հեղինակները ոչ միայն անտեսել են, այլև դիտավորյալ խեղաթյուրել են և կեղծել:

6. «Տիգրան Աբգարյանի դիակի պարանոցի առջևի հատվածում առկա է մեկ «մուտքի» անցք:»

«Սա միակ փաստն է, որը չի խեղաթյուրվել փաստաթղթի հեղինակների կողմից»:

7. «Տիգրան Աբգարյանի դիակի վրա հրազենային մեկ վերքային խողովակի առկայությունը հետևանք է այն բանի, որ առաջին գնդակը, հարվածելով ողնաշարի 5-7-րդ ողերին, առաջացրել է բազմաբեկորային վնասվածք՝ ոսկրաբեկորների տեղաշարժով և ներթափանցումով ողնաշարային խողովակ՝ լայն ճանապարհ է բացել մնացած

գնդակների՝ նույն «ելքի» անցքով դուրս գալու համար: Հաջորդ գնդակները, դուրս գալով դիակի նույն «ելքի» անցքով, բականաբար բաճկոնի օձիքի վրա առաջացրել են առանձին «ելքի» անցքեր»:

*«Անտրամաբանական, նույնիսկ արտուրդի հասնող աստիճանի անհեթեթություն է «գեկուցողների» այն «եզրահանգումը», թե ավտոմատ կրակահերթ արձակելու դեպքում հնարավոր է գնդակներն անցնեն միևնույն վերքային խողովակով: Պրակտիկորեն նման բան հնարավոր չէ:*

*Այն հանգամանքը, որ Տիգրան Աբգարյանի պարանոցի շրջանում ընդամենը 1 կրակոցից առաջացած վերքային խողովակ կա, հաստատվում է դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ՝ համաձայն որի դիակի ներքին ուսումնասիրությամբ պարանոցային 6-րդ ողի շրջանում արձանագրվել է անցքավոր գլանաձև կոտրվածք՝ 0.6x0.8 սմ տրամագծով: Նման պայմաններում տվյալ անցքով մեկից ավելի գնդակներ չէին կարող անցնել նույնիսկ ընդհուպ կրակոցի դեպքում»:*

8. «Դատաբժշկական փորձագետի եզրակացության մեջ առկա է խուսափողական հետևություն՝ ըստ հիվանդության պատմագրի տվյալների, կրակոցը կատարվել է տվյալ տեսակի զենքի համար կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից, սակայն նշված հարցը ստույգ կլինի պարզաբանել հագուստների հետքաբանական փորձաքննությամբ և նույնիսկ՝ համալիր փորձաքննությամբ»:

*«Դատաբժշկական փորձաքննության եզրակացությունում որևէ խուսափողական հետևություն չկա: Փորձագետը, հիմք ընդունելով հիվանդության պատմագրի տվյալները, կատարել է եզրահանգում. կրակոցը կատարվել է տվյալ տեսակի զենքի համար կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններից դուրս տարածությունից, միաժամանակ, նշել է, որ հարցը ստույգ հնարավոր կլինի պարզել հագուստների հետքաբանական փորձաքննությամբ, նկատի ունենալով, որ հագուստները լրացուցիչ գործոնների համար լինելով առաջին պատմեշ, կարող էին իրենց վրա վերցնել բոլոր լրացուցիչ գործոնները»:*

9. «Քննիչների կողմից Տիգրան Աբգարյանի զրահաբաճկոնը և մյուս հագուստները չեն առգրավվել և փորձաքննության չեն ենթարկվել, որոնք իրենց վրա կարող էին պարունակել կրակոցի հեռավորության մասին վկայող ապացույցներ»:

10. «Քննիչների կողմից համալիր դատաձգաբանական և դատաբժշկական փորձաքննություն չի նշանակվել, ինչը կրկին հստակ կպարզեր կրակոցի հեռավորությունը»:

*«Անհեթեթություն է: Հիշյալ հարցերի վերաբերյալ մանրամասն հիմնավորումներ են բերվել սույն առարկությունների նկարագրական մասում»:*

11. «Տիգրան Աբգարյանը, ըստ գորամասի ղեկավարության վկայությունների, գտնվել է շարքի կենտրոնում, որը բացառել է գնդակի հետացատկ հարվածը: Նման հեռավորության վրա գնդակը, դիպչելով պատին, չէր կարող ուղիղ վերքային խողովակ

առաջացնել և այնքան կիներտիկ ուժ ունենալ, որ առաջացներ 5-7-րդ ողերի բազմաբեկորային կոտրվածքներ: Բացի այդ, գնդակի հետազարկ հարվածի դեպքում կառաջանար «կույր» հրազենային վիրավորում, և բաճկոնի օձիքի վրա բազմաթիվ ելքային վնասվածքներ չէին առաջանա»:

*«Նույնիսկ մեկնաբանման ենթակա չէ գնդակի ինչ-որ հետազարկի հետ կապված վերլուծությունները, քանի որ ոչ քննությանը և ոչ էլ փորձագիտական եզրակացություններով որևէ տվյալ ձեռք չի բերվել այն մասին, թե Տիգրան Արգարյանը հրազենային վնասվածքը ստացել է արձակված գնդակի՝ պատին դիպչելու հետևանքով առաջացած հետազարկի արդյունքում»:*

*Փաստաթղթի հեղինակները հերթական անգամ, զարմանք են առաջացնում դատական ձգարանության բնագավառում ունեցած իրենց անկրկնելի «գիտելիքներով»: Ի գիտություն վերջիններիս՝ հարկ ենք համարում նշել, որ կախված կատարված կրակոցի հեռավորությունից, որևէ առարկայի հետ բախման անկյունից, արձակված գնդակի տեսակից և մի շարք այլ հանգամանքներից, նույնիսկ հետազարկի դեպքում կարող է առաջանալ հրազենային թափանցող վնասվածք»:*

12. «Դատաբժշկական փորձագետի կողմից Տիգրան Արգարյանի դիակի վրա առկա մյուս վնասվածքները չեն հետազոտվել, դրանց առաջացման մեխանիզմը և վաղեմությունը չեն պարզվել»:

*«Բացի Տիգրան Արգարյանի մարմնի վրա արձանագրված հրազենային վնասվածքի մուտքի և ելքի մեկական անցքերից, այլ մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել: Ի գիտություն փաստաթղթի հեղինակների՝ Տիգրան Արգարյանի մարմնի վրա՝ բացի հրազենային նկարագրված վնասվածքներից, առկա են եղել պառկելախոցեր և բուժական միջամտությունների արդյունքում առաջացած վերքերի ապաքինված սպիներ, որոնք վերքեր են, այլ ոչ թե մարմնական վնասվածքներ»:*

13. «Դատաբժշկական փորձաքննության եզրակացության հետևության մեջ նշված է՝ Տ. Արգարյանի հետին փախ ճակատային շրջանում ուղղաձիգ ուղղությամբ առկա են վարդագույն գծային ձևի 4.5 սմ երկարությամբ, ձախ քունքային շրջանում ուղղաձիգ ուղղությամբ՝ 4.0 սմ երկարությամբ, պարանոցի ձախ կեսի առաջային մակերեսին՝ 10.0 սմ երկարությամբ, պարանոցի աջ կեսի առաջային մակերեսին՝ ծնոտի անկյունից սկսած՝ մինչև վերանկարային շրջանը՝ 10.0 սմ երկարությամբ սպիներ, ինչպես նաև գլխի ծոծրակային շրջանում միմյանց սիմետրիկ դասավորությամբ առկա թվով չորս հատ կլորավուն ձևի, գորշ կեղևով պատված վերքեր, քառանկյան անկյուններում դասավորված տեսքով 2.0x1.0 սմ-ից 3.0x2.0 սմ չափերով առանց պարզաբանելու, թե դրանք ինչի արդյունք են և ինչ կապ ունեն պարանոցի հրազենային վիրավորման հետ: Անհասկանալի է, թե ինչու է փորձագետը դրանք ներկայացրել որպես «հրազենային վիրավորման բարդություն և մահվան պատճառի հետ գտնվում են պատճառական կապի մեջ»: Ակնհայտ

է, որ դրանք որևէ առնչություն չեն կարող ունենալ հրազենային վնասվածքի հետ և արդյունք են ֆիզիկական ներգործության»:

*«Սա բացահայտ ցինիզմ է և լկտի սուտ: Ոչ Տիգրան Աբգարյանի կենդանության օրոք կատարված դատաբժշկական փորձաքննության և ոչ էլ դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունների հետևություններում նման բան նշված չէ:*

*Ավելին, դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունում պարզ, մեսրոպատառ հայերենով գրված է, որ հրազենային վնասվածքը մահվան պատճառի հետ գտնվում է ուղղակի պատճառական կապի մեջ, իսկ հայտնաբերված հիվանդությունները (հետտրավմատիկ օբստրուկտիվ հիդրոցեֆալիա, վիճակ վենտրիկուլյուպերիտոնեալ շունտի տեղադրումից հետո, վիճակ տրախեոստոմայի տեղադրումից հետո, երկկողմանի թարախային ասպիրացիոն թոքաբորբ), հանդիսանում են որպես հիմնական հիվանդություն՝ պարանոցի հրազենային վիրավորման բարդություն, և մահվան պատճառի հետ գտնվում են պատճառական կապի մեջ»:*

14. «Դեպքի կատարման վայրի վերաբերյալ գորամասի ղեկավարության կողմից տրված բացատրություններում առկա են հակասական տվյալներ: Ջրույցի հրավիրված մի շարք զինվորականներ հայտնել են, որ դեպքը կատարվել է իրենց աչքի առջև և տեղի է ունեցել Պարոնյան և Լեո փողոցների խաչմերուկի վրա գտնվող առաջին դալանի մոտ, մյուս մասը ներկայացնում է, որ դեպքը կատարվել է Լեո փողոցի սկզբնամասում՝ «Սվին» խանութի մոտ, երրորդ տարբերակի համաձայն, դեպքը տեղի է ունեցել Լեո փողոցի վրա գտնվող օդերևութաբանական կենտրոնի շենքի մոտ: Հակասական են նաև վիրավորվելուց հետո Տիգրան Աբգարյանի տեղափոխման վայրի վերաբերյալ բացատրությունները: Այսպես, մի մասի բացատրության համաձայն՝ նրան տեղափոխել են Լեո փողոցի վրա գտնվող պոլիկլինիկայի տարածք՝ նախապես ջարդելով դրա դարպասները, մյուս տարբերակի համաձայն՝ վիրավորվելուց հետո Տիգրան Աբգարյանին օդերևութաբանական կենտրոնի աստիճաններով բարձրացրել են վերև»:

*«Սույն առարկությունների նկարագրական մասում արդեն իսկ ներկայացվել են Փորձագետների փաստահավաք խմբում «հարցաքննությունների» պայմանները, որի ընթացքում բացատրություններում արհեստականորեն ի հայտ են բերվել հակասություններ, որոնք էլ իրենց հերթին խեղաթյուրված վիճակում ներկայացվել են «զեկուցողների» կողմից կազմված փաստաթղթում»:*

Վերը նկարագրված խեղաթյուրված և սուտ տեղեկությունների ու տվյալների հիման վրա էլ «զեկուցողներ» Սեդա Սաֆարյանը և Անդրանիկ Քոչարյանը եկել են արսուրդի հասնող անհեթեթ, անգրագետ և հիվանդագին եզրահանգման՝ «Տիգրան Աբգարյանին հասցված հրազենային վնասվածքները պատճառվել են ավտոմատ ընհուպ կրակահերթով.....»: Վերջապես, Տիգրան Աբգարյանի մահվան փաստով քննությունը համարվել էր ավարտված, նրա սպանության կազմակերպման համար մեղադրանք էր առաջադրվել «Յոթի գործով» և գործն ուղարկվել էր դատարան»:

*«Ուշադրության է արժանի այն, որ փաստաթղթի «հնարամիտ հեղինակները» եկել են այն եզրահանգման, որ Տիգրան Աբգարյանի «Մարմնի վերը նշված սպիների առկայությունը հետևանք է ֆիզիկական ներգործության, որի ժամանակ նրա գլխին ենթադրաբար չի եղել սաղավարտ»:*

*Ինչպես արդեն նշվեց, մարմնի վրա հայտնաբերված հիշյալ սպիները բուժական միջամտության արդյունք են: Ի ցավս փաստաթղթի հեղինակների՝ պետք է արձանագրենք, որ առ այսօր բժշկությանը հայտնի չէ մարդու գլխի հատվածում՝ սաղավարտը գլխին, վիրահատական միջամտության եղանակ:*

*Բացի այդ, բազմիցս հրապարակավ հայտարարվել է, և ևս մեկ անգամ ընդգծում ենք, որ Տիգրան Աբգարյանի մահվան հանգամանքները, նրան հրազենային վնասվածք պատճառած անձի ինքնությունը պարզելու և նրան հայտնաբերելու ուղղությամբ քննությունը շարունակվում է, երբեք այն չի կասեցվել, առավել ևս՝ չի ավարտվել և շարունակվելու է, քանի դեռ բոլոր հանգամանքները չեն բացահայտվել: Նախաքննությունը շարունակվում է նաև մյուս 9 անձանց մահվան հանգամանքները բացահայտելու ուղղությամբ:*

*Վերոգրյալի հիման վրա՝ նախաքննական մարմինը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008թ. հոկտեմբերի 23-ի կարգադրությամբ ստեղծված Փորձագետների փաստահավաք խմբի նախկին անդամներ Սեդա Սաֆարյանի և Անդրանիկ Քոչարյանի կողմից «ՀՀ ՌԶ 1033 զորամասի 2-րդ գումարտակի զինծառայող Տիգրան Աբգարյանի մահվան հանգամանքները» վերնագրված փաստաթուղթը չի արտացոլում օբյեկտիվ իրականությունը»:*

### **Հանձնաժողովի եզրահանգումները**

Հանձնաժողովը համաձայն չլինելով ՀՔԾ-ի որակումներին ու ոճին և գնահատելով փաստաթղթում նշված փաստարկները, դրանց վերաբերյալ ՀՔԾ-ից ստացված առարկությունները, ՌԶ թիվ 10/33 զորամաս Հանձնաժողովի կատարած այցելության ընթացքում Տիգրան Աբգարյանի հետ միասին դեպքի պահին ծառայություն կատարած զինծառայողների և զորամասի հրամկազմի վկայությունները, լսելով Հանձնաժողով հրավիրված Տիգրան Աբգարյանի դիտարկում կատարած փորձագետ՝ ՀՀ ԱՆ հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի բաժնի վարիչ Գագիկ Հարությունյանի պարզաբանումները, ինչպես նաև ուսումնասիրելով նախաքննական մարմնի կողմից Հանձնաժողովին տրամադրած այլ նյութերը արձանագրում է, որ «գեկուցողների» դիրքորոշումը համոզիչ չէ: Հանձնաժողովը քննարկելով ներկայացված հակասական կարծիքները 2009թ. սեպտեմբերի 7-ին Այդ են Հանձնաժողովի նիստին հրավիրեց փորձագետներ՝ Համբարձումյանին և Աբրահամյանին պարզաբանումներ տալու վերոհիշյալ հակասության վերաբերյալ: Հանձնաժողովը հանգեց, այն եզրակացության, Չեկուցողների ներկայացրած վարկածը ընդունելի չէ:

Այդուհանդերձ, Հանձնաժողովը բավարարված չէ նախաքննական մարմնի գործողություններից, քանի որ, առ այսօր լիովին չեն բացահայտվել Տիգրան Աբգարյանի մահվան հանգամանքները՝ մասնավորապես հանցագործություն կատարած անձը, հանցագործության գործիքը և այլն:

Ինչ վերաբերում է դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններին, ապա Հանձնաժողովի դիտարկմամբ ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի կողմից տրված մի շարք եզրակացություններ, երբեմն անհասկանալի են նաև պրոֆեսիոնալների համար, որոնք էլ ինչ խոսք, տարբեր մեկնաբանությունների, ենթադրությունների և տարրընթերցումների տեղիք են տվել: Նույնը վերաբերում է դատաքիմիական, դատաձգաբանական, դատապայթուցատեխնիկական և այլ փորձաքննություններին:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում առավել ուշադրության արժանացնել և հետազայում բացառել այնպիսի դեպքերը, երբ ՀՀ ԱՆ ՀԳԿ-ի աշխատակիցների կողմից հստակ չեն նշվել այն ժամերը, երբ մարտի 1-ի իրադարձությունների ընթացքում մահացած անձանց դիակները տեղափոխվել են դատաբժշկական կենտրոն (Տիգրան Խաչատրյան), որը զանազան մեկնաբանությունների տեղիք է տվել:

3. Գրիգոր Հովհաննեսի Գևորգյան, ծնվ. 30.05.1980 թ., ք. Երևան, Չարյան 14 տուն: Աշխատել է «SPS» բենզալցակայանում որպես հերթափոխի պետ:

2008 թ. մարտի 1-ին ժ. 20.00-ի սահմաններում Գ. Գևորգյանը իր աներորդու Ռոմիկ Բաղդասարյանի հետ գնացել են Գ. Լուսավորչի փողոց, իսկ ժամը 21.00-ի սահմաններում տիրող խառնաշփոթ իրավիճակի պատճառով Գ. Լուսավորչի և Չաքյան փողոցների խաչմերուկում միմյանց կորցրել են: Ժամը 21.15-ի սահմաններում Գ. Գևորգյանը զանգվածային անկարգությունների մի խումբ մասնակիցների հետ գնացել է Պարոնյան և Լեո փողոցների խաչմերուկ, որտեղ էլ, խաչմերուկին հարակից դալանի մոտ տեղակայված կոշիկի վերանորոգման կետի դիմաց, վիրավորվել ու մահացել է:

Ըստ դատաբժշկական փորձաքննության եզրակացության. «Գևորգյանը ստացել է գլխի հրազենային գնդակային միջանցիկ վիրավորում, հրազենային գնդակային մուտքի անցք քթի միջքին, ելքի անցք՝ ձախ ճակատագագաթային շրջանում, ուղեղանյութի ջնջխումով՝ ուղեղանյութի արտանկումով, որոնք պատճառվել են կենդանության օրոք, հետևանք են գնդակով լիցքավորված հրազենից արձակված կրակոցի ներգործության, որոնցով էլ պայմանավորված է մահը: Դիակի վրա հայտնաբերված վնասվածքները պատճառվել են առանձին մեկ կրակոցով: Գ. Գևորգյանի դիակի դատաբժշկական փորձաքննության ժամանակ հրազենային մուտքի անցքի շրջանում կրակոցի լրացուցիչ գործոնների առկայություն, այն է՝ մրի, այրվածքի, ինչպես նաև կիսայրված կամ այրված վառողի հատիկներ չեն հայտնաբերվել, հետևաբար, կրակոցը կատարվել է տվյալ զենքին բնորոշ կրակոցի լրացուցիչ գործոնների սահմաններից դուրս»:

Քանի որ հրագենային գնդակը չի հայտնաբերվել \վնասվածքը եղել է միջանցիկ\, այդ իսկ պատճառով չի պարզվել նաև հրագենի տեսակը:

4. Դավիթ Աֆրենտի Պետրոսյան, ծնվ. 16.04.1975 թ., ք. Երևան, բնակվել է ք. Վանաձոր, Տարոն 2, 84 շենք, բն. 12:

Դավիթ Պետրոսյանը 2008 թ. մարտի 1-ին, ժ. 20.00-ի սահմաններում աներոջ որդիների Վահե և Կարեն Գալալյանների և քեռու որդի Նարեկ Վարդումյանի հետ, գնացել են Գ. Լուսավորչի փողոց: Մինչ մարմնական վնասվածք ստանալը, նա, Պարոնյան փողոցի թիվ 2 շենքի մոտ, իր բջջային հեռախոսով կատարել է դեպքերի լուսանկարահանումներ: Այնուհետև ժամը 21.00-ի սահմաններում, նույն վայրում Գ. Պետրոսյանը մեկ երկու բռնակով առանձնացել է նշված բարեկամներից, և կարճ ժամանակ անց, վերջիններս նրան գտել են մարմնական վնասվածք ստացած վիճակում և տեղափոխել թիվ 2 կլինիկական հիվանդանոց, որտեղ էլ 02.03.2008 թ. ժ. 00.30-ին մահացել է:

Դավիթ Պետրոսյանի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերվել են հետևյալ մարմնական վնասվածքները՝ հրագենային գնդակային մուտքի անցք կրծքավանդակի աջ կեսի հետին մակերեսին, աջ երիկամի, լյարդի, ստոծանու և աջ թոքի միջանցիկ վնասվածքներ, որոնք պատճառվել են կենդանության օրոք, հետևանք են գնդակով լիցքավորված հրագենից արձակված կրակոցի ներգործության, նման վնասվածքները ունեն առողջության ծանր վնասի հատկանիշներ, որոնցով էլ պայմանավորված է մահը: Կրծքավանդակի աջ կեսից 5-րդ միջկողում հայտնաբերվել է 0,9 մմ տրամաչափի պղնձագույն գնդակ: Համաձայն դատաձգաբանական փորձաքննության թիվ 389 եզրակացության. «Գ. Պետրոսյանի դիակից հանված գնդակը գործարանային արտադրության 9մմ տրամաչափի փամփուշտի մաս կազմող կրակված գնդակ է: Այս տեսակի փամփուշտները նախատեսված են «ՊՄ», «ԱՊՄ» ատրճանակների համար: Գնդակի վրայի կրակման հետքերը բնորոշ են «ՊՄ» ատրճանակից կրակված հետքերին: Գնդակի վրայի քերծվածքային դեֆորմացիան արդյունք է որևէ պինդ մարմնի հետ բախման, հնարավոր է՝ հետցատկ կամ որևէ արգելքի միջով անցնելու»:

5. Հովհաննես Ղարիբի Հովհաննիսյանը, ծնվ. 13.03.1961 թ., ք. Երևան, Անդրանիկի փողոց, 47 շենք բն.26: Մշտական աշխատանք չի ունեցել և զբաղվել է սանտեխնիկայի վերանորոգմամբ:

2008թ. մարտի 1-ին ժ. 21.00-ի սահմաններում Մաշտոցի պողոտայի և Գ. Լուսավորչի փողոցի խաչմերուկում ստացել է հրագենային վնասվածք և տեղում մահացել:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 245 եզրակացության՝ Հ. Հովհաննիսյանի դիակի վրա հայտնաբերվել է հրագենային գնդակային «կույր» վնասվածք կրծքավանդակի ձախ կեսի առաջնային մակերեսին: Մահը վրա է հասել կրծքավանդակի հրագենային գնդակային «կույր» վիրավորումից առաջացած սուր ներքին

արյունահոսությունից: Դիախերձման ժամանակ Հ. Հովհաննիսյանի մարմնից հանվել է 5.45 մմ տրամաչափի 1 գնդակ: Նշանակված դատաձգաբանական փորձաքննության թիվ 389 եզրակացության համաձայն՝ Հ. Հովհաննիսյանի մարմնից հանված գնդակը՝ գործարանային արտադրության, 5.45 մմ տրամաչափի, մարտական փամփուշտի մաս հանդիսացող կրակված գնդակ է: Գնդակն իր վրայի կրակման հետքերով բնորոշ է 5.45 մմ տրամաչափի «ԱԿ-74» ինքնաձիգերից և դրանց մոդիֆիկացիաներից կրակված գնդակներին:

6. Չաքար Սարիբեկի Հովհաննիսյան, ծնվ. 30.08.1977 թ., ք. Երևան, Գագարինի 68, բն. 100: Չի աշխատել:

Չաքար Հովհաննիսյանը 2008 թ. մարտի 2-ին ժ. 01.30-ի սահմաններում հրազենային վնասվածք է ստացել Մաշտոցի պողոտայի շուկայի մոտ, ժ. 02.00-ին տեղափոխվել է թիվ 3 կլինիկական հիվանդանոց պատահական ավտոմեքենայով, որտեղ էլ 02.55-ին մահացել է:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 247 եզրակացության՝ Չ. Հովհաննիսյանի դիակի վրա հայտնաբերվել է հրազենային մուտքի վնասվածք որովայնի առաջային մակերեսին: Մահվան պատճառ է հանդիսացել վնասվածքի հետևանքով առաջացած արյան զգալի կորուստը: Դիախերձման ժամանակ Չ. Հովհաննիսյանի մարմնից հանվել է 9 մմ տրամաչափի 1 գնդակ:

Համաձայն դատաձգաբանական փորձաքննության թիվ 389 եզրակացության՝ Չ. Հովհաննիսյանի մարմնից հանված գնդակը գործարանային արտադրության, 9 մմ տրամաչափի փամփուշտի մաս կազմող կրակված գնդակ է: Գնդակի վրայի կրակման հետքերը բնորոշ են «ՊՄ» ատրճանակից կրակված հետքերին:

Դ. Պետրոսյանի, Հ. Հովհաննիսյանի և Չ. Հովհաննիսյանի դիակներից հանված գնդակները ուղարկվել են ՀՀ ոստիկանության փորձաքննազիտական վարչություն՝ պարզելու համար, թե կոնկրետ որ զենքերից են դրանք կրակվել: Ըստ դատաձգաբանական թիվ 389 փորձաքննության եզրակացության՝ այդ գնդակները համեմատվել են ՀՀ տարածքում չբացահայտված հանցագործություններով դեպքի վայրերից վերցված և հանրապետական գնդակապարկուճադարանում հաշվառված գնդակների հետ: Համեմատության արդյունքում համընկնումներ չեն հաստատվել, ինչի պատճառով էլ հնարավոր չէ պատասխանել այն հարցին, թե ում պատկանող զենքերից են կրակվել այդ գնդակները:

7. Սամվել Էդիկի Հարությունյան, ծնվ. 05.12.1979 թ., Արարատի մարզ, գյուղ Լուսառատ, բնակվել է Արարատի մարզի Եղեգնավան գյուղում: Չի աշխատել, զբաղվել է հողագործությամբ:

Սամվել Հարությունյանը 2008 թ. մարտի 1-ին ընկերոջ՝ Արամ Բարսեղյանի և մորաքրոջ որդու՝ Գեղամ Գևորգյանի հետ, ըստ վերջիններիս ցուցմունքների, զանգվածային անկարգությունների վայր են գնացել՝ հետաքրքրությունից ելնելով: Ժամը 21.00-ի սահմաններում Ս. Հարությունյանը, բաժանվելով Ա. Բարսեղյանից և Գ. Գևորգյանից, գնացել է Մաշտոցի պողոտայի և Գ. Լուսավորչի փողոցի խաչմերուկի կամրջի կողմ: Այդ պահին էլ այդ վայրում Ս. Հարությունյանը գլխին ստացել է մարմնական վնասվածք և տեղափոխվել 3-րդ կլինիկական հիվանդանոց, այնուհետև՝ «Արմենիա» ՀԲԿ, որտեղ էլ 11.04.08-ին, ժ. 19.40-ին մահացել է:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 396 եզրակացության՝ Ս. Հարությունյանը ստացել է բաց, բութ, թափանցող զանգուղեղային վնասվածք՝ գլխի ձախքունքակողմնային շրջանի սալջարդ վերք, կարծրենու պատռված դեֆեկտով, գլխուղեղի ջնջխում և արտաթափում, ձախից կողմնակրի և քունքոսկրի բազմաբեկորային կոտրվածքներ, որոնք առաջացել են կենդանության օրոք, բութ առարկայի ազդեցությամբ և նրա մահվան հետ գտնվում են անմիջական պատճառական կապի մեջ:

8. Տիգրան Հովսեփի Խաչատրյան, ծնվ. 30.01.1985 թ., ք. Երևան, Ավան 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 17 տուն: Չի աշխատել:

Տիգրան Խաչատրյանը 2008 թ. մարտի 1-ին զանգվածային անկարգությունների վայր է գնացել ընկերոջ՝ Արտյոմ Աբովյանի հետ: Ժամը 20.00-ի սահմաններում խառնաշփոթի պատճառով նրանք կորցրել են իրար: Նախաքննությամբ պարզվել է, որ Ս. Խաչատրյանը զանգվածային անկարգությունների մի խումբ մասնակիցների հետ գնացել է Պարոնյան և Լեռ փողոցների խաչմերուկ, որտեղ էլ գտնվող դալանի մոտ վիրավորվել և մահացել է:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 250 եզրակացության՝ Ս. Խաչատրյանի մոտ հայտնաբերվել է զանգուղեղային բաց, բութ վնասվածք: Մահը վրա է հասել գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների սուր խանգարումից, ինչը հետևանք է ստացած զանգուղեղային վնասվածքի: Դիախերձման ժամանակ Ս. Խաչատրյանի զանգից հանվել է մետաղի կտոր:

Ըստ դատաձգաբանական փորձաքննության թիվ 389 եզրակացության՝ Ս. Խաչատրյանի դիակից հանված մետաղյա կտորը գործարանային արտադրության «Չերյոմուխա-7» տեսակի կրակված փամփուշտի գազային նոնակ է: Գազային նոնակի պլաստմասե խցանները, հավանաբար, անջատվել են որևէ պինդ մարմնի հետ բախման կամ որևէ արգելքի միջով անցնելու հետևանքով:

9. Արմեն Վաչագանի Ֆարմանյան, ծնվ. 25.11.1974 թ., ք. Երևան, Շրջանային փողոց, տուն 46: Չի աշխատել:

Արմեն Ֆարմանյանը 2008 թ. մարտի 1-ին մետաղյա ձողեր և վառելիքով լցված շշեր է բերել դեպքի վայր ու բաժանել զանգվածային անկարգությունների մասնակիցներին՝ ղեկավարելով նրանց գործողությունները: Ժամը 21.00-ի սահմաններում նա վիրավորվել և մահացել է Պարոնյան փողոցում՝ թիվ 24 դպրոցի դիմաց:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 252 եզրակացության, Ա. Ֆարմանյանի դիակի վրա հայտնաբերվել է գլխի ձախ կեսի կողմնաքունքային շրջանի սալջարդ վերք՝ ոսկրահյուսվածքային դեֆեկտով: Մահը վրա է հասել գլխուղեղի կենսական կարևորագույն ֆունկցիաների սուր խանգարումից: Դիակերձման ժամանակ գլխուղեղի աջ կիսագնդում հայտնաբերվել է գլանաձև մետաղական պատյանով օտար մարմին, որից զգացվել է յուրահատուկ սուր հոտ: Միաժամանակ, հայտնաբերվել է նաև սպիտակավուն գույնի պլաստմասե գլանաձև իր, որի գլանի վրա առկա են եղել թվով 3 միմյանց զուգահեռ ընթացող ակոսներ:

Ըստ դատաձգաբանական փորձաքննության թիվ 389 եզրակացության, Ա. Ֆարմանյանի դիակից հանված պլաստմասե և մետաղյա առարկաները գործարանային արտադրության «Չերյոմուխա-7» տեսակի կրակված փամփուշտի գազային նռնակից են՝ առանձնացած մեկ խցանով: Խցանի վրայի կրակման հետքերը բնորոշ են հատուկ միջոց հանդիսացող «ԿՍ-23» կարաբինին: Խցանի գլխային մասի դեֆորմացիան և պատռվածքները կարող էին առաջանալ որևէ պինդ մարմնի հետ բախման կամ որևէ արգելքի միջով անցնելու հետևանքով:

10. Գոռ Սարգսի Բլոյան, ծնվ.15.12.1979 թ., ք. Երևան, ՀԱ Բ-2 թաղամասում: Չի աշխատել:

Ըստ ծնողների ցուցմունքների, Գ. Բլոյանը 2008 թ. մարտի 1-ին, ժամը 20.00-ի սահմաններում դուրս է եկել տնից: Ժամը 20.30-ի սահմաններում զանգահարել է տուն և հայտնել, որ գտնվում է Գ. Լուսավորչի փողոցում, որից հետո այլևս հեռախոսազանգերին չի պատասխանել: Կատարված նախաքննությամբ պարզվել է, որ ժամը 21.00-ի սահմաններում Գ. Բլոյանը զանգվածային անկարգությունների մի խումբ մասնակիցների հետ գնացել է Մաշտոցի պողոտայի և Գ. Լուսավորչի փողոցի խաչմերուկում գտնվող կամրջի մոտ, որտեղ էլ ստացել է հրազենային վնասվածք և ժամը 21.30-ին տեղափոխվել թիվ 3 կլինիկական հիվանդանոց, որտեղ էլ ժամը 04.30-ին մահացել է: Կատարված վիրահատության ընթացքում ձախ աճուկային շրջանից հեռացվել է գլանաձև օտար մարմին՝ մետաղական միջուկով՝ պատված պլաստմասե պատյանով, որից եկել է արցունքահոսություն առաջացնող հոտ: Կրծքավանդակի հետին մակերեսի աջ կեսում, մաշկի տակ, հայտնաբերվել է սև անկանոն եզրերով 6 մանր օտար մարմին:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 249 եզրակացության, Գ. Բլոյանը ստացել է ձախ աճուկանթափափային շրջանի ջնջիված բեկորային վերք՝ ազդրային զարկերակի պոկումով, ազդրային երակի վնասումով, ձախից ցայլուկի վերին

ճյուղի կոտրվածքով՝ ուղեկցված տարածուն արյունահոսությամբ և 4-րդ աստիճանի էմոռագիկ և տրավմատիկ շոկով, որը կենդանության օրոք մեծ կիներտիկ էներգիայով օժտված բեկորների հետևանք է, ինչն էլ դարձել է մահվան պատճառ:

Ըստ դատաձգաբանական փորձաքննության թիվ 389 եզրակացության, Գ. Քլոյանի դիակից հանված առարկան գործարանային արտադրության «Չերյոմուխա-7» տեսակի կրակված փամփուշտի կոնտեյներ՝ գազային նռնակ է՝ իր պլաստմասե խցաններով: Խցանների վրայի կրակման հետքերը բնորոշ են «ԿՍ-23» կարաբինին: Խցանի վրայի դեֆորմացիան և պատռվածքը կարող էին առաջանալ որևէ պինդ մարմնի հետ բախման կամ որևէ արգելքի միջով անցնելու հետևանքով: Ինչ վերաբերում է նրա դիակից հանված 6 հատ մանր մասնիկներին, ապա փոքր չափսերի և դրանց վրա քրեագիտական անհատականացման համար անհրաժեշտ հատկանիշների բացակայության պատճառով հնարավոր չէ որոշել, թե դրանք ինչ մասնիկներ են:

## **5.2 ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ**

Հանձնաժողովն առանձնակի ուսումնասիրության և քննարկման առարկա է դարձրել ՀՀ ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցների կիրառման իրավաչափությանն ու դրանց գործադրման ժամանակ անվտանգության կանոնների պահպանմանն առնչվող հարցերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հատկապես դրանց օգտագործման հետևանքով զոհվել է 3 և մարմնական տարբեր աստիճանի վնասվածքներ ստացել ևս 3 քաղաքացի, ինչպես նաև արցունքաբեր գազի կիրառումից թունավորման հետևանքով մարմնական վնասվածքներ է ստացել ոստիկանության զորքերի 11 զինծառայող:

Ուսումնասիրությունից պարզվել է հետևյալը.

2008թ. մարտի 1-ին, ժամը 19.30-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատար Գրիգոր Գրիգորյանը ՈԶ շուրջ 800 զինծառայողների հետ գտնվել է Գր. Լուսավորիչ-Մաշտոց պողոտայի խաչմերուկում: Նրա կարգադրությամբ 350 զինծառայող տեղափոխվել է Շահումյան հրապարակ, իսկ տեղում մնացել է ՈԶ մոտ 450 զինծառայող, որոնք կանգնած են եղել 3 շարքով: 1-ին և 2-րդ շարքերում կանգնած ՈԶ զինծառայողները ունեցել են միայն ռետինե մահակներ և պաշտպանիչ վահաններ, իսկ 3-րդ շարքում տեղակայված ենթասպաները՝ նաև հատուկ միջոցներ:

Հանձնաժողովի նիստում Գ. Գրիգորյանի տված պարզաբանումների համաձայն, հատուկ միջոցներով զինված են եղել միայն ՈԶ 1033 զորամասի և հատուկ նշանակության ջոկատի ենթասպաները: Ժամը 19.45-ի սահմաններում զանգվածային անկարգությունների մասնակիցների մեծաքանակ մի խումբ, դուրս գալով Ռուսաստանի դեսպանատան մոտ կառուցած բարիկադի հետևից, շարժվել է դեպի Գր. Լուսավորչի փողոցի և Մաշտոցի

պողոտայի խաչմերուկ: Նրանց տեղաշարժը դեպի Մաշտոցի պողոտա կասեցնելու նպատակով գորքերի անձնակազմը առաջ է շարժվել, իսկ փշալար փռող մեքենան փորձել է Գր. Լուսավորչի փողոցը լայնքով փակել փշալարով: Սակայն ոստիկանության գորքերի զինծառայողների շղթան հանդիպել է զանգվածային անկարգությունների մասնակիցների ակտիվ դիմակայությանը, որոնք զինծառայողների վրա նետել են քարեր, մետաղյա ձողեր, ինչպես նաև հրահեղուկ շշեր՝ այսպես կոչված «մոլոտովի կոկտեյլներ»: Այդ բախման ընթացքում ՌԶ բազմաթիվ զինծառայողներ ստացել են տարբեր աստիճանի և բնույթի մարմնական վնասվածքներ, իսկ փշալար փռող մեքենան զավթել են զանգվածային անկարգությունների մասնակիցները: Անձնակազմի շրջանում վիրավորների թիվը էլ ավելի շատացնելու և նրանց բուժօգնություն ցուցաբերելու նպատակով Գ. Գրիգորյանը որոշել է անձնակազմը հետ քաշել դեպի Լեո-Պարոնյան փողոցների հատվածը՝ կազմելով «կրիա» կոչվող վահանաշարք, իսկ հարձակումները կանխելու նպատակով կիրառել հատուկ միջոցներ, ռետինե և անգնդակ փամփուշտներ:

Երկրորդ խոշոր բախումը զանգվածային անկարգությունների մասնակիցների և ՌԶ զինծառայողների միջև տեղի է ունեցել Լեո-Պարոնյան փողոցների հատվածում ժամը 21.00-ի սահմաններում, որտեղ նռնակի պայթուցիչի պայթուցից բեկորային վնասվածքներ է ստացել ՌԶ սպա Համլետ Թադևոսյանը, իսկ ոստիկանության գորքերը դարձյալ ստիպված են եղել կիրառել հատուկ միջոցներ՝ զանգվածային անկարգությունների մասնակիցների առաջխաղացումը կասեցնելու և իրենց վրա կատարվող հարձակումը կանխելու նպատակով:

Միջոցառումն իրականացնելիս ոստիկանության գորքերն ունեցել են հետևյալ հատուկ միջոցները. 10 հատ «Կոռնետ» տեսակի ատրճանակներ, որոնք նախատեսված են ռետինե փամփուշտներ կրակելու համար, 4 հատ «ԿՍ-23» հրացան, որոնք նախատեսված են «Չերյոմուխա-7», «Միրեն-7» արցունքաբեր փամփուշտներ և «Վոլնա Ռ» տեսակի ռետինե փամփուշտներ կրակելու համար, 7 հատ «ՄՊՇ» տեսակի ատրճանակ, որոնք նախատեսված են «Չերյոմուխա-4» տեսակի արցունքաբեր փամփուշտներ կրակելու համար, 15 հատ «Չերյոմուխա-1», 15 հատ «Չերյոմուխա-5», 80 հատ «Միրեն-6» և 16 հատ «Դրեյֆ» տեսակի արցունքաբեր նռնակներ, 7 հատ «Չարյա» և 5 հատ «Կասետ» տեսակի լուսաձայնային նռնակներ, 154 հատ «Չերյոմուխա-4», 89 հատ «Չերյոմուխա-7» և 5 հատ «Միրեն-7» տեսակի արցունքաբեր փամփուշտներ, 180 հատ «Վոլնա Ռ» տեսակի ռետինե փամփուշտ և 130 հատ «Կոռնետ» ատրճանակի ռետինե փամփուշտ: Նշված հատուկ միջոցներից օգտագործվել են 79 հատ «Չերյոմուխա-4», 56 հատ «Չերյոմուխա-7» արցունքաբեր փամփուշտներ, 29 հատ «Միրեն-6», 4 հատ «Դրեյֆ» արցունքաբեր նռնակներ, 4 հատ «Չարյա», 2 հատ «Կասետ» լուսաձայնային նռնակներ, 129 հատ «Վոլնա Ռ» և 62 հատ «Կոռնետ» ատրճանակի ռետինե փամփուշտներ: Օգտագործված 56 հատ «Չերյոմուխա-7» արցունքաբեր փամփուշտներից 39-ը կիրառվել է ՀՀ ՌԶ հատուկ

նշանակության երկու ենթասպաների \20 և 19 հատ\, իսկ 17-ը՝ թիվ 10/33 գործառնախ երկու ենթասպաների կողմից \8 և 9 հատ\:

Ստորև ներկայացվում է Փաստահավաք խմբի նախկին անդամներ Սեդա Սաֆարյանի և Անդրանիկ Քոչարյանի կազմած՝ «հատուկ միջոցների կիրառման հետ կապված փաստերի ուսումնասիրության արդյունքները» վերնագրված փաստաթուղթը (այսուհետ՝ փաստաթուղթ) և ՀԲԾ-ի առարկությունները (շեղատառերով)։

1. «Հաշվի առնելով, որ ՀՀ ոստիկանությունը հատուկ միջոցները ձեռք է բերում Ռուսաստանի Դաշնությունից՝ Փաստահավաք խմբի կողմից ուսումնասիրվեցին ՌԴ-ում դրանց կիրառման կարգը և անվտանգության միջոցները սահմանող փաստաթղթերը...

Փաստահավաք խումբ հրավիրված ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատարի նախկին տեղակալ, շտաբի պետ Գեղամ Պետրոսյանը հայտնեց, որ հատուկ միջոցները ձեռք են բերվել Ռուսաստանից, և արտադրող երկրի կողմից սահմանված կիրառման կարգը պարտադիր է իրենց համար»:

*1.1. Փաստաթղթում վերլուծված են ՌԴ-ում հատուկ միջոցների կիրառման կարգը սահմանող փաստաթղթեր՝ առանց վկայակոչելու այդ փաստաթղթերը և դրանց ձեռքբերման աղբյուրները:*

*Ընդ որում, ՀՀ ՈԶ նախկին շտաբի պետ Գեղամ Պետրոսյանը Փաստահավաք խմբում տված իր բացատրություններում ոչինչ չի ասում այն մասին, որ հատուկ միջոցները ձեռք են բերվում ՌԴ-ից: Ընդամենը հայտնել է, որ դրանք մնացել են ԽՍՀՄ ներքին զորքերից:*

Փաստաթղթում ճիշտ չի արձանագրված, թե իբր հատուկ միջոցներից թունավորված ոչ մի զինծառայող տուժող չի ճանաչվել:

2. «Քաղաքացիներից ոչ ոք հատուկ միջոցների օգտագործման հետևանքով թունավորում ախտորոշմամբ չի տեղափոխվել հիվանդանոց: Փաստահավաք խումբը պարզեց, որ հատուկ միջոցներից թունավորված զինծառայողներից որևէ մեկը քրեական գործով տուժող չի ճանաչվել:

*2.1. Նախ անհասկանալի է, թե ինչպես են փաստաթղթի հեղինակները կարողացել պարզել թունավորման պատճառը, երբ նախաքննությամբ և դատաբժշկական փորձաքննություններով թունավորման հստակ պատճառները հնարավոր չի եղել պարզել: Բացի այդ, 2008թ. մարտի 1-ին վնասվածքներ ստացած, այդ թվում՝ նաև թունավորված բոլոր զինծառայողները ճանաչվել են տուժող:*

3. Փաստահավաք խմբում Բ. Խաչատրյանը ընդունեց, որ «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակները նախատեսված են փակ տարածքներում օգտագործելու համար, իսկ «Չերյոմուխա-4»-ը՝ բաց տարածքներում մասսայական անկարգությունների ժամանակ: Նա նաև նշեց, որ մարդկանց խմբավորումների ուղղությամբ երկուսն էլ արգելվում է կիրառել:»

3.1. Փաստաթղթում կեղծված է ՀՀ ՈԶ ՀՆ ջոկատի հրամանատար Բագրատ Խաչատրյանի բացատրությունը, թե իբր վերջինս ընդունել է, որ «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակները նախատեսված են փակ տարածքներում օգտագործելու համար, իսկ «Չերյոմուխա-4»-ը՝ բաց տարածքներում՝ մասսայական անկարգությունների ժամանակ:

Փաստացի Բագրատ Խաչատրյանը ինչպես իր նախաքննական ցուցմունքներում, այնպես էլ Փաստահավաք խմբում հայտնել է, որ «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտները կիրառելի են ինչպես փակ, այնպես էլ բաց տարածքներում՝ ներկայացնելով դրանց կիրառման կարգը, երկու դեպքում էլ բացառելով դրանց կիրառումը մարդկանց խմբավորումների ուղղությամբ:

Ընդ որում, փաստահավաք խմբի անդամների կողմից ուսումնասիրված և տարբեր հարցերի կապակցությամբ իրենց ցանկալի ձևով մեկնաբանված նույն մեթոդական ձեռնարկում հստակ արձանագրված է, որ, թեև «Չերյոմուխա-4» տեսակի գազային նռնակը նախատեսված է մարդկանց խմբավորումների վրա ազդեցություն թողնելու համար, սակայն արգելվում է դրանց կիրառումը մարդկանց խմբավորումների ուղղությամբ:

Այսինքն՝ միայն այն, որ արգելվում է «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակով կրակել մարդկանց խմբավորումների ուղղությամբ, չի բացառում դրա կիրառումը բաց տարածքում:

4. «ՀՀ ոստիկանության գորքերի շտաբի պետ Գ. Պետրոսյանը նախ հայտարարեց, որ ԿՍ-23 կարաբինով մարդկանց ուղղությամբ «Չերյոմուխա-7» տեսակի հատուկ միջոց կրակելու հրամանը, որի արդյունքում երեք ցուցարար զոհվել են, ևս երեքը՝ վիրավորվել, ոչ ոք չի տվել: Ըստ նրա՝ հրաման է տրվել կրակել իրենց ուղղությամբ շարժվող մեքենայի վրա, և ինչպես նշեց Գ. Պետրոսյանը, հատուկ միջոցների կիրառման խմբի տղաներն իրենք են կրակել ցուցարարների վրա: Փաստահավաք խմբի հարցադրմանը՝ ոստիկանության գորքը իրավունք ունե՞ր, արդյոք, մեքենայի վարորդի վրա կրակել «Չերյոմուխա-7» տեսակի հատուկ միջոցով, Գ. Պետրոսյանը պատասխանեց, որ իրենք իրավունք ունեն մեքենայի վարորդի վրա կրակելու և որ նման հրաման տալու համար ոչ մեկի առջև հաշվետու չեն:»

4.1. Փաստաթղթում ճիշտ չի արձանագրված, թե իբր Գեղամ Պետրոսյանը Փաստահավաք խմբում տված իր բացատրություններում հայտնել է, որ հատուկ միջոցների կիրառման խմբի տղաներն իրենք են կրակել ցուցարարների վրա: Ո՛չ Գեղամ Պետրոսյանը, և ո՛չ էլ ոստիկանության գորքերի որևէ զինծառայող ցուցմունքով կամ Փաստահավաք խմբում տված բացատրություններում երբևէ ոչինչ չեն ասել ցուցարարների ուղղությամբ կրակելու մասին: Փախարենը, Փաստահավաք խումբ հրավիրված բոլոր անձինք մանրամասն նկարագրել և բացատրել են, թե ինչ կարգով է կիրառվել «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակը:

Ինչ վերաբերում է ոստիկանության գորքերի ստորաբաժանումների ուղղությամբ զանգվածային անկարգության մասնակցի կողմից ընթացող ավտոմեքենայի առաջխա-

դացումը հարկադրաբար՝ «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակով կրակելու միջոցով կասեցնելուն և բազմաթիվ զինծառայողներին սպառնացող վտանգը կանխելուն, սպա առավել, քան ակնհայտ է, որ տվյալ դեպքում ոստիկանները գործել են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով և իրավաչափ:

5. «ՀՀ ոստիկանության գործերի շտաբի պետ Գ. Պետրոսյանը նաև հայտնեց, որ իրենց հատուկ միջոցները հին են եղել: Դրանք կրակելուց հետո ծուխը չի ցրվել և տարածվել է տեղում, որի հետևանքով թունավորվել են զինվորները: Իր կողմից այդ հարցը բարձրացվել է հանրապետության ղեկավարության առջև, սակայն գումար չի տրամադրվել հատուկ միջոցներ ձեռք բերելու համար:»

*5.1. Փաստաթղթի հաջորդ կետում կեղծվել է Գեղամ Պետրոսյանի բացատրությունը՝*

*արձանագրելով, թե իբր վերջինս հայտնել է. «...իրենց հատուկ միջոցները հին են եղել: Դրանք կրակելուց հետո ծուխը չի ցրվել և տարածվել է տեղում, որի հետևանքով թունավորվել են զինվորները: Իր կողմից այդ հարցը բարձրացվել է Հանրապետության ղեկավարության առջև, սակայն գումար չի տրամադրվել հատուկ միջոցներ ձեռք բերելու համար»:*

*Փաստացի, Գեղամ Պետրոսյանը Փաստահավաք խմբում հայտնել է, որ փամփուշտները հին լինելու պատճառով չեն գործել ըստ նպատակային նշանակության, այլ ոչ թե, դրա պատճառով մարդիկ են թունավորվել:*

*Հատկանշական է, որ Փաստահավաք խմբի անդամները իրենց ուսումնասիրությունների հիմքում դնելով հատուկ միջոցների կիրառման կարգի վերաբերյալ ՌԴ կանոնակարգերն ու տակտիկատեխնիկական բնութագրերը, «զարմանալի» անփութության կամ անուշադրության հետևանքով որևէ կերպ չեն անդրադարձել նախաքննական մարմնի կողմից խմբին տրամադրված, հատուկ միջոցներն արտադրող ՌԴ ՆԳՆ «Հատուկ տեխնիկա և կապ» ԳԱՄ ՊՀ ՀՏԳՀ ինստիտուտում անցկացված փորձաքննության եզրակացությանը, որտեղ հստակ արձանագրված է. «Պահպանման թույլատրելի ժամկետներն անցնելու դեպքում «Չերյոմուխա-7» («Չերյոմուխա-7Մ») տեսակի գազային նռնակով փամփուշտների մոտ կարող է տեղի ունենալ տեխնիկական բնութագրերի փոփոխություն՝ դրանց մարտական հատկությունների նվազման ուղղությամբ. արցունքաբեր ծխի արձակման տևողության նվազում, գազային նռնակի թռիչքի առավելագույն հեռավորության նվազում, փամփուշտի չգործելը հրապատիճի խափանման պատճառով: Ժամկետանց պահպանման ժամկետներով «Չերյոմուխա-7» («Չերյոմուխա-7Մ») տեսակի գազային նռնակով փամփուշտների կիրառումը մարդկանց դեմ վնաս չի պատճառի նրանց առողջությանը և կյանքին»:*

6. «Ըստ Փաստահավաք խումբ հրավիրված Բագրատ Խաչատրյանի՝ «ձկան խանութի» կողքի ձախ մայթի դալանից դուրս են եկել մարդիկ, քարեր շարտել իրենց

ուղղությամբ, և նա հրաման է տվել կրակել «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակներով, որով, փաստորեն, խախտվել են թիվ 127 հրամանի պահանջները »:

6.1. Փաստաթղթում ճիշտ չի արձանագրված, թե իբր «ՀՀ ՈԶ ՀՆ ջոկատի հրամանատար Բագրատ Խաչատրյանը Փաստահավաք խմբում տված իր բացատրություններում հայտնել է.«ձկան խանութի» կողքի ձախ մայթի դալանից դուրս են եկել մարդիկ, քարեր շարտել իրենց ուղղությամբ, և նա հրաման է տվել կրակել «Չերյոմուխա-7»՝ եզրահանգելով, որ վերջինս խախտել է թիվ 127 հրամանի պահանջը:

Բագրատ Խաչատրյանը նման հրաման չի արձակել և Փաստահավաք խմբում նման բացատրություն չի տվել:

7. Փաստահավաք խմբին Բագրատ Խաչատրյանը հայտնեց, որ « Լեո և Պարոնյան փողոցների խաչմերուկում իրենց ուղղությամբ շարժվելիս է եղել բեռնատար մեքենա, և հրաման է տվել Ավետիք Աթաբեկյանին «Չերյոմուխա-7» կրակել բեռնատարի դիմապակուն՝ վարորդի կողքի նստատեղի ուղղությամբ, սակայն չկարողացավ բացատրել, թե ինչպես պատահեց, որ նույնատիպ և գործով դեռևս չպարզված բեռնատարի կողքին «Չերյոմուխա-7»-ից ստացած մարմնական վնասվածքից մահացել է Տիգրան Խաչատրյանը, այն էլ՝ գլխից և հետևի կողմից ստացած վնասվածքից: »

7.1. Փաստաթղթում արձանագրված է. «բացի այդ, Բ. Խաչատրյանը Փաստահավաք խմբին հայտնեց, որ Լեո և Պարոնյան փողոցների խաչմերուկում իրենց ուղղությամբ շարժվելիս է եղել բեռնատար մեքենա, և ինքը հրաման է տվել Ավետիք Աթաբեկյանին «Չերյոմուխա-7» կրակել բեռնատարի դիմապակուն՝ վարորդի կողքի նստատեղի ուղղությամբ, սակայն չկարողացավ բացատրել, թե ինչպես պատահեց, որ նույնատիպ և գործով դեռևս չպարզված բեռնատարի կողքին «Չերյոմուխա-7»-ից ստացած մարմնական վնասվածքից մահացել է Տիգրան Խաչատրյանը, այն էլ՝ գլխից և հետևի կողմից ստացած վնասվածքից»:

Շատ զարմանալի կլիներ, եթե Բագրատ Խաչատրյանը կարողանար բացատրել, թե « ինչպես պատահեց, որ նույնատիպ և գործով դեռևս չպարզված բեռնատարի կողքին «Չերյոմուխա-7»-ից ստացած մարմնական վնասվածքից մահացել է Տիգրան Խաչատրյանը, այն էլ՝ գլխից և հետևի կողմից ստացած վնասվածքից»:

Նախ՝ կարծում ենք, որ միմիայն Սեդա Սաֆարյանն ու Անդրանիկ Քոչարյանը կարող են բացատրել, թե ինչ է նշանակում նմանատիպ, սակայն գործով դեռևս չպարզաբանված բեռնատար, այսինքն՝ ստացվում է, որ խմբի այդ անդամները կարող են նույնականացնել չբացահայտված իրերն ու առարկաները:

Տիգրան Խաչատրյանի մահվան կապակցությամբ կատարված քննությամբ պարզվել է, որ նա զանգվածային անկարգությունների մի խումբ մասնակիցների հետ գնացել է Պարոնյան և Լեո փողոցների խաչմերուկում գտնվող դալանի մոտ, որտեղ էլ քննությամբ դեռևս չպարզված հանգամանքներում վիրավորվել ու մահացել է:

Բացի այդ, եթե նույնիսկ ղեկավարվենք վերը նշված անդամների հիվանդագին տրամաբանությամբ և ընդունենք, որ Տիգրան Խաչատրյանը գտնվել է բեռնատար ավտոմեքենայի խցիկում / վարորդի կամ ուղևորի նստատեղում/, որը փորձել է խոյահարել ՈԶ ստորբաժանումների զինծառայողներին, ապա նույնիսկ խմբի այդ անդամների երևակայությամբ ու կանխագուշակելու ոչ բնական հատկություններով օժտված լինելու պայմաններում դժվար է պատկերացնել դիմահար կրակոցի դեպքում ծոծրակի շրջանում վնասվածք ստանալու հանգամանքը:

Կամ, եթե Սեդա Սաֆարյանին ու Անդրանիկ Քոչարյանին հայտնի է եղել հանցագործության դեպքի, տվյալ դեպքում՝ Տիգրան Խաչատրյանի կողմից ՈԶ ստորբաժանումների զինծառայողներին դիտավորությամբ վնաս պատճառելու փորձի մասին, ապա հարց է առաջանում, թե ինչու են նրանք թաքցրել հանցագործության դեպքը և չեն հայտնել իրավապահ մարմիններին:

8. Փաստահավաք խումբ հրավիրված Մարտիրոս Դավրանյանը հայտնեց, որ ««Չերյոմուխա-4»-ը և «Չերյոմուխա-7»-ը նախատեսված են մասսայական անկարգությունների ժամանակ օգտագործելու համար: Նա հայտնեց նաև, որ «իրենք» «Չերյոմուխա-4»-ը և «Չերյոմուխա-7»-ը կրակել են ամբոխի ուղղությամբ, սակայն դրանք չեն ազդել ժողովրդի վրա:

8.1. Փաստաթղթում ճիշտ չի արձանագրված, թե իբր չՉ ՈԶ չՆ ջոկատի հրամանատարի տեղակալ Մարտիրոս Դավրանյանը Փաստահավաք խմբում տված իր բացատրություններում հայտնել է. « իրենք» «Չերյոմուխա-4»-ը և «Չերյոմուխա-7»-ը կրակել են **ամբոխի ուղղությամբ**, սակայն դրանք չեն ազդել ժողովրդի վրա:»

Ինչպես վերը արդեն նշվել է, ոչ Մարտիրոս Դավրանյանը, և ոչ էլ ոստիկանության զորքերի որևէ զինծառայող ցուցմունքով կամ Փաստահավաք խմբին տված բացատրություններում երբևէ ոչինչ չեն ասել ցուցարարների կամ ամբոխի ուղղությամբ կրակելու մասին:

Խմբի անդամներ Սեդա Սաֆարյանն ու Անդրանիկ Քոչարյանն իրենց հատուկ ոճով կեղծիքների են դիմել՝ ինչպես քննարկվող փաստաթղթում, այնպես էլ Փաստահավաք խմբին բացատրություններ ստանալիս: Մասնավորապես, Փաստահավաք խումբ հրավիրված Արմեն Անտոնյանին հարցեր տալիս Սեդա Սաֆարյանը, ակնհայտ կեղծելով նախաքննական մարմնի կողմից խմբին տրամադրած Արմեն Անտոնյանի ցուցմունքը, հարցում նշում է, թե իբր վերջինս ցուցմունք է տվել, որ զորամասում առկա բոլոր 6 հաստ ԿՍ-23 տեսակի կարաբինները 2008թ. մարտի 1-ին օգտագործվել են, այն դեպքում, երբ ցուցմունքում արձանագրված է, որ 6 կարաբինները դուրս են բերվել զորամասից, սակայն փաստացի օգտագործվել են 2-ը: Չնայած նրան, որ Փաստահավաք խմբում Արմեն Անտոնյանը պնդել և հաստատել է իր նախաքննական ցուցմունքները, Սակայն փաստաթղթում արձանագրված է նույն կեղծիքը, թե՛ Արմեն Անտոնյանն իր ցուցմունքում

հայտնել է, որ գործառնաժամանակ առկա բոլոր 6 հատ ԿՄ-23 տեսակի կարաբինները 2008թ. մարտի 1-ին օգտագործվել են:

Ընդ որում, Փաստահավաք խումբ հրավիրված անձանց բացատրությունների տեսագրություններն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ բոլոր դեպքերում խմբի նույն երկու անդամներն ամեն կերպ խեղաթյուրում, կեղծում են դեպքերի փաստական հանգամանքները, փաստաթղթային տվյալները, փորձագետների եզրակացությունները, փորձում են ընդհուպ վիրավորանքներ հասցնելու և ճնշումներ գործադրելու միջոցով բացատրություններ տվող անձանցից ստանալ իրենց ցանկալի պատասխանները կամ էլ ստացած պատասխանը վերաձևակերպում և շարադրում են այլ մեկնաբանմամբ, որն էլ հետագայում օգտագործել են փաստաթղթում և քաղաքական շահարկումների համար:

Ուշագրավ է, որ հեղինակները, խեղաթյուրելով հատուկ միջոցների կիրառման կարգի վերաբերյալ ունեցած տեղեկատվությունը, դրանք կիրառած անձանց բացատրությունները, փաստաթղթի սկզբնաձևում արձանագրում են, որ «Չերյոմուխա-7» գազային նռնակը կիրառելի է միայն փակ տարածքների համար, իսկ հետագայում, զարգացնելով իրենց «մասնագիտական» եզրահանգումները, արդեն արձանագրում են, որ այն արգելվում է կիրառել բաց տարածքներում, անտեսելով, որ մեթոդական ձեռնարկում որևէ տեղ ասված չէ, որ այն նախատեսված է միայն փակ տարածքների համար կամ արգելվում է կիրառել բաց տարածքներում: Ավելին, մեթոդական ձեռնարկի 2-րդ գլխի 2.4 կետում ասված է. « Հատուկ միջոցի տեսակը և դրա կիրառման հաճախականությունը որոշվում է ստեղծված իրավիճակը, իրավախախտման բնույթը և իրավախախտի անձը, ինչպես նաև հատուկ միջոցի տակտիկատեխնիկական բնութագիրը հաշվի առնելով:» Խմբի անդամները, յուրովի մեկնաբանելով մեթոդական ձեռնարկը, «Չերյոմուխա» տեսակի հատուկ միջոցի նպատակային նշանակության հարցը վերլուծելիս, իրենց հատուկ՝ գիտության բոլոր բնագավառներին բացարձակ տիրապետող անձի իրավունքով հստակ սահմանել են, թե հատուկ միջոցի որ տեսակը երբ է կիրառելի՝ վկայակոչելով մեթոդական ձեռնարկի 5-րդ գլխի 5.3-րդ կետը: Մինչդեռ, ձեռնարկի 5-րդ գլխի 5.3-րդ կետում՝ բնակավայրերում հակահասարակական դրսևորումները կանխելու նպատակով հատուկ միջոցի տեսակի ընտրության կապակցությամբ օգտագործված է «նպատակահարմար է» տերմինը, որը խորհրդատվական, այլ ոչ թե իմպերատիվ բնույթի է:

Կարծում ենք, որ մեթոդական ձեռնարկի՝ հատուկ մասնագիտական գիտելիքների տիրապետող հեղինակները նույնպես ոչ պատշաճ են կատարել իրենց պարտականությունները՝ նման սահմանումներ տալիս չխորհրդակցելով Սեդա Սաֆարյանի և Անդրանիկ Քոչարյանի հետ:

Հղում անելով ձեռնարկի 5.7-րդ կետին և արձանագրելով, որ փակ տարածքներում իրավախախտներին վնասագերծելու համար կիրառվում է միայն «Չերյոմուխա-7» գազային նռնակը, հավանաբար խմբի վերոհիշյալ անդամների ռուսերենի իմացությունը չի բավարարել ամբողջությամբ թարգմանելու 5.7-րդ կետը, համաձայն որի՝ փակ

տարածքներում իրավախախտներին վնասագերծելու համար կարելի է կիրառել նաև «Չերյոմուխա-6» տեսակի հատուկ միջոցը:

Որևէ մեկնաբանության ենթակա չէ այն հանգամանքը, որ հիշատակված վերլուծություններն անելիս փաստաթղթում ոչինչ չի ասված հատուկ միջոցներն արտադրող ՌԳ ՆԳՆ «Հատուկ տեխնիկա և կապ» ԳԱՄ ՊՀ ՀՏԳՀ ինստիտուտում անցկացված փորձաքննության եզրակացության մասին, որտեղ հստակ արձանագրված է. «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակով փամփուշտների կիրառումը բաց տարածության մեջ չի արգելվում: «Չերյոմուխա-7» («Չերյոմուխա-7Մ») տեսակի գազային նռնակով փամփուշտների կիրառման ժամանակ արգելվում է անմիջապես մարդու վրա կրակը: Կրակը կարող է արձակվել իրավախախտների մոտ գտնվող տեղանքի կամ օբյեկտների վրա, ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել իրավախախտների վրա գազային ամպի տեղափոխումն ապահովող քամու ուղղությունը»:

9. Փաստահավաք խումբ հրավիրված Սկրտիչ Ղարիբյանը հայտնեց, որ ««Չերյոմուխա-7» հատուկ միջոցը կրակել է նաև Լեո փողոցի վրա գտնվող դալանի մեջ, որտեղ հավաքված են եղել ցուցարարներ:»

9.1. Փաստաթղթում ճիշտ չի արձանագրված, թե իբր ըստ Սկրտիչ Ղարիբյանի՝ «Չերյոմուխա-7» հատուկ միջոցը կրակել է նաև Լեո փողոցի վրա գտնվող դալանի մեջ, որտեղ հավաքված են եղել ցուցարարներ: Փաստահավաք խմբում տված իր բացատրություններում և նախաքննական ցուցմունքներով Մ.Ղարիբյանը նման բան չի հայտնել:

Փաստաթղթում արձանագրված է, որ Փաստահավաք խմբին պարզ չդարձավ, թե որոնք են գազային նռնակների նույնացման համար անհրաժեշտ հատկանիշները: Այն դեպքում, երբ Փաստահավաք խումբ հրավիրված փորձագետը, առավել, քան մատչելի, խմբի անդամներին պարզաբանել է նույնացման համար անհրաժեշտ հատկանիշների բնույթը, տեսակը, համեմատական հետազոտման կարգը:

10. Փաստահավաք խմբում Խաչիկ Դավթյանը հայտարարեց, «որ իրեն տուժող չեն ճանաչել, իսկ ՀՀ գլխավոր դատախազության շենքի 6-րդ հարկի քննիչ Հովակիմյանի աշխատասենյակում իր նկատմամբ բռնություն են գործադրել և պարտադրել, որ գրի քննիչի պահանջած ցուցմունքը...»:

10.1. Խաչիկ Դավթյանի հիշյալ հայտարարություններն իրականությանը չեն համապատասխանում:

Այսպես.

2008թ. մարտի 4-ին որպես վկա հարցաքննվելիս՝ Խաչիկ Դավթյանը, փորձելով թաքցնել 2008թ. մարտի 1-ին Երևանում տեղի ունեցած զանգվածային անկարգություններին իր անմիջական մասնակցությունը և այդ ընթացքում մարմնական վնասվածք ստանալու հանգամանքը, սուտ ցուցմունք է տվել այն մասին, որ հիշյալ մարմնական վնասվածքն ստացել է պատահաբար, երբ իր ծանոթ Նորայր Գևորգյանի հետ 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 19-ից 20-ի սահմաններում փորձել է տաքսի ծառայության

ավտոմեքենայով հեռանալ վերջինիս ընկերոջ տան մոտից, որը գտնվում է Մ.Մաշտոցի պողոտայի մոտակայքում, և հիշյալ վնասվածքն ստանալիս ներկա է եղել նաև Նորայր Գևորգյանը: Վերը նշված շինծու և իրականությանը չհամապատասխանող ցուցմունքից Խաչիկ Դավթյանը հրաժարվել է և ընդունել զանգվածային անկարգություններին իր անմիջական մասնակցության փաստը միայն այն ժամանակ, երբ նախաքննության ընթացքում Նորայր Գևորգյանը ցուցմունքով հայտնել է, որ Խաչիկ Դավթյանը ստում է, նրա կողմից մարմնական վնասվածք ստանալուն ականատես չի եղել և նշված պահին նրա կողքին չի գտնվել:

2008թ. մայիսի 16-ին Խաչիկ Դավթյանը, նախաքննական մարմնին ներկայացնելով դեպքերի իրական պատկերը և խոստովանելով զանգվածային անկարգություններին անմիջականորեն մասնակցելու, իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքը, հետագայում Փաստահավաք խմբին, ինչպես նաև «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրողին հայտնել է, թե չնայած նրան, որ իբր 2008թ. մայիսի 16-ի ցուցմունքը, գրվել է իր կողմից, իր ձեռքով, սակայն իրականությանը չի համապատասխանում, քանզի այն կորզվել է քննիչների կողմից կիրառած բռնության և ճնշումների հետևանքով:

Խաչիկ Դավթյանի հիշյալ հայտարարությունները հերքվել են նախաքննության ընթացքում վերջինիս կողմից տված լրացուցիչ ցուցմունքներով, մասնավորապես՝ նրա անտրամաբանական և անհասկանալի պատասխաններով, Փաստահավաք խմբին տված հայտարարությունների և նախաքննության ընթացքում տված ցուցմունքների միջև առկա հակասություններով, ինչպես նաև՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական խմբի քննիչ Աշոտ Խաչատրյանի հետ առերես հարցաքննությամբ:

#### **Այսպես.**

1. Փաստահավաք խմբին հայտնել է, որ ականատես է եղել մի երիտասարդի վիրավորվելու դեպքին, մինչդեռ 2008թ. մայիսի 16-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում Ա.Խաչատրյանի կողմից որպես վկա հարցաքննվելիս Խ.Դավթյանն իր կողմից գրված ցուցմունքում վիրավորված երիտասարդի մասին որևէ տեղեկություն չի հայտնել:

2. Խ.Դավթյանը Փաստահավաք խմբին, ինչպես նաև 2009թ. մայիսի 13-ի «Հայկական ժամանակ» օրաթերթին հայտնել է, որ հիշյալ երիտասարդի վիրավորվելու վայրում տեսել է տարբեր տրամաչափի պարկուճներ, այդ թվում՝ «Սնայպերի», մինչդեռ 2009թ. հունիսի 19-ի հարցաքննության ժամանակ հայտնել է, որ այդ ամենը ենթադրություն է եղել:

3. Խ.Դավթյանը չի տեսել և չի հայտնել, թե այդ կրակոցը, որի հետևանքով վիրավորվել է հիշյալ երիտասարդը, որ կողմից է եղել:

4. Փաստահավաք խմբին հայտնել է, որ, երբ հիշյալ երիտասարդը վայր է ընկել, այդ ընթացքում արդեն օգտագործվում էր արցունքաբեր գազ, մինչդեռ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարցաքննվելիս այդ մասին ոչինչ չի հայտնել:

5. Փաստահավաք խմբին հայտնել է, որ վիրավորված երիտասարդի հագին եղել է սև «Պիջակ», իսկ 2009թ. մայիսի 25-ի հարցաքննության ժամանակ նշել է, որ հիշյալ երիտասարդի հագին եղել է մուգ տաքատ, վերևի հագուստի գույնը չի տպավորվել:

6. Փաստահավաք խմբին և «Հայկական ժամանակ» օրաթերթին հայտնել է, որ վիրավորվածը երիտասարդ է եղել, մինչդեռ ցուցմունքում նշել է, որ երիտասարդի դեմքը չի տեսել, սակայն ենթադրել է, որ վիրավորվածը երիտասարդ է:

7. 2009թ. օգոստոսի 17-ին առերես հարցաքննելիս քննիչ Ա.Խաչատրյանը հերքել է Խ.Դավթյանի այն հայտարարությունը, թե իբր 2008թ. մայիսի 16-ի հարցաքննության ժամանակ բռնություն և ճնշում է գործադրվել վերջինիս նկատմամբ, որի արդյունքում ցուցմունք է կորզվել: Բացի այդ, հերքել է այն փաստը, որ նույն հարցաքննության ժամանակ չի թույլատրվել արձանագրել Խ.Դավթյանի նշած՝ հիշյալ երիտասարդի մարմնական վնասվածքներ ստանալու դեպքի հանգամանքները, որը անտրամաբանական է, քանի որ Խ.Դավթյանը կանչվել է հարցաքննության՝ 2008թ. մարտի 1-ին և 2-ին Երևանի կենտրոնական փողոցներում տեղի ունեցած զանգվածային անկարգություններին մասնակցելու և քրեական գործով իրեն հայտնի այլ հանգամանքներ պարզելու կապակցությամբ:

Փաստահավաք խմբին հայտնել է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ.Հովակիմյանը 2009թ. ապրիլի 27-ին իրեն կանչել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն և ցուցմունք վերցրել, ապա ասել, որ որևէ մեկին, այդ թվում՝ նաև Փաստահավաք խմբին, չհայտնի ՀՀ հատուկ քննչական ծառայություն գալու մասին: Խ.Դավթյանի հիշյալ հայտարարությունը նույնպես մտացածին է և անտրամաբանական, քանի որ հարցաքննության արձանագրության մեջ հստակ նշվել են հարցաքննող քննիչի տվյալները, հարցաքննության օրը, վայրը, ժամը, բացի այդ, ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչական շենքի անցագրային կետում առկա է Խ.Դավթյանի անվամբ լրացված՝ շենք մուտք գործելու անցագիր՝ ՀԿԳ քննիչ Գ.Հովակիմյանի ստորագրությամբ, հետևաբար Գ.Հովակիմյանը, նույնիսկ ցանկության դեպքում չէր կարող թաքցնել Խ.Դավթյանի կողմից 2009թ. ապրիլի 27-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչական շենք մուտք գործելու հանգամանքը:

### 5.3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված վայրերում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ընթացքում հատուկ միջոցների մասնավորապես, «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակների փամփուշտներից զոհվել է 3 քաղաքացի՝ Արմեն Ֆարմանյանը, Գոռ Քլոյանը և Տիգրան Խաչատրյանը, Հանձնաժողովը եկել է այն եզրահանգման, որ, հավանաբար, դրանք կիրառվել են կամ մարդկանց կուտակումների ուղղությամբ կամ բետոնե պատերին, այլ պատնեշներին կամ արգելապատերին կրակելու արդյունքում տեղի ունեցած անդրադարձի հետևանքով:

Հանձնաժողովի 2009թ. ապրիլի 30-ի նիստում Հանձնաժողովի անդամ Նաիրա Ջոհրաբյանի այն հարցին, թե ինչպես կարելի է բացատրել «Չերյոմուխա-7» հատուկ միջոցի օգտագործման հետևանքով մարդկանց զոհվելու հանգամանքը, ՀՀ ոստիկանության նախկին պետ Հայկ Հարությունյանը պատասխանեց, որ եթե մոտ տարածությունից դրանով կրակեն մարդկանց ուղղությամբ, ապա կարող են վնաս պատճառել: Շարունակելով միտքը՝ նա ասաց. «Միգուցե ճիշտ անկյան տակ չեն կրակել, միգուցե հրմշտոց է եղել, քանի որ այդ ժամանակ խառնաշփոթ իրավիճակ է տիրել»:

Այն հանգամանքը, որ արցունքաբեր գազ արտանետող այդ փամփուշտները կիրառվել են նախատեսված անվտանգության կանոնների խախտմամբ, վկայում է նաև այն փաստը, որ դրանց օգտագործման ընթացքում արտանետված գազից թունավորվել և տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ է ստացել նաև ոստիկանության զորքերի 11 զինձառայող: Այդ են վկայում ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի փորձագետներ Ադամյանի, Բիշարյանի, Սևոյանի, Հարությունյանի և մյուսների թիվ 296, 300, 309, 320, 372, 388, 410, 415, 418, 430, 438 եզրակացությունները:

Այն, որ կրակված փամփուշտների 40%-ի մոտ գազային նռնակներից գազի նկատելի արտահոսք տեղի չի ունեցել, գրանցվել է նաև գազային նռնակների թռիչքի ցածր արագություն և, որ գազային փամփուշտները ստացվել են 1990թ., և դրանց պահպանման ժամկետը սահմանված է 5 տարի, մանրամասն նկարագրված է եզրակացության 55-րդ էջում:

Հանձնաժողովն իր տարակուսանքն է հայտնում ՀՀ ոստիկանության վերաբերմունքի նկատմամբ այն առումով, որ չնայած Հանձնաժողովը դիմել էր նրանց և խնդրել ուղարկել հատուկ միջոցների կիրառման ու օգտագործման անվտանգության կանոնների համապատասխան հրահանգը, սակայն այն մեզ չտրամադրվեց: Միայն Փաստահավաք խմբի գործունեության դադարեցման կապակցությամբ այդ հրահանգը, որը ՀՀ ոստիկանությունը ուղարկել էր խմբին, մյուս փաստաթղթերի հետ միասին փոխանցվեց մեզ:

«Ներքին գործերի մարմինների և ներքին գործերի կողմից հատուկ միջոցների կիրառման կարգի մասին» հրահանգը հաստատվել է ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրի 1989թ. հուլիսի 6-ի թիվ 127 հրամանով, որը, սակայն, այլ իրավական ակտերի հետ միասին 2006 թ. ՀՀ-ում ուժը կորցրած է ճանաչվել: Սա նշանակում է, որ մինչ այս պահը ՀՀ ՌԶ-ը չունեն հատուկ միջոցները պահպանելու, օգտագործելու և անվտանգության կանոնները սահմանող կարգ:

Նշված հրահանգի 1.3 կետը սահմանում է հատուկ միջոցների կիրառման դեպքերը, այդ թվում՝ 1.3.1 կետով նախատեսվում է, որ հատուկ միջոցները կիրառվում են նաև զանգվածային անկարգությունները, բռնությամբ ուղեկցվող հասարակական կարգի խմբակային խախտումները կանխելու համար: Ըստ այդ հրահանգի «Ընդհանուր ցուցումներ» գլխի՝ «ԿՍ-23» կարաբինները նախատեսված են «Չերյոմուխա-7» գազային նռնակների փամփուշտներով նշանառու կրակ բացելու համար՝ (էջ 14), սակայն արգելվում է դրանցով կրակ բացել մարդկանց կուտակումների, ինչպես նաև ուղիղ նշանառությամբ կրակել իրավախախտների վրա:

Հրահանգի 2.6 կետում ուղղակիորեն ասվում է. «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակի փամփուշտը նախատեսված է շինություններում նշանառու կրակ բացելու համար՝ այնտեղ ստեղծելով գազային ամպ»: Չնայած նույն հրահանգում որևէ ուղղակի արգելք չկա «Չերյոմուխա-7» հատուկ միջոցը բաց տարածքներում կիրառելու վերաբերյալ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ դրա օգտագործումը անտեղի էր և աննպատակահարմար, քանի որ ցանկալի արդյունք չէր կարող ունենալ:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ չնայած վերը նշված հրահանգը 2006թ. ուժը կորցրած է ճանաչվել, սակայն, մինչ օրս, ՀՀ ոստիկանությունում դրան փոխարինող նոր հրահանգ չի ընդունվել:

Չնայած, նախաքննական մարմնի և մեր կողմից կատարված մանրազնին ուսումնասիրություններին, Հանձնաժողովը փաստում է, որ ցավոք, տեխնիկապես հնարավոր չեղավ անհատականացնել «ԿՍ-23» այն կարաբինները, և, հետևաբար, դրանցով զինված անձանց, որոնց կրակոցների արդյունքում զոհվել է 3 և մարմնական վնասվածքներ ստացել ևս 3 քաղաքացի: Այդ նպատակով թե՛ ՀՀ-ում և թե՛ ՌԴ-ում նշանակվել են դատաձգաբանական փորձաքննություններ: Մասնավորապես, ՀՀ ոստիկանության փորձաքննազիտական վարչություն են ուղարկվել «Չերյոմուխա-7» փամփուշտներ կրակած «ԿՍ-23» կարաբինները, ինչպես նաև մահացած և վիրավորված անձանց մարմիններից հանված «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտները՝ պարզելու համար, թե՛

1. հնարավոր է արդյոք, «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակների փամփուշտների նույնացումը դրանք կրակած զենքերի հետ,

2. դիակների և տուժողների մարմիններից հանված «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտների վրա առկա են, արդյոք, նույնացման համար պիտանի հետքեր:

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության թիվ 1466 եզրակացությամբ փորձագետները հանգել են հետևյալ եզրակացությունների.

1. «Պատին կամ այլ արգելքի բախվելուց հետո, հետացատկի դեպքում, ինչպես նաև որևէ արգելքի միջով անցնելուց հետո, «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակները, կախված բախման անկյունից և արգելանյութի հատկություններից, կարող են մարդուն մարմնական, այդ թվում՝ նաև մահացու վնասվածքներ պատճառել»:

2. «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտների գազային նռնակներից գազի արտահոսքի արդյունքում ուղղորդող պլաստմասե խցանները ենթարկվում են ջերմային ազդեցության՝ հալվում են, և դառնում նույնացման համար ոչ պիտանի: Արգելքի հետ բախման, հպման արդյունքում դրանց վրա առաջանում են կողմնակի մեխանիկական հետքեր՝ վնասվածքներ, քերծվածքներ, որոնք նույնպես խանգարում են նույնացմանը:

3. Փորձաքննության ներկայացված «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակների ուղղորդող պլաստմասե խցանների վրա առկա կրակման հետքերը պիտանի չեն կոնկրետ զենքի նույնացման համար, քանի որ դրանց վրա հստակ չեն արտահայտված փողանցքի առանձնահատկությունները, իսկ գազային նռնակների մետաղական կորպուսները իրենց վրա չեն կրում փողանցքի հետ հպման հետքեր, ուստի և պիտանի չեն կրակող զենքի նույնացման համար:

Հատուկ քննչական ծառայությունը դիմել է նաև Ռ-Ռ ՆԳՆ-ի «Հատուկ տեխնիկա և կապ գիտաարտադրական միավորմանը»՝ ներկայացնելով «Չերյոմուխա-7» գազային նռնակների փամփուշտներ կրակած «ԿՄ-23» կարաբինները և մահացածների դիակներից ու վիրավորվածների մարմիններից հանված «Չերյոմուխա-7» գազային նռնակները՝ խնդրելով պատասխանել հետևյալ հարցերին.

ա. Ինչքա՞ն է «Չերյոմուխա-7» տեսակի փամփուշտների պահպանման առավելագույն ժամկետը: Պիտանի՞ են, արդյոք, 1986 և 1989թթ. արտադրության փամփուշտները նպատակային կիրառման համար:

բ. Եթե փամփուշտների պահպանման թույլատրելի ժամկետներն անցած են, ապա հնարավո՞ր է, արդյոք, դրանց նպատակային նշանակությամբ կիրառումը՝ հաշվի առնելով մարդկանց առողջությանը և կյանքին վնաս պատճառելու սպառնալիքը:

գ. Արգելվո՞ւմ է, արդյոք, «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակով փամփուշտների կիրառումը բաց տարածության մեջ: Եթե ոչ, ապա որո՞նք են դրանց կիրառման եղանակները:

դ. Առկա՞ է, արդյոք, մշակված մեթոդիկա և հնարավո՞ր է, արդյոք. «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակների նույնացումը այն հրացանների հետ, որոնցից դրանք կրակվել են:

Այնտեղից ստացվել են հետևյալ պատասխանները.

ա. «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակով փամփուշտների պահպանման առավելագույն ժամկետը 5 տարուց ոչ ավելի է:

բ. Պահպանման թույլատրելի ժամկետներն անցնելու դեպքում «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակով փամփուշտների մոտ կարող են տեղի ունենալ տեխնիկական բնութագրերի փոփոխություններ՝ դրանց մարտական հատկությունների նվազման ուղղությամբ, արցունքաբեր ծխի արձակման տևողության նվազում, գազային նռնակի թռիչքի առավելագույն հեռավորության նվազում, փամփուշտի չգործելը հրապատիճի խափանման պատճառով: Ժամկետանց «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակով փամփուշտների կիրառումը մարդկաց դեմ վնաս չի պատճառի նրանց առողջությանը և կյանքին:

գ. «Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակով փամփուշտների կիրառումը բաց տարածության մեջ չի արգելվում:

«Չերյոմուխա-7» և «Չերյոմուխա-7 Մ» տեսակի գազային նռնակով փամփուշտների կիրառման ժամանակ արգելվում է անմիջապես մարդու վրա կրակը: Կրակը կարող է արձակվել իրավախախտների մոտ գտնվող տեղանքի կամ օբյեկտների վրա, ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել իրավախախտների վրա գազային ամպի տեղափոխումը ապահովող քամու ուղղությունը:

դ. Մեր կազմակերպությունը իրավասու չէ անցկացնել ձգարանական փորձաքննություններ և չունի տեղեկատվություն տվյալ տեսակի փամփուշտների և զենքի նույնացման մեթոդիկաների վերաբերյալ: Նշված հարցով նպատահարմար է դիմել ՌԳՆ ՆԳՆ փորձաքրեագիտական կենտրոն:

Վերջին հարցի պատասխանը ստանալու նպատակով թե՛ Հանձնաժողովը և թե՛ Հատուկ քննչական ծառայությունը դիմել են նաև ՌԳՆ ՆԳՆ-ի փորձաքրեագիտական կենտրոն, որտեղից ստացված թիվ 913 եզրակացությամբ նշված է.

«Գազային նռնակների մետաղյա պատյանների մակերեսների վրա կրակող զենքի փողանցքի հետքեր չեն հայտնաբերվել:

Դա պայմանավորված է նրանով, որ գազային նռնակների պատյանի մակերեսի և փողանցքի ներքին մակերեսի միջև չկա ուղիղ հպում, քանի որ պատյանի վրա երկու կողմից հազցված են պոլիմերային նյութից խցակներ, որոնք նախատեսված են նռնակը կարաբինի փողի ուղղորդող մասով տանելու և կրակոցի պահին վառողային գազերը փակելու համար:

Պոլիմերային նյութից խցանների վրա առկա փողանցքի հետքերը պիտանի չեն դրանք առաջացնող զենքի հետ նույնացման համար»:

«Չերյոմուխա-7» տեսակի գազային նռնակների փամփուշտները դրանք կրակած զենքերի հետ նույնացնելու խնդրանքով Հանձնաժողովը դիմել է նաև ԱՄՆ-ից ժամանած՝ 2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունները ուսումնասիրած փորձագետների խմբին, ինչպես նաև ԵԽԽՎ Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգին՝ միջազգային փորձագետների կողմից համապատասխան փորձաքննություն

իրականացնելու համար, սակայն ստացել է պատասխան, որ դա տեխնիկապես հնարավոր չէ: Այդ է վկայում նաև իռլանդացի փորձագետ Քոլին Բարրոուզի ՀԶԾ-ին հասցեագրած պատասխանը. «Թե կոնկրետ որ գենքից է այն կրակվել, ապա կարծում եմ, դա հնարավոր չէ, քանի որ գազային բալոնը, ի տարբերություն փամփուշտի, չունի նույնացման հետքեր (բնութագիր):»

Այնուամենայնիվ հանձնաժողովը դրական է գնահատում ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ ՀԶԾ-ի գործադրած ջանքերը՝ ուղղված «Չերյոմուխա-7» տեսակի գազային նոնակներից 3 անձանց մահվան և 3 անձի մարմնական վնասվածքներ պատճառելու հանգամանքները բացահայտելուն, այն է՝ զանգվածային անկարգությունները կանխելու ընթացքում հատուկ միջոց կիրառած ոստիկանության գորքերի 4 զինծառայողի նկատմամբ հարուցվել է քրեական գործ, նրանց մեղադրանք է առաջադրվել հատուկ միջոց հանդիսացող հրագենի՝ «ԿՍ-23» կարաբինի հետ վարվելու կանոնները խախտելու համար:

Վերը նշված հանգամանքների արդյունքների ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովն առաջարկում է ՀՀ ոստիկանությանը.

1. Արագ կարգով մշակել և ընդունել հատուկ միջոցների կիրառման կարգի ու դրանց օգտագործման ժամանակ անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ համապատասխան հրահանգ:

2. Հրահանգում հստակ նշել դրանց օգտագործման կանոնները:

3. Կատարել ՀՀ ոստիկանության սպառազինության մեջ գտնվող հատուկ միջոցների տեխնիկական և որակական հատկանիշների ստուգում՝ որոշելու դրանց պիտանիությունը, և ոչնչացնել այդ չափանիշներին չհամապատասխանող բոլոր հատուկ միջոցները:

Հանձնաժողովն իր մտահոգությունն է հայտնում այն կապակցությամբ, որ Հատուկ քննչական ծառայության վարույթում գտնվող քրեական գործով կազմված՝ 105 հոգուց բաղկացած քննչական խումբը, օժտված լինելով լայն իրավասություններով, մինչ օրս չի բացահայտել նաև Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ընթացքում 221 անձի տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ պատճառած անձանց գերակշռող մասին:

4. ՀՀ Նախագահի հանձնարարության հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի կողմից Հանձնաժողովին են փախանցվել 10 անձանց մահվան դեպքի կապակցությամբ նախաքննության մարմնի տրամադրության տակ եղած բոլոր նյութերը, որոնց ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, նախաքննության մարմնի կողմից կատարվել են գործի հանգամանքների բացահայտմանն ուղղված հնարավոր բոլոր գործողությունները:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը կարևորում է 10 անձի մահվան հանգամանքների և մասնավորապես՝ մեղավոր անձանց հայտնաբերման և պատասխանատվության

ենթարկելուն ուղղված հետագա աշխատանքների վերաբերյալ նախաքննական մարմնի կողմից հանրությանը պարբերաբար տեղեկություններ ներկայացնելու հարցը:

Ողջունելի է, որ իրադարձությունների ընթացքում քաղաքացիների նկատմամբ անհարկի ֆիզիկական ուժ և բռնություն գործադրելու համար ոստիկանության չորս աշխատակցի ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի հատկանիշներով առաջադրվել է մեղադրանք, և գործերն ուղարկվել են դատարան:

Հանձնաժողովի առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկը գոհվածների մահվան հանգամանքները ճշտելն էր: Այս առումով ի սկզբանե պետք է փաստել մի հանգամանք. Հանձնաժողովը, իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, ինչպես նաև իր տրամադրության տակ եղած նյութերի և փաստերի համադրման հիման վրա, պետք է և կարող է եզրահանգումներ անել միայն այնպիսի հանգամանքների վերաբերյալ, ինչպիսիք են՝ զենքի տեսակը, որի հետևանքով վրա է հասել մահը, մահվան ժամանակը, վայրը, պայմանները և այլն: Մինչդեռ, ամենախնդրահարույց և հասարակությանը մտահոգող հարցերից մեկին՝ այն է՝ ում գործողությունների հետևանքով է վրա հասել մահը, Հանձնաժողովը չի պատասխանել, քանի որ, նույնիսկ ցանկության դեպքում, է՞լ չի կարող և իրավունք չունի վերածվելու նախաքննական մարմնի և իրականացնելու լիազորություններ, որոնք քրեադատավարական օրենսդրությամբ բացառապես վերապահված են միայն նախաքննական մարմնին:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը լիահույս է, որ շարունակվող նախաքննությունը կկարողանա լուծել իր առջև դրված խնդիրը: Այդ կապակցությամբ ՀԶԾ-ին առաջարկվում է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ բացահայտելու ինչպես մահվան, այնպես էլ բռնությունների, մարմնական վնասվածքներ պատճառելու և մյուս դեպքերը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ մինչև այժմ օպերատիվ-որոնողական աշխատանքներն արդյունավետ չեն եղել, մասնավորապես՝

ա) ամբողջությամբ չեն պարզվել 2008թ. մարտի 1-ին Ազատության հրապարակում և հարակից տարածքում հայտնաբերված զենքերի, զինամթերքի, մարմնական վնասվածքներ պատճառելու համար նախատեսված այլ իրերի պատկանելիությունը, դրանց՝ այդտեղ հայտնվելու հանգամանքները,

բ) չեն բացահայտվել զանգվածային անկարգությունների ընթացքում տասն անձի մահվան բոլոր հանգամանքները, դրանք կատարած անձինք, ինչպես նաև տարբեր անձանց մարմնական վնասվածքներ պատճառած անձինք,

գ) չեն հայտնաբերվել զանգվածային անկարգությունների ընթացքում պայթուցիկ նյութեր և դյուրավառ հեղուկներով լցված շշեր պատրաստած և օգտագործած բոլոր անձինք,

դ) չեն հայտնաբերվել զանգվածային անկարգությունների ընթացքում կիրառված բոլոր զենքերը և դրանք կիրառող անձինք՝ բացառությամբ Ֆելիքս Գևորգյանի դրվագի,

ե) չեն հայտնաբերվել զանգվածային անկարգություններին ակտիվ մասնակցություն ցուցաբերած այն անձինք, ովքեր հստակ պատկերված են շրջանառվող տեսանյութերում,

զ) չի պարզվել ոստիկանության զորքերի զինձառայող Տիգրան Աբգարյանի ուղղությամբ կրակոց արձակած և մյուս ծառայողների ուղղությամբ կրակելու փորձ կատարած անձի ինքնությունը, ընդ որում, վերջինիս նկատել և, վիրավորելով, վնասագերծել է ՌԶ-ի նշանառու-դիպուկահարը /դիպուկահարը հստակ նկարագրել է տվյալ անձին, նրա ստացած վնասվածքների կոնկրետ տեղակայումը/,

է) շուրջ 1,5 տարվա ընթացքում չեն պարզվել հետախուզվող մեղադրյալների գտնվելու վայրերը: Ավելին, իրավապահ մարմիններին կամովին ներկայացած Նիկոլ Փաշինյանն ու Համլետ Հովհաննիսյանը նույնիսկ չեն բացակայել Հայաստանի Հանրապետությունից,

ը) չբացահայտված են մնում այն 3 անձինք, որոնք Պարոնյան-Լեո փողոցների հատվածում երկու ավտոբուսով և մեկ բեռնատար մեքենայով փորձել են խոյահարել ոստիկանության զորքերի կազմած շարասյունը,

թ) չի բացահայտվել ոստիկանության փշալար փող մեքենան գավթած և դրանով զանգվածային անկարգության մասնակցին վրաերթի ենթարկած անձը.

ժ) չեն բացահայտվել ՀՀ ոստիկանությանը և քաղաքացիներին պատկանող մեքենաները ջարդուփշուր անող, դրանք հրկիզող և ոստիկանության ծառայողներին ծեծի ենթարկող բոլոր անձինք,

ի) չի բացահայտվել ԱԺ պատգամավոր Արմեն Մարտիրոսյանին դանակահարող անձը,

լ) չեն պարզվել բոլոր այն ոստիկանները, ովքեր իրադարձությունների ընթացքում ֆիզիկական ուժ և բռնություններ են գործադրել զանգվածային միջոցառման մասնակիցների նկատմամբ,

խ) չեն պարզվել և քրեական գործ չի հարուցվել իրենց ծառայողական պարտականությունները կատարող ազգային անվտանգության ծառայության այն երկու աշխատակցի նկատմամբ, որոնք Ազատության հրապարակում բռնություն են կիրառել քաղաքացիների նկատմամբ:

Հանձնաժողովն իր ցավակցությունն է հայտնում բոլոր զոհվածների ընտանիքներին ու հարազատներին՝ կատարվածը գնահատելով որպես ողբերգություն ողջ հայ ժողովրդի համար:

Տեղի ունեցած իրադարձությունները բացասական բարոյահոգեբանական ազդեցություն թողեցին հայ ժողովրդի տարբեր շերտերի վրա՝ ինչ-որ տեղ նաև խորացնելով ատելության և անհանդուրժողականության մթնոլորտը, ծանր հարված հասցրեցին Հայաստանի Հանրապետության՝ որպես ժողովրդավար պետության միջազգային վարկանիշին: Կատարվածում իրենց մեղքի բաժինն ունեն թե՛ իշխանությունները և թե՛ ընդդիմությունը:

Այսօր Հայաստանի Հանրապետության առաջ ծառայած են լուրջ խնդիրներ՝ թե՛ արտաքին մարտահրավերները և թե՛ ամբողջ աշխարհում մոլեգնող տնտեսական ճգնաժամը: Հանձնաժողովը լիահույս է, որ հազարամյակներ շարունակ տարբեր մարտահրավերների դիմագրաված մեր հինավուրց ժողովուրդն իր մեջ ուժ կգտնի, կդրսևորի իր հավաքական իմաստնությունը, համատեղ ջանքերով կհաղթահարի առկա բոլոր խնդիրները և հաստատուն քայլերով կշարունակի առաջ ընթանալ:

**VI. «ԱՐՏԱԿԱՐԳ ԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՐԱՄԱՆԱԳՐԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ**

**6.1. «ԱՐՏԱԿԱՐԳ ԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՐԱՄԱՆԱԳՐԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ինչպես հայտնի է, Երևանում մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված ՀՀ Նախագահ Ռոբերտ Զոչարյանը՝ խորհրդակցելով ԱԺ-ի նախագահի և ՀՀ վարչապետի հետ, ստորագրել է «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» հետևյալ հրամանագիրը՝ (այսուհետ՝ Հրամանագիր)

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

**ԱՐՏԱԿԱՐԳ ԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգին սպառնացող վտանգը կանխելու և բնակչության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ և 117-րդ հոդվածի 6-րդ կետերով՝

ո ր ո շ ու մ ե մ .

1. Երևան քաղաքում 2008 թվականի մարտի 1-ից 20 օր ժամկետով հայտարարել արտակարգ դրություն:

2. Արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացման և այլ հրատապ հարցերի կանոնակարգման և իրականացման ղեկավարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Նախագահին:

3. Արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովումը վերապահել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

4. Սահմանել արտակարգ դրություն հայտարարված տարածքում հետևյալ ժամանակավոր սահմանափակումները՝

1) ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի և այլ զանգվածային միջոցառումների իրականացման արգելում:

2) գործադուլների և կազմակերպությունների գործունեությունը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումների արգելում.

3) իրավապահ մարմինների կողմից, անհրաժեշտության դեպքում, անձանց, տրանսպորտային միջոցների տեղաշարժի սահմանափակում և զննության իրականացում.

4) արգելվում է զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ ակնհայտ սուտ կամ իրավիճակը ապակայունացնող տեղեկատվություն կամ առանց իրազեկման (ապօրինի) միջոցառումների մասնակցության կոչեր, ինչպես նաև նման տեղեկատվություն կամ կոչեր որևէ այլ եղանակով և ձևով հրապարակելը կամ տարածելը.

(4-րդ ենթակետը փոփ. 13.03.08 ՆՀ-38-Ն հրամանագիր)

5) առանց համապատասխան պետական մարմինների թույլտվության թուղթիկների և այլ ձևով քաղաքական քարոզչության իրականացման արգելում.

(5-րդ ենթակետն ուժը կորցրել է 13.03.08 ՆՀ-38-Ն հրամանագիր)

6) արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացմանը խոչընդոտող կուսակցությունների և այլ հասարակական կազմակերպությունների գործունեության ժամանակավոր կասեցում.

(6-րդ ենթակետն ուժը կորցրել է 10.03.08 ՆՀ-36-Ն հրամանագիր)

7) արտակարգ դրության իրավական ռեժիմը խախտած և տվյալ տարածքում չքնակվող անձանց վտարում՝ նրանց միջոցների հաշվին, իսկ միջոցներ չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ կատարված ծախսերի հետագա փոխհատուցման պայմանով:

(7-րդ ենթակետն ուժը կորցրել է 10.03.08 ՆՀ-36-Ն հրամանագիր)

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ սույն հրամանագրի իրականացումն ապահովելու ուղղությամբ:

6. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում տեղեկացման պահից:

1 մարտի 2008 թվականի ՆՀ-35-Ն»

Հրամանագիրը ստորագրելուց հետո Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանը ժողովրդին հղել է հետևյալ ուղերձը.

«Հարգելի հայրենակիցներ, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի ընտրություններում պարտություն կրած, ինքնաառաջադրված թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանն ու իրեն շրջապատող արկածախնդիրների մի խումբ, չհաշտվելով կրած պարտության իրողության հետ, դիմել են ապօրինի գործողությունների: Դրանց թվում են՝ զենքի և զինամթերքի կուտակումն ու տեղափոխումը մարդաշատ վայրեր, որտեղ դրանց առկայությունը կարող է լուրջ վտանգ ներկայացնել քաղաքացիների կյանքին և առողջությանը, առանց իրազեկման հանրահավաքների և երթերի անցկացումը: Չնայած նրան, որ 2008 թվականի նախագահական ընտրություններին մասնակցող

թեկնածուների կողմից պահանջված վերահաշվարկները որևէ լուրջ խախտումներ չեն հայտնաբերել, չի ներկայացվել որևէ գանգատ Հայաստանի Հանրապետության վարչական դատարաններ, իսկ Սահմանադրական դատարանում ընտրական օրենսգրքով նախատեսված կարգով ընթանում է ընտրությունների արդյունքների գանգատարկման ուսումնասիրություն, թեկնածու Տեր-Պետրոսյանի կողմնակիցները շարունակում են վիճարկել ընտրությունների ելքն ապօրինի միջոցներով: Ընդդիմության ներկայացուցիչների մի խումբ մարտի 1-ին անկարգություններ են իրականացրել Երևանի կենտրոնում՝ պատճառելով վնաս քաղաքացիների և պետության գույքին, ինչպես նաև ստեղծելով ուղղակի սպառնալիք քաղաքացիների անվտանգության համար, ինչը վիճակը դարձնում է անվերահսկելի: Այդ գործողությունների թիրախը Հայաստանի Հանրապետության ձեռք բերած կայունությունն է, իսկ հետևանքը՝ միջազգային հեղինակության խաթարումը:

Որպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահպանման երաշխավոր՝ որևէ մեկին չեն թույլատրելու վտանգել մեր պետության սահմանադրական կարգը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգը կանխելու նպատակով, ղեկավարվելով Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի դրույթներով, ես խորհրդակցել եմ Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, որից հետո ստորագրել եմ հրամանագիր, որով Երևան քաղաքում մարտի 1-ից 20 օր ժամկետով հայտարարել եմ արտակարգ դրություն:»:

ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն, արտակարգ դրություն հայտարարելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվել է Ազգային ժողովի հատուկ նիստ: Մինչ քննարկվող հարցին անդրադառնալը, Ազգային ժողովը որոշում է ընդունել Ազգային ժողովի հատուկ նիստը Հանրային ռադիոընկերության ուղիղ եթերով չհեռարձակելու վերաբերյալ:

Հատուկ նիստում ՀՀ Նախագահի ներկայացուցիչ Արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը, ներկայացնելով ՀՀ նախագահի «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» հրամանագիրը, նշել է, որ արտակարգ դրություն հայտարարված տարածքում սահմանվել են հետևյալ սահմանափակումները. ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի և այլ գանգվածային միջոցառումների իրականացման արգելում, գործադուլների և կազմակերպությունների գործունեությունը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումների արգելում, իրավապահ մարմինների կողմից, անհրաժեշտության դեպքում, անձանց, տրանսպորտային միջոցների տեղաշարժի սահմանափակում և զննության իրականացում, գանգվածային լրատվության միջոցների կողմից պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պաշտոնական տեղեկատվության սահմաններում առանց համապատասխան պետական մարմինների թույլտվության՝ թույլիկների և այլ ձևով

քաղաքական քարոզչության իրականացման արգելում, արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացմանը խոչընդոտող կուսակցությունների և այլ հասարակական կազմակերպությունների գործունեության ժամանակավոր կասեցում, արտակարգ դրության իրավական ռեժիմը խախտած և տվյալ տարածքում չբնակվող անձանց վտարում՝ նրանց միջոցների հաշվին, իսկ միջոցներ չլինելու դեպքում՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ կատարված ծախսերի հետագա փոխհատուցման պայմանով:

Դանիելյանը միաժամանակ հայտնել է, որ Հրամանագրով Արտակարգ դրության ժամկետ է սահմանվել 2008 թվականի մարտի 1-ից 20-ը, իսկ Արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովումը վերապահվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

Հարցը ներկայացնելուց հետո Դանիելյանը պատասխանել է պատգամավորների հարցերին:

Նիստում եղել են բազմաթիվ ելույթներ, որոնցում խիստ մտահոգություններ են հնչել ստեղծված իրավիճակի կապակցությամբ:

Պատգամավորները ՀՀ Նախագահի հրամանագիրը գնահատել են որպես պարտադրված, բայց նաև անհրաժեշտ քայլ և միակ ելքը ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: Նրանց խոսքով՝ վտանգված է Հայաստանի կայունությունը և միջազգային հեղինակությունը, և յուրաքանչյուրն իր կողմից պետք է անի առավելագույնը՝ հանգուցալուծելու ստեղծված աննախադեպ իրավիճակը:

Արտահերթ ելույթ է ունեցել ԱԺ նախկին նախագահ Տիգրան Թորոսյանը, ով մասնավորապես, նշել է, որ. «...այն ինչ տեղի է ունեցել, պիտի դաս լինի, և ընդամենը մեկ բան պետք է անել՝ լինել պարզ ու շիտակ, անկեղծ ու ազնիվ: Ժողովրդի նկատմամբ միշտ չէ, որ դա արել են, և այդ պատճառով էլ սա պատահել է: Այո, իհարկե, Հայաստանում ժողովրդավարությունը կայացած չէ, ցավոք սրտի: Այո, դժբախտաբար, այս ամբողջ ժամանակահատվածում մենք չենք կարողացել հասնել այն բանին, որ ապօրինի զենք կրող մարդ չլինի այս երկրում, չկարողացանք ապահովել օրենքի լիարժեք գերակայությունը: Մրանք իսկապես խնդիրներ են և չափազանց լուրջ խնդիրներ: Բայց ի՞նչ կապ ունի դա այն բանի հետ, որ ամբոխի միջից հրազենով կրակում են ոստիկանների վրա, սա ի՞նչ արդարացում ունի, այդ փայտերը ի՞նչ արդարացում ունեն, այդ ձողերը բռնողները կարգի՞ն մարդիկ են: Ես կարծում եմ՝ Հանրապետության Նախագահի հրամանագիրը միանգամայն տեղին է և խորհրդարանը, նույնպես պատասխանատվություն կրելով երկրի և իրավիճակի ու ապագայի համար, պիտի անպայման իր վերաբերմունքով աջակցություն հայտնի այս հրամանագրին:»:

Տիգրան Թորոսյանը նշել է նաև, որ քանի որ միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու մասին Ազգային ժողովի որոշման նախագծի գրավոր տեքստ որևէ

պատգամավոր չի ներկայացրել Ազգային ժողովի նախագահին, ուստի Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետով նախատեսված կարգով և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 52-րդ և 92-րդ հոդվածների համաձայն, սպա ՀՀ Նախագահի հրամանագիրը համարվում է հավանության արժանացած:

2008 թվականի մարտի 1-ին այն ժամանակվա ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը իրադարձությունների վերաբերյալ իր խոսքում ասել է.

«Միքելի հայրենակիցներ,

Վերջին օրերին տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով մեր ժողովուրդը ծանր կորուստներ կրեց: Կրեց անդառնալի կորուստներ. եղան մարդկային զոհեր թե՛ ծառայողական պարտքը կատարող ոստիկանության աշխատակիցների, թե՛ մի խումբ մարդկանց ազդեցության տակ ընկած ցուցարարների շարքերում: Հարյուրավոր քաղաքացիներ են տուժել արմատական ընդդիմադիրների անօրինական գործողությունների հետևանքով:

Այսպես կոչված «շարժման» հեղափոխական պարագլուխները հասարակական կարգը պահպանողներին ու սեփական աջակիցներին դարձրեցին իրենց անհագուրդ նկրտումների պարպման թիրախ: Այդ ամենի համար անկարգությունների կազմակերպիչներն ու հրահրողները դեռ պատասխան պիտի տան օրենքի, պատմության ու սերունդների առաջ: Ցավով են նշում, որ մեր հայրենակիցները դարձան որոշ մարդկանց կույր ատելության զոհը:

Այսօր ես կիսում եմ յուրաքանչյուրիդ վիշտն ու բոլորիդ մաղթում եմ կամք, ուժ և հոգեկան կորով՝ այս արհավիրքը հաղթահարելու համար:»:

ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հանձնարարականով Նախագահի աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանը մարտի 2-ին հանդիպել է Հայաստանում հավատարմագրված ԵԱՀԿ անդամ պետությունների ղեսպաններին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին: Հանդիպմանը ներկայացվել է մարտի 1-ի երեկոյան Երևանում ստեղծված իրավիճակը:

Դիվանագետներին պարզաբանումներ են տրվել Հայաստանի իշխանությունների գործողությունների, մասնավորապես՝ արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքների մասին: Դիվանագետներին տեղեկացվել է, որ ՀՀ իշխանությունները ձեռնարկել են օրենքով նախատեսված անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ստեղծված իրավիճակում Երևանում կարգ ու կանոն հաստատելու և ապօրինի գործողությունները կասեցնելու ուղղությամբ:

Նախագահի աշխատակազմի ղեկավարը շեշտել է, որ իշխանությունները վճռական են անկարգությունների կազմակերպիչներին, հրահրիչներին և իրականացնողներին պատասխանատվության ենթարկելու գործում:

Հիմք ընդունելով Հրամանագիրը, 2008 թվականի մարտի 2-ին ՀՀ ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-գնդապետ Հ. Հարությունյանի մոտ կայացած օպերատիվ խորհրդակցության արձանագրությամբ հաստատվել և գործողության մեջ է դրվել ՀՀ ոստիկանության և պաշտպանության նախարարության կողմից հրատապ կարգով իրականացվող միջոցառումների պլանը: Պլանը իրագործելու, ինչպես նաև արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու և ոստիկանության ու պաշտպանության նախարարության զինձառայողների ուժերով ՀՀ պետական պահպանության ենթակա և բնակչության կենսապահովման որոշ օբյեկտների պահպանությունն ու անվտանգությունը ուժեղացնելու նպատակով ՀՀ ոստիկանության պետի և ՀՀ պաշտպանության նախարարի գլխավորությամբ կազմավորվել է արտակարգ դրության ղեկավարման գլխավոր շտաբ՝ հետևյալ կազմով. ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գործերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Գ. Գրիգորյան, Երևանի կայագործի պետ, գեներալ-լեյտենանտ Յու. Խաչատուրով, ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, գեներալ-մայոր Ա. Աֆյան, ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, գեներալ-մայոր Ա. Երիցյան:

2008 թվականի մարտի 2-ին Ազգային ժողովի 60 պատգամավորների նախաձեռնությամբ տեղի է ունեցել նաև Ազգային ժողովի արտահերթ նիստ՝ քննարկելու Ազգային ժողովի հայտարարության նախագիծը մարտի 1-ին Երևանում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ, որը ներկայացրել է ԱԺ պատգամավոր Ռաֆիկ Պետրոսյանը: Ստորև ներկայացվում է ՀՀ ԱԺ հայտարարությունը մարտի 1-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ:

«Անհանգստություն հայտնելով տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ, դատապարտելով՝

- մարտի 1-ին մայրաքաղաքում խժոժությունների հրահրումը հայտնի ուժերի կողմից, որի արդյունքում վնասվածքներ են ստացել մի քանի տասնյակ քաղաքացիներ, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, իսկ մայրաքաղաքը կրել է զգալի բարոյական և նյութական վնաս,

- ատելության և չարության քարոզչությունը քաղաքական գործընթացներում,

- երկրի կայունությունը, միջազգային վարկը և ազգային միասնությունը խաթարող ցանկացած գործողություն,

- կարևորելով մայրաքաղաքում կարգուկանոնի վերահաստատումը, բնականոն կյանքի վերականգնումը,

- մարդկանց կյանքին ու գույքին սպառնացող վտանգի չեզոքացումը,

- քաղաքական խնդիրների լուծումը երկխոսության հիման վրա,

- իրավական, մասնավորապես ընտրական գործընթացներին վերաբերող խնդիրների լուծումը երկրի Սահմանադրությանն ու օրենսդրությանը համապատասխան,

- հանդուրժողականության հարգումը՝ որպես հասարակության մեջ պառակտումների բացառման հիմք,

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝

- անհրաժեշտ և իրավաչափ է համարում Հայաստանի Հանրապետության նախագահի 2008 թ. մարտի 1-ի հրամանագիրը՝ արտակարգ դրություն հայտարարելու մասին,

- զսպվածության և ողջամտության կոչ է անում մեր քաղաքացիներին այս բարդ իրավիճակը հնարավորինս արագորեն հաղթահարելու, երկիրը բնականոն ընթացքի վերադարձնելու համար:»

Հայտարարությունը միաձայն ընդունվել է նիստին ներկա 81 պատգամավորների կողմից:

Իրադարձությունների կապակցությամբ ՀՀ ՋՈՒ գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Սեյրան Օհանյանի և ՀՀ ոստիկանության գործերի շտաբի պետ, գնդապետ Գեղամ Պետրոսյանի կողմից նույնպես կատարվել են համապատասխան հայտարարություններ, որոնցում, դիմելով հանրապետության քաղաքացիներին, նրանք խնդրել են զերծ մնալ արտակարգ դրությամբ նախատեսված արգելքները շրջանցելու փորձերից, հանդես բերել բարձր քաղաքացիական գիտակցություն և ըմբռնունով մոտենալ պետության, այդ թվում՝ զինված ուժերի և ոստիկանության գործերի կողմից արտակարգ դրությամբ պայմանավորված միջոցառումների իրականացմանը: Միաժամանակ, նրանց կողմից նախազգուշացվել է, որ ցանկացած փորձ՝ ներգրավվելու արտակարգ դրությամբ արգելված միջոցառումների կազմակերպմանը, անմիջապես արժանանալու է համարժեք և խիստ հակազդեցության՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

## 6.2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ

Հանձնաժողովը գտնում է, որ յուրաքանչյուր երկրի պատմության ընթացքում լինում են պահեր, որոնք կասեցնում են երկրի զարգացման ընթացքը, ինչպիսիք, ցավոք սրտի, մենք ունեցել ենք: Եվ անկախ նրանից, թե մենք ինչ հանգուցալուծման կհանգենք, միևնույնն է, արդեն փաստը մնում է փաստ, որ հասարակության մի մասի մոտ ծագել է փոխադարձ ատելություն և թշնամանք: Դրա համար էլ «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագիրը ոչ թե իրավիճակի լուծում էր, այլ պարտադրված, բայց նաև անհրաժեշտ քայլ և միակ ելքը ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: Ուշացնել այդ միջոցառումը՝ կնշանակել թույլ տալ, որ մեր ժողովրդի մի որոշակի մաս, մի խումբ անձանց կողմից հրահրված սպորիհնությունները շարունակել մեր երկրում, մասնավորապես՝ Երևան քաղաքում:

Նկատի ունենալով, որ հատկապես մարտի 1-ի կեսօրից Երևանի քաղաքապետարանի շրջակայքում հավաքված բազմությունն աստիճանաբար անվերահսկելի է դարձել, և երեկոյան նրանց գործողությունները վերջնականապես վերածվել են ջարդարարության ու թալանի, հրկիզել ու ջարդուփշուր են արել շուրջ 100

անձնական օգտագործման, ոստիկանության, ինչպես նաև «Շտապ օգնության» ավտոմեքենաներ, ավտոբուսներ ու տրոլեյբուսներ, ավերել ու թալանել են «Մոսկվայի տունը», շրջակա խանութներն ու գրասենյակները, փշրել են քաղաքապետարանի և «Վիվասելի» վարչական շենքերի ապակիները, ցուցարարները հարձակումներ են գործել ոստիկանության գործերի ծառայողների և ոստիկանության աշխատակիցների վրա, ապա արտակարգ դրություն մտցնելը անհրաժեշտություն էր:

Հանձնաժողովը միաժամանակ գտնում է, որ եթե «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագիրը հայտարարվեր ավելի վաղ, երբ տեղի են ունեցել առաջին պայթյունները, կրակոցներն ու մահվան դեպքերը, գուցե հնարավոր լիներ խուսափել նման ծանր հետևանքներից:

## VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2008թ. մարտյան իրադարձությունների կրկնումը բացառող քաղաքական, իրավական և այլ լուծումների առաջարկությունների ներկայացման մասով Հանձնաժողովը, ժամանակագրական առումով, դրանք բաժանում է հետևյալ հիմնական 3 փուլի.

1) Հանձնաժողովի կողմից ներկայացված այն առաջարկությունները, որոնք ներկայացվել են Հանձնաժողովի գործունեության ընթացքում՝ պայմանավորված տվյալ պահին Հանձնաժողովի կողմից արագ արձագանքելու կամ որոշակի հասարակական հարաբերությունները շուտափույթ կարգավորելու անհրաժեշտությամբ և, որոնց իրականացումն ավարտվել է, ներկայացված են զեկույցի առաջին գլխում:

2) Հանձնաժողովի այն առաջարկությունները, որոնք ներկայացվել են Հանձնաժողովի գործունեության ընթացքում, սակայն ժամանակի առումով գտնվում են իրականացման փուլում:

3) Հանձնաժողովի այն առաջարկությունները, որոնք ներկայացվում են սույն զեկույցի հրապարակմամբ (ինչպես այս, այնպես էլ Եզրակացության այլ գլուխներում) և գերազանցապես պայմանավորված են առաջիկայում ձեռնարկվելիք գործողություններով:

### ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Նկատի ունենալով, որ, ըստ փորձագիտական եզրակացության, ՀՀ ոստիկանության զինանոցում գտնվող «Չերյոմուխա-7» տեսակի հատուկ միջոցները ժամկետանց են և դրանց կիրառման արդյունքում հնարավոր են անցանկալի հետևանքներ, Հանձնաժողովը ՀՀ ոստիկանապետին առաջարկել է ոչնչացնել վերոգրյալ ժամկետանց հատուկ միջոցները, ինչպես նաև անձնակազմին հրահանգավորել՝ հատուկ միջոցների պահպանման կարգի, ժամկետների, պիտանիության, կիրառման կարգի և անվտանգության կանոնների վերաբերյալ:

2. Հանձնաժողովը դիմել է ՀՀ Կառավարությանը՝ վերանայելու ոստիկանության գործողությունների վերաբերյալ բոլոր այն իրավական ակտերը, որոնցով կերաշխավորվի, որ ուժի կիրառմանը վերաբերող օրենքներն ու իրավական ակտերը ամբողջովին համապատասխան կլինեն քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային և ՄԱԿ-ի՝ իրավապահ մարմինների կողմից ուժի և հրազենի կիրառման վերաբերյալ հիմնարար սկզբունքներին:

3. Բացի այդ, հիմք ընդունելով «Նախկին ԽՍՀՄ, ՀԽՍՀ, Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներ և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մի շարք նորմատիվ իրավական ակտեր ուժը կորցրած ճանաչելու մասին» 2006թ.

նոյեմբերի 28-ի ՀՕ-199-Ն ՀՀ օրենքը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում չեն գործում ԽՍՀՄ նորմատիվ իրավական ակտերը, ուժը կորցրած է ճանաչվել նաև «Հատուկ միջոցների կիրառման կարգը հաստատող ԽՍՀՄ ՆԳ նախարարի 1989թ. թիվ 127 հրամանը», ՀՀ ոստիկանապետին առաջարկվել է նմանօրինակ նոր կարգ սահմանելու միջոցներ ձեռնարկել:

4. Հանձնաժողովի նախագահի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով շրջանառության մեջ է դրվել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-320 օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ, որի նպատակն է հստակ ժամկետներ սահմանել այն իրավական ակտերի ընդունման համար, որոնց ընդունումը նախատեսվում է այս կամ այն օրենքով, ինչը հնարավորություն կտա օրենքները կիրարկել լիարժեք և լրիվ՝ ապահովելով այս կամ այն հարցի իրավական կարգավորման համալիրությունը:

5. Հանձնաժողովի նախագահի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-4-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակն է դրույթը դարձնել իմպերատիվ, ինչը վերահսկիչ պալատին կպարտավորեցնի վերահսկողության ընթացքում քրեաիրավական բնույթի կասկածներ լինելու դեպքում վերահսկողության ընթացքում կազմված արձանագրությունները և ընթացիկ հաշվետվությունները վերահսկիչ պալատի խորհրդի որոշմամբ պարտադիր ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն, որը անպատժելիության մթնոլորտի և կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի արդյունավետ միջոցներից է:

#### ԵՐԲՈՐԴ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Անդրադառնալով այս փուլի առաջարկություններին՝ Հանձնաժողովը կարևոր է համարում, որ դրանք, միտված լինելով հաղթահարել տեղի ունեցած իրադարձությունների հիմնապատճառները, կանխարգելել և/կամ չեզոքացնել հնարավոր բացասական դրսևորումները, ինչպես նաև ապահովել հանրապետությունում ժողովրդավարական, իրավական և սոցիալական համակարգերի զարգացումները, կրում են իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական առաջնահերթությունների բնույթ և պահանջում են համակարգային մոտեցումներ:

2. Այս առումով, Հանձնաժողովը, արժևորելով մարտյան իրադարձություններից հետո ձեռնարկված դրական քայլերը, գտնում է, որ ժողովրդավարական զարգացումն անընդհատ գործընթաց է, որի իրականացումը պահանջում է ոչ միայն Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով ստանձնած իրավունքների հռչակում, այլ նաև դրանց իրականացման գործում հետևողականության և համակարգային

գործողությունների ապահովում՝ հիմքում ունենալով Հայաստանի Հանրապետության անվտանգության և կայուն զարգացման համար բավարար երաշխիքներ ձևավորելու հրամայականը:

## ԻՐԱՎԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հանձնաժողովն իր մտահոգությունն է արտահայտում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի և միջազգային կառույցների գեկույցներում ներկայացված՝ հանրապետության ներքին կյանքում, ժողովրդավարական համակարգում տեղ գտած բացասական մի շարք դրսևորումների վերաբերյալ, այդ թվում՝ բազմակենտրոն քաղաքական և ազատ տնտեսական համակարգեր և հարկ է համարում ընդգծել, որ դրանք պետք է ըստ պատշաճի ուշադրության առարկա դառնան պատկան մարմինների համար:

2. Ապահովել խոսքի ազատություն, պայմաններ ստեղծել էլեկտրոնային լրատվամիջոցներում բազմակարծության և անկողմնակալության ապահովման համար:

3. Ժողովրդավարական համակարգերի զարգացման տեսակետից Հանձնաժողովն արժևորում է նաև ԵԽԽՎ բանաձևերով Հայաստանի Հանրապետությանը ներկայացված առաջարկությունները և գտնում է, որ դրանց իրականացումն անհրաժեշտ է երկրում ժողովրդավարությունը առավել ամրապնդելու, անհանդուրժողականությունը՝ քաղաքացիական համերաշխությամբ փոխարինելու, քաղաքական համակարգն առողջացնելու համար:

4. Ընտրական գործընթացի նկատմամբ լիարժեք գնահատականը պահանջում է, որպեսզի դրա բոլոր փուլերում՝ նախընտրական գործընթացում, ընտրությունների օրը, ինչպես նաև հետընտրական շրջանում հասարակության գերակշիռ մասի մոտ ձևավորվի անհրաժեշտ վստահություն ընտրությունների արդարացիության նկատմամբ: Ակնհայտ է, որ ընտրական գործընթացների նկատմամբ հանրության վստահության պակասն ընդհանուր առմամբ նսեմացնում է նաև ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրության մի մասի վստահությունը: Խնդիրն ավելի է բարդանում քվեաթերթիկների հաշվարկի և արդյունքների ամփոփման ընթացակարգի ոչ բավարար թափանցիկության պատճառով: Անհրաժեշտ է ստեղծել բողոքարկման և գանգատարկման այնպիսի համակարգ, որում ընտրական գործընթացի մասնակիցները կարողանան հնարավորինս լիարժեք իրավական պաշտպանություն ստանալ ենթադրյալ ընտրախախտումների դեպքում, ինչպես նաև գործնականում հավասար հնարավորություններ երաշխավորել քաղաքական բոլոր ուժերին թե՛ պաշտոնական քարոզարշավի ընթացքում, թե՛ դրան նախորդող ժամանակահատվածում: Այդ կապակցությամբ Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ՀՀ ընտրական օրենսգրքում:

5. Չնայած կատարված դրական փոփոխություններին, Հանձնաժողովը գտնում է, որ ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու վերաբերյալ իրազեկումները

հաճախ տեխնիկական հիմքերով մերժվում են, կամ դրանց նկատմամբ կիրառվում են անհարկի սահմանափակումներ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաև «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում:

5. Չնայած հաջողությամբ իրականացված օրենսդրական բարեփոխումներին, դատարանները դեռ չունեն անկախության անհրաժեշտ մակարդակ, որպեսզի հանրությանը վստահություն ներշնչեն իրենց՝ որպես անկողմնակալ դատական մարմինների նկատմամբ: Դատարաններն առավել ուշադրությամբ պետք է վերաբերվեն անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցին: Այդ կապակցությամբ Հանձնաժողովը առաջարկում է փոփոխություններ կատարել ՀՀ քրեական դատավարության և ՀՀ դատական օրենսգրքերում:

Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է եղել նաև խնդրո առարկա իրադարձություններին առնչվող դատավարությունների ընթացքը: Անշուշտ Հանձնաժողովն իրավասու չէ որևէ գնահատական տալ դատարանների կողմից արդարադատության իրականացմանը, սակայն հարկ է համարում սույն եզրակացության շրջանակներում անդրադառնալու դատավարությանն առնչվող երեք կարևոր հարցի, որոնք առաջացրել են Հանձնաժողովի մտահոգությունը:

Առաջին հարցը վերաբերում է թեկուզ և եզակի այն դեպքերին, երբ վկան հրաժարվում է մինչդատական վարույթի ընթացքում տված ցուցմունքներից: Ցուցմունքները դատավարության ժամանակ փոխելը վկաները փորձում են հիմնավորել այն հանգամանքով, որ մինչդատական վարույթում իրենց տված ցուցմունքները ձեռք են բերվել բռնության, սպառնալիքի կամ խաբեության արդյունքում (Արսեն Սկրտչյանը, Էդիկ Խաչատրյանը, Յաշա Մելքոնյանը՝ Սասուն Միքայելյանի, իսկ Գևորգ Մուրադյանը՝ Հակոբ Հակոբյանի գործերով): Այդ կապակցությամբ հարուցված քրեական գործերի շրջանակներում, վերջիններս, տարբեր պատճառաբանություններով և ապացույցների առկայության պայմաններում, հրաժարվել են դատավարության ժամանակ տված ցուցմունքներից:

Կան նաև այնպիսի դեպքեր, երբ դատաքննությունների ընթացքում մի խումբ անձինք, տեղեկանալով տարբեր վկաների կողմից տրված մեղադրող ցուցմունքների մասին, նշված վկաների ու նրանց մերձավորների նկատմամբ ահաբեկումներով, պարտադրել են, որ հրաժարվեն հանցագործությունների կատարման մեջ մեղադրող մինչդատական ցուցմունքներից:

Նշված դեպքերի առնչությամբ հարուցվել է 5 քրեական գործ, որոնցից 3-ը քննվել է ՀՀ ԱԱԾ քննչական վարչության, 1-ական՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության և ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթներում: Երկուսի վարույթը և մեկի մասը կարճվել է, երկուսով նախաքննությունը շարունակվում է:

Քննարկման առարկա չդարձնելով ցուցմունքներից հրաժարվելու նման «հիմնավորումների» արդարացի լինելու կամ չլինելու հանգամանքը՝ Հանձնաժողովը փաստում է, որ նման երևույթներն ունեն խիստ բացասական հասարակական ընկալում և սասանում են վստահությունը արդարադատության նկատմամբ, հատկապես այն դեպքում, երբ դատարանը անտեսում է այդ պնդումները և առավել արժանահավատ է ճանաչում մինչդատական վարույթի ընթացքում տրված ցուցմունքները:

Ծանոթանալով այս հարցին առնչվող միջազգային փորձին՝ Հանձնաժողովը հանգեց այն համոզման, որ բազմաթիվ երկրներ արդյունավետորեն լուծել են վկաների և տուժողների պաշտպանության միջոցների խնդիրը: Այդ կապակցությամբ Հանձնաժողովն օրենսդիր իշխանության ուշադրությունն է հրավիրում նշված խնդրի արդյունավետ լուծումներ գտնելու անհրաժեշտության վրա:

Հանձնաժողովի ուշադրությանն արժանացած երկրորդ խնդիրը վերաբերում է խնդրո առարկա դատավարությունների ընթացքում դատարանների անմիջական մերձակայքում հավաքների անցկացմանը: Ակներև է, որ ժողովրդավարական և իրավական պետության մեջ արդարադատություն իրականացնելիս դատարանը չպետք է ենթարկվի ճնշումների, այդ թվում՝ հոգեբանական, և սպառնալիքների: Սակայն, մեր համոզմամբ, դատարանի շենքի անմիջապես մերձակայքում անցկացվող հավաքներն, ամենայն հավանականությամբ, կարող են բացասաբար ազդել արդարացի դատաքննության իրականացման վրա, հանդիսանալով դատարանի նկատմամբ ճնշում գործադրելու եղանակ և ուղղված լինելով դատարանի մոտ համապատասխան նախնական կարծիքի ձևավորմանը: Ավելին, նրանք կարող են նաև ազդել վկաների վրա:

Անշուշտ, Հանձնաժողովը հեռու է այն մտքից, որ արդարադատություն իրականացնելու ժամանակահատվածում դատարանի շրջակայքում հավաքների անցկացման համար պետք է բացարձակ արգելք սահմանվի, քանի որ ոչ բոլոր դեպքերում դատարանի մերձակայքում անցկացվող հավաքը կարող է էականորեն խաթարել արդարադատության իրականացումը: Մեր կարծիքով, նման հավաքները պետք է լինեն թույլատրելի, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք անցկացվում են դատարանի շենքի անմիջական հարևանությամբ (հեռավորությունը պետք է հստակ սահմանվի օրենքով): Դրանց անցկացումը ակնհայտորեն բացասաբար է ազդում արդարացի և արդյունավետ արդարադատության իրականացման վրա, որի գնահատականը պետք է յուրաքանչյուր անգամ տրվի տվյալ դեպքի հանգամանքներից ելնելով: Հարկ ենք համարում նշելու, որ առաջարկվող մոտեցումը ամբողջապես համահունչ է Վենետիկի հանձնաժողովի մոտեցումներին, ուստի, առաջարկում ենք, որպեսզի հարցը ստանա իր լուծումը «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով:

Երրորդ հարցը վերաբերում է կալանքը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերին: Վերլուծությունները ցույց են տալիս, որ մարտի 1-2-ի իրադարձությունների

առնչությամբ հարուցված քրեական գործերով կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունների գերակշռող մասը բավարարվել է: Անշուշտ, բավարարման տոկոսի բարձր լինելը չի նշանակում, որ այդ միջնորդությունները դատարանների կողմից բավարարվել են առանց բավարար հիմքերի, սակայն այդ հարցի վերաբերյալ խելամիտ կասկածներ անշուշտ ծագում են: Այդ կապակցությամբ Հանձնաժողովը, համարելով, որ հարցը նախևառաջ պահանջում է մասնագիտական վերլուծություն, անհրաժեշտ է համարում ուշադրություն դարձնել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կալանքին վերաբերող դրույթների՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումներին համապատասխանության հարցին:

6. Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտություն է շուտափույթ ընդունել «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, որը համահունչ կլինի նաև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մոտեցումներին: Ի դեպ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ է դրվել դեռևս 2007թ. հուլիսի 31-ին (փաստաթղթային կոդ՝ Կ-057-31.07.2007):

#### ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անդրադառնալով իրադարձությունների բացառման կամ կանխարգելման սոցիալ-տնտեսական առաջնահերթություններին՝ Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ դրանք ուղղակի կապված են մարտյան իրադարձությունների հիմնապատճառ հանդիսացող սոցիալ-տնտեսական իրողությունների հետ՝ աղքատության դեռևս բարձր մակարդակը, հասարակության սոցիալական բևեռացվածությունը, սոցիալական արդարության հաստատման պետական արդյունավետ երաշխիքների ոչ բավարար լինելը, իրավական, հատկապես, դատաիրավական համակարգի նկատմամբ վստահության պակասը, քաղաքական իշխանությամբ սեփականություն ձեռք բերելու տարածված պրակտիկան և ցանկությունը կամ այն կորցնելու սպառնալիքը, սեփականության իրավունքը պաշտպանված լինելու ոչ բավարար համոզվածությունը, մարդու իրավունքների երաշխավորվածության, պաշտպանության և քաղաքական համակարգերի անկատարությունը և այլն:

2. Ինչպես վկայում է ՀՀ ԱՎԾ 2007 թվականի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության արդյունքները ներառող 2008 թվականի վիճակագրական-վերլուծական զեկույցը, Հայաստանում աղքատությունը՝ ըստ սպառման և եկամտի կազմել է համապատասխանաբար 25% և 40.5%: ՀՀ Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրի համաձայն, 2006 թ. նվազագույն սպառողական զամբյուղով

հաշվարկելու դեպքում աղքատությունը եղել է 39.8%, կամ աղքատ է համարվում հանրապետության 1283000 բնակիչ: Հատկանշական է նաև, որ զարգացած երկրներում աղքատության մակարդակների համեմատության համար օգտագործվող՝ օրական 11 միջազգային դոլար աղքատության գծի՝ Հայաստանի պայմանների համար կիրառման դեպքում (2005թ. դրամական համարժեքով այն կազմել է ամսական 48 972 դրամ՝ մեկ շնչին) աղքատության մակարդակը կկազմեր 85.6%: Սա խոսում է վկայությունն է այն բանի, որ աղքատությունը համարվում է հանրապետությունում սոցիալական լարվածության հիմնապատճառներից եթե ոչ գլխավորը, ապա առաջիններից մեկը:

3. Սոցիալական լարվածության այլ դրսևորում է եկամուտների բաշխման անհավասարությունը, որը Ջինիի գործակցով բնութագրելու դեպքում՝ ըստ կայուն զարգացման ծրագրի, 2006 թվականին կազմում էր 0.359, իսկ 20% ամենաաղքատ բնակչության եկամուտների հարաբերակցությունը 20% ամենահարուստ բնակչության եկամուտների նկատմամբ՝ 7.6:

4. Դիտարկելով 2008 թվականին Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունը (այն կատարվել է ԱՄՆ ՄՁԳ հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի շրջանակներում), Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ այդ զեկույցի համաձայն գործազրկությունը համարվել է Հայաստանի գլխավոր հիմնախնդիրը (հարցվածների 65%): Այլ առաջնակարգ հիմնախնդիրներ են համարվել աղքատությունը (37%), բարձր գները (32%), ընդհանուր տնտեսական խնդիրները (21%), կոռուպցիան (16%) և արտագաղթը (14%):

5. Թվարկված խնդիրներն իրենց սրությամբ արտահայտվում են նաև սոցիալական իրավունքների պաշտպանության համակարգի պետական երաշխիքների ոչ բավարար լինելու առկայության պայմաններում: Հաճախ դա պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների առկայությամբ, ինչպիսիք են հանրապետության տնտեսական պոտենցիալի իրացման սահմանափակվածությունը շրջափակման առկայությամբ, բյուջետային եկամուտների, հատկապես հարկային եկամուտների դեռևս ոչ անհրաժեշտ մակարդակը, սոցիալապես խոցելի խմբերին եկամուտների ապահովման հասցեականության և բաշխման համակարգում առկա բազմաթիվ թերացումները, տնտեսության մեջ մենաշնորհների անցանկալի մակարդակը և ազատ տնտեսական մրցակցության ու ձեռնարկատիրական նախաձեռնությունների խրախուսման դեռևս ոչ զարգացած համակարգի գոյությունը, որակյալ հանրային ծառայություններ մատուցելու հարցում կազմակերպական, տեխնիկական, մասնագիտական և պատշաճ վարձատրության անկատար համակարգը և այլն:

6. Չնայած վերջին տարիներին հանրապետության տնտեսության արձանագրած արդյունքներին և պետական բյուջեի անընդհատ աճին (այսպես՝ 1998թ. համեմատությամբ 2007թ. արդյունքներով ՀՆԱ-ն և պետական բյուջեն՝ արտահայտված ՀՀ դրամով, մեծացել են 3 անգամից ավելի չափերով), այնուամենայնիվ, ՀՆԱ-ի առկա կառուցվածքային

համամասնությունն ու պետական բյուջեի մեծությունը, դեռևս թույլ չեն տալիս պետական բյուջեի ծախսային քաղաքականության շրջանակներում ամբողջությամբ թուլացնել սոցիալական լարվածությունը:

7. Այս ամենը, ինչպես նաև դատաիրավական համակարգում, մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում առկա մի շարք հիմնախնդիրները, սպառնալիք են Հայաստանի ազգային անվտանգությանը:

8. Հանձնաժողովը գտնում է, որ այս հիմնախնդիրները, որոնց զգալի մասը, իբրև ներքին սպառնալիքներ, արդարացիորեն տեղ են գտել Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված «Ազգային անվտանգության ռազմավարությունում», ձևավորում են պետության, հասարակության, ընտանիքի և անհատի գոյության դեմ ուղղված, դրանց հիմքերը խարխլող մարտահրավերներ:

9. Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ այդ մարտահրավերներին դիմագրավելը, ներկայացված հիմնախնդիրները հաղթահարելը պահանջում են հետևողականություն, համակարգված, ծրագրային ու խորքային աշխատանքներ:

10. Հանձնաժողովը, մասնավորապես ընդգծում է, որ թեև այս հիմնախնդիրները իրենց արտացոլումն են գտել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում (ՀՀ պետական բյուջեի մասին օրենքում, ՀՀ Կառավարության գործունեության, Կայուն զարգացման, կոռուպցիայի դեմ պայքարի և այլ ծրագրերում), ինչպես նաև քաղաքական կոալիցիայի համաձայնագրում, այդուհանդերձ, դրանք դեռևս հաղթահարված չեն և պահանջում են նոր ջանքեր, հասարակության համախմբվածության և քաղաքացիական հասարակության նոր որակ՝ ձգտելով ապահովելու իրական կյանքի և Մահմանադրությամբ հռչակված սոցիալական, իրավական պետության ու հասակական կյանքի լիարժեք համապատասխանեցում:

11. Հանձնաժողովը այս առումով հատկապես կարևորում է հետևյալ սոցիալ-տնտեսական առաջնահերթությունները,

ա) սոցիալական համերաշխության և արդարության հաստատումը, կենսաապահովման նվազագույն գամբյուղի և բյուջեի սահմանումը, աղքատության շեմի համապատասխանեցումը դրան, ինչպես նաև դրա հաշվառմամբ աշխատավարձերի, կենսաթոշակների, նպաստների հետևողական բարձրացումը, հասարակության համախմբումն ու ներքաղաքական կայունության ապահովումը,

բ) կոռուպցիայի դեմ համակարգային, հետևողական ու արդյունավետ պայքարը,

գ) ստվերային տնտեսության էական կրճատումը, եվրոպական երկրների միջինացված ցուցանիշներին համադրելի հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցության ապահովումը, մրցակցային հավասար և արդարացի պայմանների ապահովումը, արհեստական տնտեսական մենաշնորհների բացառումը,

դ) տնտեսության արդյունավետ ճյուղային կառուցվածքի ձևավորումը, արտահանման կողմնորոշում ունեցող արդյունաբերական քաղաքականության իրագործումը, տարածքային համաչափ զարգացումը,

ե) պետության նախաձեռնության և/կամ մասնավորի խրախուսման հենքի վրա նոր աշխատատեղերի ստեղծմամբ գործազրկության մակարդակի կրճատումը և ժողովրդագրական ակտիվ քաղաքականության իրականացումը,

զ) սոցիալական գործընկերության և պետական, համայնքային ու միավորային կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ամբողջական համակարգի հետևողական ներդրումը,

է) սեփականության իրավունքի պաշտպանության համակարգի կատարելագործումը և ներդրողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, աջակցությունը փոքր և միջին գործարարությանը, ինչպես նաև միջին խավի ձևավորման հետևողական քաղաքականության իրագործումը,

ը) դատաիրավական համակարգի գործունեության համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին՝ ապահովելով համակարգի անաչառության և անկախության նկատմամբ հասարակության վստահության վերականգնումը:

Այդ կապակցությամբ Հանձնաժողովը առաջարկում է ընդունել Համայնքային ոստիկանության մասին, Երաշխավորված իրավաբանական օգնության մասին, Յուցմունք տալու պարտականությունից ազատելու մասին, Պատճառված վնասի հատուցման մասին, Մասնավոր խուզարկուի մասին ՀՀ օրենքները, ինչպես նաև ՀՀ սոցիալական օրենսգիրք: Վերջինիս ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է սոցիալական հարցերի խիստ ընդգրկուն բնույթով և ՀՀ-ում սոցիալական բազմաթիվ ու բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման համար համալիր, միասնական, հակասություններից և տարրընթերցումներից զուրկ օրենսդրական հիմքերի ստեղծման հրամայականով: Ներկայումս ՀՀ-ում սոցիալական նշված հիմնախնդիրն ու հարցերը կարգավորված են առանձին (այդ թվում՝ նաև շատ մեղ կարգավորում իրականացնող) օրենքներով, որոնք, ընդունվելով տարբեր տարիների, ոչ միայն հաճախ հակասում են միմյանց, պարունակում են տարբեր սկզբունքներ ու մոտեցումներ, այլև թույլ չեն տալիս արդյունավետ օրենսդրական վերահսկողություն իրականացնել այդ առանձին օրենքների կիրարկման նկատմամբ կամ գնահատել դրանց կիրարկման արդյունավետությունը: Այնինչ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը հստակ սահմանում են օրենսգրքերին ներկայացվող հիմնական պահանջները:

Հետևաբար, օրենսդրական կարգավորումն օրենսգրքերի միջոցով իրականացնելը, բնականաբար, շատ ավելի նպատակահարմար և արդյունավետ կլինի, քան ներկայիս պրակտիկայում կիրառվող և միմյանց պահանջներն ու մոտեցումները հաճախ հաշվի չառնող՝ համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող առանձին օրենքների ընդունումը:

12. Վերոգրյալների իրագործման նպատակով Հանձնաժողովն առաջարկում է ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներին իրականացնել իրենց իրավասությանը վերապահված ոլորտներում ներկայացված առաջնահերթությունների ուսումնասիրություններ և լսումներ՝ ներգրավելով ՀՀ Կառավարությանը, Մարդու իրավունքների պաշտպանին և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին:

13. Հանձնաժողովը գտնում է, որ ներկայացված առաջնահերթությունների իրացումը կարիք ունի մշտադիտարկման (մոնիտորինգ), իսկ դրանց իրականացման յուրաքանչյուր փուլի և ձեռք բերումների մասին հանրությունը կարիք ունի մշտական տեղեկատվության:

Հանձնաժողովի կարծիքով, 2008թ. մարտյան դեպքերից հետո ոստիկանության բարձրաստիճան որոշ պաշտոնյաներին զբաղեցրած պաշտոններից ազատելը և կադրային փոփոխությունները մեծապես կապված էին մարտի 1-2-ի իրադարձությունների հետ:

Հանձնաժողովի տրամադրության տակ եղած բոլոր փաստաթղթերը և նյութերը, այդ թվում՝ պետական մարմիններից ստացված պատասխանները և այլ փաստաթղթերը, Փաստահավաք խմբից և նրա նախկին անդամներից ստացված զեկույցները և այլ փաստաթղթերը, փորձագիտական եզրակացությունները, Հանձնաժողովի նիստերի և աշխատանքային խորհրդակցությունների արձանագրությունները, քաղաքացիներից և շահագրգիռ մարմիններից ստացված դիմումներն ու գրությունները՝ դրանց պատասխանները, ՀՀ պաշտպանության նախարարության թիկունքի իրային պահեստում ստուգումներ կատարելու նպատակով, 07.08.09թ. Հանձնաժողովի կողմից ստեղծված աշխատանքային խմբի զեկույցը և այլն, կցվում են սույն զեկույցին: